

**«ԱՅԼԵՎՍ ԵՐԲԵՔ.  
ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ  
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»**

**«НИКОГДА БОЛЕЕ.  
АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ В ОДНОЙ ВОЙНЕ»**

**«NEVER AGAIN.  
ARMENIA CAN NOT AFFORD TO LOSE ANY WAR»**



**ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ  
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

**ОБОРОННАЯ СИСТЕМА  
В УСЛОВИЯХ ПАРЛАМЕНТСКОГО ПРАВЛЕНИЯ**

**THE DEFENSE SYSTEM  
UNDER THE PARLIAMENTARY GOVERNMENT**

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝  
ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ  
ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՐԲ**



Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի  
և Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վլադիմիր Պուտինի  
մամուլի համատեղ ասուլիսը  
Մոսկվա, 2016 թ. օգոստոսի 10



Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի  
և Ֆրանսիայի Հանրապետության Նախագահ Ֆրանսուա Օլանդի  
հանդիպումը ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի շրջանակում  
Վարշավա, 2016 թ. հուլիսի 7



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

2 (88). 2016

## ԽՐԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Քոբանջյան Հ. Ս.**  
քաղաքական գիտությունների  
դոկտոր (Ռ-Դ), պրոֆեսոր,  
Ռ-Դ Ռազմական գիտությունների  
ակադեմիայի ընտրված  
իսկական անդամ,  
հակահարեկչության գծով  
գիտնական-փորձագետ (ԱՄՆ)  
(նախագահ)

**Զիլինգարյան Դ. Ս.**  
(գլխավոր խմբագիր)

**Ալեքսանյան Ա. Զ.**

**Այդինյան Ռ. Ա.**

**Այվազյան Լ. Գ.**

**Ապրիամով Է. Ա.**

**Ավետիսյան Վ. Ն.**

**Դավթյան Ա. Մ.**

**Իսախանյան Մ. Ռ.**

**Խաչատրյան Կ. Ա.**

**Խաչատրյան Տ. Վ.**

**Խաչատուրով Յու. Գ.**

**Ղահրամանյան Ա. Բ.**

**Մարգարյան Վ. Հ.**

**Մարտիրոսով Լ. Ա.**

**Յալանուզյան Ա. Կ.**

(գլխ. խմբագրի տեղակալ)

**Յուլյան Ն. Ի.**

**Նազարյան Ա. Ս.**

**Շահնազարյան Թ. Ն.**

**Շիրինյան Մ. Ա.**

**Պողոսյան Բ. Պ.**

**Սարգսյան Վ. Ռ.**

**Սեդրակյան Ս. Գ.**

**Վարդանյան Ա. Գ.**

**Տեր-Գրիգորյանց Ն. Գ.**

**Տոնոյան Դ. Է.**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

**Հ. Ս. Քոբանջյան,** Խորհրդարանական հանրա-  
պետության անվտանգային-պաշտպանական հա-  
մակարգը. Իսրայելի և Վրաստանի դասերի ռազ-  
մավարական քաղաքագիտական իմաստավորում . . . 9

**Ա. Ռ. Հարությունյան,** ՀՀ պաշտպանական հա-  
մակարգը և Ձինված ուժերի նկատմամբ խորհրդա-  
րանական վերահսկողությունը խորհրդարանա-  
կան կառավարման պայմաններում . . . . . 27

**Ա. Գ. Վաղարշյան,** Պետության կառավարման  
ձևը և նրա պաշտպանության ու անվտանգության  
պրոբլեմը . . . . . 45

**Լ. Գ. Այվազյան,** ՀՀ պաշտպանական քաղա-  
քականությունը խորհրդարանական կառավար-  
ման անցման պայմաններում . . . . . 54

### ՈԱԶՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**Ա. Կ. Հովհաննիսյան,** Հիբրիդային պատերազմ-  
ների որոշարկման և դասակարգման որոշ հարցեր . . 62

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

**Ա. Գ. Դավթյան,** ՀՀ ֆինանսական շուկայի  
զարգացման հեռանկարները արտահանման և  
տրանսֆերտների նվազման պայմաններում . . . . . 73

### ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Գ. Մ. Արշակյան,** Թուրք-ռուսաստանյան հա-  
րաբերությունները Հարավային Կովկասում 2002–  
2016 թթ. Թուրքիայի վարած քաղաքականության  
համատեքստում . . . . . 83

**ԿԻՔԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

Ա. Հ. Գրիգորյան, Կիբեռանվտանգության ոլորտում ներդրումների մոդելավորումը մեծ անորոշության պայմաններում ..... 97

**ՍԻԶԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

Հ. Մ. Գրիգորյան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում Ադրբեջանի զինված ուժերի կատարած պատերազմական հանցագործությունների որակման որոշ պրոբլեմներ ..... 103

**ՈԱԶՄԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

Ա. Բ. Գրիգորյան, Կամուրջների կոնստրուկցիաների ուժեղացման եղանակները ..... 116

**ՈԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ**

Ա. Ռ. Համբարչույան, Ռ. Գ. Կիրակոսյան, Գ. Ռ. Վարդանյան, Գ. Մ. Փաշիկյան, Տ. Հ. Ավետիսյան, ՀՀ ՁՈՒ-ի բուժապահովման համակարգում «Դեր 2» դաշտային շարժական հոսպիտալի կիրառման հնարավորությունները ..... 123

**ԳԻՏԱԽՈՐՀՐԳԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ**

- Ռ. Վ. Աղուզումցյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
  - Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
  - Լ. Ս. Արզումանյան, բանասիրական գիտությունների դոկտոր,
  - Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Ս. Ա. Գալստյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Ս. Գ. Գալստյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
  - Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Կ. Ս. Դանիելյան, կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր,
- Բ. Ն. Հարությունյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
  - Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
  - Հ. Հ. Մաթևոսյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
  - Ա. Հ. Մանթաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Մ. Մ. Մարգարյան, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Է. Գ. Միրնասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Մ. Մ. Միրիչանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Կ. Ս. Մոսոյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
  - Յու. Ս. Չիլինգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Հ. Յ. Սայաթյան, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
  - Ռ. Ա. Սաֆրասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
  - Ա. Հ. Մինոնյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
  - Հ. Ս. Միսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)**  
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ ИНСТИТУТА  
НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ  
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА  
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
№ 2 (88). 2016  
Издается 4 раза в год

**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ**

*Котангжян Г. С.*, доктор политических наук (РФ), профессор, действительный избранный член Академии военных наук РФ, научный эксперт по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор), *Аветисян В. Н.*, *Айвазян Л. Г.*, *Айджинян Р. А.*, *Алексян А. Дж.*, *Априамов Э. А.*, *Варганян А. Г.*, *Давтян А. М.*, *Елчян Н. И.*, *Исаханян М. Р.*, *Каграманян А. Б.*, *Маргарян В. Г.*, *Мартиросов Л. А.*, *Назарян А. С.*, *Погосян Б. П.*, *Саргсян В. Р.*, *Седракян С. Г.*, *Тер-Григорьянц Н. Г.*, *Тоноян Д. Э.*, *Хачатрян К. А.*, *Хачатрян Т. В.*, *Хачатуров Ю. Г.*, *Шахназарян Т. Н.*, *Ширинян М. А.*, *Яланузян А. К.* (зам. глав. ред.)

**СОДЕРЖАНИЕ**

**ОБОРОННАЯ СИСТЕМА**

**В УСЛОВИЯХ ПАРЛАМЕНТСКОГО ПРАВЛЕНИЯ**

- Г. С. Котангжян.* Оборонно-безопасностная система парламентской республики: стратегическое политологическое осмысление уроков Израиля и Грузии ..... 9 (20)\*
- А. Р. Арутюнян.* Оборонная система РА и парламентский контроль над Вооруженными силами в условиях парламентского правления ..... 27 (43)
- А. Г. Вагаршян.* Форма государственного правления и проблема обороны и безопасности государства ..... 45 (52)
- Л. Г. Айвазян.* Оборонная политика РА в условиях перехода к парламентской форме правления ..... 54 (61)

**ВОЕННАЯ НАУКА**

- А. К. Оганесян.* Некоторые вопросы определения и классификации гибридных войн ..... 62 (72)

**ЭКОНОМИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ**

- А. Г. Давтян.* Перспективы развития финансового рынка РА в условиях снижения уровня экспорта и трансфертов ..... 73 (82)

**МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**

- Г. М. Аршакян.* Турецко-российские отношения в 2002–2016 гг. в контексте политики, проводимой Турцией на Южном Кавказе .... 83 (95)

\* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

## **КИБЕРБЕЗОПАСНОСТЬ**

*А. Г. Григорян.* Моделирование инвестиций в сфере кибер-безопасности в условиях большой неопределенности . . . . . 97 (101)

## **МЕЖДУНАРОДНОЕ ГУМАНИТАРНОЕ ПРАВО**

*Г. М. Григорян.* Некоторые проблемы квалификации военных преступлений, совершаемых Вооруженными силами Азербайджана в Нагорно-Карабахской Республике . . . . . 103 (114)

## **ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ**

*А. Б. Григорян.* Способы усиления конструкций мостов . . . . . 116 (121)

## **ВОЕННАЯ МЕДИЦИНА**

*А. Р. Амбарцумян, Р. Г. Киракосян, Г. Р. Варганян, Г. М. Пашикян, Т. Г. Аветисян.* Возможности применения в системе медицинского обеспечения ВС РА передвижного полевого госпиталя «Роль-2» . . . 123 (129)

## **НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:**

*Р. В. Агузумцян,* кандидат психологических наук, профессор;

*Н. У. Аракелян,* академик НАН РА;

*Л. С. Арзуманян,* доктор филологических наук;

*Б. Н. Арутюнян,* доктор медицинских наук, профессор;

*В. М. Арутюнян,* академик НАН РА;

*Г. Е. Багдасарян,* академик НАН РА;

*С. А. Галстян,* доктор филологических наук, профессор;

*С. Г. Галстян,* доктор медицинских наук, профессор;

*Г. А. Геворкян,* академик НАН РА;

*К. С. Даниелян,* кандидат биологических наук, доктор географических наук;

*А. А. Манташян,* академик НАН РА;

*М. М. Маргарян,* доктор политических наук, профессор;

*Г. Г. Матевосян,* член-корреспондент НАН РА;

*Э. Г. Минасян,* доктор исторических наук, профессор;

*М. М. Мириджанян,* доктор медицинских наук, профессор;

*К. С. Мосоян,* доктор технических наук, профессор;

*Р. А. Сафрасян,* академик НАН РА,

*О. Я. Саядян,* доктор географических наук, профессор,

*А. Г. Симонян,* член-корреспондент НАН РА,

*А. С. Сисакян,* доктор медицинских наук, профессор;

*Ю. С. Чилингарян,* академик НАН РА

# «**HAIKAKAN BANAK**» («**ARMENIAN ARMY**»)

DEFENSE-ACADEMIC JOURNAL,  
DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES,  
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 2 (88). 2016

Is published 4 times a year

## **EDITORIAL BOARD**

*Kotanjian H. S.*, Doctor of Political Sciences (RF), Professor, Elected Member of the Academy of Military Sciences (RF), Counterterrorism Fellow (USA) (Chairman),  
*Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Alexanyan A. J.*, *Apreamov E. A.*, *Avetisyan V. N.*,  
*Ayvazyan L. G.*, *Davtyan A. M.*, *Idinyan R. A.*, *Isakhanyan M. R.*, *Kaghramanyan A. B.*,  
*Khachatourov Yu. G.*, *Khachatryan K. A.*, *Khachatryan T. V.*, *Margaryan V. H.*,  
*Martirossov L. A.*, *Nazaryan A. S.*, *Poghosyan B. P.*, *Sargsyan V. R.*, *Sedrakyan S. G.*,  
*Shahnazaryan T. N.*, *Shirinyan M. A.*, *Ter-Grigoryants N. G.*, *Tonoyan D. E.*,  
*Vardanyan A. G.*, *Yalanuzyan A. K.* (Deputy Editor-in-Chief), *Yolchyan N. I.*

## **CONTENTS**

### **THE DEFENSE SYSTEM UNDER THE PARLIAMENTARY GOVERNMENT**

- H. S. Kotanjian.* The defense-security system of the parliamentary republic: strategic comprehension of the lessons of Israel and Georgia based on political science ..... 9 (23) \*
- A. R. Harutyunyan.* The RA's defense system and the parliamentary control over the Armed Forces under the parliamentary government .. 27 (44)
- A. G. Vagharshyan.* The form of government and the problem of national defense and security ..... 45 (53)
- L. G. Ayvazyan.* The RA's defense policy under the transition to the parliamentary form of government ..... 54 (61)

### **MILITARY SCIENCE**

- A. K. Hovhannisyan.* On some issues of defining and classifying hybrid wars ..... 62 (72)

### **ECONOMIC SECURITY**

- A. G. Davtyan.* The perspectives of developing the RA financial market in conditions of exports and transfers reduction ..... 73 (82)

### **INTERNATIONAL RELATIONS**

- G. M. Arshakyan.* The Turkish–Russian relations in 2002–2016 in the context of the policy adopted by Turkey in the South Caucasus ..... 83 (96)

---

\* Numbers in brackets mean the page of the text in English.

## **CYBERSECURITY**

*A. H. Grigoryan.* Modeling investments in cybersecurity in conditions of deep uncertainty ..... 97 (102)

## **INTERNATIONAL HUMANITARIAN LAW**

*H. M. Grigoryan.* Some problems of subsuming the war crimes committed by the Armed Forces of Azerbaijan in the Nagorno-Karabakh Republic ..... 103 (115)

## **MILITARY ENGINEERING**

*A. B. Grigoryan.* The reinforcement methods of bridge structures ... 116 (122)

## **MILITARY MEDICINE**

*A. R. Hambardzumyan, R. G. Kirakosyan, G. R. Vardanyan, G. M. Pashikyan, T. H. Avetisyan.* The possibilities of using the "Role-2" mobile field hospital in the Medical Support System of the Armed Forces of the RA ..... 123 (130)

## **ACADEMIC-ADVISORY COUNCIL:**

*R. V. Aghouzoumstian,* Candidate of Psychological Sciences, Professor;

*N. H. Arakelian,* Full Member, NAS RA;

*L. S. Arzumanyan,* Doctor of Philology;

*G. Y. Baghdassarian,* Full Member, NAS RA;

*Yu. S. Chilingarian,* Full Member, NAS RA;

*K. S. Danielyan,* PhD in Biology, Doctor of Geography;

*S. A. Galstyan,* Doctor of Philology, Professor;

*S. G. Galstyan,* Doctor of Medical Sciences, Professor;

*H. A. Gevorkian,* Full Member, NAS RA;

*B. N. Harutyunyan,* Doctor of Medical Sciences, Professor;

*V. M. Haroutyunian,* Full Member, NAS RA;

*A. H. Mantashian,* Full Member, NAS RA;

*M. M. Margaryan,* Doctor of Political Sciences, Professor;

*H. H. Matevosyan,* Corresponding Member, NAS RA;

*E. G. Minasyan,* Doctor of Historical Sciences, Professor;

*M. M. Miridjanian,* Doctor of Medical Sciences, Professor;

*K. S. Mossoyan,* Doctor of Technical Sciences, Professor;

*R. A. Safrastyan,* Full Member, NAS RA;

*Hov. Y. Sayadyan,* Doctor in Geography, Professor;

*A. H. Simonyan,* Corresponding Member, NAS RA;

*H. S. Sissakian,* Doctor of Medical Sciences, Professor

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ  
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ОБОРОННАЯ СИСТЕМА  
В УСЛОВИЯХ ПАРЛАМЕНТСКОГО  
ПРАВЛЕНИЯ

THE DEFENSE SYSTEM  
UNDER THE PARLIAMENTARY GOVERNMENT



**ԽՈՐՀՐԳԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ-ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ.  
ԻՍՐԱՅԵԼԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԱՍԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄ**

Հայաստանի Հանրապետությունում իրագործվող սահմանադրական վերափոխումները, որոնք նպատակաուղղված են պետական կառավարման համակարգը կիսանախագահականից խորհրդարանականի կերպափոխելուն, հարուցում են ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգության համար նոր մարտահրավերներ և սպառնալիքներ, որոնք ապրիլյան Չորսօրյա պատերազմի հաշվառմամբ հղի են պետականության կորսման և անգամ ՀՀ-ում ու ԼՂՀ-ում բնակվող հայության ֆիզիկական բնաջնջման վտանգով: Այս երկու հայկական պետությունների ազգային անվտանգության համակարգը անհրաժեշտ ու բավարար մակարդակում պահպանելու պրոբլեմներով մտահոգվածության համատեքստում մեր հանդեսի խմբագրությունը դիմեց ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետ, քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԳ), ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի հրավիրված պրոֆեսոր, ՌԳ Ռ-ազմական գիտությունների ակադեմիայի ընտրված իսկական անդամ, հակահաբեկչության գծով գիտնական-փորձագետ (ԱՄՆ), ՀԱՊԿ-ի գիտափորձաքննական խորհրդի անդամ գեներալ-լեյտենանտ Հ. Ս. Քոթանջյանին՝ խնդրելով գնահատել ըստ խորհրդարանական մոդելի պետական իշխանության կազմակերպվածքով տարբեր պետությունների պաշտպանության համակարգի գործունեության արդյունավետությունը: Պրոֆեսոր Հ. Ս. Քոթանջյանն առաջարկեց որպես օրինակ վերլուծել Իսրայելի և Վրաստանի փորձը:



**— Պարոն գեներալ, ո՞րն է Ձեր կարծիքով, 20-րդ դարում վերապրած ազգային աղեկներից հայ և հրեա ժողովուրդների քաղած դասերի նմանությունը:**

Առաջավոր Ասիայում ու Մերձավոր Արևելքում քաղաքակրթական համակարգերի ձևավորման այս երկու հնագույն մասնակիցների նշանակալից յուրահատկություններով հանդերձ՝ նրանց միավորում են այն քաղաքական դասերը, որոնք նրանք քաղել են 20-րդ դարի երկու համաշխարհային պատերազմների ընթացքում իրենց վերապրած ազգային աղետներից՝ Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանությունից և Եվրոպայում հրեաների նկատմամբ ձեռնարկված Ցեղասպանություն-Ռոջակիզումից: Այս երկու ժողովուրդն էլ իրենց համատարած բնաջնջման եզրին հասցրած ազգային աղետներին համաշխարհային պատերազմների ավարտից հետո պատասխանեցին հնագույն բազմահա-

զարամյա պետականության մշակույթի վերածննդով և ազգային պետությունների՝ Հայաստանի Հանրապետության և Իսրայելի Պետության ստեղծմամբ: Այս երկու վերաստեղծված ազգային պետությունների միջև մյուս նմանությունն այն է, որ և՛ Հայաստանի Հանրապետությունը 1918 թ., և՛ Իսրայելի Պետությունը 1948 թ., հռչակվեցին որպես խորհրդարանական հանրապետություններ:

**— Իսրայելի Պետության անվտանգության ու կայուն զարգացման քաղաքական ապահովման երաշխավորվածության տեսակետից ի՞նչ գնահատական կտալիք Իսրայելի ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներին և խորհրդարանական մոդելով կազմակերպված պետական իշխանության արդյունավետությանը:**

Իսրայելի անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներն իրենց մակարդակով չեն զիջում Հայաստանի անվտանգության համար եղած սպառնալիքներին. իսլամական պետությունների մեծ մասը Իսրայելի գոյությունը համարում է ապօրինի (նրան ճանաչել են միայն Եգիպտոսը, Հորդանանը և Թուրքիան) և բացեիքաց հայտարարում է նրան ոչնչացնելու անհրաժեշտության մասին: Այդ մահմեդական պետությունների քաղաքականությունը, ինչպես նաև ծայրահեղական իսլամի այն ոչ պետական դերակատարները, որոնք ենթարկվում են նրանց ձեռնածություններին, Իսրայելի գոյության համար արտաքին ու ներքին սպառնալիքներ են: Իսրայելի գոյության օրինականությունը հարցականի տակ են դնում նաև արմատական ուղղափառ հուդայականության կողմնակիցները (ըստ նրանց՝ ղեկավարն Աստվածն է, և ուրիշ ոչ ոք չի կարող իշխել հրեա ժողովրդի վրա):

Իսրայելի քաղաքական-անվտանգային վերլուծաբաններն առանձնացնում են պետության գոյության համար սպառնալիք ներկայացնող ռազմավարական խոցելիության այն երեք բաղադրատարրերը, որոնք Իսրայելի Ազգային անվտանգության ռազմավարությունում դիտվում են որպես տրվածություն: Դրանք են. 1) արաբական (իսլամական) պետությունների հսկայական ժողովրդագրական առավելությունը, 2) ռազմավարական խորություն չլիներու պատճառով սահմանների խոցելիությունը (Իսրայելի տարածքի լայնությունը առանձին հատվածներում չի գերազանցում 15 կմ-ն), 3) երկարատև կոշտ հակամարտությունում հակառակորդին զսպելու անհրաժեշտությունը, ինչի համար պահանջվում է պաշտպանական կարիքների բավարարման վրա ծախսել հսկայական ռեսուրսներ. 1947–1949 թթ.՝ Անկախության համար պատերազմ, 1956 թ.՝ Սուեզյան պատերազմ, 1967 թ.՝ Վեցօրյա պատերազմ, 1967–1970 թթ.՝ Հյուսիսային պատերազմ, 1973 թ.՝ Վերջին դատաստանի օրվա պատերազմ, 1982–2000 թթ.՝ Առաջին լիբանանյան պատերազմ, 1991 թ.՝ Իսրայելի մասնակցությունը Պարսից ծոցի պատերազմին, 2006 թ.՝ Երկրորդ լիբանանյան պատերազմ, 2008–2009 թթ.՝ «Չուլածո արճիճ» օպերացիա (պատերազմ Գազայում):

Խորհրդարանականության իսրայելական մոդելի պայմաններում ներքին քաղաքական հակամարտությունների լուծման, ինչպես նաև արտաքին սպառնալիքների արդյունավետ հետմղման գործիքակազմը 68 տարվա ընթացքում ապացուցել է

իր գործունեությունը. Կնեսետի յուրաքանչյուր գումարման գործունեության քառամյա ժամկետի սահմանվածության պայմաններում նրա փաստացի միջին տևողությունը Իսրայելի ամբողջ գոյության ընթացքում եղել է բավականաչափ մեծ՝ կազմելով 3,5 տարի: Տվյալ դեպքում քաղաքական ճգնաժամների կառավարման արդյունարարության հիմնական պատճառը իսրայելական խորհրդարանական մոդելի համակարգայնությունն է, որն արտացոլում է ինչպես Իսրայելում, այնպես էլ ընդհանրապես համաշխարհային հրեության համակարգում հրեա ժողովրդի ազգային անվտանգության ու կայուն զարգացման ռազմավարական շահերը:

Ամփոփելով Ձեր հարցի պատասխանը՝ հարկ եմ համարում առանձնակի շեշտել այն փաստը, որ Իսրայելի Պետության հիմնադրման օրվանից նրա ազգային անվտանգության քաղաքականությունը խարսխվում է երկու գործոնների վերաբերյալ համապարփակ ազգային համաձայնության վրա: Առաջինը Իսրայելի հրեաների նկատմամբ ցեղասպանության իրագործման ռեալ վտանգի գոյության, երկրորդը՝ հրեական ժողովրդի ու պետականության գոյության դեմ ուղղված տվյալ սպառնալիքին դիմակայելու համար բոլոր հրեաների համազգային համախմբման բարձր տոնուսն անընդհատ պահպանելու անհրաժեշտության գիտակցումն է:

**— Խնդրում ենք Իսրայելում իշխանության խորհրդարանական մոդելի էությունը համառոտակի ներկայացնել համապետական մասշտաբի որոշումների ընդունման և իրագործման գործընթացների ու դրանցում ներգրավված հիմնական դերակատարների արդյունավետության տեսակետից:**

Առաջին հերթին հարկ է նշել, որ ի պատասխան Ողջակիզման՝ Իսրայելի հիմնադիր հայրերը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշման հիման վրա հանգեցին հետևյալ եզրակացությանը. որպեսզի հրեական պետությունը ինչպես Սիոնում բնակվող հրեաների, այնպես էլ ամբողջ համաշխարհային հրեության համար դառնա անվտանգ ապաստան և կայուն առաջադիմական զարգացման փարոս, նա պետք է ստեղծվի որպես արդյունավետորեն գործող ժողովրդավարություն: Եվ այժմ այդ պետությունը Մեծ Մերձավոր Արևելքում փաստացի միակ արդյունավետ կերպով գործող ժողովրդավարությունն է, ինչպես նաև համաշխարհային հրեության համար կայուն ժողովրդավարական զարգացման փարոսը:

Տվյալ խորհրդարանական մոդելում բացառիկ կարևորություն ունի պետության անկուսակցական Նախագահի քաղաքական դերը, մի պաշտոնյայի, որին ընտրում է Խորհրդարանը՝ Կնեսետը, և որը, կատարելով պետության ղեկավարի արարողաբարձանագրային դերը, միևնույն ժամանակ օժտված է ռազմավարորեն կարևոր քաղաքական լիազորություններով: Նա պատգամավորների թվից առաջարկում է Վարչապետի թեկնածությունը՝ նրան հանձնարարելով կառավարության կազմավորման հարցով բանակցություններ վարել խորհրդարանում ներկայացված կուսակցությունների հետ:

Վարչապետը խորհրդարանում իր գլխավորած կառավարության կազմի հաստատումից հետո դառնում է Իսրայելի Պետության ազգային անվտանգության ու կայուն զարգացման երաշխավորության պետական կենտրոն: Նախագահի ա-

ռաջարկությամբ նա նախքան կազմի հաստատումը խորհրդարկումներ է անցկացնում այն կուսակցությունների հետ, որոնք կարող են Կնեսետում սատարել իր կառավարությանը, և պարզում է նրանց պահանջները՝ ինչպես քաղաքական բնույթի, այնպես էլ նախարարական և այլ գերատեսչական նշանակումների հարցում: Այդ խորհրդարկումների արդյունքներով կազմվում են կուսակցությունների դաշինք (կոալիցիա) և այդ դաշինքի քաղաքական ռազմավարությունը ձևավորող փոխհամաձայնեցված ուղենիշների համախումբն ամփոփող ծրագիրը:

Դաշինք կազմող կուսակցությունների հետ Վարչապետի վարած բանակցությունների արդյունքներով ընդունվում է նախարարական աթոռների բաշխման մասին որոշում: Պաշտոնների այդ բաշխման գործիք է ծառայում այսպես կոչված «նախարարական բանալին», այն է՝ Վարչապետին սատարող խորհրդարանական խմբակցությունների անդամների ընդհանուր թվի և կառավարությունում նախարարական աթոռների թվի հարաբերությունը: Յուրաքանչյուր խմբակցությանը բաժին հասնող պաշտոնների թիվը որոշվում է որպես Կնեսետում այդ խմբակցության անդամների թվի և «բանալու» արժեքի հարաբերություն: Առաջացող «մնացորդները» պորբեմը լուծվում է նախարարների տեղակալների և այլ պաշտոնատար անձանց նշանակումների միջոցով: Կարևոր է նշել հետևյալ հանգամանքը. քանի որ նախարարների մեծ մասը և նրանց բոլոր տեղակալները խորհրդարանի անդամներ են, Վարչապետն ստանում է իր վարած քաղաքականությանը Կնեսետի աջակցության և խորհրդարանի որոշումների վրա կառավարության ազդեցության լրացուցիչ ռեսուրս, ինչը հատկապես կարևոր է կառավարության օրենսդրական նախաձեռնությունների առաջնդման ժամանակ: Կառավարությունում հնարավոր են նաև փոխվարչապետի պաշտոնի առկայություն և համատեղումներ:

**–Ո՞րն է Խորայելի խորհրդարանական մոդելի յուրահատկությունը կառավարության լեգիտիմության ապահովման ու Կնեսետի կազմում կառավարության անդամների գործունեության առումով:**

Խորհրդարանի անդամներից Վարչապետի ու նախարարների ընտրությունը հաստատում է ոչ միայն Վարչապետի, այլև ամբողջ կառավարության լեգիտիմությունը: Կնեսետի հաստատումից հետո նախարարները վստահության քվե են ստանում ոչ միայն «ներքևից»՝ ժողովրդից (զանգվածների աջակցություն), այլև «վերևից»՝ խորհրդարանից (վերնախավի աջակցություն): Խորհրդարկումների արդյունքներով՝ համապատասխան հիմնավորմամբ, անհրաժեշտության դեպքում նախարարի թեկնածու կարող է լինել նաև ոչ պատգամավոր (սովորաբար՝ հեղինակություն վայելող մասնագետ): Կնեսետի անդամ նախարարի խորհրդարանական գործունեությունը ենթարկվում է որոշակի սահմանափակումների: Այսպես. նա չի կարող կատարել խորհրդարանական հարցապնդումներ, ձայն տալ հոգուտ կառավարությանն անվստահության, դառնալ Կնեսետի որևէ հանձնաժողովի անդամ: Երբեմն նախարարը, ստանձնելով այդ պաշտոնը, հրաժարվում է պատգամավորական մանդատից, սակայն նրա կուսակցությունը (դաշինքը) չի կորցնում տվյալ տեղը, որովհետև այն զբաղեցնում է կուսակցական ցուցակներում նրան հաջորդող անձը:

Ի տարբերություն այլ պետություններում կիրառվող պրակտիկայից, Իսրայելում փոխնախարարը քաղաքական դեմք է: Մասնավորապես՝ ըստ օրենքի նա պարտավոր է լինել Կնեսետի անդամ (ինչպես հիշում ենք, նախարարին նման անվերապահ պահանջ չի ներկայացվում), և նրա գործառույթների թվում է խորհրդարանի հետ նախարարության կապի ապահովումը: Փոխնախարարի նշանակումը և պաշտոնից ազատումը ոչ թե նախարարի, այլ Վարչապետի առանձնաշնորհն են (թեև չեն կարող կատարվել առանց նախարարի համաձայնության): Այդ մասին կառավարությունը տեղեկացնում է Կնեսետին, թեև դրա համար խորհրդարանի թույլտվություն չի պահանջվում: Հարկ է նշել, որ փոխնախարարի վրա ևս տարածվում են նախարարներին վերաբերող խորհրդարանական սահմանափակումները:

**– Խնդրում ենք համառոտակի ներկայացնել Իսրայելի խորհրդարանական իշխանության համակարգում Ազգային անվտանգության խորհրդին հարկացված տեղն ու դերը:**

Իսրայելի Պետության Ազգային անվտանգության խորհուրդը իշխանության հատուկ միջգերատեսչական գործիք է, որն ունի Իսրայելի Վարչապետին ու Կառավարությանը կից գործող՝ ազգային անվտանգության հարցերով բարձրագույն շտաբային խորհրդակցական համաժողովի առաքելություն: Իսրայելի ԱԱԽ-ը կատարում է միջգերատեսչական անվտանգային քաղաքականության ուղենիշների մշակման ու գերակայությունների շտկման համադասում, Իսրայելի ազգային անվտանգության ապահովման, ինչպես նաև կայուն զարգացման մշտազննում և ընթացքի վերլուծություն: Վարչապետի նախագահությամբ գործող այդ հատուկ մարմնի աշխատանքը համադասում է ԱԱԽ-ի քարտուղարը, որը նշանակվում է ազգային քաղաքականության ոլորտում բարձրագույն որակավորում ունեցող անկուսակցական մասնագետների թվից: Նրա գործունեությունը ենթակա չէ հրապարակման:

Իսրայելի Պետության Ազգային անվտանգության միջգերատեսչական քաղաքականության վերաբերյալ Ազգային անվտանգության խորհրդի մշակած առաջարկություններն անհասպող կերպով իրագործում է Վարչապետը՝ գործելով իր ղեկավարած Անվտանգության կաբինետի (Նեդ կաբինետ) միջոցով, որն օժտված է որոշումների ընդունման լիազորություններով և անհրաժեշտ ռեսուրսներով:

**– Իսրայելի ազգային անվտանգության համակարգում ի՞նչ տեղ է զբաղեցնում նրա Պաշտպանության բանակը:**

Իսրայելի Պաշտպանության բանակը՝ ՅԱՀԱԼ-ը (իվրիտով՝ «Յվա հագանա՝ լե-Հիսրաել»), Իսրայելի ազգային անվտանգության համակարգում զբաղեցնում է առանձնահատուկ տեղ: Իր ներկայիս տեսքով նա այն իրավիճակի ամմիջական հետևանքն է, որում հայտնվել էր իսրայելական ժողովուրդն իր պետականության ստեղծման պահից: Թշնամական օղակում գտնվող Իսրայելը չէր կարողանա գոյատևել, եթե չունենար պետական պաշտպանության այդպիսի համակարգ:

Ինչպես վերը նշել էինք, Իսրայելի պետական կազմակերպվածքը խորհրդարանական ժողովրդավարությունն է, ինչի հետևանքով էլ բանակը մեկուսացված է քաղաքականությունից, պաշտպանության նախարարությունը գլխավորում է քաղաքացիական անձ, որը նշանակվում է Վարչապետի որոշմամբ: Պաշտպանության նախարարն առաջ է մղում բանակի շահերը Կնեսետում և Կառավարությունում, հատկապես՝ բյուջեի բաշխման ժամանակ, սակայն գորքի փաստացի ղեկավարումն իրագործում է Գերագույն շտաբի պետը, որը կադրային զինվորական է:

Իսրայելում զինվորական ծառայությունը հույժ համբավաբեր է. ծառայությունից խուսափումը գնահատվում է որպես Իսրայելի քաղաքացուն ոչ վայել արարք, ընտրյալ մարտական գործառնասերում գորակոչիկների մրցակցությունը՝ մեկ տեղին տասնյակ մարդ է: Բայց գորացրվելուց հետո էլ իսրայելցին չի խզում կապը բանակի հետ. մինչև 40 տարեկանը լրանալը պետության քաղաքացիները ամեն տարի գորակոչվում են բանակ՝ պահեստագորայինների մեկամսյա հավաքների, մարդիկ մշտապես գտնվում են հանկարծակի ու շտապ գորահավաքային պատրաստության վիճակում:

**— Համառոտ ներկայացրեք, խնդրեմ, ՅԱՀԱԼ-ի կազմակերպվածքի յուրահայտությունը և արդյունավետության հիմքերը:**

Համընդհանուր գորահավաքի դեպքում ՅԱՀԱԼ-ը խաղաղ ժամանակվա բանակից, որում ծառայում են շուրջ 200 հազար զինծառայողներ, հաշվված ժամերում վերածվում է աշխարհի ամենամարտունակ բանակներից մեկի, մի բանակի, որի լավ ուսումնավարժեցված 800 հազար մարտիկներն ու հրամանատարները պատրաստ են մարտական խնդիրների կատարմանը:

Իսրայելի Պետության ազգային անվտանգության դեմ ուղղված մարտահրավերների առանձնահատկություններն արտացոլված են զինծառայողների մարտական պատրաստման համակարգում: Իսրայելական բանակի գլխավոր առանձնահատկություններից է շարային պատրաստման նկատմամբ ցուցաբերվող նվազագույն ուշադրությունը: Այնտեղ ասում են, թե իրենց բանակը ոչ թե գորահանդեսների, այլ պատերազմի համար է: Դա է պատճառը, որ ՅԱՀԱԼ-ի զինվորները հրապարակում ժամերով քայլելու փոխարեն կատարում են բազմակիլոմետրանոց սրընթաց երթեր, մշտապես կատարելագործում են զանազան տեսակի հրազենով հրաձգության վարպետությունը, ուսումնասիրում են տեխնիկան: ՅԱՀԱԼ-ում ծառայության մեկ այլ առանձնահատկությունն այն է, որ գորակոչիկները գործնականում իրենք են որոշում, թե որ գորամասում են ծառայելու: Իսրայելի բանակի ապագա զինվորը հանձնում է մի շարք թեստեր, որոնց արդյունքներով կազմվում է այն մասնագիտությունների ցանկը, որոնց նկատմամբ նա ըստ իր տվյալների ունի առավել մեծ հակումներ: Չորակոչիկն իրավունք ունի այդ ցանկից ընտրելու երեք մասնագիտություն, իսկ բանակն անում է ամեն հնարավորը, որպեսզի նա կարողանա ծառայել իր ընտրած պաշտոններից մեկում՝ բանակային համակարգի պահանջմունքներին համապատասխան:

Իսրայելում մեծ ուշադրություն է դարձվում սպայական կադրերի պատրաստ-

մանը: Կառավարության առաջին ղեկավար Դավիթ Բեն-Գուրիդունը հետևյալ կերպ է ձևակերպել այդ խնդիրը. Իսրայելին անհրաժեշտ է ունենալ ընտրյալ սպայակազմ, որը կատարելապես տիրապետի հաղթելու գիտությանը: Անհրաժեշտ է, որպեսզի մեծ մտավոր կարողություններով օժտված, հրեական պետության հիմնադիրների բարձր իդեալներին հավատարիմ երիտասարդներն իրենց կյանքը նվիրեն բանակի շարքերում Հայրենիքին ծառայությանը:

Ի տարբերություն Ռուսաստանից, որտեղ սպայական կադրերը պատրաստվում են ուսումնարաններում՝ դպրոցների երեկվա շրջանավարտներից, Իսրայելում սպա դառնալու ճանապարհն անցնում է պարտադիր շարքային ծառայությունով: Սպայական դասընթացների ընդունելության քննություններ հասնելու իրավունք ունեն միայն մանրակրկիտ ընտրագատում անցած լավագույն շարքայիններն ու սերժանտները: Թեկնածուներին ներկայացվում են շատ խիստ պահանջներ. միջնակարգ կրթության վկայականը պարտադիր է, նրանք պետք է ունենան 27 պարամետրներից բաղկացած՝ մտավոր ու ֆիզիկական զարգացածության մեծ գործակից, հաղթահարեն քննություններն ու բուժհետազոտությունը, ինչպես նաև ներկայացնեն իրենց նախկին անմիջական հրամանատարների երաշխավորագրերը:

Սպայական դասընթացներում ուսուցումը, դրանց կարճատևության պատճառով, շատ ինտենսիվ է և կուրսանտներից պահանջում է հսկայական բարոյականային ու ֆիզիկական ճիգեր: Նրան, ով չի կարողանում հաղթահարել նման գերլարումները, անհապաղ հեռացնում են դասընթացներից: Ռիսուցման ամբողջ համակարգն անքակտելիորեն կապված է ռեալ մարտական խնդիրների լուծման հետ. կուրսանտները ժամանակի մի զգալի մասն անցկացնում են դաշտում ու զորավարություններում, որտեղ գործնական եղանակով ամրապնդվում են ձեռք բերված տեսական գիտելիքները: Շեշտը դրվում է այն բանի վրա, որ սպագա սպաները յուրացնեն ստորաբաժանումների հրամանատարության գործունեական հմտությունները:

Բարձրագույն կրթությամբ մասնագետ սպաների պատրաստման համար ՅԱՀԱԼ-ում գործում է «Ատուդա» ծրագիրը: Ըստ դրա՝ քաղաքացիական բուհերում բանակին անհրաժեշտ մասնագիտություններով (որպես կանոն՝ տեխնիկական ու բժշկական) սովորող ուսանողներին տրամադրվում է զորակոչից տարկետում: Ռիսանողները կնքում են պայմանագիր, որով պարտավորվում են ուսումն ավարտելուց հետո բանակում ծառայել ոչ պակաս, քան հինգ տարի: Այդ ծրագրով սովորող ուսանողները ուսման տարիներին պարբերաբար զորակոչվում են բանակ, որտեղ անցնում են երիտասարդ մարտիկի մեկամսյա, ինչպես նաև հիմքային սպայական դասընթացներ: Իսրայելական համալսարաններում չկան ռազմագիտության ամբիոնների մասնակներ:

ՅԱՀԱԼ-ում, ռազմաուսումնական հաստատություններում կրթության ապահովման հետ մեկտեղ, կիրառվում է ակադեմիական կրթություն ստանալու համար ինչպես Իսրայելի, այնպես էլ արտասահմանյան համալսարաններ սպաների գործողման պրակտիկան: Համարվում է, որ սպան, գտնվելով ակադեմիական ազատության մթնոլորտում՝ առանց բանակային ենթակարգության համակարգի

ներգործության, ձեռք է բերում նախաձեռնողականություն և ամենաբարդ ու անսպասելի իրավիճակներում ոչ ստանդարտ որոշումներ կայացնելու և լուծումներ գտնելու ունակություն:

**— Կա՞ն արդյոք Իսրայելի Պաշտպանության բանակում պարտադիր ժամկետային ծառայության հատուկ ծրագրեր:**

ՅԱՀԱԼ-ում կան ծառայության մի շարք հատուկ ծրագրեր, այդ թվում.

ԻԵՇԻՎԱՐ ՀԱ-ՀԵՄԳԵՐ ծրագիրը. պարտադիր ժամկետային ծառայության հատուկ տարբերակ, երբ ծառայությունը զուգակցվում է ինժեժաների (միջնակարգ կրոնական դպրոց, ինժեժան-տեխնիկոս) ուսման հետ: Տվյալ տեսակի ծառայությունը նախատեսված է ինժեժանների աշակերտների-ՅԱՀԱԼ-ի գորակոչիկների համար: Նման ծառայության ժամկետը 4 տարի է, որից 16 ամիսը մարտական ծառայություն է, մնացածը՝ ուսում ինժեժանում: 2005 թ. այդ ծրագրով ՅԱՀԱԼ-ում ծառայող շարքայինների ու սպաների թվաքանակը հասել էր վեց հազարի, որոնց 88 %-ը ծառայում էր մարտական գործառնություն:

ՆԱՀԱԼ. հատուկ կանոնավոր ստորաբաժանումներ, որոնցում զինվորական ծառայությունը համատեղվում է նոր բնակավայրերում գյուղատնտեսական աշխատանքի հետ: ՆԱՀԱԼ-ի հենակետերը տեղաբաշխված են սահմանների երկայնքով ու կիրուցներում: ՆԱՀԱԼ-ի հիմնած բնակավայրի ամրացումից հետո բանակն այն հանձնում է քաղաքացիական իշխանություններին: ՆԱՀԱԼ-ում ծառայությունն ավարտելուց հետո դրա զինվորները կարող են մնալ ՆԱՀԱԼ-ի կազմում և շարունակել բնակվել իրենց հիմնած ավանում: Ծառայության ժամկետը կանանց համար 23 ամիս է, տղամարդկանց համար՝ 40 ամիս: ՆԱՀԱԼ-ի մարտիկները երկրի ծայրամասային շրջաններում հիմնել են տասնյակ ավաններ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՆԶԲԱՆԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (շնատ շերտ, այն է՝ «մեկ տարի ծառայություն»). պարտադիր ժամկետային ծառայությունից մինչև մեկ տարի ժամկետով տարկետում, որը տրվում է որևէ երիտասարդական շարժումում հասարակական հիմունքներով տեսուչ աշխատող կամ այլ ճանաչված հանրօգուտ գործունեությամբ զբաղվող երիտասարդ տղաներին և աղջիկներին:

ՄԻՆԶՉԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԳԱՍԸՆԹԱՅՆԵՐ (մեհինար կղամ ցվախոտ). պարտադիր ծառայությունից մինչև մեկ տարի ժամկետով տարկետում, որը տրվում է աշխարհիկ կամ կրոնական նախապատրաստական դասընթացներում ուսման շրջանակներում:

Իսրայելի Պաշտպանության բանակի տնօրինության տակ են գտնվում հարյուրավոր ՀԱԳՆԱ (Հոդդեյ նո՛ար՝ երիտասարդական գումարտակներ) ակումբներ, որտեղ նախագորակոչային տարիքի երիտասարդները (գերազանցապես նրանք, ովքեր չեն ավարտել պաշտոնական կրթությունը) ստանում են հանրակրթական ու զինվորական պատրաստություն: Կազմակերպության մեծ թվով անդամներ անցնում են օդաչուների, ծովայինների, իջագորայինների և այլ մասնագիտություններով նախնական պատրաստման դասընթացներ:

**— Պարոն Քոբանջյան, ինչպե՞ս եք Դուք վերաբերվում Հայաստանի Հանրապետությունում իշխանության կազմակերպվածքի խորհրդարանական մոդելին անցման ժամանակ իսրայելական մոդելի ու փորձի օգտագործման հնարավորությանը:**

Իհարկե, սխալ կլիներ ոչ քննադատաբար պատճենել Իսրայելի փորձը, և Սահմանադրության նախագծի մշակման պետական հանձնաժողովը նման քայլի չդիմեց: Որպես իսրայելական փորձի յուրահատկություն նշեմ այն փաստը, որ Իսրայելում իշխանության խորհրդարանական մոդելը հաջողությամբ գործում է Սահմանադրություն չլինելու պարագայում: Իշխանության համակարգի և պետական հաստատությունների քաղաքական գործունեության իրավական կարգավորում կատարում է հիմնական օրենքների համակարգը:

Իսրայելի խորհրդարանական մոդելի դեպքում, երբ իշխանությունը (ղեկավարման-կառավարման լիազորություններն ու ռեսուրսները) կենտրոնացած է իշխող միջկուսակցական դաշինքի ղեկավարի՝ Վարչապետի ձեռքում (մինչդեռ անկուսակցական Նախագահի դերը սահմանափակվում է արարողաարձանագրային գործառույթներով), ազգային անվտանգության երաշխավորված ապահովման դասերի օգտագործումը պահանջում է պրագմատիկ մոտեցում՝ ՀՀ քաղաքական մշակույթի յուրահատկությունների դատողական հաշվառմամբ:

Ավարտելով անվտանգության ապահովման իսրայելական համակարգի դիտարկումը՝ ես կնշեի Իսրայելի իշխանության խորհրդարանական մոդելի այն իրական ժողովրդավարականությունը, որն ի սկզբանե նպատակաուղղվեց համամասնական ընտրությունների արդյունքներով կուսակցությունների՝ խորհրդարան ցածր շեմով անցման պայմաններում կուսակցական-քաղաքական համակարգի զարգացմանը: Ընդսմին Իսրայելի քաղաքական գործիչները ու փորձագետները իրենց փորձն ամենևին էլ չեն համարում կատարյալ: Խելամիտ կերպով կիրառելով հրապարակային և թաքուն քննադատության գործիքները՝ նրանք աշխատում են թերությունների բացահայտման ու շտկման ուղղությամբ: Իսրայելում իշխանության խորհրդարանական մոդելի ժողովրդավարականությանը բնորոշ է բազմակարծության ու կուսակցական մրցակցության բարձր քաղաքական մշակույթը՝ զուգակցված անընդհատ քննադատությամբ, սխալների բացահայտմամբ ու դրանցից դասերի քաղմամբ, ինչը արվում է ժողովրդավարական հրեական պետության մշտական կատարելագործման նպատակով:

Այս առումով պատիվ ունեմ ընթերցողի ուշադրությունը հրավիրելու իսրայելական ինքնաքննադատական գնահատականների ու եզրակացությունների վերլուծության վրա, որն իմ հարցազրույցին հաջորդող հոդվածում կատարել է Մեծ Բրիտանիայի պաշտպանական ակադեմիայի Քրենֆիլդի համալսարանի միջազգային պաշտպանության և անվտանգության գծով մագիստրոս, Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների գծով մագիստրոս, ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի

մշտական հանձնաժողովի փորձագետ Ա. Հարությունյանը՝ հիմք ընդունելով իսրայելական աղբյուրները\*:

Եվ, իհարկե, պետք է շեշտել, որ Իսրայելի ժողովուրդը, գիտակցելով իր՝ որպես իշխանության գլխավոր աղբյուրի պատասխանատվությունն ու օգտագործելով արդյունավետ ժողովրդավարության գործիքարանը, երաշխավորված իրավունքների և ազատությունների, ինչպես նաև Իսրայելի Պետության առջև ստանձնած քաղաքացիական պարտավորությունների սահմաններում անում է ամեն անհրաժեշտը, որպեսզի Կնեսետի, ապա և Կառավարության կազմ ընտրվեն առավել արժանի անձինք:

**— Պարոն գեներալ, ԱՌՀԻ-ի մի խումբ վերլուծաբաններ 2014 թ. Վրաստանում անցկացրել են դաշպալին հեղափոխություններ՝ ուսումնասիրելով նաև այդ պեղությունում իշխանության կազմակերպման մոդելը: Բարի եղեք համառոտակի ներկայացնելու ուսումնասիրության արդյունքները մեզ հեղափոխող թեմայի համապետքաբար:**

Հայաստանի շուրջ ձևավորված անվտանգային միջավայրը, որում անընդհատ ծագում են ՀՀ և ԼՂՀ անվտանգության դեմ ուղղված ռազմական սպառնալիքներ, մեզ ստիպում է մանրակրկիտ կերպով կշռադատել իշխանության կազմակերպվածքի խորհրդարանական մոդելին անցման ուղղությամբ ձեռնարկվող յուրաքանչյուր քայլ, որպեսզի ոչ մի պահի չնվազի ՀՀ ու ԼՂՀ պաշտպանական անվտանգության համակարգի արդյունավետությունը: Այս առումով մենք, գիտակցելով այդ անցման ճանապարհին օբյեկտիվ ու սուբյեկտիվ դժվարությունների առաջացման հավանականությունը, անհրաժեշտ ենք համարում կատարել տվյալ ոլորտում ոչ միայն դրական միջազգային փորձի, ինչպիսին Իսրայելին է, այլև բացասական դասերի քննադատական քաղաքական-անվտանգային իմաստավորում, որպեսզի ՀՀ-ում կատարվող կերպափոխումներից բացառվեն այլ պետությունների թույլ տված սխալներն ու թերացումները:

Ուստի մենք նպատակահարմար ենք համարում Իսրայելի ավելի քան 60-ամյա փորձի հետ մեկտեղ սթափ կերպով գնահատել 2010 թ. Վրաստանում իրագործված սահմանադրական վերափոխումների ոչ համակարգայնության հետևանքով այնտեղ անկայունության օջախի ու քաղաքական-պետական բնույթի ներքին սպառնալիքների առաջացման վտանգը: Վրաստանի դասերն օգտակար են սահմանադրական վերափոխումների մշակման և իրագործման ժամանակ պետության գործունեության արդյունավետության սցենարային վերլուծություն չկատարելու հետևանքների գնահատման տեսակետից: Վրաստանում 2010 թ.

\* Այդ աղբյուրներից են՝ *Иехуда Бен-Меур*. Основные характеристики израильской системы организации обороны государства. «Национальная безопасность и демократия в Израиле», том первый: «Армия и политика в еврейском демократическом государстве». Израиль, 2007 (<http://online-books.openu.ac.il/russian/democracy-and-national-security/volume1/article6.html>); «IDF Structure» (<http://www.idf.il/1498-en/Dover.aspx>); «Budget Department». «Ministry of Defense» (<http://www.mod.gov.il/Departments/Pages/budget>); «Basic Law: The Government»; «Israel's Basic Law: The Military».

սահմանադրական վերափոխումների նախապատրաստման ժամանակ բավարար չափով չէին գնահատվել ներքին քաղաքական կայունության դեմ ուղղված այն սպառնալիքները, որոնք կարող էին առաջանալ իշխանության պետական կազմակերպվածքի մոդելի ոչ համակարգային փոփոխման հետևանքով:

Վրաստանի Սահմանադրությամբ և օրենսդրությամբ փաստորեն առաջադրվել է Նախագահի ու Վարչապետի լիազորությունների միջև հաստատությունական հակամարտություն: Խորհրդարանով ընտրվող Վարչապետը իր կոնտրասիզմացիաներով թույլ է տալիս համաժողովրդական եղանակով ընտրվող Նախագահի արտաքին քաղաքական գործունեությունը, այդ թվում՝ արտաքին անվտանգության ոլորտում: Պետության ղեկավարն իրավունք չունի առանց նախարարների կաբինետի ղեկավարի համաձայնության ստորագրելու միջազգային պայմանագրեր: Սինևույն ժամանակ, Սահմանադրության մեջ գրված է, որ միջազգային ասպարեզում Վրաստանը ներկայացնում է Նախագահը: Այս հաստատությունական հակամարտության բերումով 2015 թ. Նախագահը և Վարչապետը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային մասնակցելու համար Նյու Յորք ուղևորվեցին տարբեր պատվիրակությունների կազմում, ինչը ՄԱԿ-ի պրակտիկայում աննախադեպ փաստ է, որ մինևույն պետությունը ներկայացված լինի տարբեր պաշտոնական պատվիրակություններով:

Սահմանադրության համաձայն՝ Վրաստանի Նախագահը, լինելով Գերագույն գլխավոր հրամանատար և Ազգային անվտանգության խորհրդի ղեկավար, Վրաստանի արտաքին անվտանգության ոլորտում գործնականում չունի լիազորություններ: Որպես արդյունք՝ ազգային անվտանգության ոլորտում որոշումների ընդունումը Վրաստանում դարձել է անարդյունավետ: Անվտանգային որոշումների ընդունման գործում ստեղծված փակուղայնությունն արտացոլվում է այն իրողության մեջ, որ պետությունում փաստորեն զուգահեռաբար գործում են ազգային անվտանգության երկու խորհուրդներ, որոնք կից են իրար հետ հաստատությունական հակամարտության վիճակում գտնվող Նախագահին ու Վարչապետին: Այս հաստատությունական հակամարտությունն է՛լ ավելի է սրվում այն պատճառով, որ Վրաստանում, ի տարբերություն Իսրայելից, որտեղ Նախագահը անկուսակցական է, Վարչապետն ու Նախագահը, լինելով նույն խորհրդարանական կուսակցական դաշինքի ներկայացուցիչներ, կարող են անդամակցել տարբեր կուսակցությունների և, ըստ այդմ, իրենց պետական գործունեությամբ հետապնդել միանգամայն տարբեր կուսակցական-քաղաքական նպատակներ ու գերակայություններ:

Եվ այսպես. համապատասխանաբար Իսրայելի և Վրաստանի օրինակներով իշխանության պետական կազմակերպվածքի խորհրդարանական մոդելի դեպքում պաշտպանական-անվտանգային համակարգի արդյունավետության ապահովման դրական և բացասական դասերի կշռադատված իմաստավորումը կարող է դառնալ ներկայումս ՀՀ-ում և ԼՂՀ-ում ծավալվող սահմանադրական վերափոխումների արդյունավետ ղեկավարման համար գիտափորձաքննական հիմք:

ԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՀՀ ազգային անվտանգության ազնվավարություն»: ՀՀ ՊՆ ԱՌ-ՀԻ-ի «Հայկական բանակ» ազնվագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:
2. «Форма правления в Израиле» (<http://www.pro-israel.ru/forma-pravleniya-v-israele.html>).
3. «Армия обороны Израиля» (<http://www.mfa.gov.il/MFARUS/aboutisrael/State/Pages/StateArmy.aspx>).
4. Հ. Ս. Քոթանջյան, Պետության տարածքային պաշտպանության հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով: «Հայկական բանակ», 2009, հմ. 3:
5. «Государство Израиль. Государственное устройство». «Электронная еврейская энциклопедия» (<http://www.eleven.co.il/article/11735>).
6. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», ընդունված 06.12.2015 (<http://www.president.am/hy/constitution-2015>):
7. «Georgia's Constitution of 1995 with Amendments through 2013» ([https://www.constituteproject.org/constitution/Georgia\\_2013.pdf?lang=en](https://www.constituteproject.org/constitution/Georgia_2013.pdf?lang=en)).
8. «National Security Concept of Georgia» (<http://www.mod.gov.ge/assets/up-modul/uploads/pdf/NSC-ENG.pdf>).

ОБОРОННО-БЕЗОПАСНОСТНАЯ СИСТЕМА ПАРЛАМЕНТСКОЙ  
РЕСПУБЛИКИ: СТРАТЕГИЧЕСКОЕ ПОЛИТОЛОГИЧЕСКОЕ  
ОСМЫСЛЕНИЕ УРОКОВ ИЗРАИЛЯ И ГРУЗИИ\*

*Г. С. КОТАНДЖЯН, генерал-лейтенант, доктор политических наук (РФ),  
приглашенный ведущий профессор Национального университета обороны США,  
действительный избранный член Академии военных наук РФ, научный эксперт  
по контртерроризму (США), член Научно-экспертного совета ОДКБ,  
Начальник ИНСИ МО РА*

РЕЗЮМЕ

Существующая вокруг Армении безопасностная среда с постоянно возникающими военными угрозами заставляет особо тщательно взвешивать каждый шаг по осуществлению перехода РА к парламентской модели обустройства власти, чтобы предотвратить снижение эффективности системы оборонной безопасности РА и НКР. С учетом вероятности возникновения объективных и субъективных трудностей при этом переходе необходимо критическое политико-безопасностное осмысление не только положительного международного опыта в данной области, каковым обладает Израиль, но и негативных уроков – с целью выявления допущенных в практике иных государств ошибок и недоработок для их исключения из процесса трансформации РА в парламентскую республику.

Угрозы безопасности Израиля не уступают уровню угроз безопасности Армении: большинство исламских государств считает существование Израиля незаконным. При этом выделяются три компонента стратегической уязвимости,

\* Полный текст интервью на русском см. (<http://razmavaraget.wordpress.com>).

обусловливающих угрозу существованию страны: 1. Огромное демографическое преимущество арабских (исламских) государств; 2. Уязвимость границ из-за отсутствия стратегической глубины (ширина территории Израиля на ее отдельных участках не достигает пятнадцати километров); 3. Необходимость сдерживать противника в продолжительном жестком конфликте, требующая вложений огромных ресурсов на оборонные нужды.

Инструментарий разрешения внутривнутриполитических конфликтов, а также успешного парирования внешних угроз в израильской модели парламентаризма доказал свою эффективность в течение 68 лет. Причина продуктивности управления политическими кризисами заключается в системности израильской парламентской модели, отражающей стратегические интересы национальной безопасности и устойчивого развития еврейского народа как в Израиле, так и в системе мирового еврейства в целом. Причем со дня основания Государства Израиль его политика национальной безопасности основывается на всеобъемлющем национальном консенсусе вокруг существования реальной угрозы геноцида в отношении евреев Израиля и необходимости в непрерывном поддержании высокого тонаса общенациональной сплоченности всех евреев для противодействия этой угрозе.

Демократию парламентской модели власти в Израиле отличает высокая политическая культура плюрализма мнений и партийной конкурентности с непрерывной критикой, выявлением ошибок и вынесением из них уроков для совершенствования демократического еврейского государства. В парламентской модели Израиля исключительно важна политическая роль беспартийного Президента, который, избираясь парламентом – Кнессетом и исполняя церемониально-протокольную роль главы государства, наделен стратегически важными политическими полномочиями: он из числа депутатов предлагает кандидатуру Премьер-министра.

Премьер-министр после утверждения парламентом возглавляемого им правительства становится государственным центром гарантирования национальной безопасности и устойчивого развития Государства Израиль.

При Премьер-министре и Правительстве Израиля действует Совет национальной безопасности Государства Израиль, который является специальным межведомственным инструментом власти с миссией высшего штабного совещательного форума по вопросам национальной безопасности. Совнацбез Израиля осуществляет координацию разработки ориентиров и коррекции приоритетов межведомственной безопасностной политики, мониторинг и анализ процесса обеспечения национальной безопасности, а также устойчивого развития Израиля. Координатором деятельности этого специального органа, действующего под председательством Премьера, является Секретарь Совнацбеза, который назначается из числа не состоящих в партиях специалистов высшей квалификации в области политики национальной безопасности. Содержание его деятельности не подлежит огласке.

Рекомендации по межведомственной политике национальной безопасности, вырабатываемые Совнаббезом Государства Израиль, без промедления осуществляются Премьером через руководимый им Кабинет безопасности (Узкий кабинет), наделенный необходимыми полномочиями принятия решений и ресурсами.

В системе национальной безопасности Израиля особое место занимает Армия обороны Израиля – ЦАХАЛ, которая отделена от политики. Главой министерства обороны является гражданский чиновник, который назначается решением Премьер-министра. Министр обороны отстаивает интересы армии в Кнессете и в Правительстве, в первую очередь – при распределении бюджета, реально же войсками руководит Начальник Генерального штаба – кадровый военный.

Престиж военной службы в Израиле высок – уклонение от армейской службы расценивается как недостойное гражданина Израиля поведение. Но и после демобилизации вся жизнь израильтян связана с армией – до сорокалетнего возраста их ежегодно призывают в армию на месячные сборы резервистов, люди находятся в состоянии постоянной готовности к неожиданной и срочной мобилизации.

В случае всеобщей мобилизации ЦАХАЛ в считанные часы из армии мирного времени, в которой проходит службу около 200 тысяч военнослужащих, превращается в одну из самых боеспособных армий мира, 800 тысяч хорошо обученных бойцов и командиров которой готовы к выполнению боевых задач. Одна из основных особенностей израильской армии – минимальное внимание к строевой подготовке, поскольку «армия не для парадов, а для войны».

Особая важность придается подготовке офицеров, в совершенстве владеющих наукой побеждать. Большое внимание уделяется тому, чтобы обладающая высоким интеллектом, преданная идеалам основателей еврейского государства молодежь посвятила свою жизнь делу служения Родине в рядах ее армии.

Уроки Грузии полезны с точки зрения оценки пренебрежения сценарным анализом эффективности деятельности государства при разработке и реализации конституционных реформ. В Грузии при подготовке Конституционной реформы 2010 года не были в должной мере оценены возможные угрозы внутривластной стабильности в результате несистемного реформирования модели государственного обустройства власти.

Конституцией и законодательством Грузии фактически номинирован институциональный конфликт между полномочиями Президента и Премьера. Премьер Грузии, избираемый парламентом, разрешает своими контраггациями внешнеполитическую деятельность всенародно избираемого Президента, в том числе по вопросам внешней безопасности. Глава государства не имеет права подписывать международные договоры без согласия руководителя кабинета министров. Вместе с тем в той же Конституции записано, что Президент представляет Грузию на международной арене.

Президент Грузии, согласно Конституции, являясь Верховным Главнокомандующим и руководителем Совета национальной безопасности, фактически не полномочен в сфере внешней безопасности Грузии. Тупиковость в принятии безопасностных решений отражается в ситуации, когда в государстве фактически параллельно действуют два Совета национальной безопасности – при находящиеся в институциональном конфликте Премьер-министре и Президенте Грузии. Данный институциональный конфликт усугубляется тем, что, в отличие от Израиля, где Президент беспартийный, в Грузии Премьер и Президент, будучи членами одной партийной парламентской коалиции, могут представлять разные партии, притом преследуя в своей государственной деятельности разные партийно-политические приоритеты.

Тем самым, взвешенное осмысление положительных и негативных уроков обеспечения эффективности оборонно-безопасностной системы при парламентской модели государственного обустройства власти на примерах, соответственно, Израиля и Грузии может стать научно-экспертным подспорьем для эффективного руководства процессом конституционных реформ, ныне разворачивающихся в Армении и НКР.

## THE DEFENSE-SECURITY SYSTEM OF THE PARLIAMENTARY REPUBLIC: STRATEGIC COMPREHENSION OF THE LESSONS OF ISRAEL AND GEORGIA BASED ON POLITICAL SCIENCE\*

*H. S. KOTANJIAN, LTG, Doctor of Political Sciences (RF); Distinguished Visiting Professor, NDU, US; Full Elected Member of the Academy of Military Sciences of the Russian Federation, Counterterrorism Fellow (US); Member of the Academic-Expert Council of the CSTO; Head, INSS, MOD, RA*

### SUMMARY

Armenia's current security environment with its constantly emerging military threats necessitates a very careful deliberation of every move towards accomplishing the country's transition to the parliamentary model of government – to prevent the decline in efficiency of Armenia's and NKR's defense security systems even for a minute. Given the likelihood of objective and subjective difficulties in the way of this transition, there must be critical political-security comprehension not only of positive international experience in this field, as in the case of Israel, but also of negative lessons – with a view to identifying the mistakes and flaws made in the practice of other states, in order to exclude them while transforming Armenia into a parliamentary republic.

The threats to the security of Israel do not yield to the level of Armenia's security threats: the majority of Islamic countries consider the existence of Israel

---

\* The full version of the interview in English see (<http://razmavaraget.wordpress.com>).

as being illegal. With this, there are three components of strategic vulnerability, calling forth the threat to the country's existence: 1. the considerable demographic advantage of the Arab (Islamic) states; 2. the vulnerability of borders because of the lack of strategic depth (the width of the Israeli territory on its separate portions does not reach fifteen kilometers); 3. the need to deter the enemy in a long and severe conflict that requires investments of vast resources for defense needs.

In the parliamentary model of Israel the tools for resolving domestic political conflicts, as well as successfully countering external threats have proven to be effective for 68 years. The reason for the efficiency of managing political crises is the systemic nature of the Israeli parliamentary model, which reflects strategic interests of the national security and sustainable development of the Jewish people both in Israel and in the system of the World Jewry as a whole. Furthermore, since the establishment of the State of Israel, the country's national security policy has been based on a comprehensive national consensus around the existence of a real threat of genocide against the Jews of Israel and the need to continuously maintain vim and vigor for the national unity of all Jews to counter this threat.

The democracy of the parliamentary model of government in Israel is characterized by the high political culture of pluralism of views and party competition with continuous criticism, by the identification of mistakes and lessons learned aimed at the improvement of the democratic Jewish state. The political role of the non-party President is extremely important in the parliamentary model of Israel. The President, being elected by the Parliament – the Knesset, and performing ceremonial and protocol role of the head of state, is endowed with strategically important political powers: he proposes a candidate for Prime Minister's position from among the Members of Parliament.

The Prime Minister – after the approval by the Parliament of his/her Government – becomes the state center of guaranteeing the national security and sustainable development of the State of Israel.

The National Security Council (NSC) of the State of Israel operates under the Prime Minister and the Government of Israel, being a special interagency instrument of power with the mission of a higher collegial advisory forum on national security. The NSC of Israel coordinates the development of guidelines and the adjustment of interagency security policy priorities, monitors and analyzes the process of ensuring the national security, as well as the sustainable development of Israel. The coordinator of the activities of this special body under the chairmanship of the Prime Minister is the Secretary of the NSC, who is appointed from among the non-party highly qualified specialists in the field of national security policy. The content of the Secretary's activity is confidential.

The recommendations for interagency national security policy developed by the NSC of the State of Israel are immediately carried out by the Prime Minister through the Security Cabinet (Narrow Cabinet) headed by him/her, which is endowed with the necessary powers of decision-making, and resources.

The Israel Defense Forces (Tzahal) occupy a special place in Israel's national security system. The Tzahal is separated from politics. The Head of the Ministry of Defense is a civilian official, who is appointed by the decision of the Prime Minister. The Defense Minister upholds the interests of the Army in the Knesset and in the Government, first of all – during the budget allocation, but the real commander of forces is the Chief of General Staff – a military professional.

The prestige of military service in Israel is high – the draft evasion is regarded as unworthy behavior of an Israeli citizen. But even after the demobilization, the whole life of the Israeli people is linked with the Army – up to the age of forty every year they are drafted into the Army for the monthly assemblies of reservists; people are in a constant state of readiness for an unexpected and urgent mobilization.

In the case of Tzahal's general mobilization, in a matter of hours the peacetime army of about 200 thousand troops becomes one of the most efficient armies of the world, 800 thousand well-trained soldiers and commanders of which are ready to perform combat missions. One of the main features of the Israeli Army is the minimal attention to the drill, as “the Army is not for parades, but for war”.

Special importance is attached to the training of officers, who master science of winning. Great attention is paid to preparing the youth – highly intelligent and faithful to the ideals of the founders of the Jewish State – for devoting their life to serve the Motherland in the ranks of its army.

Georgia's lessons are useful in terms of assessing the disregard of the scenario analysis of the state's effectiveness while developing and implementing constitutional reforms. During the preparation of the Constitutional reforms of 2010 in Georgia, the possible threats to the internal political stability were not adequately assessed – due to the non-systemic reforming of the model of the state's government system.

By the Constitution and legislation of Georgia, an institutional conflict between the powers of the President and the Prime Minister is actually established. The Prime Minister of Georgia, elected by the Parliament, through countersigning authorizes the nationally-elected President to implement foreign policy – including the matters of external security. The Head of State has no right to sign international treaties without the consent of the Head of the Cabinet. At the same time, the Constitution says that the President represents Georgia in the international arena.

According to the Constitution, the President of Georgia, as the Commander-in-Chief and the Head of the National Security Council, actually has no authority in the field of Georgia's external security. The deadlockness of security decision-making is reflected in a situation with actually two National Security Councils operating in parallel in the state – under the institutional conflict between the Prime Minister and the President of Georgia. This institutional conflict is exacerbated by the fact that, unlike Israel with a non-party President, in Georgia the Prime Minister and the President, being the members of the same party coalition in the Parliament, may represent different parties, pursuing different party and political priorities in their state activities at that.

Thus, the deliberate comprehension of positive and negative lessons of ensuring the efficiency of the defense-security system under the parliamentary model of the state government – with specific reference to, respectively, Israel and Georgia – can become an academic-expert help for effectively managing the process of constitutional reforms currently underway in Armenia and NKR.

ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՁԻՆՎԱԾ  
ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԱԿԱՆ  
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԱԿԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

*Ա. Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Մեծ Բրիտանիայի պաշտպանական  
ակադեմիայի Քրեն.ֆիլոլի համալսարանի միջազգային պաշտպանության  
և անվտանգության գծով մագիստրոս, Երևանի պետական համալսարանի  
միջազգային հարաբերությունների գծով մագիստրոս, ՀՀ Ազգային ժողովի  
պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի  
մշտական հանձնաժողովի փորձագետ*



Սահմանադրության մեջ կատարված փոփոխություններին հետո Հայաստանի Հանրապետությունում սկսվելու է պաշտպանական բարեփոխումների նոր փուլ, որն առանցքային նշանակություն է ունենալու պետության պաշտպանության կազմակերպման արդյունավետությունը մեծացնելու տեսակետից: Իհարկե, կառավարման նոր համակարգին անցումը կարող է առաջ բերել որոշակի մարտահրավերներ, ինչպիսիք են, օրինակ, պաշտպանության կազմակերպման ոլորտում արդեն ձևավորված ավանդույթների վերացումը, ոլորտի օրենսդրության համապատասխանեցումը ոչ միայն սահմանադրական նորմերին, այլև կառավարման նոր համակարգի պահանջներին, նոր հաստատությունների և մեխանիզմների ձևավորումը: Միևնույն ժամանակ, Սահմանադրության փոփոխությունները կնպաստեն ավելի մեծ կարողություններով օժտված պաշտպանական համակարգի ձևավորմանը՝ բարելավելով պաշտպանության ոլորտում որոշումների ընդունման ընթացակարգը և բարձրացնելով դեկավար օղակների պատասխանատվության աստիճանը:

Դրա հետ մեկտեղ, խորհրդարանական կառավարումը, ինչպես կառավարման ցանկացած համակարգ, ևս ունի որոշակի խնդիրներ, ինչպիսիք են պաշտպանական համակարգի ղեկավարման, ՁՈՒ-ի նկատմամբ քաղաքացիական և խորհրդարանական վերահսկողության և այլ պրոբլեմներ: Այդուհանդերձ, այդ խնդիրների լուծումը կապված է ոչ այնքան սահմանադրական դրույթների, որքան օրենսդրությամբ դրանք մանրակրկիտ կերպով կարգավորելու անհրաժեշտության հետ:

ՀՀ-ՈՒՄ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման համակարգին անցնելու վերաբերյալ քննարկումների փուլում առանցքային հարցերից մեկը Ձինված ուժերի ղեկավարման խնդիրն էր: Հիմնական մտահոգությունը այն էր, թե խաղաղ ժամանակ զինված ուժերի գերագույն հրամանատար չլինելու պայմաններում, ինչպես է իրավական դաշտում կարգավորվելու Ձինված ուժերի

ենթակայության խնդիրը: Սակայն փոփոխված Սահմանադրությամբ տրված են Ձինված ուժերի ենթակայության, կիրառման և ղեկավարման հստակ կարգավորումներ: Կառավարման նոր համակարգում Ձինված ուժերը գտնվում են Կառավարության ենթակայության ներքո: Ձինված ուժերի կիրառման մասին որոշումն ընդունում է Կառավարությունը: Անհետաձգելի անհրաժեշտության դեպքում Ձինված ուժերի կիրառման մասին որոշումը, պաշտպանության նախարարի առաջարկությամբ, կայացնում է վարչապետը և այդ մասին անհապաղ տեղեկացնում Կառավարության անդամներին: Ոչ պատերազմական ժամանակ գլխավոր շտաբի պետը ենթակա է պաշտպանության նախարարին, իսկ պատերազմի ժամանակ Ձինված ուժերի Գերագույն հրամանատարը վարչապետն է<sup>1</sup>: Այսինքն՝ թե՛ պատերազմական, թե՛ ոչ պատերազմական ժամանակ Ձինված ուժերը ենթարկվում են քաղաքացիական իշխանությանը: Անհրաժեշտության դեպքում կա Ձինված ուժերի անհետաձգելի կիրառման հնարավորություն, որն իրացնում է վարչապետը: Բացի այդ, վարչապետը գլխավորում է Անվտանգության խորհուրդը, որը և սահմանում է պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները: Թեև պաշտպանության նախարարը լինելու է պաշտպանության ոլորտի քաղաքականության իրականացման հիմնական պատասխանատուն, ընդամին Ձինված ուժերի ղեկավարումը կատարվելու է Անվտանգության խորհրդի սահմանած ուղենիշների շրջանակներում:

Հարկ է նշել, որ սահմանադրական նորմերը տալիս են ՁՈՒ-ի ենթակայության, կիրառման և ղեկավարման ընդհանուր կարգավորումները: Սահմանադրության փոփոխություններից հետո ակնկալվում է նոր օրենսդրության ձևավորում: 2016 թ. ՀՀ Կառավարությունը հաստատել է այն օրենքների ցանկը, որոնք, ՀՀ Սահմանադրության փոփոխություններով պայմանավորված, ենթակա են ընդունման, փոփոխման կամ լրացման<sup>2</sup>: Նշված ցանկում ներառված են նաև պաշտպանության ոլորտի օրենքներ, որոնց թվում է «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը: Տվյալ օրենքով պետք է մանրակրկիտ կերպով կարգավորվեն ՁՈՒ-ի ենթակայության, կիրառման և ղեկավարման հարցերը: «Պաշտպանության մասին» օրենքով պաշտպանության կազմակերպումը պետք է համապատասխանեցվի կառավարման նոր համակարգի առանձնահատկություններին, սահմանվի Ձինված ուժերի նոր կառուցվածքը, հստակեցվեն պաշտպանության նախարարության, պաշտպանության նախարարի, գլխավոր շտաբի, գլխավոր շտաբի պետի լիազորությունները: Այդ համատեքստում պետք է լուծվեն մի շարք հարցեր:

Առաջին հարցը վերաբերում է Կառավարության և գլխավոր շտաբի պետի փոխհարաբերություններին: Համաձայն ՀՀ փոփոխված Սահմանադրության՝ Ձինված ուժերը գտնվելու են Կառավարության ենթակայության ներքո, սակայն

<sup>1</sup> Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն: Ընդունվել է 06.12.2015, հոդ. 155 (<http://www.president.am/hy/constitution-2015/>):

<sup>2</sup> Տես ՀՀ Կառավարության 2016 թ. մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների՝ օրենքով կարգավորման պահանջ ուղղակիորեն նախատեսող դրույթների հիման վրա ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների ցանկը հաստատելու մասին» հմ. 245-Ա որոշումը (<https://www.e-gov.am/gov-decrees/item/27005/>):

պարզ չէ, թե արդյոք սահմանված նորմը ենթադրում է նաև գլխավոր շտաբի պետի՝ որպես ՁՈՒ-ի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձի ենթակայություն Կառավարությանը կամ Վարչապետին: Այսինքն՝ անհրաժեշտ է լրացուցիչ պարզաբանում տալ այն հարցին, թե Կառավարությանը ՁՈՒ-ի ենթակայությունը արդյոք ենթադրում է նաև Ձինված ուժերի գլխավոր շտաբի պետի ենթակայություն Կառավարությանը կամ Վարչապետին: Դա վերաբերում է նաև անհետաձգելի իրավիճակներին, երբ ՁՈՒ-ի կիրառման մասին որոշումը կայացնում է վարչապետը: Այս հստակեցումը կարևոր է գլխավոր շտաբի պետի նկատմամբ կրկնակի կամ հսկասական իրավասությունից խուսափելու առումով:

Լիազորությունների հստակեցման տեսանկյունից ավելի բարդ է պաշտպանության նախարարի և Ձինված ուժերի գլխավոր շտաբի պետի լիազորությունների տարանջատման հարցը: Խորհրդարանական կառավարման համակարգում զգալիորեն ընդլայնվելու են պաշտպանության նախարարի լիազորությունները, քանի որ նա է փաստացիորեն լինելու պաշտպանության ոլորտի համար հիմնական պատասխանատու պաշտոնատար անձը: Անհրաժեշտ է հստակեցնել, թե որքանով է պաշտպանության նախարարի նոր կարգավիճակը ազդեցություն ունենալու Ձինված ուժերի ղեկավարման գործառույթի ընդլայնման վրա՝ հաշվի առնելով, որ Ձինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը գլխավոր շտաբի պետն է, որը գործնականում պատասխանատու է Ձինված ուժերի կառավարման և օպերատիվ-մարտավարական խնդիրների ապահովման համար: Ոչ պատերազմական ժամանակ բոլոր ռազմավարական-քաղաքական հարցերում գլխավոր շտաբի պետը պետք է ենթարկվի պաշտպանության նախարարին, մինչդեռ օպերատիվ-մարտավարական հարցերում պաշտպանության նախարարի միջամտությունը պետք է սահմանափակվի գլխավոր շտաբի պետի որոշումների հաստատմամբ: Այսինքն՝ պաշտպանության նախարարը կարող է խնդիր դնել գլխավոր շտաբի պետի առջև, իսկ թե ինչպես է այն կատարվելու՝ պետք է որոշի գլխավոր շտաբի պետը: Իրավասությունների մասն հստակ տարանջատումը բխում է նաև Ձինված ուժերում առաջադրանքով ղեկավարման «Առաջադրանքային կառավարման» («Առաջադրանքով հրամանատարում») հայեցակարգի պահանջներից, որի ներդրման մասին ՀՀ Պաշտպանության նախարարը հայտարարել է 2015 թվականին<sup>3</sup>: Առաջադրանքի միջոցով կառավարումը ենթադրում է ենթակաների նախաձեռնության խրախուսում և ղեկավարման ապակենտրոնացում, երբ առաջադրված խնդիրը լուծելու համար գործողությունների ընտրության հարցում ենթականերին տրվում է ազատություն<sup>4</sup>:

Պաշտպանության նախարարի և գլխավոր շտաբի պետի լիազորությունների տարանջատումից բացի, կարևոր է նաև պաշտպանության նախարարություն–գլխավոր շտաբ հաստատութենական տարանջատման հարցի դիտարկումը: Սահմանադրության փոփոխություններով, ինչպես նաև Պաշտպանության ռազ-

<sup>3</sup> Տես *U. U. Ohuljauli*, ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման էությունը և նպատակները: «Հայկական բանակ», 2015, հմ. 3:

<sup>4</sup> Տես *Eitan Shamir*. Transforming Command: The Pursuit of Mission Command in the US, British and Israeli Armies. Stanford University Press, 2011, P. 3:

մավարական վերանայման արդյունքներով պայմանավորված՝ հնարավոր են պաշտպանության նախարարության և գլխավոր շտաբի կառուցվածքային ու հաստատությունական փոփոխություններ: Այդ փոփոխությունների համաձայն՝ հարկավոր է տարանջատել պաշտպանության նախարարության և ՁՈՒ-ի գործառույթները ՁՈՒ-ի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն ամրապնդելու, ՁՈՒ-ում ծախսերի նկատմամբ վերահսկողության աստիճանը բարձրացնելու և, միևնույն ժամանակ, ՁՈՒ-ի օպերատիվ-մարտավարական խնդիրների կատարման համար բարենպաստ միջավայր ձևավորելու նպատակով:

Մյուս խնդիրը վերաբերում է կառավարության և պաշտպանության նախարարի հարաբերություններին և հաշվետվողականությանը: Համաձայն սահմանադրական նորմի՝ վարչապետը կարող է Կառավարության անդամներին տալ հանձնարարականներ<sup>5</sup>, իսկ պաշտպանության նախարարը Ձինված ուժերը ղեկավարում է պաշտպանության ոլորտում վարվող քաղաքականության այն ուղեմիշների շրջանակում, որոնք սահմանում է վարչապետի գլխավորած Անվտանգության խորհուրդը<sup>6</sup>: Թեև այդ նորմերը ցույց են տալիս, որ պաշտպանության նախարարը իր գործունեությունն իրականացնում է կառավարության սահմանած ընդհանուր պաշտպանական քաղաքական դրույթների շրջանակներում, անհրաժեշտություն է առաջանում հստակեցնելու կառավարության առջև պաշտպանության նախարարի հաշվետվողականության մեխանիզմները: Հասկանալի է, որ պաշտպանության նախարարը պարտավոր չէ յուրաքանչյուր հարցով հաշվետվություն ներկայացնել վարչապետին կամ կառավարությանը, այդուհանդերձ ընդհանուր պաշտպանական քաղաքականության կամ ավելի բարձր պետական մակարդակով որոշումներ կայացնելու պարագայում ՀՀ օրենսդրությամբ պետք է նախատեսվեն համապատասխան մեխանիզմներ: Այս առումով ակնկալվում է «Կառավարության մասին» ՀՀ օրենքի ընդունում, հետևաբար նպատակահարմար է տվյալ հարցի հստակեցումը տալ այդ իրավական ակտում:

Մյուս խնդիրը վերաբերում է պատերազմական և ոչ պատերազմական իրավիճակներին: Սահմանադրական դրույթներից հետևում է, որ պատերազմական և ոչ պատերազմական իրավիճակներում ունենք ՁՈՒ-ի ղեկավարման հետ կապված տարբեր կարգավորումներ: Հիմնական տարբերությունն այն է, որ պատերազմի ժամանակ ՁՈՒ-ի գերագույն գլխավոր հրամանատարը վարչապետն է, իսկ ոչ պատերազմական ժամանակ ՁՈՒ-ն ղեկավարում է պաշտպանության նախարարը:

Հատկանշական է, որ այսօրվա, պայմաններում, երբ ՀՀ և ԼՂՀ սահմաններում Ադրհ-ն մշտապես խախտում է հրադադարի ռեժիմը, բարդ է զանազանել, պատերազմական և ոչ պատերազմական իրավիճակները: Մինչև պատերազմ հայտարարելը, փաստորեն գործում են ոչ պատերազմական իրավիճակին բնորոշ իրավակարգավորումները: Սակայն, ինչպես ցույց տվեց ս. թ. ապրիլյան պատերազմը, անկախ այն հանգամանքից, թե արդյոք ռազմական գործողությունները իրավական առումով բնութագրվում են որպես պատերազմ, կարող է ստեղծվել

<sup>5</sup> Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», հոդ. 152 (<http://www.president.am/hy/constitution-2015/>):

<sup>6</sup> Տես նույն տեղում, հոդ. 155 (<http://www.president.am/hy/constitution-2015/>):

այնպիսի իրադրություն, երբ պահանջվեն պատերազմական կամ ոչ պատերազմական իրավիճակների համար նախատեսված իրավակարգավորումներից բացի նաև այլ իրավակարգավորումներ: Հաշվի առնելով, որ մենք փաստացի գտնվում ենք պատերազմական վիճակում, անհրաժեշտ են ճկուն իրավակարգավորումներ, որպեսզի լարված իրավիճակում պաշտպանական կառույցի աշխատանքի արդյունավետությունը և օպերատիվությունը պայմանավորված չլինեն պատերազմի հայտարարման կամ չհայտարարման փաստով: Այս առումով անհրաժեշտություն է առաջանում անգամ նոր սահմանումներ տալ «պատերազմ» և «անհետաձգելի անհրաժեշտություն» սահմանադրական-իրավական հասկացություններին:

ՀՀ պաշտպանական համակարգի ուսումնասիրության ժամանակ վերլուծվել է նաև միջազգային փորձը: Հատկանշական է, որ համակարգային մոտեցմամբ, ինչպես նաև ռազմաքաղաքական իրադրության տեսանկյունից ՀՀ իրականությանն առավել հարիր է Իսրայելի փորձը: Այդուհանդերձ, Հայաստանի և Իսրայելի կառավարման և պաշտպանության համակարգերն զգալիորեն տարբերվում են: Իսրայելը, արդյունավետ իրավակարգավորումների հետ մեկտեղ, գործնականում ունի խնդիրներ տարբեր մարմինների իրավասությունների կրկնակման, զինված ուժերի նկատմամբ ոչ արդյունավետ վերահսկողական մեխանիզմների և հաստատությունների գոյության առումով:

Այսպես. Ձինված ուժերի մասին Իսրայելի հիմնական օրենքի համաձայն՝ գլխավոր շտաբի պետի վրա տարածվում է կառավարության իշխանությունը, սակայն նա, մինևույն ժամանակ, ենթարկվում է պաշտպանության նախարարին<sup>7</sup>: Այսինքն՝ գլխավոր շտաբի պետը գործնականում գտնվում է կրկնակի ենթակայության տակ: Իսրայելի պատմության մեջ քիչ չեն դեպքերը, երբ վարչապետը գլխավոր շտաբի պետին հանձնարարականներ է տվել անմիջականորեն: Նման համակարգը ստեղծում է սպառնալիքներ, քանի որ կարող են ի հայտ գալ հակասություններ վարչապետի և պաշտպանության նախարարի կարծիքների միջև, թեև նման դեպքեր քիչ են եղել այն պատճառով, որ երկար ժամանակ պաշտպանության նախարարի ու վարչապետի պաշտոններն զբաղեցվում էին համատեղությամբ\*:

Որոշակի խնդիրներ կան նաև զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության առումով, ինչը բացատրվում է այն բանով, որ պատմության ընթացքում բազմաթիվ պատերազմների հետևանքով պաշտպանության նախարարությունը իր իրավասությունների մի մասը զիջել է բանակին<sup>8</sup>: Իսրայելում զինվորական ղեկավարման գործառույթների համար անընդհատ պայքար էր գնում զինվորականների և քաղաքացիական իշխանության միջև, և բանակի նկատմամբ ցանկացած լիարժեք վերահսկողության փորձ առաջ էր բերում բանակի

<sup>7</sup> Տես «Basic Law: The Military», Article 3 (b) ([https://www.knesset.gov.il/laws/special/eng/basic11\\_eng.htm](https://www.knesset.gov.il/laws/special/eng/basic11_eng.htm)):

\* Համաձայն Կառավարության մասին Իսրայելի հիմնական օրենքի՝ Կենտեսի անդամներից մեկը կարող է լինել վարչապետ:

<sup>8</sup> Տես *Иехуда Бен-Меур*. Основные характеристики израильской системы организации обороны государства. «Национальная безопасность и демократия в Израиле», т. 1: «Армия и политика в еврейском демократическом государстве». 2007 (<http://online-books.openu.ac.il/russian/democracy-and-national-security/volume1/article6.html>):

պրոֆեսիոնալիզմի հանդեպ ունեցած գոյությունների կապակցությամբ Գլխավոր շտաբի խիստ դժգոհությունը: Այդ ամենի հետևանքով պաշտպանության նախարարության ու բանակի մի շարք գործառույթներ այսօր համատեղվում են կամ լիովին իրականացնում է բանակը, մինչդեռ այլ ժողովրդավարական երկրներում դրանք դրված են քաղաքացիական մարմինների վրա:

Այսպես, պաշտպանության ոլորտի վերաբերյալ տեղեկությո՞ւր հանրությունն անմիջականորեն ստանում է բանակից<sup>9</sup>: Պաշտպանության նախարարությունը ևս ունի մամուլ քարտուղար, սակայն նրա գործունեությունը խիստ սահմանափակ է: Պաշտպանության նախարարության բյուջետային վարչությունը, որը պատասխանատու է ամբողջ պաշտպանական բյուջեի պլանավորման համար, գործում է որպես պաշտպանության նախարարության և զինված ուժերի միասնական վարչություն, որի պետը, լինելով նաև Գլխավոր շտաբի պետի ֆինանսական հարցերով խորհրդական, հաշվետու է միաժամանակ Իսրայելի պաշտպանության նախարարության գլխավոր տնօրենին և ՁՈՒ-ի Գլխավոր շտաբի պետին<sup>10</sup>: Ավելին. վարչության պետը պետք է լինի բարձրաստիճան զինվորական<sup>11</sup>: Բյուջետային վարչության նման կարգավիճակը բացասաբար է ազդում բյուջեի պլանավորման վրա, քանի որ բավական բարձր է վարչության պետի՝ որպես Գլխավոր շտաբի պետի խորհրդականի «ճնշումը» պաշտպանության նախարարության վրա:

Մոտավորապես նույնպիսի իրավիճակ է նաև Սպառազինության և տեխնոլոգիական ենթակառուցվածքների զարգացման վարչությունում, որը ևս պաշտպանության նախարարության ու Ձինված ուժերի միասնական մարմին է և պատասխանատու է ամբողջ ռազմարդյունաբերական համալիրի համար:

Պաշտպանական համակարգի նման կառուցվածքն ունի ինչպես առավելություններ, այնպես էլ թերություններ: Հասկանալի է, որ բանակը, ուղղակիորեն ներգրավված լինելով մարտական խնդիրների կատարման գործում, կարող է ավելի հստակ պատկերացում ունենալ անհրաժեշտ սպառազինությունների ու ծառայությունների մասին, այդուհանդերձ ռեսուրսների արդյունավետ պլանավորման տեսանկյունից հարկավոր են պաշտպանության նախարարության և զինված ուժերի Գլխավոր շտաբի խնդիրների հստակ տարանջատում և, հետևաբար՝ քաղաքացիական վերահսկողության արդյունավետ լծակներ: Այլ հարց է, եթե բարձրագույն պետական մակարդակով ղեկավարում ու կառավարում իրականացնող մարմիններն ստեղծված են միջգերատեսչական սկզբունքով, ինչպես, օրինակ, «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի հիման վրա ձևավորված ռազմարդյունաբերական հանձնաժողովը, որի նախագահն ի պաշտոնե ՀՀ վարչապետն է, իսկ հանձնաժողովի կազմում են ինչպես Ձինված ուժերի գլխավոր շտաբի պետը, պաշտպանության նախարարը (հանձնաժողովի նախագահի տեղակալ), պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ, այնպես էլ նախարարներ:

<sup>9</sup> Տես «ISRAEL DEFENSE FORCES» կայքը (<http://www.idf.il/1498-en/Dover.aspx>):

<sup>10</sup> Տես «Budget Department». «Ministry of Defense» (<http://www.mod.gov.il/Departments/Pages/budget.aspx>):

<sup>11</sup> Տես *Բեհուդա Բեն-Մեիր*, Նշ. աշխ (<http://online-books.openu.ac.il/russian/democracy-and-national-security/volume1/article6.html>):

Մինևույն ժամանակ, Իսրայելի կառավարման համակարգում կան հաշվե-տվողականությունն ապահովող գործուն մեխանիզմներ: Կառավարության մասին հիմնական օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր նախարար պատասխանատու է վարչապետի առջև իր վրա դրված գործառնությունների կատարման համար<sup>12</sup>, ինչից հետևում է, որ պաշտպանության նախարարն էլ է պատասխանատու վարչապետի առջև: Բացի այդ, կառավարությունում գործում է ազգային անվտանգության հարցերով նախարարական հանձնաժողով, որը գլխավորում է անձամբ վարչապետը: Այդ մարմինը կառավարության և պաշտպանության նախարարի միջև կարևոր օղակ է, որն ապահովում է պաշտպանության ոլորտում առանձնակի կարևորություն մերկայացնող հարցերի արագ քննարկումն ու որոշումների կայացումը:

Այսպիսով՝ ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգը, ունենալով իր առանձնահատկությունները, պետք է հիմնված լինի այնպիսի օրենսդրական կարգավորումների վրա, որոնք բացառեն պաշտպանության ոլորտում լիազորությունների բախումը կամ կրկնակումը, ինչպես նաև մեծացնեն պաշտպանական համակարգի կենսունակությունն ու որոշումների ընդունման օպերատիվությունը: Դրանից է կախված նաև Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական և ժողովրդավարական վերահսկողության արդյունավետությունը:

**ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱԳԻԱԿԱՆ  
ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

Ձինված ուժերի նկատմամբ վերահսկողությունը ժողովրդավարական պետության առանձնահատկություններից է: Գոյություն ունի զինված ուժերի նկատմամբ երկու հիմնական տեսակի վերահսկողություն՝ քաղաքացիական և ժողովրդավարական: Երբեմն դրանք ընկալվում են որպես հոմանիշներ, թեև միանգամայն տարբեր հասկացություններ են: Քաղաքացիական վերահսկողությունը ենթադրում է, որ պետության պաշտպանությանը վերաբերող բոլոր որոշումները կայացվում են քաղաքացիական իշխանության կողմից: Քաղաքացիական վերահսկողության հստակ ձևակերպում տալիս է Կառլ ֆոն Կլաուզեմպերը: Ըստ նրա՝ քաղաքացիական վերահսկողությունը պրոֆեսիոնալ զինված ուժերի պատշաճ ենթակայություն է քաղաքականության միջոցներին<sup>13</sup>: Քաղաքացիական վերահսկողության նպատակն է նաև ապահովել զինված ուժերի քաղաքական չեզոքությունը: Օրինակ՝ պաշտպանության նախարարության տարանջատումը զինված ուժերի գլխավոր շտաբից կամ պաշտպանական համակարգում քաղաքացիական անձնակազմի թվաքանակի մեծացումը քաղաքացիական վերահսկողության եղանակներից են: Նախագահական կառավարման համակարգ ունեցող պետություններում քաղաքացիական վերահսկողության իրականացման համար պատասխանատու ամենաբարձր մարմինը պետության նախագահն է, իսկ խորհրդարանական կառավարման համակարգում՝ վարչապետը<sup>14</sup>:

<sup>12</sup> Տես «Basic Law: The Government», Article 4 ([https://knesset.gov.il/laws/special/eng/basic14\\_eng.htm](https://knesset.gov.il/laws/special/eng/basic14_eng.htm)):

<sup>13</sup> Տես *Samuel P. Huntington*. The Soldier and the State: The Theory and Politics of Civil-Military Relations. Harvard University Press, 1957, P. 72:

<sup>14</sup> Տես «Report on the Democratic Control of the Armed Forces» (CDL-AD(2008)004).

Ժողովրդավարական վերահսկողությունը ավելի լայն հասկացություն է, որը ենթադրում է ժողովրդավարական ճանապարհով ընտրված օրինական պետական իշխանությունների կողմից Ձինված ուժերի քաղաքացիական վերահսկման համակարգ<sup>15</sup>: Այսինքն՝ ժողովրդավարական վերահսկողությունը ենթադրում է ժողովրդավարական ճանապարհով ընտրված այնպիսի մարմնի կամ հաստատության առկայություն, որը վերահսկի ռազմական ոլորտում իրավասու մարմինների որոշումները<sup>16</sup>: Եթե քաղաքացիական վերահսկողությունը մեխանիկորեն չի ենթադրում ժողովրդավարական վերահսկողություն, ապա ժողովրդավարական վերահսկողությունը ներառում է Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության տարրեր: Ավելին. զինված ուժերը կարող են լինել քաղաքացիական վերահսկողության տակ և այդուհանդերձ ունենան ժողովրդավարական վերահսկողության հետ կապված խնդիրներ:

Մինևույն ժամանակ, քաղաքացիական վերահսկողություն կարող է իրականացնել նաև օրենսդիր մարմինը: Այսպես. Խորվաթիայի Մահմանադրության համաձայն՝ զինված ուժերի և անվտանգության ծառայությունների նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն իրականացնում է Խորվաթիայի խորհրդարանը<sup>17</sup>: Այսպիսով՝ թեև քաղաքացիական և ժողովրդավարական վերահսկողությունն ունեն ընդհանրություններ, այդուհանդերձ անհրաժեշտ է հստակ կերպով պատկերացնել այդ երկու հասկացությունների միջև եղած տարբերությունները<sup>18</sup>:

Ձինված ուժերի նկատմամբ վերահսկողական մեխանիզմներ ունեցող հիմնական մարմինը խորհրդարանն է, որը ժողովրդին ամենամոտ կանգնած հաստատությունն է՝ հասարակության շրջանում եղած մտահոգություններն արտահայտելու հնարավորության և օրենսդրական լծակներ ունենալու շնորհիվ:

ՀՀ սահմանադրական նորմերը հիմք են ինչպես քաղաքացիական, այնպես էլ խորհրդարանական վերահսկողության համար: Ձինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության տակ<sup>19</sup>: Բացի այդ, Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում նաև գործադիր իշխանության նկատմամբ<sup>20</sup>: Քանի որ միջազգային

Venice Commission, Council of Europe, Strasbourg, 23 April 2008, P. 14 ([http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2008\)004-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2008)004-e)):

<sup>15</sup> Stu *Marie Vlachova*. Democratic Control of Armed Forces. «Armed Forces and International Security: Global Trends and Issues». Ed. by Jean Callaghan and Franz Kernic. LIT Verlag, 2004, P. 200:

<sup>16</sup> Stu «Report on the Democratic Control of the Armed Forces», P. 32 ([http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2008\)004-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2008)004-e)):

<sup>17</sup> Stu «Constitution of the Republic of Croatia (Consolidated text 2010)», Article 81 ([http://www.wipo.int/wipolex/ru/text.jsp?file\\_id=246241](http://www.wipo.int/wipolex/ru/text.jsp?file_id=246241)):

<sup>18</sup> Այս մասին ավելի հանգամանորեն տես «Պաշտպանական բարեփոխումներ. Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության համակարգի կատարելագործում»: «Հայկական բանակ», 2010, հմ. 2, էջ 9–68:

<sup>19</sup> Stu «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», հոդ. 14 (<http://www.president.am/hy/constitution-2015/>):

<sup>20</sup> Stu նույն տեղում, հոդ. 88 (<http://www.president.am/hy/constitution-2015/>):



տանքային խմբերի ստեղծումը և դրանց շրջանակներում գործունեության իրականացումը, Հանձնաժողովի գործունեության մեջ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավումը, և այլ վերահսկողական գործիքներ: Հանձնաժողովը պաշտպանության նախարարության հետ կատարել է ծրագրային բյուջետավորման աշխատանքներ, պաշտպանության ռազմավարական վերանայման փաստաթղթերի մշակումներ: ՀՀ փոփոխված Սահմանադրությամբ պաշտպանության ոլորտի խորհրդարանական հանձնաժողովն ունենալու է նոր վերահսկողական մեխանիզմներ, որոնք կքննարկվեն հողվածի երրորդ մասում:

Պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր պետության խորհրդարանական հանձնաժողով ունի իր ուրույն գործառույթներն ու վերահսկողական մեխանիզմները, որոնցից միաժամանակ կարող են կիրառվել ոչ բոլորը: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայի պաշտպանության հանձնաժողովն զբաղվում է ոչ այնքան օրենսդրական, որքան ՋՈՒ-ի և պաշտպանության ոլորտի նկատմամբ վերահսկողական գործունեությամբ: Գերմանիայի խորհրդարանի պաշտպանության հանձնաժողովը քիչ գործառույթներ ունի բյուջեի պլանավորման ոլորտում: Միևնույն ժամանակ, նշանակալի է Կառավարության նկատմամբ հանձնաժողովի վերահսկողական գործունեությունը, ներառյալ՝ քննիչ գործառույթների իրականացումը:

Խորհրդարանական հանձնաժողովի առանձնահատկությունները պայմանավորված են տվյալ պետության քաղաքական մշակույթով, հաստատութենական պահանջներով, համակարգային յուրահատկություններով, ուստի խորհրդարանական վերահսկողության յուրաքանչյուր մեխանիզմ անհրաժեշտ է դիտել ըստ այդ սկզբունքների: ՀՀ խորհրդարանական հանձնաժողովը օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտության բերումով պետք է առանցքային դեր ունենա օրենսդրական նախագծման և փոփոխությունների իրականացման գործում: Նա պետք է ժամանակի ընթացքում անցում կատարի վերահսկողական ավելի խորքային մեխանիզմների, որոնք ամրագրված լինեն օրենսդրորեն: ՈՒստի նպատակահարմար է դիտարկել մի քանի ոլորտ, որտեղ խորհրդարանական կառավարման պայմաններում խորհրդարանն ու պաշտպանության հանձնաժողովը պետք է ունենան ավելի լայն լիազորություններ, քան կիսանախագահական կառավարման դեպքում:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ընդհանրապես խորհրդարանական վերահսկողության արդյունավետությունը պայմանավորված է ոչ այնքան կառավարման համակարգով, որքան խորհրդարանական վերահսկողության ավանդույթներով և ձևավորված ուժեղ հաստատություններով: Օրինակ՝ ԱՄՆ-ը, լինելով նախագահական կառավարման ձևի պետություն, ունի բավական հզոր օրենսդիր մարմին: Ավելին. օրենսդրական նախաձեռնության իրավունքը վերապահված է միայն Կոնգրեսին: Կան նաև հակառակ օրինակներ: Այսպես. Թուրքիան խորհրդարանական կառավարման համակարգով այլ պետությունների համեմատությամբ ունի թույլ վերահսկողական մեխանիզմներ: Այսինքն՝ խորհրդարանական կառավարման համակարգը ինքնին չի ենթադրում ուժեղ խորհրդարանական վերահսկողություն: Այդուհանդերձ,

այդ համակարգը, ստեղծելով համապատասխան իրավական մեխանիզմների մշակման հիմքեր, խթանում է ոչ միայն խորհրդարանական վերահսկողության անհրաժեշտ գործիքակազմի ձևավորումը, այլև գործադիրի կամավոր հաշվետվողականությունը խորհրդարանի առջև:

Այսպես. ՀՀ Սահմանադրության փոփոխություններն ստեղծել են այն հիմքերը, որոնք խորհրդարանական հանձնաժողովին հնարավորություն են տալու իրականացնելու արդյունավետ խորհրդարանական վերահսկողություն: Նախ. խորհրդարանական վերահսկողության մասով Ազգային ժողովի խմբակցություններն ունեն Կառավարության անդամներին գրավոր հարցապնդումներ ուղղելու իրավունք<sup>23</sup>: Բացի այդ, պատգամավորներն իրավունք ունեն Կառավարությանը ներկայացնելու բանավոր և գրավոր հարցեր: Գրավոր հարցերի և հարցապնդումների տարբերությունն այն է, որ առաջինների պատասխանները Ազգային ժողովի նիստում չեն քննարկվում, իսկ հարցապնդումների պատասխանները ներկայացվում են Ազգային ժողովի նիստում, ինչը հնարավորություն է տալիս հանրային հետաքրքրություն ներկայացնող ոլորտային հարցերը խորհրդարանում դարձնելու քննարկման առարկա:

ՀՀ Սահմանադրության փոփոխություններով ամրագրված է հանձնաժողովների վերահսկողական գործառույթը: Ընդամին օրենքների նախագծերի, իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար Ազգային ժողովն ստեղծում է մշտական հանձնաժողովներ<sup>24</sup>:

Մյուս կարևոր մեխանիզմը պաշտպանության ոլորտի հանձնաժողովին քրեմիչ լիազորությունների շնորհումն է: Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք Ազգային ժողովին ներկայացնելու համար ստեղծվում է Ազգային ժողովի քննիչ հանձնաժողով, ընդ որում, պաշտպանության և անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովի լիազորություններ կարող է իրականացնել միայն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովը<sup>25</sup>: Հանձնաժողովի օժտումը քննիչ լիազորություններով բավական տարածված է միջազգային պրակտիկայում: Որպես կանոն, քննարկման առարկա է դառնում պաշտպանության ոլորտի ցանկացած հարց՝ ռազմական ոլորտում կատարվող զնումներից մինչև զինվորական ծառայության հետ կապված խնդիրներ: ՀՀ-ում հանձնաժողովների քննիչ լիազորությունների իրացման մանրամասները պետք է կարգավորվեն ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքով:

Ինչպես նախագահական, այնպես էլ խորհրդարանական կառավարման համակարգով պետություններում խորհրդարանները զինված ուժերի նկատմամբ իրականացնում են երկու տեսակի վերահսկողություն՝ պլանավորված (*ex ante*) և

<sup>23</sup> Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», հոդ. 113 (<http://www.president.am/hy/constitution-2015/>):

<sup>24</sup> Տես նույն տեղում, հոդ. 106 (<http://www.president.am/hy/constitution-2015/>):

<sup>25</sup> Տես նույն տեղում, հոդ. 108 (<http://www.president.am/hy/constitution-2015/>):

փաստական, կամ ըստ փաստի (*ex post*)<sup>26</sup>: Պլանավորված վերահսկողությունը կատարվում է հիմնականում նախապես՝ իրավական շրջանի մշակման, բյուջետային հատկացումների, որոշակի հարցերին նախնական հավանություն տալու միջոցով, մինչդեռ ընթացիկ խնդիրների լուծումը թողնվում է գործադիրին: Այսինքն՝ խորհրդարանը Կառավարությանն ուղղորդում է գործելու արդեն սահմանված շրջանակներում: Ինչ վերաբերում է փաստական վերահսկողությանը, ապա այն իրագործվում է հարցումների, լուծումների, բյուջետային հաշվետվության քննարկումների միջոցով: Այս տեսակի վերահսկողության նպատակը արդեն իրականացված աշխատանքի վերաբերյալ Կառավարությունից հաշվետվություն ստանալն է:

Խորհրդարանական կառավարման պայմաններում գերակշռում է փաստական վերահսկողությունը, սակայն այն ևս կատարյալ չէ, քանի որ խորհրդարանը հիմնականում դուրս է մնում պաշտպանության ոլորտում որոշումների կայացման համակարգից և ստիպված է լինում, այլ տարբերակ չունենալով, հաստատել գործադիրի կատարած աշխատանքը: Փաստական վերահսկողությունը արդյունավետ է, երբ համադրվում է ընթացիկ վերահսկողության հետ: Տվյալ դեպքում խորհրդարանը, պարբերաբար ստանալով անհրաժեշտ տեղեկույթ, ժամանակ ունի այն վերլուծելու, որպեսզի հանդես գա ռազմավարական բնույթի նախաձեռնություններով: Ընթացիկ և փաստական վերահսկողության համադրման դեպքում որոշումների կայացման գործում խորհրդարանի դերն զգալիորեն մեծանում է:

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ-ում Սահմանադրության մեջ կատարված փոփոխություններից հետո սկսվելու են օրենսդրության համապատասխանեցման աշխատանքները: Օրենսդրության ձևավորումից հետո պայմաններ են ստեղծվելու ՁՈՒ-ի նկատմամբ ընթացիկ և փաստական վերահսկողությունն ավելի ակտիվացնելու համար: Ընդամին վերահսկողությունը պետք է ուժեղացվի հետևյալ չորս հիմնական ուղղություններով՝ բյուջետային քաղաքականություն, պաշտպանական ոլորտում կատարվող գնումներ, արտերկրում ՁՈՒ-ի ստորաբաժանումների տեղակայում և ՁՈՒ-ի Գլխավոր շտաբի հետ հարաբերություններ:

*Բյուջետային քաղաքականություն:* Պաշտպանության ոլորտում իրականացվող բյուջետային քաղաքականությունը պետք է լինի խորհրդարանական վերահսկողության առանցքային բաղադրիչներից մեկը: Ըստ այդմ բյուջեի պլանավորման գործում պետք է ավելի մեծ դերակատարություն ունենա պաշտպանության հանձնաժողովը: Դրան է նպաստելու նաև 2015 թվականին Ազգային ժողովում ստեղծված բյուջետային գրասենյակը, որի գործառույթներից են բյուջեի վերաբերյալ ամբողջական տեղեկությունների տրամադրումը և պատգամավորներին, պատգամավորական խմբերին, մշտական հանձնաժողովներին և խմբակցություններին մասնագիտական աջակցության ցուցաբերումը: Առանձնակի կարևորություն է ներկայացնում խորհրդարանական վերահսկողությունը պաշտպանության ոլորտի ընթացիկ ծախսերի նկատմամբ, քանի որ հանձնաժողովը հնարավորություն է ունենալու հետևելու բյուջեի ընթացիկ կատարմանը՝ ժամանակին վեր հանելով խնդիրներն ու չսպասելով նախորդ տարվա բյուջեի հաշ-

<sup>26</sup> Stu «Report on the Democratic Control of the Armed Forces», P. 31 ([http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2008\)04-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2008)04-e)):

վետվության քննարկումներին, որոնք տեղի են ունենում հաջորդ տարի: Պաշտպանության ոլորտի նման բյուջետային վերահսկողությունը հնարավորություն կտա ապահովելու կապը բյուջեի և պաշտպանական քաղաքականության միջև: Շարունակվելու են նաև ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման աշխատանքները, որոնք կատարվում են պաշտպանության նախարարության հետ համատեղ: Հաշվետվողականության և թափանցիկության աստիճանի բարձրացման նպատակով անհրաժեշտ է վերանայել ինչպես պաշտպանության ոլորտի բյուջեի կառուցվածքը, այնպես էլ բյուջետային քննարկումների ձևաչափը: Պաշտպանության հանձնաժողովը պետք է ստանա պաշտպանական բյուջեյին վերաբերող բոլոր փաստաթղթերը, ընդամին հանձնաժողովի անդամները պետք է ունենան բարձրագույն մակարդակի գաղտնիությամբ տեղեկությին ծանոթանալու իրավունք: Բյուջետային վերահսկողության գործում կարևորվում է նաև Ազգային ժողովի համագործակցությունը ներքին և արտաքին վերահսկողական մարմինների հետ (Հաշվեքննիչ պալատ, ՀՀ ՊՆ ներքին աուղիտ և այլն):

*Պաշտպանական ոլորտում կատարվող գնումներ:* Որպես առաջնահերթություն պետք է վերանայվի պաշտպանության ոլորտում կատարվող գնումները կարգավորող օրենսդրությունը և ձևավորվի պաշտպանական գնումների համար առանձնահատուկ ընթացակարգ: Հայաստանի պարագայում կարգավորումները կարող են տրվել կա՛մ գնումներին, կա՛մ ռազմաարդյունաբերությանը վերաբերող օրենսդրության շրջանակներում:

Մյուս կարևոր խնդիրը պաշտպանական գնումների, ռազմական նախանշանակման արտադրանքի և ծառայությունների ձեռքբերման նկատմամբ խորհրդարանական վերահսկողության ուժեղացումն է: Անհրաժեշտ է սահմանել պայմանագրերի արժեքի այն շեմը, որը գերազանցելու դեպքում դրանք պետք է ներկայացվեն պաշտպանության հանձնաժողովին: Օրինակ՝ Գերմանիայում պաշտպանության հանձնաժողովին հաստատման են ներկայացվում բոլոր այն գնումները, որոնց արժեքը գերազանցում է 25 մլն եվրոն, Նիդերլանդներում՝ 50 հազար եվրոն, իսկ Լեհաստանում՝ 28 մլն եվրոն<sup>27</sup>: Մեծ Բրիտանիայում պաշտպանության հանձնաժողովի հաստատումը պարտադիր չէ, սակայն պաշտպանության նախարարը պարտավոր է հանձնաժողովին տրամադրել խոշոր պայմանագրերի մանրամասները: Որոշ երկրներում, օրինակ, Չեխիայում, հանձնաժողովները ներգրավված են սպառազինության ձեռքբերման նպատակով մատակարարների, տեխնիկական բնութագրերի ընտրության գործում<sup>28</sup>:

Եվ, վերջապես, խորհրդարանական վերահսկողություն պետք է սահմանվի պաշտպանական գնումների արդյունքների նկատմամբ. թե որքանով են կատարված ծախսերը և ձեռք բերված ապրանքներն ու ծառայությունները նպաստել ռազմական կարիքների բավարարմանը: Այստեղ արդյունավետ կարող են լինել Հանձնաժողովի քննիչ լիազորությունները:

*Արտերկրում Ձինված ուժերի ստորաբաժանումների տեղակայում:* Խորհրդ-

<sup>27</sup> Stu Willem F. van Eekelen. The Parliamentary Dimension of Defence Procurement: Policy, Requirements, Production, Cooperation and Acquisition. DCAF. Geneva, 2013, P. 18:

<sup>28</sup> Տես նույն տեղում:

դարանական կառավարման համակարգում պետք է դիտարկել ՀՀ օրենսդրի դերը արտերկրում Ձինված ուժերի ստորաբաժանումների տեղակայման գործում: Ներկայումս խորհրդարանը միջազգային խաղաղապահական առաքելություններին ՀՀ մասնակցության և արտերկրում ՀՀ Ձինված ուժերի ստորաբաժանումների տեղակայման հարցերը քննարկում է միջազգային համաձայնագրի վավերացման շրջանակներում: Քանի որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված է, որ քաղաքական կամ ռազմական բնույթի միջազգային պայմանագրերը ենթակա են վավերացման, ապա խաղաղապահ ուժերի տեղակայման խնդիրը ուղղակիորեն ենթակա է խորհրդարանական քննարկման:

ՀՀ-ն նախատեսում է ժամանակի ընթացքում ընդլայնել իր մասնակցությունը միջազգային անվտանգության տարբեր համակարգերի միջազգային խաղաղապահական առաքելություններին: Իրավիճակի բերումով Ձինված ուժերի ստորաբաժանումների տեղակայման ընթացակարգերը կարող են փոփոխվել. կարող է անգամ տեղի ունենալ ստորաբաժանումների ուղարկում առանց համաձայնագրի (օրինակ՝ արագ արձագանքման ուժերի կիրառման դեպքում): Ոչ գործող, ոչ փոփոխված Սահմանադրությամբ նախատեսված չէ, որ խորհրդարանը պետք է հաստատի արտերկրում Ձինված ուժերի ստորաբաժանումների տեղակայումը: Չեխիայի Սահմանադրությամբ, օրինակ, գորքը հանրապետության տարածքից դուրս ուղարկելու համար անհրաժեշտ է խորհրդարանի համաձայնությունը<sup>29</sup>: Նշվում են նաև նման դեպքեր:

Մինևույն ժամանակ, ամենևին էլ պարտադիր չէ, որ տվյալ հանգամանքը կարգավորվի սահմանադրությամբ: Օրինակ՝ Գ-Գ Հ սահմանադրությունը նման նորմ չի բովանդակում, սակայն Դաշնային սահմանադրական դատարանի որոշմամբ արտերկրում Բունդեսվերի ստորաբաժանումների տեղակայման բոլոր դեպքերը պետք է ստանան խորհրդարանի հավանությունը: Բացառություն են միայն արտերկիր գորք ուղարկելու վերաբերյալ հրատապություն պահանջող որոշումները: Այդուհանդերձ, անգամ հրատապ դեպքերում խորհրդարանը պետք է *post facto* հավանություն տա տվյալ առաքելությանը և դրա մանրամասների մասին տեղեկություններ ստանա<sup>30</sup>: Լինում են նաև դեպքեր, երբ ոչ ծավալուն առաքելությունների մասին որոշումը կայացնում են համապատասխան խորհրդարանական հանձնաժողովները (Իսպանիա, Ֆինլանդիա)<sup>31</sup>: ՀՀ դեպքում տվյալ նորմը կարող է ամրագրված լինել «Պաշտպանության մասին» կամ Ձինված ուժերի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությանը վերաբերող համապատասխան օրենքներում:

<sup>29</sup> Stu «Constitution of the Czech Republic» (amended), Article 43 (3-a) (<http://www.ilo.org/dyn/travail/docs/1967/Constitution%20of%20the%20Czech%20Republic.pdf>):

<sup>30</sup> Stu «On the Scope of the Requirement of Parliamentary Approval for Deployments of the Armed Forces in Cases of Imminent Danger» (2 BvE 6/11). Judgment of 23 September 2015. «Bundesverfassungsgericht» (<http://www.bundesverfassungsgericht.de/SharedDocs/Pressemitteilungen/EN/2015/bvg15-071.html>):

<sup>31</sup> Stu «Report on the Democratic Control of the Armed Forces», P. 46 ([http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2008\)004-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2008)004-e)):

*Ձիևված ուժերի Գլխավոր շտաբի հեյր հարստերություններ:* Սահմանադրության մեջ կատարված փոփոխություններից հետո պետք է ամրապնդել պաշտպանության հանձնաժողովի կապերը ոչ միայն պաշտպանության նախարարության, այլև Ձիևված ուժերի հետ: Տարիներ շարունակ հանձնաժողովում գեկույցներով հանդես են եկել հիմնականում պաշտպանության նախարարության ներկայացուցիչները, մինչդեռ անհրաժեշտ է ձևավորել ավանդույթ, որ հանձնաժողովում գեկույցներով և հաշվետվությամբ հանդես գան նաև Ձիևված ուժերի ներկայացուցիչները: Դրա գրավականն է Ձիևված ուժերի ներկայացուցիչների հետ արդյունավետ աշխատանքի ավանդույթի ձևավորումը: Փորձը ցույց է տալիս, որ հանձնաժողովում հաճախ քննարկվում են թեմաներ, որոնց վերաբերյալ ավելի նպատակահարմար է լսել Ձիևված ուժերի ներկայացուցիչներին, որոնք անմիջականորեն առնչվում են տվյալ խնդիրների հետ: Բացի այդ, խորհրդարան–Ձիևված ուժեր կապի սերտացումը կնպաստի Ձիևված ուժերում պատասխանատվության զգացումի աճմանը, ինչը բնորոշ է ժողովրդավարական պետություններին: Թեև Ձիևված ուժերը գտնվելու են կառավարության ենթակայության տակ, և դրանց ղեկավարումն իրականացնողը պաշտպանության նախարարն է, այդուհանդերձ Ձիևված ուժերը պետք է գտնվեն անմիջական խորհրդարանական վերահսկողության տակ: Որոշ խորհրդարանական պետություններում խորհրդարանները դեր են խաղում անգամ բարձրագույն հրամանատարական կազմի նշանակման գործում: Օրինակ՝ Էստոնիայի Սահմանադրությամբ բարձրագույն հրամանատարական կազմին պետության Նախագահի առաջարկությամբ նշանակում է խորհրդարանը<sup>32</sup>: Լիտվայում Ձիևված ուժերի հրամանատարը նշանակվում և ազատվում է խորհրդարանի համաձայնությամբ<sup>33</sup>: Իհարկե, բարձրագույն հրամանատարության նշանակումները դեռ անհրաժեշտ հաշվետվողականության նախապայման չեն: Խորհրդարան – Ձիևված ուժեր կապի հիմքը առաջին հերթին զինժառանգողների համապատասխան կրթվածությունն է, համապատասխան իրավական դաշտի և ավանդույթի ձևավորումը: Աշխատանքի արդյունավետության տեսանկյունից ըստ իրադրության նպատակահարմար է դիտարկել անգամ հանձնաժողովին Ձիևված ուժերի բանակային կորպուսների հրամանատարների ներկայացման հարցը:

Իհարկե, սրանով չեն սահմանափակվում այն ուղղությունները, որտեղ հանձնաժողովը պետք է ուժեղացնի իր դերակատարումը: Մասնավորապես՝ մեծ է լինելու Ազգային ժողովի պաշտպանության հանձնաժողովի ներգրավվածությունը Պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքների և դրանից բխող պաշտպանական բարեփոխումների իրականացման, հայեցակարգային փաստաթղթերի մշակման, ինչպես նաև բարեփոխումների արդյունքների նկատմամբ խորհրդարանական վերահսկողության գործում:

<sup>32</sup> Տես «Constitution of the Republic of Estonia», Article 127 (<https://www.president.ee/en/republic-of-estonia/the-constitution/>); նաև՝ «Report on the Democratic Control of the Armed Forces», P. 51 ([http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdf=file=CDL-AD\(2008\)004-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdf=file=CDL-AD(2008)004-e)):

<sup>33</sup> Տես «The Constitution of the Republic of Lithuania», Article 84(14) (<http://www3.lrs.lt/home/Konstitucija/Constitution.htm>):

Խորհրդարանական կառավարման պայմաններում խորհրդարանական վերահսկողության արդյունավետությունը պայմանավորված է ներքին և արտաքին գործոններով: Ներքին գործոններից է, մասնավորապես, խորհրդարանի և պաշտպանության ոլորտի իրավասու հանձնաժողովի լիազորությունների ընդլայնումը: Ճիշտ է, խորհրդարանական վերահսկողությունը հիմնականում իրականացնելու է ոլորտային հանձնաժողովը, սակայն շատ կարևոր են խորհրդարանի աշխատակազմի լիազորությունների ընդլայնումը և վերահսկողական լրացուցիչ մեխանիզմների ներդրումը: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայի խորհրդարանում գործում է Վերահսկողական բաժին, որը վերահսկում է հանձնաժողովների աշխատանքը և տարբեր բնույթի աջակցություն է ցուցաբերում նրանց<sup>34</sup>: Կան պետություններ, որտեղ հանձնաժողովները խորհրդարանին ներկայացնում են տարեկան հաշվետվություն<sup>35</sup>:

Ներքին գործոնների շարքն է դասվում նաև հանձնաժողովների մասնագիտական և նյութական ռեսուրսների մեծացումը: Կան պետություններ, որտեղ պաշտպանության հանձնաժողովն ունի իր առանձին բյուջեն (օրինակ՝ Լիտվայում, Էստոնիայում, Կանադայում)<sup>36</sup>:

Արտաքին գործոնների առկայությունը ենթադրում է արդյունավետ համագործակցություն գործադիր իշխանության հետ: Խորհրդարանը պետք է ոչ միայն իրականացնի վերահսկողություն, այլև համագործակցի պաշտպանական համակարգի սուբյեկտների հետ: Պաշտպանական ոլորտում կարևոր է խորհրդարանի համագործակցությունը պաշտպանության մախարարության, գլխավոր շտաբի, կառավարության հետ: Օրինակ՝ օգտակար կարող է լինել պաշտպանության մախարարությունում Ազգային ժողովի հետ կապող գրասենյակի հիմնումը՝ իրավական և մասնագիտական բարձր որակներով օժտված մասնագետների ներգրավմամբ, ինչպես նաև Ազգային ժողովի հետ հարաբերություններում պաշտպանության փոխմախարարներից մեկի պատասխանատվության օրենսդրական ամրագրումը:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև որոշակի մարտահրավերներ, որոնք կարող են ի հայտ գալ՝ պայմանավորված խորհրդարանի դերի փոփոխությամբ: Խորհրդարանական կառավարման պայմաններում վերահսկողությունն այնքան էլ ուղղահայաց չէ, որքան մախագահական կամ կիսանախագահական կառավարմամբ պետություններում: Խորհրդարանական կառավարման պայմաններում մեծանում է խորհրդարանների դերը կառավարային որոշումների կայացման գոր-

<sup>34</sup> Տես «About the Scrutiny Unit». «www.parliament.uk» (<http://www.parliament.uk/mps-lords-and-offices/offices/commons/scrutinyunit/about-us/>):

<sup>35</sup> Տես «Oversight and Guidance: The Relevance of Parliamentary Oversight for the Security Sector». Ed. by Hans Born, Philipp Fluri, Simon Lunn. DCAF. Geneva, 2010, P. 61: ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովը արդեն մի քանի տարի շարունակ ամփոփում է իր տարեկան գործունեությունը:

<sup>36</sup> Տես «Oversight and Guidance: Parliaments and Security Sector Governance». Ed. by Eden Cole, Philipp Fluri, Simon Lunn. DCAF. Geneva, 2015, P. 111:

ծում, ինչը նշանակում է, որ օրենսդիրը որոշակիորեն ստանձնում է գործադիրին բնորոշ գործառնություններ: Այստեղ անհրաժեշտ է ճիշտ գծել այն սահմանը, որով ամեն դեպքում պետք է տարանջատվեն նրանց գործառնությունները:

Մյուս մարտահրավերը այն է, որ գործադիրի նկատմամբ կարող են կիրառվել չափազանց խիստ ու համապարփակ վերահսկողական լծակներ: Այսպես, եթե պաշտպանության հանձնաժողովը չափից շատ ընդլայնի պաշտպանության ոլորտում կատարվող գնումների առնչությամբ իր վերահսկողական գործառնությունները, ապա որոշ ընթացակարգերում այդ միջամտությունը կարող է դառնալ խոչընդոտ և առաջ բերել պրոբլեմներ տվյալ ապրանքը բանակին ժամանակին հասցնելու առումով: ՈՒստի չափազանց կարևոր է հասկանալ ու պահպանել խորհրդարանական վերահսկողության և համագործակցության միջև հավասարակշռությունը:

Այսպիսով՝ խորհրդարանական կառավարման պայմաններում հարկավոր է օրենսդրորեն ամրագրել Չինված ուժերի ղեկավարման խնդիրներն այնպիսի իրավակարգավորումների հստակ սահմանմամբ, որոնք հնարավորություն կտան մեծացնելու պաշտպանական կառույցի արդյունավետությունն ու օպերատիվությունը: Չինված ուժերի ղեկավարման և կառավարման օղակներում որոշումների ընդունման մեխանիզմների մշակումն ու ներդրումը պետք է ապահովեն ճգնաժամային պայմաններում արագ հարմարվելու և նոր զարգացումներին առանց հասպտեղման արձագանքելու հնարավորություն: Անհրաժեշտ է խորհրդարանական վերահսկողության արտաքին ու ներքին գործոնների հաշվառմամբ և լավագույն միջազգային փորձի տեղայնացմամբ ընդլայնել պաշտպանության ոլորտի խորհրդարանական հանձնաժողովի լիազորությունները և հասնել վերահսկողական լծակների ու համագործակցային գործառնությունների արդյունավետ հավասարակշռմանը:

## ОБОРОННАЯ СИСТЕМА РА И ПАРЛАМЕНТСКИЙ КОНТРОЛЬ НАД ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ В УСЛОВИЯХ ПАРЛАМЕНТСКОГО ПРАВЛЕНИЯ

*А. Р. АРУТЮНЯН, магистр по международной обороне и безопасности университета Кренфилда Оборонной академии Великобритании, магистр международных отношений Ереванского государственного университета, эксперт Постоянной комиссии по обороне, национальной безопасности и внутренним делам Национального собрания РА*

### РЕЗЮМЕ

Конституционные изменения в Республике Армения приведут к смене государственной формы правления от полупрезидентской к парламентской, что окажет существенное воздействие на организацию и функционирование системы обороны. В первую очередь, это касается статуса Верховного главнокомандующего Вооруженными силами, который от Президента РА переходит к Премьер-министру, ответственному перед Парламентом. Усиливается роль Национального Собрания и его соответствующей постоянной

комиссии в плане контроля над Вооруженными силами – не только посредством утверждения бюджета и запросов, но и возрастания полномочий по участию парламента в таких сферах, как бюджетная политика, оборонные закупки, размещение подразделений ВС зарубежом, взаимодействие с Генеральным штабом, а также путем осуществления расследовательских функций.

Как показывает опыт ведущих государств мира, деятельность Парламента становится более эффективной и целевой, когда соблюдается разумный баланс между его контролем над деятельностью исполнительной власти и сотрудничеством с ней.

## THE RA'S DEFENSE SYSTEM AND THE PARLIAMENTARY CONTROL OVER THE ARMED FORCES UNDER THE PARLIAMENTARY GOVERNMENT

*A. R. HARUTYUNYAN, MA in International Defence and Security, Cranfield University, Defence Academy of the United Kingdom, MA in International Relations, Yerevan State University, Expert at the Standing Committee on Defense, National Security and Internal Affairs of the RA National Assembly*

### SUMMARY

The amendments to the Constitution of the Republic of Armenia will result in changing the form of government from a semi-presidential to the parliamentary one, that will essentially impact on the organization and functioning of the defense system. First of all, it concerns the status of the Commander-in-Chief of the Armed Forces, which passes from the President of the Republic of Armenia to the Prime-Minister – responsible to the Parliament. The role of the National Assembly and its corresponding Standing Committee increases in terms of the control over the Armed Forces – not only through the approval of budget and inquiries, but also the increase in the authority of the parliament's participation in such spheres as budgetary policy, defense procurement, deployment of units of the Armed Forces abroad, interaction with the General Staff, as well as through the implementation of investigation functions.

According to the experience of the world's leading countries, the activities of the Parliament become more efficient and target-oriented, when a reasonable balance between its control over the activity of and the cooperation with the executive power is observed.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԸ ԵՎ ՆՐԱ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ

Ա. Գ. ՎԱՂԱՐՇՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ



Պետության կառավարման ձևը և նրա պաշտպանության ու անվտանգության պրոբլեմը տարամակարդակ պետութենագիտական երևույթներ են: Պետական կառավարման ձևը բնութագրում է պետական իշխանության բարձրագույն մարմինների (օրենսդիր, գործադիր և դատական մարմիններ, պետության գլուխ) կազմավորման կարգն ու կառուցվածքը, լիազորությունները, ստեղծման կարգն (նշանակում, գահաժառանգում, ընտրություն) ու փոխհարաբերությունները (իշխանությունների բաժանում, կենտրոնացում), այդ մարմինների կազմավորման գործում բնակչության մասնակցության չափն ու դրանց որոշումների վրա նրա ազդեցության աստիճանը<sup>1</sup>: Մինչդեռ պետության պաշտպանության և անվտանգության ապահովումը պետական իշխանության հիմնական գործառնություններից մեկն է\*: Անշուշտ, իշխանության կազմակերպվածքի և գործառնության վարման միջև գոյություն ունի որոշակի կապ, սակայն այդ կապը խստորեն որոշարկված չէ:

Արդի ժամանակաշրջանում պետութենագիտության մեջ ընդունված տեսակետը հանգում է հետևյալին. պետության ձևը\*\* ներառում է իշխանության կազմակերպման երեք փոխկապված բաղադրատարրեր. 1) պետական կառավարման ձևը, 2) պետական կառուցվածքի ձևը\*\*\*, 3) պետաիրավական ռեժի-

<sup>1</sup> Stu «Теория государства и права». Под ред. А. С. Пиголкина. М., 2006, с. 215:

\* Պետության հիմնական գործառնություններ են կոչվում «որոշակի պատմական շրջանում պետության առջև ծառայող արմատական ռազմավարական խնդիրների ու նպատակների իրագործման ուղղությամբ պետության ծավալված գործունեության առավել ընդհանուր, կարևոր ուղղությունները» (տես նույն տեղում, էջ 150):

\*\* Պետության ձև ստեղծվում է հասկանում ենք «նրա ներքին կազմակերպվածքը, պետական մարմինների ստեղծման կարգն ու կազմակերպվածքը, պետական մարմինների և բնակչության փոխհարաբերությունների բնույթը, ինչպես նաև կազմակերպական ու կառավարային գործունեության համար օգտագործվող մեթոդները, եղանակներն ու հնարները: Ավելի համառոտ կերպով պետության ձևը կարելի է սահմանել որպես պետական իշխանության կազմակերպման և իրականացման եղանակ» (տես *Л. А. Морозова*. Теория государства и права в вопросах и ответах. Изд. 2-е, переработанное и дополненное. М., 2009, с. 52):

\*\*\* Պետական կառուցվածքի ձևը բնութագրում է պետական իշխանության տարածքային կազմակերպումը, տարածքի ներքին բաժանումը մասերի, պետության և նրա բաղկացուցիչ մասերի փոխհարաբերության բնույթը: Ըստ կառուցվածքի ձևի՝ պետությունները լինում են պարզ՝ միասնական (ունիտար) և բարդ՝ դաշնային (ֆեդերատիվ) կամ համադաշնային (կոնֆեդերատիվ):

մը\* : Եթե պետական կառավարման և կառուցվածքի ձևերը բնութագրում են պետության կազմակերպակառուցվածքային կողմերը, ապա պետաիրավական ռեժիմը՝ բովանդակությունը:

Պետության ձևի վերջնական ձևավորման գործոններն իրենց բնույթով լինում են օբյեկտիվ և սուբյեկտիվ: Որպես **օբյեկտիվ գործոններ** կարելի է նշել. 1) տնտեսության բնույթը (կենտրոնացված, պլանային, ապակենտրոնացված, շուկայական և այլն) և վիճակը, 2) հասարակության ընդհանուր զարգացման մակարդակը, 3) հասարակության քաղաքական և իրավական մշակույթի մակարդակը, 4) պետության պատմական տիպը, 5) հասարակության մեջ սոցիալ-դասակարգային ուժերի հարաբերակցությունը, 6) պատմական, ազգային, մշակութային և այլ ավանդույթները, կրոնը, 7) երկրի ազգային կազմը և տարածքի չափերը, 8) միջազգային իրադրությունը, 9) աշխարհագրական դիրքը և աշխարհաքաղաքական գործոնները, 10) ներքաղաքական իրադրությունը և այլն:

Պետության ձևի, հատկապես՝ պետաիրավական կոնկրետ ռեժիմի ձևավորման վրա էական ազդեցություն են թողնում **սուբյեկտիվ գործոնները**. իշխանության տեր քաղաքական ընտրախավի տիպը, դիրքորոշումները, միապետի կամ քաղաքական առաջնորդի անձնական որակները, անձնիշխանության և անհատի պաշտամունքի գաղափարախոսությունը և այլն: Սուբյեկտիվ գործոնների մեջ շատ կարևոր տեղ և դեր ունեն «ազգի կամ ժողովրդի ոգին և կամքը»<sup>\*\*</sup> : Ժողովրդի ոգու և կամքի ու պետականության միջև կապի կողմնակիցները ելնում են այն հիմնարար դրույթից, թե ինչպիսիք են հասարակությունը, ժողովուրդը, ազգը, այնպիսիք են և նրանց ոգին ու կամքը, և, վերջին հաշվով, այդպիսիք կլինեն նրանց ստեղծած պետությունը և նրա ձևը:

Պետական կառավարումն ունի երկու հիմնական ձև՝ **միապետություն և հանրապետություն**: Միապետությունը լինում է **անսահմանափակ (բացարձակ) և սահմանափակ**: Նոր ժամանակաշրջանի **սահմանափակ միապետությունը** լինում է սահմանադրական միապետություն՝ **դուալիստական կամ խորհրդարանական**<sup>\*\*\*</sup> :

\* Պետաիրավական ռեժիմը «այն հնարների, եղանակների ու մեթոդների համախումբն է, որոնց միջոցով իրականացվում է պետական իշխանությունը» (տես *Լ. Ա. Մորոզովս, Նշ. աշխ., էջ 59*):

\*\* Փիլիսոփաները, պատմաբանները, իրավագետները առաջ են քաշել ժողովրդի ոգու և կամքի ու պետականության բնույթի միջև կապի բազմաթիվ վարկածներ, օրինակ՝ Մոնտեսքիոյի աշխարհագրական տեսությունը, իրավունքի պատմական տեսությունը և այլն: Ժողովրդի ոգին և կամքը կարող են ուղղված լինել պետական կարգի ամրապնդմանը՝ շնորհիվ իրենց ակտիվ, նպատակամղված պաշտպանության, և ընդհակառակը, դրանք իրենց պասիվ, անտարբեր վերաբերմունքով կամա թե ակամա նպաստում են պետականության թուլացմանը: 19-րդ դարի վերջին գերմանացի իրավաբան Ռուդոլֆ Հերինգն իր «Հռոմեական իրավունքի ոգին՝ նրա զարգացման տարբեր աստիճաններում» աշխատության մեջ հարց բարձրացրեց, թե որն էր հռոմեական ժողովրդի ոգին և կամքը, և ինչ կապ կար դրանց ու պետության միջև: Նա հիմնավորեց, որ բացի կայսրերի, պաշտոնատար անձանց կամքից, պետական կարգերը պայմանավորված են նաև այլ սուբյեկտիվ գործոններով, որոնցից էր «հռոմեական ժողովրդի ոգին ու կամքը» (տես *Մ. Կ. Մարչենկո. Проблемы теории государства и права. Учебник. М., 2005, с. 209*):

\*\*\* **Գուալիստական** է կոչվում այն միապետությունը, որում իշխանությունը բաժանվում է միապետի (կազմավորում է կառավարությունը) և օրենսդիր խորհրդարանի միջև: Կառավարությունը կազմվում է անկախ խորհրդարանի կուսակցական կազմից և պատասխանատու է

Պատմության նոր դարաշրջանում առաջացան **խորհրդարանական և նախագահական հանրապետությունները**: Գոյություն ունեն մաս **խառը կառավարման ձևի հանրապետություններ՝ նախագահական-խորհրդարանական կամ կիսանախագահական**<sup>1</sup>:

Պետության պաշտպանության գործառույթը նրա արտաքին գործունեության հիմնական ուղղություններից մեկն է և խնդիր ունի դիվանագիտական, տնտեսական և հատկապես ռազմական միջոցառումների ձեռնարկմամբ պաշտպանելու անկախությունը, ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը<sup>2</sup>:

Պետական կառավարման ձևը քարացած չէ, այլ բազմաթիվ գործոնների ազդեցությամբ ենթակա է փոփոխության և, ըստ էության, բնապատմական գործընթաց է: Իշխանության կազմակերպման կառուցվածքի պրոբլեմը հարաբերական խնդիր է, սակայն պետության պաշտպանության ու անվտանգության ապահովման, ինչպես մաս պետական իշխանության լեգիտիմության (իրավահեղինակություն) պրոբլեմները բացարձակ են<sup>\*\*</sup>:

Իշխանության կազմակերպվածքը կարող է լինել ամենատարբեր ձևերի: Սակայն գլխավորը դրա ձևը չէ, այլ պետության առջև կանգնած կենսական կարևորությամբ խնդիրների, մասնավորապես՝ պաշտպանության ու անվտանգության, արդյունավետ լուծումն է, դրանով իսկ իշխանության գոյության իմաստի, նրա իրավահեղինակության ապահովումը: Ինչպես վերը նշվեց, **պաշտպանության ու պետական կառավարման ձևի տեսակի միջև հստակ կապ և փոխպայմանավորվածություն չկա**: Մինևույն կառավարման ձևի պետությունները կարող են ունենալ լրիվ տարբեր պաշտպանունակություն:

միայնակ առջև: Այդպիսի կառավարման ձև են ունեցել կայգերական Գերմանիան և Ճապոնիան: **Խորհրդարանական միապետությունում**, օրինակ, Մեծ Բրիտանիայում, միայնակը թագավորում է, բայց չի կառավարում: Կառավարությունը կազմվում է ընտրություններում հաղթած կուսակցության ներկայացուցիչներից և պատասխանատու է խորհրդարանի առջև: Միայնակի իշխանությունը օրենսդիր, գործադիր և դատական ոլորտներում զուտ խորհրդանշական է:

<sup>\*</sup> **Սոցիալիստական հանրապետությունը** կառավարման հատուկ ձև է: Լինում է երեք տեսակի՝ Փարիզի կոմունա, խորհուրդների հանրապետություն և ժողովրդաժողովրդավարական հանրապետություն, որոնք պրոլետարիատի դիկտատուրայի պետության ձևերն են:

<sup>2</sup> Տես Ա. Վաղարշյան, Պետության և իրավունքի տեսություն-1: Գասախություններ: Ե., 2010, էջ 105:

<sup>\*\*</sup> Տեսության մեջ կան պետական իշխանությունը բնութագրող երկու հասկացություններ՝ լեգիտիմություն և լեգալություն: Պետական իշխանության լեգալությունը նրա ծագման, կազմակերպման, գործունեության իրավաչափության ճանաչումն է: Այդ օրինականացումը կատարվում է տարբեր ճանապարհներով, որոնցից կարևորը ժողովրդավարական սահմանադրության ընդունումն է: ՈՒստի լեգալությունը իրավաբանական կատեգորիա է, որովհետև իշխանության և նրա լիազորությունների հիմնավորումը արմատավորված է իրավական ակտերում և ընթացակարգերում, իրավահարաբերություններում: Եթե պետական իշխանության լեգալությունը ձևական վիճակն է, ապա լեգիտիմությունը՝ փաստական: Լեգիտիմություն են կոչվում այն գործընթացները, որոնց միջոցով արտահայտվում են իշխանության ճշմարտացիությունը, արդարացվածությունը, գործունեության համապատասխանությունն անհատի, հասարակական խմբերի, ժողովրդի հոգեբանական դիրքորոշումներին, ակնկալիքներին: Պետական իշխանության լեգիտիմության հետևանքը բնակչության մեծ մասի աչքում նրա իրավահեղինակությունն է (տես Ա. Վաղարշյան, Պետության և իրավունքի տեսություն-1, էջ 80-81):

Մեր տարածաշրջանում պետության պաշտպանության և անվտանգության համակարգերին սպառնացող վտանգների հիմնական մասը արտաքին գործոններն են: Այդ գործոնները կարող են վտանգել, մեր կարծիքով, բացարձակ արժեքները՝ պետության և ժողովրդի պաշտպանությունը և անվտանգությունը, ազգային շահերը, ընդամին դա կարող է արվել նաև կառավարման համակարգի միջոցով, եթե այն չունի ներքին կազմակերպական անընդհատ իմունիտետ: Նման վտանգավոր գործոններից է այսպես կոչված «փափուկ, կամ ճկուն, ուժը»<sup>\*</sup>:

«Փափուկ ուժը» դիվանագիտության մեջ կիրառվող նորագույն միջոցներից է, երբ որևէ պետություն ազդում է այլ պետության, նրա բնակչության որոշակի զանգվածի վրա՝ դա օգտագործելով ներքաղաքական գործընթացներում, իշխանության համար պայքարում: Ազդեցության ենթարկվածները, զալով իշխանության, կենսագործում են այն, ինչ ցանկանում է ազդեցություն գործած պետությունը:

Ցավոք, ինչպես հին և միջնադարյան Հայոց աշխարհում, այնպես էլ այսօրվա Հայաստանում և՛ պետական ու քաղաքական-տնտեսական ընտրախավը, և՛ բնակչությունը տարաբաժանված են «արևմտասերերի», «ռուսասերերի» և «հայասերերի», ապակողմնորոշված ամորֆ զանգվածի: Այդպիսի իրավիճակում ընտրազանգվածի մի զգալի մասը կամա թե ակամա վերածվում է «փափուկ ուժի» գործոնի, որի կողմնորոշիչ լծակները գտնվում են արտաքին աշխարհում:

Կառավարման մենիշխանական, անձնիշխանական, նախագահական կամ կիսանախագահական համակարգի պայմաններում «փափուկ ուժի» գործոնը կարող է իշխանության բերել մի գործչի, որի կողմնորոշումը, այսպես ասած, հայանետ չէ: Արդի իրողությունների պայմաններում դա հնարավոր է այն պատճառով, որ ընտրական գործընթացները զուգակցվում են մի շարք բացասական միտումներով: Այսպիսին է հայ ժողովրդին «բաժին հասած դաժան իրողությունը», և այս պայմաններում պետության կառավարման համակարգի փոփոխությունը՝ անցումը կիսանախագահական մենիշխանությունից խորհրդարանական համակարգին, պետք է դիտվի որպես պետության պաշտպանության և անվտանգության, ազգային շահերի իրացման ապահովման միջոց:

Պետք է նկատի ունենալ, որ պետութենագիտության մեջ գործածվում է նաև «պետական կառավարման ռեժիմ» հասկացությունը: Այն բնութագրում է տվյալ ձևի պետական կառավարման պայմաններում այս կամ այն պետական մարմնի

<sup>\*</sup> «Փափուկ ուժի» (*soft power*) հայեցակարգը զարգացրել է ամերիկացի գիտնական Ջոն Նայը: Նրա կարծիքով՝ արտաքին աշխարհի վրա «փափուկ ուժի» կիրառմամբ պետության գործած ազդեցությունը կարող է լինել ոչ պակաս, եթե ոչ ավելի, քան ռազմական կամ տնտեսական եղանակով ձեռնարկվածը: «Փափուկ ուժը» ընդունակություն է՝ համոզելու ուրիշներին անել այն, ինչ ուզում եք դուք (տես *J. S. Nye. The Paradox of American Power: Why the World's Only Superpower Can't Go It Alone. New York, 2002*): Որպեսզի դա տեղի ունենա, անհրաժեշտ է տվյալ առաջարկությունը հակրնկերոջ համար դարձնել գրավիչ, նրան ընդգրկել համատեղ գործունեության մեջ: Իշխանության այդ տիպը հիմնվում է ոչ նյութական ռեսուրսների օգտագործման վրա, ինչպիսիք են մշակույթը, գաղափարախոսությունը, կրթությունը: «Փափուկ ուժի» ռեսուրսային շտեմարանում Ջ. Նայը ներառում է արտաքին քաղաքականությունը, այն դեպքում, եթե այլ պետությունները դա դիտարկում են որպես լեգիտիմ և բարոյապես արդարացված (տես *J. Nye. Public Diplomacy and soft power. «The ANNALS of the American Academy of Political and Social Science»*, March 2008, Vol. 616):

իրական տեղը պետության տվյալ կառավարման ձևի գործողության մեխանիզմում: Այսպես, պետությունների կառավարման ձևը կարող է լինել միևնույնը՝ խորհրդարանական միապետություն, սակայն պետական կառավարման ռեժիմը լինի տարբեր՝ կախված այն բանից, թե պետության մեխանիզմում ո՞ր մարմինն է գերակայում՝ խորհրդարանը, թե կառավարությունը: Ըստ այդմ տարբեր տեսակի հանրապետությունների մեջ կարելի է առանձնացնել հետևյալ «պետական կառավարման ռեժիմները»: Խորհրդարանական հանրապետությունում կարող են լինել. ա) խորհրդարանական կառավարման ռեժիմ, բ) մոնիստական խորհրդարանականության ռեժիմ, գ) դուալիստական խորհրդարանականության ռեժիմ, դ) կաբինետային կառավարման ռեժիմ: Նախագահական, նաև կիսանախագահական հանրապետությունում կարող են լինել. ա) նախագահական ձևի դուալիստական պետական կառավարման ռեժիմ, բ) նախագահական մենիքիստական պետական կառավարման ռեժիմ<sup>3</sup>: Դա նշանակում է, որ, օրինակ, նախագահական կառավարման ձևի պայմաններում կարող է տեղի ունենալ կամ գործադիր իշխանության, կամ օրենսդիր իշխանության ուժեղացում: Ռեժիմային փոփոխության պատճառները կարող են լինել բազմաթիվ, թեկուզ հենց իշխանության ամեն մի ճյուղի գերագույն ղեկավարի անձնական-կամային որակները, խաբիզը և այլն: Ըստ այդմ նախագահի «թուլության» պատճառով պետությունում կարող է հաստատվել խորհրդարանական իշխանության ռեժիմ: Այս դեպքում նախագահը գործնականում չի կարող լինել ոչ մի բանի երաշխավոր:

**Երկրի պաշտպանության և անվտանգության գլխավոր երաշխիքը կառավարման որևէ ձևը չէ:** Կառավարման ձևի բացարձակացումն անթույլատրելի է: Այն ընդամենը կարող է կատարել միջոցի, նպաստող գործոնի դեր: Բայց այն որոշակի պայմաններում կարող է վերածվել վտանգի, հետևաբար դրան չի կարելի մոտենալ կամ վերաբերվել դոգմատիկորեն, համարել անձեռնմխելի, ուստի և՛ անփոփոխելի: Պետության պաշտպանությանն ունակ մեխանիզմի ձևավորման համար անհրաժեշտ է, որ դրա կազմակերպման և գործունեության հիմքում դրվի պաշտպանունակության սկզբունքը: Այդ հրամայական անհրաժեշտությունը հաստատում է ինչպես Առաջին հանրապետությունում պետության պաշտպանության իրավական ապահովման փորձը<sup>4</sup>, այնպես էլ Չորսօրյա պատերազմի դասերը:

Այսպիսով՝ **հայրենիքի պաշտպանության և անվտանգության ապահովման գերխնդիրը պահանջում է պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքների համակարգի վերաիմաստավորում:** Պետական ապարատը պետական մարմինների համակարգ է, որոնք շաղկապված են մի շարք կազմակերպական և գործառնության սկզբունքներով: Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքներ են համարվում իրավունքի նորմերում ամրագրված (կամ դրանց իմաստից բխեցվող) դրույթները, որոնք ձևակերպում են

<sup>3</sup> Տես «Конституционное право зарубежных стран». Под ред. М. Б. Баглая, Ю. И. Лейбо, Л. М. Энтина. М., 2005, сс. 173–177:

<sup>4</sup> Տես *Ա. Գ. Վաղարշյան*, Հայաստանի առաջին հանրապետության կառավարության լիազորությունները և իրավական գործունեությունը երկրի պաշտպանության ոլորտում: «Հայկական բանակ», 2008, հմ. 2–3:

պետական ապարատի սոցիալական էությունը, դրա կազմակերպման և գործունեության ելակետային, հիմնական հարցերը (գործառույթներ, կառուցվածք, լիազորություններ և այլն): Արդիական սոցիալ-իրավական պետության կազմակերպման և գործունեության սկզբունքների ենթակարգային համակարգը ներառում է հիմնարար, ընդհանուր, ճյուղային և կոնկրետ պետական մարմնի սկզբունքները\*:

Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքը առաջին հերթին գաղափար է: Որպես գաղափարներ այդ սկզբունքները մշակվել, հիմնավորվել և կյանքի են կոչվել պետական ապարատի գոյության բազմադարյա պատմության ընթացքում: Արդի ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության մոդելով պետական ապարատի կազմակերպման և գործունեության ընդհանուր սկզբունքներն են՝ մարդու իրավունքների առաջնայնությունը, մարդասիրությունը, ժողովրդավարությունը, հրապարակայնությունը, իրավական օրինականությունը, իշխանությունների բաժանումը, պետական ծառայության մատչելիությունը և արհեստավարժությունը, կոլեգիալության և միանձնյա կառավարման զուգակցումը, հասարակության առջև պետության հանրային-իրավական պատասխանատվությունը:

Մինևույն ժամանակ, պետութենագիտության մեջ ընդունված է, որ ցանկացած պետության ապարատի կազմավորման, գործառութավորման և մշտական զարգացման վրա վճռականորեն ազդող գործոններ են՝ տնտեսական պայմանները, քաղաքական համակարգի ու կյանքի առանձնահատկությունները, պաշտոնական, այդ թվում՝ իրավական, գաղափարախոսությունը, պետական ապարատի հիմնարար սկզբունքները, հասարակության քաղաքական և բարոյագաղափարական հատկությունները, հասարակության առջև կանգնած խնդիրներն ու նպատակները և այլն: Պետական ապարատի ընդհանուր սկզբունքների շրջանակը պայմանավորված է նաև տվյալ պետության պատմական պայմաններով, ազգային կազմով, մշակութային առանձնահատկություններով: Պետական միասնական համակարգի գործառութավորման և մշտական զարգացման վրա վճռապես ներգործող գործոններից են նաև արդի դարաշրջանում պետության հռչակման, դրա իրավաբանական ճանաչման առանձնահատկությունները, դրանով պայմանավորված՝ պետության արտաքին քաղաքական կարգավիճակը, ինչպես նաև պետության աշխարհաքաղաքական կացությունը: Այսպես. Արցախի՝ որպես պետության ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանն սպառնացող վտանգը մշտապես առկա արտաքին քաղաքական գործոն է: Հետևաբար, Արցախի հանրության և պետության առջև կանգնած գլխավոր խնդիրը պետության պաշտպանությունն է, նրա պաշտպանունակության մշտական ամրապնդու-

\* Հիմնարար են իրավական, սոցիալական, ժողովրդավարական և ինքնիշխան պետության սկզբունքները, որոնք որպես առավել ընդհանուր ելակետային դրույթներ որոշում են պետական ապարատի կազմակերպման և գործունեության մյուս սկզբունքները: Ընդհանուր են այն սկզբունքները, որոնք դրված են պետական ապարատի բոլոր կառուցվածքային մասերի կազմակերպման և գործունեության հիմքում, բնորոշ են այդ ապարատի բոլոր ճյուղերին: Գյուղային են այն սկզբունքները, որոնք պետական ապարատի երեք ճյուղերից ամեն մեկի կազմակերպման և գործունեության հիմքում են: Կոնկրետ սկզբունքների հիման վրա կազմակերպվում և գործում է կոնկրետ պետական մարմինը:

մը: ԼՂՀ արտաստվոր պայմանները և նրա առջև կանգնած խնդիրը հրամայաբար թելադրում են մինչև անկախության և տարածքային ամբողջականության միջազգային իրավական երաշխիքների ստեղծումը չբավարարվել սովորական պաշտպանական գործառնության իրականացմամբ, այլ պետական շինարարության հայեցակարգում կատարել էական վերադասավորում:

Պետության պաշտպանությունը քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական, իրավական, կրթադաստիարակչական-գաղափարական և այլ միջոցների համակարգ է: Դրա կառուցման ու գործառնման գործում էական դեր է խաղում պետական իշխանության ամբողջ համակարգը: Ուստի պետական ապարատի այլ սկզբունքների շարքում պետք է տեղ տալ նաև պաշտպանունակության սկզբունքին, որով հնարավոր կլինի պետական համակարգն օժտել ինքնապահպանման, ինքնավերարտադրման, ինքնակատարելագործման հատկությամբ: Խնդիրն այն է, որ պաշտպանունակությունը՝ աղետալի, արտակարգ, պատերազմական պայմաններում գործելու ունակությունը, հաշվառված լինի սովորական իրադրությունում գործելու համար ստեղծված պետական մարմինների ու իրավական հաստատությունների էության մեջ: Այդ ունակությունը մեքենայական հատկություն չէ, այլ պետք է դրսևորվի հատուկ պետաիրավական հաստատությունների համակարգի հիմնադրման ու կայացման միջոցով, մի համակարգի, որի ներդրումը պետական ապարատին կօժտի կայունությամբ, այսինքն՝ տարբեր տեսակի քայքայիչ ներգործությունների առկայությամբ իր հիմնական բնութագրերը պահպանելու և իր առջև դրված խնդիրները կատարելու ընդունակությամբ:

Հարկ է նշել, որ **պաշտպանական գործառնոյթ կատարում է ցանկացած պետություն, որը, սակայն, կարող է չլինել պաշտպանունակ**, որովհետև գործառնոյթը ընդամենը գործունեության ուղղություն է և դեռ չի նշանակում գործունեության արդյունավետություն: Մինչդեռ պաշտպանունակությունը՝ որպես սկզբունք, այլ սկզբունքների հետ մեկտեղ ղեկավար ելակետային դրոյթ է և պայմանավորում է պետական ապարատի կազմակերպումը և գործունեությունը, նրա առաքելությունը: Ընդ որում, այն համահունչ է պետական ապարատի կազմակերպման ու գործունեության այլ սկզբունքների հետ, որովհետև խոսքը ոչ թե ինչ-որ արտաստվոր երևոյթի մասին է, այլ վերաբերում է ղեկավար գաղափարն իրավական միջոցներով օրենսդրության մեջ կենսագործելուն\*:

Եթե պաշտպանունակության սկզբունքի տեսանկյունից քննարկենք և վերլուծենք մեր հանրապետությունների օրենսդրությունները, ապա կտեսնենք, որ դրանք որոշակիորեն հաշվի են առել այս սկզբունքի պահանջները, այսինքն՝

\* Դա չի հակասում միջազգային իրավունքի նորմերին: Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության Եվրոպական կոնվենցիայով (հոդ. 15) սահմանվում է, որ «պատերազմի կամ այլ արտակարգ դրության ժամանակ, որն սպառնում է ազգի կյանքին, ցանկացած բարձր պայմանավորվող կողմ կարող է կիրառել միջոցներ, որոնք նահանջում են սույն կոնվենցիայի պարտավորություններից միայն այն չափով, որքանով դա պահանջում է դրության արությունը, պայմանով, որ այդպիսի միջոցները չեն համարվում անհամեմատելի՝ կողմի մյուս միջազգային պարտավորությունների հետ: Սակայն այդ դեպքում անհրաժեշտ է լրիվ ծավալով տեղեկացնել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին նրա կողմից մտցված միջոցների և դրանց ընդունման պատճառների մասին»:

սկզբունքն ունի որոշակի պետաիրավական հաստատությունների ձևով իրավական դրսևորում: Օրինակ՝ Նախագահի ռազմական ոլորտի լիազորություններում, պատերազմ հայտարարելու և Ջինված ուժերի օգտագործման կարգում, Նախագահի և Ազգային ժողովի ընտրությունների, կառավարությանն անվստահություն հայտնելու հաստատություններում և այլն: Սակայն հանգամանալից հետազոտությունը ցույց է տալիս, որ օրենսդրությունում դեռ կան որոշակի պրոբլեմներ, որոնք սպասում են իրենց լուծմանը: Օրինակ՝ բացարձակապես չկա պատվիրակված օրենսդրության սահմանակարգ: Կարծում ենք, որ կարելի էր նախատեսել մի նորմ, ըստ որի՝ պատերազմի պայմաններում խորհրդարանը կարող է լիազորել պետության ղեկավարին՝ նախագահին կամ կառավարությանը, ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ, որոնք կգործեն մինչև պատերազմի ավարտը և չեն կարող հակասել Սահմանադրությանը: Կամ, ասենք, պատերազմական պայմաններում լրացել է համայնքի կառավարման մարմինների լիազորությունների ժամկետը, կամ գոհվել է գյուղապետը, ինչպես պետք է կատարվի հիմնախնդրի կարգավորումը, եթե Սահմանադրությունը չի նախատեսել որևէ լուծում:

Թռուցիկ հայացքը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է մեր առաջարկած պաշտպանունակության սկզբունքի տեսանկյունից կատարել ամբողջ օրենսդրության հանգամանալից դիտարկում և փոփոխում: Դրա համար առաջարկում ենք հետևյալ չափանիշները.

ա) պետական իշխանության և տեղական կառավարման համակարգն այնքան արդյունավետ և հստակ կերպով է կառուցված և գործում, որ ցանկացած իրավիճակում, այդ թվում նաև՝ պատերազմական, չի առաջացնում որևէ կազմակերպակառուցվածքային վակուում,

բ) բոլոր հանրային իշխանական կառույցները վստահաբար տիրապետում են իրենց իրավասություններին և ընդունակ են դրանք իրացնելու ցանկացած արտակարգ կամ պատերազմական պայմաններում՝ ելնելով իրենց հանրային-իշխանական առաքելությունից,

գ) հանրային իշխանական համակարգն իր ծառայողական և աշխատանքային անձնակազմով տոգորված է հայրենիքի պաշտպանության ու կարգապահության ոգով, արտակարգ պայմաններում ընդունակ է կարգապահության ու ինքնակազմակերպման, պատրաստակամ է անձնագոհության: Այս պահանջը վերաբերում է նաև ամբողջ հանրությանը:

## ФОРМА ГОСУДАРСТВЕННОГО ПРАВЛЕНИЯ И ПРОБЛЕМА ОБОРОНЫ И БЕЗОПАСНОСТИ ГОСУДАРСТВА

*А. Г. ВАГАРШЯН, доктор юридических наук, профессор, заведующий кафедрой  
теории и истории государства и права юридического факультета ЕГУ*

### РЕЗЮМЕ

Принцип обороноспособности механизма, как новая теоретическая конструкция, предполагает не просто защищенность или осуществление функции защиты государства, а такие свойства государственного меха-

низма, как самосохранение, самовоспроизводство и самосовершенствование. Вытекающая из этого принципа законодательная задача состоит в том, чтобы способность системы государственного правления действовать в чрезвычайной, в том числе военной, обстановке была заложена в самой сущности государственных органов и правовых институтов, созданных для деятельности в нормальных условиях. В рамках данного подхода предлагается мониторинг законодательства с точки зрения обеспечения принципа обороноспособности на основе трех основных критериев: 1) эффективность и четкость системы государственной власти и местного самоуправления, позволяющие в любых ситуациях избежать возникновения организационно-структурного вакуума; 2) способность структур публичной власти реально обладать своей компетенцией и осуществлять ее в любых ситуациях в соответствии со своим публично-властным назначением; 3) обладание публично-властной системой духом исполнительности и защиты Родины, способностью в чрезвычайных ситуациях сохранять дисциплину и самоорганизацию, а также готовностью к самопожертвованию.

## THE FORM OF GOVERNMENT AND THE PROBLEM OF NATIONAL DEFENSE AND SECURITY

*A. G. VAGHARSHYAN, Doctor in Law, Professor, Head of the Chair of Theory and History  
of State and Law, Department of Law, YSU*

### SUMMARY

As a new theoretical construction the principle of a mechanism's defense capability assumes more than security or performance of defense functions of the state. It encompasses such properties of the state mechanism as self-preservation, self-reproduction, and self-improvement. The legislative task following from this concept is that the government system's capability to operate in an emergency, including military situations should be put in the very essence of state bodies and legal institutions, established to function in normal conditions. Within this approach, it is proposed to monitor the legislation in terms of ensuring the principle of defense capability based on three essential criteria: 1) efficiency and accuracy of the system of government and local government enabling to avoid organizational and structural vacuum in all situations; 2) ability of public authority structures to possess power and exercise it in all situations in compliance with their public-power purpose; 3) public-power system possessing itself of the "can-do" spirit and sense of duty towards defending the Homeland, the ability of maintaining the discipline and self-organization in an emergency, as well as the readiness to sacrifice.

ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆՆ ԱՆՑՄԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

*Լ. Գ. ԱՅՎԱԶՅԱՆ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական,  
ՀՀ պաշտպանության նախարարության պաշտպանական  
քաղաքականության վարչության պետ*

2015 թ. դեկտեմբերի 6-ին կայացած հանրաքվեի արդյունքներով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ենթարկվեց փոփոխության: Փոփոխված Սահմանադրությունը, այլ բարեփոխումներից բացի, ներկայիս երկամյա անցումային փուլի ավարտին նախատեսում է կառավարման կիսանախագահական համակարգից անցում խորհրդարանական համակարգի: Սահմանադրության 16 գլուխներից 4-ը՝ «Սահմանադրական կարգի հիմունքները», «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները», «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները», ինչպես նաև «Մարդու իրավունքների պաշտպանը», արդեն մտել են ուժի մեջ: Հայաստանի Հանրապետության կառավարման կարգը փոփոխող գլուխներն ուժի մեջ կմտնեն մինչև 2018 թվականը մի քանի փուլերով, ընդամենը դա կողեկցվի նաև օրենսդրական փոփոխություններով:



Բնականաբար, Սահմանադրական փոփոխությունները չեն շրջանցել նաև պաշտպանության ոլորտը, այդ թվում՝ պաշտպանության կառավարումը, պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականությունը՝ պաշտպանական քաղաքականությունը, Ձինված ուժերի դերը, խնդիրները, դրանց կիրառման սահմանադրական հիմքերը և այլն: Ընդ որում, փոփոխությունների են ենթարկվել պաշտպանության ոլորտում ՀՀ Կառավարության, Նախագահի, Անվտանգության խորհրդի, Պաշտպանության նախարարի և ՁՈՒ-ի Գլխավոր շտաբի պետի լիազորությունները:

ՀՀ սահմանադրական փոփոխությունները հանգեցնելու են ոլորտի իրավական-օրենսդրական և հայեցակարգային-դոկտրինային վերափոխումների: ՈՒՍ-տի այս համատեքստում կարևոր է հասկանալ պաշտպանական քաղաքականության էությունը, և թե ինչպես է այն գործելու խորհրդարանական կառավարման համակարգում:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին հերթին անհրաժեշտ է փաստել, որ «պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը ոչ թե իրավական, այլ քաղաքական-հայեցակարգային կատեգորիա է: ՈՒՍ-տի միջազգային պրակտիկայում, այդ թվում՝ Հայաստանում,

տանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով, «պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը իրավական հատակ սահմանում չունի: Փոխարենը ՀՀ Սահմանադրությամբ<sup>1</sup> և օրենքներով սահմանվում են դրա իրավական հիմքերը: Նույն իրավական մոտեցումն է գործում այն մյուս պետություններում, որոնց կառավարման համակարգերը կիրառում են ռազմավարական-քաղաքական (ռազմավարությունների և քաղաքականությունների) պլանավորման սկզբունքը, օրինակ՝ ԱՄՆ-ում<sup>2</sup>, Ֆրանսիայում և այլ պետություններում:

Քաղաքական-հայեցակարգային առումով «պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը կառավարման և պլանավորման տարբեր համակարգեր ունեցող պետություններում տարբեր է: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում, որտեղ պաշտպանության ոլորտի հիմնական հայեցակարգային փաստաթուղթը ՌԴ ռազմական դոկտրինն է, «պաշտպանական քաղաքականություն» հասկացություն չկա, փոխարենը սահմանվում է «ռազմական քաղաքականություն» (*военная политика*) հասկացությունը. պետության գործունեությունը Ռուսաստանի Դաշնության, ինչպես նաև նրա դաշնակիցների պաշտպանության և անվտանգության ապահովման կազմակերպման և իրականացման ուղղությամբ<sup>3</sup>: Իսկ, օրինակ, Ֆրանսիայի պաշտպանական քաղաքականությունը սահմանվում է հետևյալ կերպ. «Ֆրանսիայի պաշտպանական քաղաքականությունը սահմանում է Ֆրանսիայի ժողովրդի անվտանգության ապահովման, Ֆրանսիայի պետական տարածքի և կենսական շահերի պաշտպանության, մեր միջազգային պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ռազմական կարողությունները: Այն արտահայտում է գործերի ներգրավման և սպառազինման ռազմավարությունը<sup>4</sup>»:

Պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականությունը սահմանելիս «ռազմական» և «պաշտպանական» տերմինների տարբերությունը (օրինակ՝ ՌԴ-ի և Ֆրանսիայի դեպքում) պայմանավորված է պետությունների կառավարման և պլանավորման համակարգերի հայեցակարգային մոտեցումների տարբերություններով<sup>5</sup>:

2005 թ. Սահմանադրական փոփոխություններից հետո Հայաստանի Հանրապետությունը այսպես կոչված կառավարման «նախագահական համակարգից» անցում կատարեց «կիսանախագահական համակարգի», ՀՀ Նախագահի լիազորությունների հաշվին զգալիորեն ընդլայնվեցին ՀՀ Ազգային ժողովի և Կառա-

<sup>1</sup> Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», ընդունված 06.12.2015, հոդ. 14, 41, 44, 46, 57, 118, 133 և 155 (<http://www.president.am/hy/constitution-2015>):

<sup>2</sup> Տես «Constitution of the United States», Article I, Section 8, Article II, Section 2, Amendment II ([http://www.senate.gov/civics/constitution\\_item/constitution.htm](http://www.senate.gov/civics/constitution_item/constitution.htm)); նաև՝ «Militia Act of 1792» ([http://www.constitution.org/mil/mil\\_act\\_1792.htm](http://www.constitution.org/mil/mil_act_1792.htm)):

<sup>3</sup> Տես «Президент утвердил новую редакцию Военной доктрины», 26 декабря 2014, с. 3, пункт «и» (<http://kremlin.ru/events/president/news/47334>):

<sup>4</sup> Տես «Enjeux», 10.06.2016 (<http://www.defense.gouv.fr/portail-defense/enjeux2>):

<sup>5</sup> Տես Հ. Ս. Լորանջյան, Գ. Ս. Չիլինգարյան, Վ. Պ. Ավետիսյան, Ա. Ա. Մինասյան, «Պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը՝ որպես Հայաստանում պաշտպանական արեֆոփոխումների իրականացման տեսական-մեթոդաբանական գործիք: «ՀԲ», 2002, հմ. 1–2:

վարության լիազորությունները, սկսվեց նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանական պլանավորման համակարգի փոփոխությունների առաջին փուլը: 2007–2008 թթ. լրանակվեցին և հաստատվեցին «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը», «Ռազմական դոկտրինը», պաշտպանության ոլորտում ներդրվեց քաղաքացիական հատուկ ծառայության հաստատությունը: 2008–2010 թթ. կատարվեց ՀՀ պաշտպանության առաջին ռազմավարական վերանայումը<sup>6</sup>: Այս գործընթացներն զգալի փոփոխություններ մտցրին պաշտպանական քաղաքականության մշակման ու պլանավորման մշակույթի, սկզբունքների և մեթոդաբանության մեջ, իրավական և հայեցակարգային առումով հստակեցվեցին ՀՀ պաշտպանության համակարգը, տվյալ ոլորտում ՀՀ ազգային անվտանգության հիմնարար արժեքները և ՀՀ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները, տարանջատվեցին ՀՀ ՊՆ և ԶՈՒ-ի ԳԸ գործառույթները և այլն:

Այդ գործընթացներում առաջավոր միջազգային մեթոդաբանության կիրառումը պետության պաշտպանության, հետևաբար և պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականության հայեցակարգային ընկալումը դուրս բերեց զուտ ռազմական շրջանակներից, ինչը ամրագրվեց նաև օրենսդրոթեն: Մասնավորապես՝ 2008 թ. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանվեց, որ «Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը՝ «ռազմական անվտանգության համակարգը, Հայաստանի Հանրապետության տարածքը, հասարակությունն ու տնտեսությունը պաշտպանության նախապատրաստելու և Հայաստանի Հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը, պետական սահմանի անձեռնմխելիությունն ու անվտանգությունը պաշտպանելու՝ ռազմական, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների, ինչպես նաև ռազմական անվտանգության միջազգային երաշխիքների ապահովման մեխանիզմների կիրառման համալիր գործունեության համակարգ է»<sup>7</sup>:

Մինևույն ժամանակ, «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանվեց նաև «ռազմական անվտանգության համակարգ» հասկացությունը\*, որը, ՀՀ Զինված ուժերից բացի, ներառում է նաև պաշտպանության ոլորտում գործառույթներ ունեցող պետական կառավարման բոլոր մարմիններն ու կազմակերպությունները:

Այսպիսով՝ պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականությունը թե՛ հայեցակարգային, թե՛ իրավական ընկալման առումով չի սահմանա-

<sup>6</sup> Տես *Ս. Մ. Օհանյան*, Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումները. երկրորդ փուլ: «ՀԲ», 2008, հմ. 2–3:

<sup>7</sup> Տես «Պաշտպանության մասին» ՀՀ 2008 թ. նոյեմբերի 27-ի հմ. ՀՕ-198-Ն օրենքը, հոդ. 3, կետ 1.1 (<http://www.mil.am/media/2015/07/842.pdf>):

\* «Ռազմական անվտանգության համակարգ՝ Հայաստանի Հանրապետության պետական լիազոր մարմինների ու պաշտոնատար անձանց, զինված ուժերի, այլ զորքերի և ռազմաարդյունաբերական համալիրի, ինչպես նաև ռազմական անվտանգության խնդիրների լուծման գործառույթներ իրականացնող կազմակերպությունների ամբողջություն» (տես նույն տեղում, հոդ. 3, կետ 1.4):

փակվում զուտ ռազմական շրջանակներով: Այն ուղղված է պետության պաշտպանության ամբողջական իրականացմանը, այսինքն՝ պետության կողմից պաշտպանությանն ուղղված գործողությունների ապահովմանը, և ներառում է ռազմական-ռազմաքաղաքական, քաղաքական, վարչական-կառավարչական, ֆինանսատնտեսական, հասարակական և այլ միջոցառումների ամբողջությունը թե՛ ազգային-ներպետական, թե՛ միջազգային մակարդակներում: Ուստի տրամաբանական է նաև, որ, համապատասխանաբար, ՀՀ պաշտպանության նախարարի՝ որպես Կառավարության անդամի և դրանով իսկ՝ պաշտպանական քաղաքականության համար պատասխանատուի պաշտոնը նույնպես ոչ թե ռազմական, այլ քաղաքական պաշտոն է:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ փորձենք իրավական առումով սահմանել «պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը հետևյալ կերպ. «Պաշտպանական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության համակարգի՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ապահովմանն ուղղված գործունեություն է»:

**ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՏՈՒՄ**

2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով հաստատված սահմանադրական փոփոխություններով հստակեցվել է պաշտպանության ոլորտի կառավարման համակարգը, որն ամբողջությամբ կգործարկվի 2018 թվականին:

Եթե ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության տակ զինված ուժերի գտնվելու տեսանկյունից փոփոխություններ չկան (ՀՀ Ձինված ուժերը եղել և մնում են լիարժեք ժողովրդավարական ու քաղաքացիական վերահսկողության ներքո), ապա հրամանատարական ուղղահայացը և դրանից բխող կառավարման ու ղեկավարման կարգավորումները ենթարկվել են փոփոխությունների: Սահմանադրական փոփոխությունների համաձայն՝ Ձինված ուժերը գտնվելու են կառավարության ենթակայության տակ, որն էլ ընդունելու է դրա կիրառման մասին որոշումը: Պատերազմի ժամանակ Ձինված ուժերի Գերագույն հրամանատարը վարչապետն է, իսկ խաղաղ պայմաններում այդ իրավագործությունը հավաքական կերպով տրամադրվում է կառավարությանը: Պաշտպանության նախարարը ղեկավարում է Ձինված ուժերը, իսկ ՀՀ Ձինված ուժերի Գլխավոր շտաբի պետը, լինելով զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը, ոչ պատերազմական ժամանակ ենթակա է պաշտպանության նախարարին:

Բացի այդ, նշանակալիորեն մեծանում է պաշտպանության ոլորտում Անվտանգության խորհրդի դերը, որը սահմանելու է պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները:

Այսպիսով՝ ՀՀ սահմանադրական փոփոխություններով հստակեցվում են ոչ միայն կառավարությունից (իսկ ռազմական դրության ժամանակ՝ վարչապետից) պաշտպանության նախարար, պաշտպանության նախարարից Գլխավոր շտաբի պետ հրամանատարության ուղղահայացը (ընդ որում, «հրամանատարություն»

ասելով հասկանում ենք կառավարման համակարգը և միանձնյա ղեկավարման սկզբունքը), այլև պաշտպանական քաղաքականության մշակման և իրագործման մեխանիզմը:

Խորհրդարանական կառավարման համակարգում պաշտպանական քաղաքականությունը, արտաքին քաղաքականության հետ մեկտեղ, այլևս ՀՀ Նախագահի անմիջական պատասխանատվության շրջանակում չէ: Եթե նախկինում պաշտպանական քաղաքականությունը սահմանում և պլանավորում էր ՀՀ Նախագահը, իսկ դրա ապահովումն իրականացնում էր կառավարությունը<sup>8</sup>, ինչը կառավարության ծրագրային առաջնահերթություններում հակասությունների տեսական հնարավորություններ էր ստեղծում (եթե, օրինակ, ՀՀ Նախագահը և Կառավարությունը տարբեր քաղաքական ուժեր են ներկայացնում, կամ ՀՀ Նախագահի՝ որպես անվտանգության և ՀՀ վարչապետի՝ որպես տնտեսության համար պատասխանատվությունների պարագայում ռեսուրսների պլանավորման առաջնահերթությունների որոշման ժամանակ), ապա 2018 թվականից ուժի մեջ մտնող սահմանադրական դրույթների համաձայն՝ պաշտպանական քաղաքականությունը (նաև՝ արտաքին քաղաքականությունը) պետք է մշակի, պլանավորի և իրականացնի ՀՀ Ազգային ժողովի ընտրած կառավարությունը:

Չնայած մինչ այժմ կառավարման համակարգում պաշտպանական քաղաքականության մշակման, պլանավորման և ապահովման պատասխանատուները տարբեր են եղել, դեռ 2008 թվականից ՀՀ պաշտպանության նախարարության կողմից համապատասխան մեթոդաբանության ներդրումը հնարավորություն է տվել պաշտպանական քաղաքականության մշակումն ու պլանավորումն իրականացնելու միջգերատեսչական, համապետական մակարդակով՝ պետական կառավարման բոլոր շահագրգիռ մարմինների (ներառյալ՝ Ազգային ժողովը) ընդգրկմամբ, և այդ կերպ խուսափել հավանական հակասություններից: 2008-2010 թթ. և 2014-2015 թթ. իրականացված պաշտպանության ռազմավարական վերանայման միջգերատեսչական գործընթացներով պաշտպանական քաղաքականության մշակման, պլանավորման, որոշումների կայացման, Զինված ուժերի, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման առաջնահերթությունները համապատասխանեցվել են ՀՀ արտաքին, տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, քաղաքական և այլ ցուցանիշներին: Ուստի պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացը թեև հաստատութենական առումով դեռ պաշտպանական պլանավորման քաղաքիչ<sup>9</sup> չէ, սակայն պլանավորման մշակույթի և մեթոդաբանության առումով լիարժեքորեն համապատասխանում է խորհրդարանական կառավարման սկզբունքներին:

Խորհրդարանական կառավարման համակարգում պաշտպանական քաղաքականությունը՝ որպես համապետական խնդիր, կառավարության սահմանվող չափորոշիչների ու նախաձեռնությունների և Անվտանգության խորհրդի սահմանած գերակա ուղղությունների հիման վրա պետք է ապահովի պետության պաշտ-

<sup>8</sup> Տես նույն տեղում, հոդ. 7, կետ 1:

<sup>9</sup> Այս մասին հանգամանորեն տես *Լ. Գ. Այվազյան*, Պաշտպանության ռազմավարական վերանայումը՝ որպես պաշտպանության պլանավորման կարևոր քաղաքիչ: «ՀԲ», 2015, հմ. 3:

պանության ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված որոշումների կայացման իրատեսականությունը, լիարժեքությունը և փոխհամաձայնեցվածությունը:

**ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՄ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ**

Պաշտպանական քաղաքականության պլանավորման ներդրված մշակույթն ի ցույց է դնում դրա կապը համապետական քաղաքականության այն ուղղությունների հետ, որոնք չի իրականացնում պաշտպանության նախարարությունը, սակայն որոնք պաշտպանական քաղաքականության շրջանակներում պետք է համադրվեն պաշտպանության նախարարության գործունեության հետ: Դրանք են.

1) Արտաքին քաղաքականությունը. դրանից են մեծ մասամբ կախված արտաքին անվտանգային միջավայրի վրա կատարվող ներգործությունը, սպառնալիքների ուժգնացումը կամ մեղմացումը, Չինված ուժերի միջազգային ներգրավումն ու կոլեկտիվ պաշտպանության մեխանիզմների զարգացումը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ՀՀ սահմանադրության այն դրույթը, որ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերն ազգային օրենքների նկատմամբ ունեն գերակայություն<sup>10</sup>, ինչպես նաև այն, որ Ազգային ժողովը վավերացնում է այն միջազգային պայմանագրերը, որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ<sup>11</sup>, ՀՀ ԱԳՆ միջնորդությամբ անվտանգության ու պաշտպանության ոլորտներում տարբեր միջազգային պայմանագրերի ու համաձայնագրերի նախապատրաստումը, համաձայնեցումը և ստորագրումը դառնում են (ավելի ստույգ ասած՝ պետք է դառնան) ՀՀ պաշտպանական քաղաքականության պատասխանատուների քննության առարկա:

2) Տնտեսական (ներառյալ՝ գյուղատնտեսական, արդյունաբերական) քաղաքականությունը պետք է ապահովի պետության պաշտպանունակության համար խիստ անհրաժեշտ տնտեսական զարգացման կայունությունը, պարենային, նյութական և ռազմատեխնիկական ինքնաբավության հնարավորինս բարձր աստիճանը, ռազմավարական պաշարների կուտակումը, խթանի ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը և այլն:

3) Ֆինանսատնտեսական քաղաքականությունը. պետական ֆինանսական հոսքերով են պայմանավորված Չինված ուժերի նյութատեխնիկական ապահովումը և անձնակազմի դրամական բավարարումը:

4) Սոցիալական քաղաքականությունը. ՁՈՒ-ի գործող և զորացրվող անձնակազմին միջազգային պրակտիկային համապատասխան պետք է տրվի սոցիալական առանձնահատուկ կարգավիճակ:

5) Տեղեկատվական քաղաքականությունը. կարող է դրական կամ բացասական ազդեցություն ունենալ ՀՀ ՁՈՒ-ի նկատմամբ հասարակության վստահութե-

<sup>10</sup> Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», հոդ. 5 (<http://www.president.am/hy/constitution-2015/>):

<sup>11</sup> Տես նույն տեղում, հոդ. 116:

յան աստիճանի վրա, ինչը կապված է գորակոչի, գորահավաքի, համալրման, անգամ՝ ֆինանսական կարիքների բավարարման հետ (ցածր վարկանիշի դեպքում դժվար կլինի հիմնավորել, թե ինչու է այդքան ռեսուրս հատկացվում պաշտպանության կարիքներին, մինչդեռ բարձր վարկանիշի դեպքում ծախսերի առնվազն մեծ մասը հասարակության տեսակետից կլինի արդարացված): Բացի այդ, տեղեկատվական քաղաքականության և այն կանոնակարգող օրենսդրությունից են կախված գաղտնիության ապահովման ռեժիմը և արտաքին տեղեկատվական հարձակումներից պաշտպանությունը:

6) Կրթական քաղաքականությունը, հատկապես պարտադիր ժամկետային ծառայություն ունեցող պետություններում այն ապահովում է նախագորակոչային պատրաստությունը և ռազմական կրթության համակարգի միջոցով՝ պահանջվող մասնագիտություններով ՁՈՒ-ի կադրերի պատրաստումը:

7) Երիտասարդության և սպորտի զարգացման ուղղությամբ տարվող քաղաքականությունը, պետք է նպաստի երիտասարդ սերնդի և, հատկապես՝ գորակոչային ռեսուրսի առողջության ապահովմանը, պայմանագրային ծառայության հավաքագրման խթանմանը:

8) Գիտական քաղաքականությունը, պետության կողմից գիտության ֆինանսավորումը կամ գիտության համար առաջնահերթ ուղղությունների ցանկում պաշտպանության համար հետաքրքրություն ներկայացնող ոլորտների ընդգրկումը կարող են մեծապես նպաստել ռազմական արդյունաբերության զարգացմանը (կիրառական գիտության մասով) և ռազմագիտությանը (տեսական գիտության մասով):

9) Դատախիրավական համակարգում վարվող քաղաքականությունը, ՁՈՒ-ում տեղի ունեցող քրեական հանցագործությունները քննում և դրանց վերաբերյալ վճիռներ է կայացնում քաղաքացիական դատախիրավական համակարգը, հետևաբար՝ սահմանված պատիժների ձևերն ու տևողությունն ուղղակիորեն կապված են ՁՈՒ-ում ծանր հանցագործությունների վիճակագրության հետ:

10) Քաղաքացիական պաշտպանության ապահովման քաղաքականությունը, կայացած քաղաքացիական պաշտպանությունը ռազմական դրության ժամանակ կարող է զգալիորեն թեթևացնել ՁՈՒ-ի պարտականությունները պետության ներսում, անգամ վերացնել տարածքային պաշտպանություն կազմակերպելու անհրաժեշտությունը:

11) Այլ ճյուղային քաղաքականություններ:

Այսպիսով՝ սահմանադրական անցումային փուլում ստեղծվել է մի իրավիճակ, երբ տարիների ընթացքում ձևավորված և փաստացի գործող պաշտպանական քաղաքականության մշակման համակարգը, պլանավորման մշակույթն ու կիրառման մեթոդաբանությունը հաստատութենական առումով գրեթե ամբողջությամբ պատրաստ են գործառելու նոր՝ խորհրդարանական կառավարման համակարգում:

## ОБОРОННАЯ ПОЛИТИКА РА В УСЛОВИЯХ ПЕРЕХОДА К ПАРЛАМЕНТСКОЙ ФОРМЕ ПРАВЛЕНИЯ

*Л. Г. АЙВАЗЯН, государственный советник 2-го класса СГС,  
начальник Управления оборонной политики Министерства обороны РА*

### РЕЗЮМЕ

Согласно Конституционным изменениям от 6 декабря 2015 г. в РА предусматривается переход от системы полупрезидентского правления к парламентской. В свете данного реформирования анализируются сущность оборонной политики, роль Вооруженных сил, их задачи, конституционные основы их применения.

В статье подчеркивается, что сформировавшиеся в течение последних нескольких лет и фактически уже действующие система разработки, культура планирования и методология применения оборонной политики в институциональном аспекте почти полностью готовы к функционированию в условиях парламентского правления.

## THE RA'S DEFENSE POLICY UNDER THE TRANSITION TO THE PARLIAMENTARY FORM OF GOVERNMENT

*L. G. AYVAZYAN, 2<sup>nd</sup> Degree State Advisor, SCS, Chief, Department of Defense Policy,  
MOD, RA*

### SUMMARY

According to the Constitutional amendments of 6 December 2015, a transition from the semi-presidential to the parliamentary system of government is envisaged in the Republic of Armenia. In light of these reforms, the nature of the defense policy; the role of the Armed Forces, their tasks, and constitutional frameworks for their use are analysed.

In this article it is emphasized that the development system, the planning culture and the methodology of the implementation – which have shaped over the past few years and, in fact, are already operating – of the defense policy in the institutional aspect are almost completely prepared to function in conditions of the parliamentary government.

**ՀԻՔՐԻԳԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՈՐՈՇԱՐԿՄԱՆ  
ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ\***

*Ա. Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, պատրանական գիտությունների թեկնածու,  
ՀՀ Պաշտպանության նախարարի մամլո քարտուղար*

«ՀԻՔՐԻԳԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ»  
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին տարիներին ամբողջ աշխարհում ռազմական տեսաբանները փորձում են ռազմական գիտության և ռազմական արվեստի տեսանկյունից իմաստավորել և ընդհանրացնել Իրաքում, Աֆղանստանում, Լիբիայում, Սիրիայում, Եմենում, Ուկրաինայում և այլ վայրերում տեղի ունեցող ռազմական գործողությունները: Նրանցից շատերը համակարծիք են, որ այդ գործողություններն էապես տարբերվում են այսպես կոչված «դասական», «ավանդական», «կանոնավոր»



ռազմական գործողություններից\*\* , թեև դրանց դասակարգման և անվանման հարցում կան տարաձայնություններ. տվյալ ռազմական գործողություններն անվանում են և՛ «հիբրիդային ռազմական գործողություններ», և՛ «անկանոն պատերազմ», զուգահեռներ են տարվում պարտիզանական պայքարի, «ցածր ինտենսիվությամբ», «սահմանափակ» հակամարտությունների հետ և այլն<sup>1</sup>:

Որպես արդյունք՝ ռազմական և քաղաքական գիտություններում չկա «հիբրիդային պատերազմ» հասկացության այնպիսի սահմանում, որն ունենա համընդհանուր ճանաչում: Որոշ հետազոտողներ կարծում են, որ հիբրիդային պատերազմը սովորական պատերազմից ոչնչով չի տարբերվում և արհեստական, գործնական ոչ մի նշանակություն չունեցող հասկացություն է: Ոմանք էլ այն

\* Հրապարակվում է քննարկման կարգով:

\*\* Կանոնավոր, կան ավանդական, ռազմական գործողություններ (պատերազմ) ասելով սովորաբար հասկանում ենք պետությունների միջև զինված բախումը, երբ յուրաքանչյուր կողմի թիրախը հակառակորդի զինված ուժերն են, իսկ ռազմավարական նպատակը՝ հակառակորդի զինված ուժերի ջախջախումը, տարածքի գավթումը, հակառակորդ պետությունում բարենպաստ քաղաքական փոփոխությունների կատարման պայմանների ապահովումը, ռազմական գործողություններին հակառակորդ պետության բնակչության մասնակցության նվազարկումը (այսինքն՝ իր դեմ պարտիզանական պայքարի կանխումը):

<sup>1</sup> Տես «Department of Defense Directive 3000.07». U.S. Department of Defense; «Joint Operating Concept», Version 2.0. U.S. Department of Defense, P. 17; նաև՝ *Richard Pedersen. Irregular Warfare: Operational Theme or Full Spectrum Operation?* «Small Wars Journal», 2009; *Ernest Evans. Ethnicity and Politics.* «World Affairs», Summer 1997, Vol. 160, N 1; *David Maxwell. Unconventional Warfare Does Not Belong to Special Forces.* «War on the Rocks», 12 August 2013 (<http://warontherocks.com/2013/08/unconventional-warfare-does-not-belong-to-special-forces/>):

համարում են պարտիզանական պայքարի ժամանակակից ձև<sup>2</sup>: Սակայն ավելի մեծ թիվ են կազմում այն հետազոտողները, որոնք կարծում են, թե «հիբրիդային պատերազմը» իրական և համեմատաբար նոր երևույթ է, որը պարտիզանական գործողություններից տարբերվում է առաջին հերթին այն հատկանիշով, որ պարտիզանական գործողություններն իրականացվում են թշնամու զավթած յուրային տարածքում, մինչդեռ «հիբրիդային պատերազմը» վարում են գերազանցապես թշնամու տարածքում<sup>3</sup>, ինչպես նաև ռազմաճակատում:

«Հիբրիդային պատերազմ», «հիբրիդային ռազմական գործողություններ» տերմիններ գործածելիս ենթադրվում է, որ գործ ունենք տարբեր երևույթների «խաչասերման», «ձուլման» կամ համադրման հետ: Որոշ հեղինակների կարծիքով՝ «հիբրիդային պատերազմ» հասկացության մեջ «հիբրիդային» որոշիչը կարող է վերաբերել. ա) մարտական իրադրությանն ու պայմաններին, բ) ռազմավարությանն ու մարտավարությանը, գ) կիրառվող ուժերի տեսակին<sup>4</sup>:

Թեև չկա «հիբրիդային պատերազմ» հասկացության համընդհանուր ճանաչում ստացած կամ որևէ պաշտոնական փաստաթղթում բերված սահմանում, սակայն ԱՄՆ-ի ՋՈՒԻ-ի «Օպերացիաներ» մարտական կանոնադրությունում տրվում է «հիբրիդային սպառնալիք» հասկացության սահմանումը<sup>5</sup>:

Դրա համաձայն՝ «Հիբրիդային սպառնալիքը կանոնավոր և ոչ կանոնավոր ուժերի, հանցավոր տարրերի բազմազան ու դինամիկ համախումբ է կամ այդ ուժերի ու տարրերի այնպիսի համախումբ, երբ դրանք միավորվել են փոխշահավետ արդյունքների հասնելու համար»<sup>5</sup>: Հիբրիդային սպառնալիքները պայմանավորված են միջազգային իրավունքով, ռազմական ավանդույթներով ու սովորույթներով առաջնորդվող կանոնավոր ուժերի և չվերահսկվող, առանց բռնութ-

<sup>2</sup> Տես *Михаил Александров*. Корни гибридной войны. ИА «REGNUM», 11.02.2016 (<https://regnum.ru/news/polit/2076861.html>); *Mary Kaldor*. New and Old Wars: Organised Violence in a Global Era. Ed. 3. Cambridge, 2013; *Colin S. Gray*. Irregular Warfare One Nature, Many Characters. «Strategic Studies Quarterly», Winter, 2007; *Qiao Liang, Wend Xiangsui*. Unrestricted Warfare: Assumptions on War and Tactics in the Age of Globalization. Foreign Broadcast Information Service, February 1999; *S. Metz*. Learning from Iraq: Counterinsurgency in American Strategy. Strategic Studies Institute, US Army War College, January 2007; *R. Borum*. Seven Pillars of Small War Power. «Military Review», July–August 2011; *K. Mitchell*. Ungoverned Space: Global Security and the Geopolitics of Broken Windows. «Political Geography», 2010, Vol. 29, Issue 5:

<sup>3</sup> Տես *Մ. Ալեքսանդրով*, Նշ. աշխ.:

<sup>4</sup> Տես *Леонид Савин*. Гибридная война: об истоках концепции ([http://communitarian.ru/publikacii/setevye\\_voyny\\_i\\_tekhnologii/gibridnaya\\_voyna\\_28022015/index.php](http://communitarian.ru/publikacii/setevye_voyny_i_tekhnologii/gibridnaya_voyna_28022015/index.php)):

\* Այնտեղ նշվում է, որ «թեպետ հնարամիտ թշնամիների գոյությունը նորություն չէ, այսօրվա հիբրիդային սպառնալիքները պահանջում են, որ ԱՄՆ-ի ուժերը պատրաստ լինեն մի շարք հնարավոր միաժամանակյա սպառնալիքների: Տեսական հակամարտության պայմաններում կարող է առաջանալ լայնածավալ հիբրիդային սպառնալիք: Անգամ, երբ հակառակորդի ուժերը անկանոն են, մերձամարտը նույնքան կատաղի է լինում, որքան լայնածավալ մարտական գործողությունները» (տես «Operations» (FM 3–0, C1). Headquarters Department of the Army. Washington, 22 February 2011, P. 1-5 (<https://fas.org/irp/doddir/army/fm3-0.pdf>)):

<sup>5</sup> Տես նույն տեղում:

յան ու թիրախների ընտրության սահմանափակման գործող անկանոն ուժերի համախումբ ազդեցությամբ: Այդ ուժերը կարող են ներառել աշխարհագրայինների, ահաբեկիչների, պարտիզանների և հանցագործների, որոնց կարողությունների համակցումը հնարավորություն է տալիս կիրառելու կանոնավոր և ոչ կանոնավոր մարտավարություններ ու զենք, կենտրոնանալու հայտնաբերված խոցելի տեղերի վրա և առավել շահեկան կերպով օգտագործելու դրանք<sup>6</sup>:

Եթե փորձենք ի մի բերել «հիբրիդային պատերազմների» տարբեր սահմանումները, ապա կարելի է եզրակացնել, որ «հիբրիդային պատերազմ» ասելով սովորաբար հասկանում են կանոնավոր բանակի, ահաբեկչության, կազմակերպված հանցավորության, քարոզչության, տնտեսական ճնշման ու դիվանագիտական ջանքերի միաժամանակյա ու փոխհամաձայնեցված օգտագործումը: Հիբրիդային պատերազմում գլխավորը «հակառակորդի նկատմամբ նվազագույն զինված ազդեցությամբ քաղաքական նպատակների հասնելն է»<sup>7</sup>:

Հրթիռային և հրետանային գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի թղթակից անդամ, ռազմական գիտությունների դոկտոր Կոնստանտին Սիվկովի կարծիքով՝ կանոնավոր (ավանդական) և «հիբրիդային պատերազմների» միջև կա էական տարբերություն: Ավանդական պատերազմի հիմքում դրված է հակառակորդին յուրային կանոնավոր զինված ուժերով ջախջախելու և հաղթողի պայմաններով խաղաղություն պարտադրելու, պարտված պետությունում իշխանական համակարգը փոխելու, պարտված պետության տարածքը մասնակիորեն կամ ամբողջովին զավթելու գաղափարը<sup>8</sup>: Մինչդեռ «հիբրիդային պատերազմի» հիմնական գաղափարն է առանց հակառակորդի զինված ուժերի ջախջախման նրա տարածքում ցանցային սկզբունքով յուրային «բանակի» ստեղծումը և դրա հետագա օգտագործումը, հակառակորդի իշխանական համակարգի խորտակումը և իշխանությունների նկատմամբ վերահսկողության հաստատումը և հետո միայն հակառակորդի անվտանգության համակարգի (զինված ուժերի, հատուկ ծառայությունների և իրավապահ մարմինների) կազմալուծումն ու հաղթողի համար ցանկալի չափով թուլացումը, նրա տնտեսության նկատմամբ հսկողության սահմանումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ջախջախված պետության տարածքի զավթումը (խաղաղարարական օպերացիայի քողի ներքո)<sup>9</sup>:

Կ. Սիվկովի կարծիքով՝ «հիբրիդային պատերազմի» առաջացմանը նպաստել են ավանդական պատերազմի վարմանը խոչընդոտող հետևյալ գործոնները.

– միջուկային զենքի տարածման հետևանքով ավանդական սպառազինության կիրառման «դաշտի» կտրուկ փոքրացումը (մեծ մասշտաբի ավանդական պատերազմները կործանարար են հակամարտության բոլոր կողմերի համար),

<sup>6</sup> Տես նույն տեղում:

<sup>7</sup> Տես *Владимир Горбулин*. Гибридная война: все только начинается. «ПОЛИТОЛОГ», 26.03.2016 (<http://politolog.net/analytics/55719/>):

<sup>8</sup> Տես *Константин Сивков*. Третья мировая — гибридная. «Свободная пресса», 13.04.2016 (<http://svpressa.ru/war21/article/146552/>):

<sup>9</sup> Տես նույն տեղում:

– ամբողջ աշխարհում և, հատկապես՝ զարգացած պետություններում բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացումը, գոհողություններին նրա պատրաստակամության նվազումը,

– հասարակության մեջ պատերազմն սկզբունքորեն մերժող (պացիֆիստական) գաղափարների տարածումը,

– իշխանական վերնախավի և բնակչության հիմնական մասի միջև սոցիալ-հոգեբանական «խզման» առաջացումն ու խորացումը,

– միջազգային իրավունքով զինված ագրեսիայի խստիվ դատապարտումը<sup>10</sup>:

Իր աշխատություններում «հիբրիդային պատերազմների» մասին առաջինը հիշատակած Եվգենի Մեսների\* (1891–1974) կարծիքով՝ աշխարհի տարբեր անկյուններում միաժամանակ ընթացող տասնյակ, եթե ոչ հարյուրավոր զինված բախումներն ու պատերազմները կապված են միասնական ռազմավարական նպատակով, այն է՝ «հին աշխարհի կործանում, անցած երկու հազարամյակների պատմությամբ հաստատված աշխարհակարգի բոլոր ճյուղերի կործանում»<sup>11</sup>:

Մենք տվյալ տեսակետին համաձայն չենք և կարծում ենք, որ «հիբրիդային պատերազմների» առաջացումը պայմանավորված է, թերևս, այն հանգամանքով, որ, ինչպես Մեսներն ինքն է նշում, ներկայիս դարաշրջանում պետությունները շատ կենսունակ են (որովհետև արտաքին թշնամու դեմ կռվում է ոչ միայն բանակը, այլև ամբողջ ժողովուրդը), և ավելի հեշտ է պետությունը քայքայել «մոծակների մարտավարությամբ»\*\*, քան նվաճել զենքի ուժով: Պետության քայքայմանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ ներկայումս պետությունը կորցրել է իր խորհրդապաշտական (սակրալ) նշանակությունը, պետության (իշխանության) հեղինակությունն այլևս ամրապնդված չէ կրոնական վարդապետությամբ, և գործնականում ցանկացած պետության մեջ կարելի է գտնել իշխանությանն ընդդիմադիր, իշխանության դեմ պայքարում զենք վերցնելու պատրաստ ուժեր:

Ե. Մեսներն առաջարկում է «հիբրիդային պատերազմի» նպատակների այսպիսի աստիճանակարգություն (ըստ կարևորության).

– թշնամական ժողովրդի բարոյականության քայքայում,

<sup>10</sup> Տես *Константин Сивков. Во главе с «пятой колонной» – часть I. «Военно-промышленный курьер»*, 2015, № 20 (586) (<http://vprk-news.ru/articles/25473>):

\* Նա գործածել է «խռովարար պատերազմ» (*мятежевойна*) տերմինը:

<sup>11</sup> Տես *Е. Э. Месснер. Хочешь мира, победи мятежевойну!* М., 2005 ([http://militera.lib.ru/science/0/pdf/messner\\_ea01.pdf](http://militera.lib.ru/science/0/pdf/messner_ea01.pdf)):

\*\* Մտա Յգե Դունը տվել է այսպիսի ձևակերպում. «Հարձակվե՛ք, ինչպես մոծակները հսկայի վրա, ծակե՛ք, թունավորե՛ք, ծծե՛ք արյունը, մինչև տապալվի» (տես նույն տեղում): ԱՄՆ-ի Նախագահ Ջոն Քենեդին 1961 թ. Ռիետո Փոյնտի ռազմական ակադեմիայի շրջանավարտների առջև ելույթ ունենալիս ասել է. «Դա պատերազմի միանգամայն ուրիշ ձև է՝ ուժգնությամբ նոր, ծագումով՝ հին: Դա պարտիզանների, լրտեսների, խռովարարների, վարձու մարդասպանների ու ահաբեկիչների պատերազմ է: Խոշոր ճակատամարտերի փոխարեն՝ արագ ասպատակությունների, ագրեսիայի փոխարեն՝ ներսփռման (*инфилтрация*), գորքերի ուղղակի բախման փոխարեն՝ հակառակորդի հյուծման և սասանման ճանապարհով հաղթանակի ձգտման պատերազմ է:» (տես *В. Шестаков. Террор–мировая война. М., 2003, с. 16*):

– նրա ակտիվ մասի (զինվորականություն, պարտիզաններ, ժողովրդական շարժումներ) ջախջախում,

– թշնամու համար հոգեբանական արժեք ներկայացնող օբյեկտների գրավում կամ ոչնչացում,

– նյութական արժեք ներկայացնող օբյեկտների գրավում կամ ոչնչացում,

– նոր դաշնակիցների ձեռքբերում, թշնամու դաշնակիցների ոգու սասանում<sup>12</sup>:

Նա տարբերում է այս նպատակներին հասնելու, այսինքն՝ «հիբրիդային պատերազմ» վարելու հետևյալ եղանակները.

ա) քարոզչություն՝ «զաղափարները պետք է մխրճել, ինչպես մեխը»,

բ) նենգադուլ՝ «անհնազանդության գործողություն, որին առանց մեծ անձնական ռիսկի կարող են մասնակցել ցանկացած սեռի և տարիքի մեծ թվով մարդիկ»,

գ) վնասարարություն՝ «սա արդեն ոչ թե պարզապես հրաժարում է իշխանությունների հրահանգների կատարումից, այլ որոշակի ռիսկի հետ կապված վնասի պատճառում՝ մեքենաների, սննդամթերքի և այլ բաների փչացում. այս հարցում հնարամտությանը սահման չկա»,

դ) դիվերսիա՝ «ռազմական և ոչ ռազմական օբյեկտների ոչնչացում»,

ե) ահաբեկչություն՝ «զաղտնի կերպով ու ճանապարհներին զինվորների, իշխանության մանր գործակալների և հակառակորդի համակիրների, ինչպես նաև հակառակորդի ղեկավար կադրերի սպանություն»\*,

զ) պարտիզանություն՝ «բնակչության կազմած ջոկատների զինված գործողություններ»,

է) ապստամբություն՝ «երբ զենք են վերցնում ոչ թե առանձին պարտիզանական ջոկատներ, այլ՝ բնակչության նշանակալի մասը»<sup>13</sup>:

Մինևույն ժամանակ, ուզում ենք շեշտել, որ եթե պատերազմելու այս «անկանոն» եղանակներն օգտագործվում են մեկուսի՝ առանց «կանոնավոր» (ավանդական) ռազմական գործողությունների կիրառման, առանց համատեղման ճկունության, ապա, մեր կարծիքով, դրանք «հիբրիդային պատերազմ» անվանելը ճիշտ չէ: Բոլոր պատերազմներում էլ անհրաժեշտություն է առաջանում ինչ-որ ռազմական գործողություն կատարել «անկանոն» ձևով, բայց այդ անկանոն գործողություններն ինքնին հաղթանակ չեն ապահովում: Հաղթանակի գրավակալները հենց այն ճկունությունն է, որով բանակները կարողանում են անցում կատարել «կանոնավոր» գործողություններից «անկանոնի» և հակառակը: Ընդամին «կանոնավոր» և «անկանոն» գործողությունները չի կարելի միմյանց հակադրել, որովհետև «հիբրիդային պատերազմը» դրանց օրգանական խառնուրդ-միասնությունն է: Այսպես, որոշ հեղինակներ «հիբրիդային պատերազմ» երևույթը նկարագրելու համար առաջարկում են «բարդակազմ (*compound*)»<sup>14</sup> պատերազմներ»

<sup>12</sup> Տես Ե. Միսնիք, Նշ. աշխ.:

\* Ըստ Մեսների՝ ահաբեկչությունը պատերազմի ռազմավարություն է և պայքարի միջոց, որի էությունը հակառակորդին վախեցնելու միջոցով հաղթանակի նվաճումն է:

<sup>13</sup> Տես նույն տեղում:

<sup>14</sup> Տես «Hybrid warfare: Fighting Complex Opponents from the Ancient World to the

տերմինը, ինչը նշանակում է, որ նրանք «անկանոն» և «կանոնավոր» ռազմական գործողությունները դիտում են իրարից անջատ, ինչը ճիշտ չէ:

Որոշ հեղինակներ «հիբրիդային պատերազմ» են համարում, օրինակ, Ռուսաստանի, Հյուսիսային Կորեայի նկատմամբ Արևմուտքի պատժամիջոցները: Մեր կարծիքով՝ ռազմական գիտության տեսանկյունից դա ճիշտ չէ. չի կարելի «հիբրիդային պատերազմ» անվանել զուտ տնտեսական, քաղաքական կամ քարոզչական պայքարը, եթե այն չի զուգակցվում ռազմական գործողություններով, հակառակ դեպքում խախտվում է «պատերազմ» երևույթի «ակադեմիական» ընկալումը:

ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՍԵՐՆԳԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ «ՀԻՔՐԻԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ»

Եթե «հիբրիդային պատերազմը» նոր տեսակի պատերազմ է, ապա այն պետք է բացատրվի պատերազմների սերնդափոխության տեսությամբ: Սակայն այս հարցում էլ կա տարակարծություն, որովհետև տարբեր հեղինակներ պատերազմների սերնդափոխությունը որոշարկում են տարբեր չափանիշներով: Այսպես. ռուսաստանյան ռազմագետների շրջանում լայն տարածում ունի ՌԳ գիտության վաստակավոր գործիչ, ռազմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գեներալ-մայոր Վլադիմիր Սլիպչենկոյի տեսությունը, որի համաձայն՝ ըստ սերունդների պատերազմների դասակարգման չափանիշը խոցման (զինված պայքարի) միջոցն է: Ըստ խոցման միջոցի նա տարբերում է վեց տեսակի (սերնդի) պատերազմներ. ա) սառը զենքը, բ) հարթափող հրազենը, գ) ակոսավոր հրազենը, դ) ավտոմատ զենքը, ե) միջուկային զենքը, զ) գերճշգրիտ զենքը<sup>15</sup>:

Վ. Սլիպչենկոյի տեսությամբ «հիբրիդային պատերազմը» սկզբունքորեն չի կարող համարվել նոր սերնդի պատերազմ, որովհետև «հիբրիդային պատերազմի» առաջացումը պայմանավորված չէ զինված պայքարի նոր միջոցի ստեղծմամբ:

Հիբրիդային պատերազմի էությունը հասկանալու համար թերևս ավելի արգասաբեր է այն ամերիկյան ռազմագետների, մասնավորապես՝ Ուիլյամ Լինդի և համահեղինակների մոտեցումը, որոնք պատերազմները դասակարգում են ոչ թե ըստ խոցման միջոցի, այլ, առաջին հերթին, ըստ պատերազմի մարտավարության ու ռազմավարության, ապա միայն՝ ըստ զինատեսակի<sup>16</sup>:

Այս տեսության համաձայն՝ պատերազմների դասակարգումն սկսվում է

Present». Ed. by Williamson Murray and Peter R. Mansoor. Cambridge University Press. N.Y., 2012, pp. 3–7:

<sup>15</sup> Տես *В. Слипченко*. Бесчеловечные войны: в войнах VI поколения почти не будет людей. «Популярная механика», март 2004, №17 (<http://www.popmech.ru/weapon/7066-beschelovechnye-voyny-v-voynakh-vi-pokoleniya-pochti-ne-budet-lyudey/#full>):

<sup>16</sup> Տես *William S. Lind, Keith Nightengale, John F. Schmitt, Joseph W. Sutton, Gary I. Wilson*. The Changing Face of War: Into the Fourth Generation. «Marine Corps Gazette», October 1989 (<https://www.mca-marines.org/files/The%20Changing%20Face%20of%20War%20-%20Into%20the%20Fourth%20Generation.pdf>):

Հռոմեական սրբազան կայսրությունում Երեսնամյա պատերազմի ավարտով և Վեստֆալում հաշտության համաձայնագրի կնքմամբ (1648 թ.), քանի որ դրանից հետո Եվրոպայում, ապա նաև ամբողջ աշխարհում պատերազմներն սկսեցին վարվել բացառապես պետությունների միջև՝ կանոնավոր բանակի և նավատորմի (հետագայում նաև ռազմաօդային ուժերի) օգտագործմամբ: Իսկ մինչև Վեստֆալյան համաձայնագրի կնքումը պատերազմի սուբյեկտներ էին տարբեր էթնիկական խմբեր, կրոնական համայնքներ, զանազան մշակութային ավանդույթների ու հոսանքների հետևորդներ, առևտրային ընկերություններ և նույնիսկ հանցավոր խմբեր: Այդ պատերազմների ելքը վճռվում էր ոչ միայն ճակատամարտերով, այլև կաշառքով, անհատական սպանություններով, դավաճանություններով և նույնիսկ մորգանատիկ ամուսնություններով: Այդ պատերազմներում ռազմական սխրանքի և հանցագործության, ինչպես և զինվորականի ու ոչ զինվորականի միջև սահմանները հաճախ ճապաղված էին: Այսինքն՝ մինչվեստֆալյան պատերազմներին բնորոշ էին այսօրվա «հիբրիդային պատերազմների» որոշ տարրեր:

Կարելի է ասել, որ Լինդի տեսության համաձայն՝ ժամանակակից «հիբրիդային պատերազմը» արդիական պայմաններում անցյալի իր նմանակի «վերածնունդն» է և համապատասխանում է չորրորդ սերնդի պատերազմին, որի դեպքում կողմերը ձգտում են առաջին հերթին բարոյական հաղթանակի: Ազդեցոր պետությունն իր նպատակներին հասնելու համար օգտագործում է ազդեցիկ օբյեկտ հանդիսացող պետությունում եղած «ազդեցիկ ոչ պետական սուբյեկտին», այսինքն՝ այնպիսի ուժի, որը քաղաքական և/կամ ռազմական ընդդիմամարտության մեջ է այդ պետության օրինական իշխանության հետ: Ազդեցոր պետությունը, չբացահայտելով իրեն, համալրում, զինում, ուսուցանում և ֆինանսավորում է այդ «ազդեցիկ ոչ պետական սուբյեկտին», պլանավորում է նրա խափանարար օպերացիաներն ու բազմակողմանիորեն ապահովում դրանք, ցուցաբերում քաղաքական, տեղեկատվական և իրավաբանական միջազգային աջակցություն:

Չորրորդ սերնդի պատերազմը, ըստ Լինդի, ապստամբական պատերազմի հայեցակարգի զարգացման արգասիքն է: Դրա հիմքում դրված է այն սկզբունքը, որ ճիշտ պահին ու ճիշտ կերպով կիրառված ուժեղ քաղաքական կամքն ավելի հզոր է, քան տնտեսական ու ռազմական ուժը: Չորրորդ սերնդի պատերազմում հակամարտող կողմերի խնդիրը ոչ թե հակառակորդի զինված ուժերին հարվածելն է, այլ հասարակության մեջ եղած բոլոր տեսակի կապերի օգտագործմամբ անմիջականորեն ղեկավարների գիտակցության վրա գրոհելը՝ նրանց քաղաքական կամքը ճնշելու նպատակով: Այս սերնդի պատերազմները կարող են տևել տասնամյակներ: Նման պատերազմի մասնակցում են ինչպես կանոնավոր բանակները, այնպես էլ անկանոն, պարտիզանական կազմավորումները, ՉԼՄ-ները, միջազգային հաստատությունները, անդրազգային ընկերությունները, հասարակական միավորումներն ու շարժումները: Եթե առաջին և երկրորդ սերնդի պատերազմներում կողմերի նպատակն էր միմյանց ռազմական ուժի ոչնչացումը, երրորդ սերնդի պատերազմում՝ արդյունաբերական ենթակառուցվածքների, գործարանների, մատակարարման ուղիների ու երկաթգծերի շարքից հանումը,

ապա չորրորդ սերնդի պատերազմում անմիջական նպատակն է այն քաղաքական կառույցի ոչնչացումը, որը վարում է պատերազմը, ղեկավարում այն<sup>17</sup>:

Սակայն այս դասակարգումը ևս լուրջ թերություններ ունի, և դրանցից գլխավորն այն է, որ դասակարգման հիմքում դրված են ընդամենը մեկ-երկու գործոն (չափանիշ), մինչդեռ, մեր համոզմամբ, պատերազմը, լինելով շատ բարդ երևույթ, անհնար է դասակարգել այդքան քիչ թվով գործոնների հիման վրա: Այսինքն՝ և՛ Միլայչենկոյի, և՛ Լիմդի տեսությունների թերությունը միակողմանիությունն է:

Մենք առաջարկում ենք պատերազմների այնպիսի դասակարգում, որում հաշվի են առնվում ինչպես զինված պայքարի միջոցների, մարտավարության ու ռազմավարության զարգացումը, այնպես էլ պատերազմների տարածական ընդգրկումը և հասարակության տնտեսական, քաղաքական, գիտական, գիտատեխնիկական, մշակութային ոլորտների զարգացումը բնութագրող գործոնները, քանի որ դրանք, անկասկած, իրենց կնիքն են թողնում ռազմական գիտության ու ռազմական արվեստի զարգացման, հետևաբար նաև պատերազմների ու դրանց վարման եղանակների վրա: Պատերազմների այս մոտեցմամբ կատարված դասակարգումը ներկայացնենք սույն հոդվածի թեմայի համատեքստում:

1. Հին աշխարհի և միջնադարի պատերազմներ՝ մինչև հրազենի ի հայտ գալը, այսինքն՝ սառը զենքի դարաշրջանը\*:

2. Հրազենով (ինչպես հարթափող, այնպես էլ ակոսավոր) վարվող պատերազմներ: Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ սերնդի պատերազմներում մարտի դաշտում հիմնական հարվածը հասցվում էր կենդանի ուժով: Հակառակորդների ռազմավարական նպատակը հիմնականում միմյանց հյուծելն էր, ռազմական գործողությունների թատերաբեմը, որպես կանոն, մեկն էր: Այս երկու սերունդների պատերազմների առանձնահատկությունները ուղղակիորեն պայմանավորված էին հողագործական տնտեսությամբ:

3. Երրորդ սերնդի պատերազմներում որոշիչ էր ոչ միայն ավտոմատ հրազենի, այլև զենքը կրող մարտական հարթակների ու փոխադրամիջոցների, կազմակերպված ու խիտ հրետանային կրակի կիրառման դերը:

4. Պատերազմներ, որոնց հիմնական գործոններն էին ռեակտիվ շարժիչը և ատոմային զենքի գոյությունը:

5. Թվային տեխնոլոգիաների բուռն զարգացման դարաշրջանի՝ ավտոմատ կառավարման համակարգերով ու գերճշգրիտ սպառազինությամբ բանակների պատերազմներ: Կարևորվեց աշխարհի ցանկացած կետում (ցամաքում, ջրում, օդում, տիեզերքում) ցանկացած պահի՝ ինքնուրույնաբար գործելու կարողությամբ օժտված անհրաժեշտ ուժերի կենտրոնացումը: Նախորդ սերնդի պատերազմների համեմատությամբ ավելի հաճախ են կիրառվում անկանոն մարտական

<sup>17</sup> Stu William S. Lind. Understanding Fourth Generation War. «ANTIWAR.COM», 15.01.2004 (<http://www.antiwar.com/lind/?articleid=1702>):

\* Անշուշտ, պատերազմի առաջին սերունդը կարելի է բաժանել նաև «ենթասերունդների»՝ այս կամ այն գորատեսակի ի հայտ գալուն, մարտավարական նոր գաղափարների կիրառմանը համապատասխան:

գործողությունները\*, տեղեկատվական գործողությունները դառնում են որոշիչ:

6. Պատերազմներ, որոնց համապատասխանում է անգլիացի ռազմական տեսաբան Լ. Հարթի «Անուղղակի գործողությունների ռազմավարության» կատարելագործված տարբերակը<sup>18</sup>: Դրա համաձայն՝ պատերազմներում մեծապես օգտագործվում են հակառակորդ պետությունում առկա հակասությունները, մասնավորապես՝ ընդդիմադիր կազմակերպությունների ներուժը, հակառակորդին ներքաշում են հյուժող գործողությունների մեջ՝ այլ (քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլն) հարթություններում: Այս պատերազմներում մարտական գործողությունները կարող են երկարատև չլինել, սակայն բարոյական ու ֆիզիկական ուժերի հյուժման հետևանքները կզգացվեն երկար ժամանակ: Ներկայումս արևմտյան ռազմական ու ռազմաքաղաքական մեքենան ավելի հաճախ է առաջնորդվում այս մոտեցումներով:

Մեր կարծիքով՝ «հիբրիդային պատերազմը» 5-րդ և 6-րդ սերունդների պատերազմների միջև անցումային՝ «կանոնավոր» («դասական») և «անկանոն» (պարտիզանական, դիվերսիոն և այլ) մարտական գործողությունների և հակառակորդի դեմ այլ հարթություններում (քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, բարոյահոգեբանական) կիրառված մեթոդների ու միջոցների ամբողջությունն է: Հետագայում «հին» և «նոր» սերնդի պատերազմների մեթոդներն ու միջոցները «հղկվելով» կմիավորվեն և կդառնան «նոր» սերնդի «կանոնավոր» պատերազմներ. «հիբրիդային պատերազմը» որպես պատերազմների սերնդափոխության միջանկյալ փուլ կվերանա:

**ՀԻՔՐԻԴԱՅԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Եթե փորձենք առանձնացնել «հիբրիդային պատերազմի» գուտ ռազմական քաղաքիչը, ապա կարող ենք ասել, որ ոչ միայն յուրային, այլև հակառակորդի տարածքում հիբրիդային ռազմական գործողություններին բնորոշ է\*\*.

1. գործողություններ կատարող ստորաբաժանումների ոչ ավանդական կազմն ու թիվը,
2. անձնակազմի զինվորական կարգավիճակի անկայունությունը, այսինքն՝ քաղաքացիականից զինվորականի և հակառակին արագ անցումը\*\*\*,
3. ստորաբաժանումներում հստակ աստիճանակարգություն չլինելը\*\*\*\*,

\* Այսինքն՝ փոքրաթիվ, շարժունակ, լավ զինված, ռազմական ենթակառուցվածքներից հարթերակնորեն անկախ մարտական խմբերի գործողությունները:

<sup>18</sup> Sten B. H. Liddel Hart. Strategy: The Indirect Approach. N.Y., 1954:

\*\* Հիբրիդային ռազմական գործողությունների նկարագրությունը չի կարող սահմանափակվել ստորև բերվող 10 կետերով, թեպետ, մեր կարծիքով, դրանք ուսումնասիրվող երևույթի հիմնական բնորոշ գծերն են:

\*\*\* Գործնականում դա կատարվում է մեկ հրամանով՝ հանվում են համազգեստի բոլոր տարբերանշանները, անհրաժեշտության դեպքում փոխվում են անձնակազմի փաստաթղթերն ու համազգեստը: Նկատենք, որ նման դեպքերում համարյա անհնար է ապացուցել, որ տվյալ ստորաբաժանումը պատկանում է տվյալ պետությանը:

\*\*\*\* Այսինքն՝ չկա ստորաբաժանումների «ավանդական» ջոկ-դասակ-վաշտ-գումարտակ-գունդ բաժանումը, փոխարենը կան խմբեր: «Հիբրիդային պատերազմ» վարող ուժերի մեկ միա-

4. թիկունքային ապահովման համակարգ չլինելը\*,
5. հստակ մարտական բնագծեր չլինելը, ռազմական գործողությունների օջախային բնույթը (հատկապես՝ պետական ենթակառուցվածքների հանգույցների շրջակայքում),
6. ապակենտրոնացումը,
7. գորաշարժերի լայն կիրառումը,
8. ռազմական գործողություններին քիչ թվով զորատեսակների մասնակցությունը,
9. մարտավարական ճկունությունը, այսինքն՝ «դասական» ռազմական գործողություններից (համագորային մարտից) պարտիզանական, դիվերսիոն գործողությունների և արագորեն հակառակի անցումը,
10. մարտավարական, անգամ օպերատիվ պլանների հաճախակի փոփոխությունը՝ ռազմավարական ծրագրերի անփոփոխության պայմաններում\*\*:

#### ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Հիբրիդային պատերազմների ուսումնասիրությունը հայ ռազմագիտական մտքի համար արդիական պրոբլեմ է, որովհետև 2012–2013 թվականներից մեր դեմ Ադրբեյջանի վարած պատերազմում կան «հիբրիդային պատերազմի» տարրեր. նա աստիճանաբար ուժգնացնում է իր թշնամական գործողությունները՝ դիպուկահարների կրակից մինչև հրետանու կիրառում և դիվերսիոն-հետախուզական խմբերի հարձակումներ՝ դրանք զուգակցելով տեղեկատվական-քարոզչական գործողություններով և Թուրքիայի հետ ձեռնարկված ՀՀ ու ԼՂՀ տնտեսական-տրանսպորտային շրջափակմամբ: Ըստ էության այդպիսին էր նաև 2016 թ. Ապրիլյան պատերազմը, որի ընթացքում ադրբեյջանական բանակը փորձեց ռազմական գործողություններ ձեռնարկել քիչ թվով զորատեսակների ու խոցման միջոցների տեսակների օգտագործմամբ, դասական համագորային մարտից հրաժարմամբ: Չորսօրյա ակտիվ հարձակողական գործողություններից հետո, որոնք կատարում էին հակառակորդի հատուկ նախանշանակման ստորաբաժանումները՝ լայնորեն հրետանու ու սահմանափակ զրահատանկային զորքերի և օդուժի կիրառմամբ, պատերազմը տեղափոխվեց «հյուծման փուլ», երբ կողմերը գերազանցապես վարում էին հետախուզություն, կիրառում ՌԷՊ և հրետանի:

Ապրիլյան «հիբրիդային պատերազմի» դասերը պահանջում են լուրջ ուսումնասիրություն և հետևությունների հաշվառում ՀՀ ՋՈՒ-ի պատրաստման ծրագրերում:

---

վորը կարող է կազմված լինել 10 խմբերից (իրենց հրամանատարներով), որոնցից ոչ բոլորն են ենթարկվում միավորի հրամանատարին: Սակայն այդ չենթարկվողներն էլ միավորի մաս են, որովհետև կատարում են նույն մտահղացմամբ որոշված մարտական խնդիրներ:

\* Հիբրիդային ռազմական գործողությունների ժամանակ ստորաբաժանումների թիկունքային ապահովումը կատարվում է ապակենտրոնացված եղանակով, օրինակ, ռազմատրանսպորտային ավիացիայով, կամ էլ այն, ինչ անհրաժեշտ է, հայթայթվում է տեղում:

\*\* Յուրային հրամանատարությունը կարող է նույնիսկ հակառակորդ պետության բնակիչներից ստեղծել ժամանակավոր «անկանոն» խմբեր, որոնք կատարեն յուրային բանակի ռազմավարական պլաններին համապատասխանող գործողություններ:

**ВОЕННАЯ НАУКА****НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ОПРЕДЕЛЕНИЯ И КЛАССИФИКАЦИИ  
ГИБРИДНЫХ ВОЙН***А. К. ОГАНЕСЯН, кандидат исторических наук, Пресс-секретарь Министра обороны РА***РЕЗЮМЕ**

В последнее время в военно-теоретических разработках и информационных сообщениях все чаще употребляется термин «гибридная война». Однако до сих пор нет общепринятой формулировки этого понятия и его отличительных признаков. К тому же данный феномен не укладывается в существующие системы классификации войн. Исходя из представления о преемственности поколений войн, а также о влиянии на их качественные и количественные характеристики не только средств и способов ведения вооруженной борьбы, но и общих цивилизационных параметров, автор выдвигает на обсуждение собственную классификацию войн, согласно которой «гибридная война» является переходной формой от войн пятого поколения к шестому.

Данная проблема представляет особый интерес для армянской военно-научной мысли, поскольку развязываемая Азербайджаном против Армении и НКР военная агрессия после 2012–2013 гг. содержит элементы так называемой «гибридной войны».

**MILITARY SCIENCE****ON SOME ISSUES OF DEFINING AND CLASSIFYING HYBRID WARS***A. K. HOVHANNISYAN, PhD in History, Press Secretary of the Minister of Defense of the RA***SUMMARY**

Recently, the term “hybrid war” has been used increasingly in military-theoretical developments and information reports. However, there is still no generally adopted definition of this concept and its distinctive features. Furthermore, this phenomenon does not fit in the existing systems of war classification. Based on the idea about the continuity of war generations, as well as the influence on their qualitative and quantitative characteristics of not only the means and methods of an armed struggle, but also of common civilization parameters, the author proposes his own classification of wars for discussion, in which the “hybrid war” is a transitional form of the wars from the fifth generation to the sixth.

This problem is of special interest for the Armenian military-academic thought, because the Azerbaijani military aggression unleashed against Armenia and NKR after 2012–2013 contains elements of the so-called “hybrid war”.

**ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՁՈՐԱՑՈՒՄ  
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՄԲ**



ՀԱՊԿ-ի անդամ պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի նիստը ՀԱՊԿ-ում նախագահող Հայաստանի Հանրապետությունում. ձախից՝ աջ. ՀԱՊԿ-ի Գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժա, ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյան, Բելառուսի Հանրապետության Պաշտպանության նախարար գեներալ-լեյտենանտ Անդրեյ Ռավկով, Ղազախստանի Հանրապետության Պաշտպանության նախարար Իմանգալի Տասմագամբետով, Արդական Հանրապետության ՁՈՒ-ի Գլխավոր շտաբի պետ գեներալ-մայոր Ռաիմբերդի Դույշենբիև, Ռուսաստանի Դաշնության Պաշտպանության նախարար բանակի գեներալ Մերգեյ Շոյգու, Տաջիկստանի Հանրապետության Պաշտպանության նախարարի տեղակալ գնդապետ Աբդուլխոշիմ Գուլմոգոդայ, ՀԱՊԿ-ի միացյալ շտաբի պետ գեներալ-գնդապետ Անատոլի Սիդորով

Երևան, 2016 թ. օգոստոսի 16



Հայաստանի Հանրապետության Պաշտպանության մախարար Սեյրան Օհանյանի, Արտաքին գործերի մախարար Էդվարդ Նալբանդյանի և ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Յանս Ստոլտենբերգի հանդիպումը Հյուսիսատլանտյան խորհրդի «28+1» ձևաչափով նիստի շրջանակում  
Բրյուսել, 2016 թ. մարտի 9



Ինքնաշեն պայթուցիկ սարքերի հայտնաբերման և վնասագերծման (C-IED) դասընթացներ ՀՀ Ջինված ուժերի խաղաղապահ ինժեներական գումարտակի և Եվրոպայում ԱՄՆ-ի ցամաքային զորքերի՝ ինքնաշեն պայթուցիկ սարքերի դեմ պայքարի ուսումնական կենտրոնի մասնակցությամբ  
Վաղարշապատ, 2016 թ. հուլիս



Մի դրվագ ՀԱՊԿ-ի օպերատիվ արձագանքման կոլեկտիվ ուժերի  
«Փոխգործակցություն-2016» համատեղ հրամանատարաշտաբային  
գորավարժությունից

Պսկով (ՌԴ), 2016 թ. օգոստոսի 13–19



ՀՀ ՋՈՒ-ի և ՌԴ ՋՈՒ-ի զորքերի (ուժերի)  
միացյալ խմբավորման հրամանատարության կազմակերպած  
օպերատիվ դաշտային վարժանք

Հայաստան, 2016 թ. օգոստոս



«Բանակ-հասարակություն փոխադարձ կապի ամրապնդում» թեմայով  
խորհրդարանական լսումներ ՀՀ Ազգային ժողովում



ՀՀ ԶՈՒ-ի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության շրջանակում  
ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի  
մշտական հանձնաժողովի անդամների այցը  
ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ

Երևան, 2015 թ. մայիսի 6

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ  
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ  
ԵՎ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐԻ ՆՎԱԶՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ա. Գ. ԴԱՎԹՅԱՆ, *տնտեսական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի Տարածաշրջանային ռազմավարական  
վերլուծությունների կենտրոնի ռազմավարական խաղերի  
և մոդելավորման խմբի գիտնական-վերլուծաբան*



ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐԻ  
ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսագիտական հետազոտությունները ցույց են տալիս որոշ պետությունների տնտեսական զարգացման գործում արտահանման և տվյալ երկրներ փոխանցվող տրանսֆերտների կարևոր դերը: Մասնավորապես՝ որևէ պետություն ուղարկվող դրամական միջոցների ծավալը կապված է տվյալ պետության տնտեսական զարգացման հետ: Երեսունինը զարգացող երկրների ուսումնասիրության արդյունքները վկայում են այդ երկրներում տնտեսական աճի վրա տրանսֆերտների դրական ազդեցությունը<sup>1</sup>: Ավելին. հեղինակավոր վարկանիշային կազմակերպությունները, ինչպիսիք են, օրինակ, *Standard & Poor's* և *Moody's* ընկերությունները, խոշոր տրանսֆերտներ ստացող պետությունների վարկունակությունը հաճախ որոշում են՝ հենվելով այդ պետություններ արտասահմանյան փոխանցումների ծավալի վրա<sup>2</sup>:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ տրանսֆերտները, բացի սոցիալական խնդիրների լուծման համար կարևոր նշանակություն ունենալուց, ֆինանսական շուկայի և իրական տնտեսության վրա գործում են հետևյալ դրական ազդեցությունը:

1. Թույլ զարգացած ֆինանսական ոլորտներով երկրներում տրանսֆերտները ներդրումների միջոցով նպաստում են ՀՆԱ-ի աճմանը: Դրա պատճառն այն է, որ շատ միգրանտներ իրենց խնայողությունները ներդրում են փոքր ձեռնարկություններում, անշարժ գույքում կամ այլ ակտիվներում՝ աջակցելով տեղական շուկաներին: Այն տնտեսություններում, որտեղ ֆինանսական համակարգը թերզար-

<sup>1</sup> *Stu G. Pradhan, M. Upadhyay and K. Upadhyaya. Remittances and economic growth in developing countries. «The European Journal of Development Research», 2008, Vol. 20, N 3:*

<sup>2</sup> *Տես «Towards Human Resilience: Sustaining MDG Progress in an age of economic uncertainty». United Nations Development Programme. NY, 2011 ([http://www.undp.org/content/dam/undp/library/Poverty%20Reduction/Towards\\_SustainingMDG\\_Web1005.pdf](http://www.undp.org/content/dam/undp/library/Poverty%20Reduction/Towards_SustainingMDG_Web1005.pdf)):*

գացած է, փոխանցվող տրանսֆերտները կարող են մեծացնել դեպոզիտների ծավալը, մեղմել վարկային սահմանափակումները և նպաստել ֆինանսական հատվածի զարգացմանը<sup>3</sup>: Այլ կերպ ասած՝ տրանսֆերտներն ապահովում են ներդրումների ֆինանսավորման այլընտրանքային միջոցներ՝ նվազեցնելով լիկվիդայնության սահմանափակումները:

2. Տրանսֆերտների մեծ ծավալը պետությանը հնարավորություն է տալիս կրճատելու իր կախվածությունը միջազգային օգնությունից ու վարկավորումից: Մասկայն միջազգային փոխանցումների աճումը չպետք է դիտել որպես պետական ֆինանսավորման ծախսերի փոխարինման գործոն, քանի որ մասնավոր փոխանցումները հիմնականում ուղղվում են աղքատ բնակչության սոցիալական կարիքների բավարարմանը:

3. Կայուն փոխարժեք ունեցող արժույթով տրանսֆերտները կարող են նշանակալիորեն բարելավել պետության միջազգային վարկանիշը և, հետևաբար, նվազեցնել միջազգային փոխառությունների ներգրավման ծախսերը:

4. Ի տարբերություն օտարերկրյա ներդրումներից՝ փոխանցվող դրամական միջոցները ավելի կայուն են ստացող պետության բիզնես միջավայրի փոփոխությունների նկատմամբ:

5. Խոշոր տրանսֆերտներ ստացող պետությունների տնտեսական շրջապտույտի ընթացքում նկատվում է արտադրված արդյունքի և սպառման աճի թույլ կապվածություն, ինչը հաճախ նպաստում է բարեկեցության աճմանը:

Միևնույն ժամանակ, միջազգային դրամական փոխանցումները գործում են հետևյալ բացասական ազդեցությունը.

1. Խոշոր ծավալով տրանսֆերտների ներհոսքը, ինչպես այլ արտարժույթի ներթափանցումը, կարող է հանգեցնել իրական փոխարժեքի և արտահանման բազիսային գնի բարձրացման՝ առաջացնելով ներկրվող ապրանքների թանկացում:

2. Տրանսֆերտները կարող են վնասել պետական հաստատությունների գործունեությանը, քանի որ փոխանցվող դրամական միջոցները մեծացնում են կառավարության ծախսումներ կատարելու կարողությունը՝ քողարկելով պետական գործողությունների լրիվ արժեքը<sup>4</sup>:

3. Տրանսֆերտները բացասականորեն են ազդում կոռուպցիայի վերահսկման, կառավարման արդյունավետության և իրավունքի գերակայության մակարդակի վրա: Մասնավորապես՝ տրանսֆերտները, մեծացնելով ազգային եկամտային

<sup>3</sup> Տես *R. Aggarwal, A. Demirgüç-Kunt and M. S. Martinez Peria*. Do Workers' Remittances Promote Financial Development? World Bank Policy Research Working Paper N 3957, July 2006; նաև՝ *I. Sobiech*. Remittances, finance and growth: Does financial development foster remittances and their impact on economic growth? FIW Working Paper N 158, October 2015 ([http://www.fiw.ac.at/fileadmin/Documents/Publikationen/Working\\_Paper/N\\_158\\_Sobiech.pdf](http://www.fiw.ac.at/fileadmin/Documents/Publikationen/Working_Paper/N_158_Sobiech.pdf)):

<sup>4</sup> Տես «The impact of remittances on developing countries». European Parliament, Directorate-General for external policies, 2014 ([http://www.europarl.europa.eu/RegData/etudes/etudes/join/2014/433786/EXPO-DEVE\\_ET%282014%29433786\\_EN.pdf](http://www.europarl.europa.eu/RegData/etudes/etudes/join/2014/433786/EXPO-DEVE_ET%282014%29433786_EN.pdf)); նաև՝ *Sh. Murodilloev*. Remittances as a resource curse – the effect on quality of government institutions in Tajikistan. Bishkek, 2013:

մասը, մեծացնում են նաև կառավարության կողմից այդ ֆինանսական միջոցների օգտագործման ռիսկը՝ հասարակական ծրագրերում ներդրելու փոխարեն<sup>5</sup>:

4. Փոխանցվող դրամական միջոցները նվազեցնում են երկրի ներսում աշխատանք գտնելու քաղաքացիների շահագրգռվածությունը՝ դրանով նվազեցնելով աշխատուժի առաջարկը:

Ընթացիկ հաշվի պակասուրդի ինքնակարգավորումը, մասնավոր հատվածի շահերի միջոցով ռիսկերի արդյունավետ տարանջատումը, օտարերկրյա խոշոր ֆինանսական հոսքերի և ռեսուրսների տեղաբաշխումը թվում են չափազանց անհավանական ընթացիկ զարգացումների պայմաններում: Ընթացիկ հաշվի ավելցուկ ունեցող պետությունները ավելի շատ են կախված արտաքին ֆինանսական հոսքերից: Այդ պետությունների տնտեսվարող սուբյեկտները, որոնք փոխառություններ են ներգրավում արտաքին աղբյուրներից, կարող են գտնել ներքին վարկավորման աղբյուրներ (այլ հավասար պայմաններում)՝ արտաքին ֆինանսավորման դադարեցման դեպքում: Կարելի է առանձնացնել արտաքին առևտրի ընթացիկ հաշվեկշռի հետևյալ առանձնահատկությունները:

1. Ընթացիկ հաշվի անհավասարակշռվածությունը ուղղակիորեն արտացոլում է ազգային եկամտի և ազգային ծախսերի միջև եղած տարբերությունը: Ազգային եկամտի նկատմամբ ազգային ծախսերի գերազանցումը հնարավոր է միայն ընթացիկ հաշվի համապատասխան պակասուրդի դեպքում: Եվ հակառակը, ազգային ծախսերի նկատմամբ ազգային եկամտի գերազանցումը բերում է տեղական «խնայողությունների», որը դրսևորվում է ներմուծման նկատմամբ արտահանման գերազանցմամբ:

2. Կապիտալ հոսքեր չլինելու պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը հնարավոր է միայն բանկային համակարգի կողմից արտաքին պահուստների կամ արտաքին վարկավորման նվազեցման դեպքում: Պահուստներ կամ արտաքին ֆինանսավորում չլինելու պայմաններում արտաքին առևտրում հաշվեկշռվածության կարելի է հասնել միայն մակրոտնտեսական ցուցանիշների ճշգրտման և կարգավորման պարագայում:

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՏԱՍՎՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՎՄԱՆ ԿՐՃԱՏՈՒՄԸ**

ՀՀ ԿԲ հրապարակած տվյալների համաձայն՝ 2015 թ. առաջին եռամսյակի արդյունքներով բանկերի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցված տրանսֆերտների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ կրճատվել է 51 %-ով՝ կազմելով 106 մլն 803 հազ. դոլար: Եթե առաջին եռամսյակում հաստատված տեմպը պահպանվի, ապա տարեկան կտրվածքով կրճատումը կկազմի 0,8 – 1 մլրդ դոլար<sup>6</sup>:

<sup>5</sup> Տես «The impact of remittances on developing countries» ([http://www.europarl.europa.eu/RegData/etudes/etudes/join/2014/433786/EXPO-DEVE\\_ET%282014%29433786\\_EN.pdf](http://www.europarl.europa.eu/RegData/etudes/etudes/join/2014/433786/EXPO-DEVE_ET%282014%29433786_EN.pdf)):

<sup>6</sup> Տես «Поток трансфертов в Армению сократился более чем наполовину». «ARMENIAN REPORT», 01.05.2015 (<http://www.armenianreport.com/pubs/106034/>):

Հայաստանում տրանսֆերտների կտրուկ կրճատումը հանգեցրել է շրջանառությունում արտարժույթի նվազման, ինչը հղի է լուրջ հետևանքներով: Այստեղ պետք է նշել, որ ի հավելումն սոցիալական խնդիրների խորացման՝ առաջանում են դժվարություններ ֆինանսական հատվածում: Խոսքը առաջին հերթին վերաբերում է բանկային համակարգի արտարժութային վարկավորման կրճատմանը, որն իր հերթին բերում է տեղական ձեռնարկությունների հիմնման և գործունեության ծավալման դժվարությունների: Բացի այդ, վատթարանում է պետության միջազգային վարկանիշը, և արտասահմանյան փոխառությունների ստացումը գնալով ավելի է դժվարանում: Երրորդ, արտարժույթի թանկացումը հանգեցնում է ներկրվող արտասահմանյան ապրանքների թանկացման, ինչը տեղական շուկայում մեծացնում է ինֆլյացիոն ռիսկերը: Այս բոլոր գործոնները այս կամ այն կերպ նվազեցնում են Հայաստանի իրական տնտեսության և ֆինանսական հատվածի կայունությունը: Այդ գործոնների բացասական ազդեցությունը հակակշռելու համար նպատակահարմար է ձեռնարկել հետևյալ քայլերը.

- դժվարությունները հաղթահարելու համար պետության տնտեսության ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղերին ցուցաբերել ֆինանսական աջակցություն: Խոսքը հիմնականում վերաբերում է կոնյակագործությանը, հանքարդյունաբերությանը և էներգետիկային,

- նվազեցնել վարկային տոկոսադրույքները՝ ՀՀ ԿԲ-ի կողմից միջին տոկոսադրույքի նվազեցմամբ: Հայաստանի ԿԲ-ն ցածր տոկոսադրույքով մեծ փոխառություններ է ներգրավում արտաքին շուկաներից ու տեղաբաշխում ՀՀ բանկային համակարգում, ընդսմին այդ նույն գումարները մի քանի անգամ բարձր տոկոսադրույքով հանդես են գալիս որպես ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկավորման աղբյուր,

- կատարել պետական ծախսերի օպտիմալացում, մասնավորապես՝ մեծացնել բյուջեի ծախսային մասի արդյունավետությունը՝ ավելորդ, մասնավորապես՝ պետական հաստատությունների գործունեության սպասարկմանն ուղղվող, պետական ծախսումների կրճատման միջոցով,

- պայքարել խոշոր ձեռնարկությունների ստվերային գործունեության դեմ, ինչը կնպաստի և՛ շուկայում մրցունակության մեծացմանը, և՛ բյուջեի եկամուտների նշանակալի աճմանը,

- պետական ֆինանսավորմամբ ծրագրերի արդյունավետությունը մեծացնելու նպատակով «Պետզնումների մասին» և «Տեղերների մասին» ՀՀ օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ, ստեղծել հանրային-մասնավոր համագործակցության գործուն մեխանիզմներ:

2015 թ. առաջին եռամսյակում Հայաստանի արտահանման և ներմուծման ծավալները 2014 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազել են, համապատասխանաբար, 23 և 30,5 տոկոսով: Թեև Հայաստանի արտաքին առևտրի 2015 թ. հունվար, փետրվար ու մարտ ամիսների ցուցանիշները լրիվ չեն, քանի որ ամբողջովին չեն հավաքված և ամփոփված, այս տարվա առաջին եռամսյակում Հայաստանի ու ԵՏՄ պետությունների միջև առևտրի ցուցանիշները, Հայաստանի արտաքին առևտրում ԵՏՄ երկրների մեծ կշիռը և հայ

գործարարների հայտարարությունները վկայում են, որ հրապարակված տվյալները միանգամայն հավաստի են<sup>7</sup>: Նախորդ տարվա հունվար–մարտ ամիսների ընթացքում Հայաստանից Ռուսաստան արտահանման ծավալը կազմել է 65,3 մլն դոլար, իսկ այս տարվա նույն ժամանակահատվածում՝ ընդամենը 1,4 մլն դոլար: Նշանակալիորեն կրճատվել են արտահանման ծավալները (30–50 %-ով) Հայաստանից ՌԻկրաիմա և Իրան, ինչպես նաև ԵՄ-ի անդամ հինգ երկրներ՝ Բելգիա, Չեխիա, Լիտվա, Ֆրանսիա և Բուլղարիա<sup>8</sup>: Զանի որ այս տարի Հայաստանը մեծացնելու է ԵՄ-ի երկրներից ներմուծվող ապրանքների մաքսատուրքերը, ապա կարելի է վստահաբար կանխատեսել, որ այդ պետություններն էլ իրենց հերթին խստացնելու են Հայաստանի հետ առևտրի պայմանները: Պետք է նշել նաև այն հանգամանքը, որ փոխադարձ խստացված պայմանները երկկողմ առևտրի կրճատման պատճառ են և ոչ միայն ներմուծման, այլև արտահանման ծավալների նվազման վկայություն<sup>9</sup>:

ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼԻ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ  
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՎՐԱ

Հայաստանի ֆինանսական համակարգի զարգացման վրա տրանսֆերտների, արտահանման ծավալների և մի շարք այլ մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունն ուսումնասիրելու նպատակով կիրառվել է Պաիերի ընդհանրացված մեթոդը (*Generalized Method of Moments*): Տվյալների բազա են ծառայել 2000–2013 թթ. ժամանակահատվածի տարեկան ցուցանիշները: Կազմվել է հետևյալ մոդելային հավասարումը.

$$Fit = aRit + xit\beta + \epsilon it,$$

որտեղ՝  $Fit$ -ը ցույց է տալիս կախյալ ցուցանիշները՝ մի կողմից, բանկային համակարգի մաքուր շահույթի ու ընդհանուր ակտիվների և, մյուս կողմից, բանկերի ծախսերի ու ընդհանուր ակտիվների հարաբերությունները,  $Rit$ -ը՝  $t$  ժամանակահատվածում բանկերի և այլ կազմակերպությունների միջոցով երկիր փոխանցվող տրանսֆերտներն են,  $xit$ -ը՝ ՀՆԱ-ի և արտահանման ու օտարերկրյա ուղղակի ներդրումների հարաբերակցությունը, ինչպես նաև գնաճը և կիրառվող փոխարժեքային ռեժիմը,  $\alpha$ -ն և  $\beta$ -ն՝ անկախ գործոնների գործակիցներ են, իսկ  $\epsilon it$ -ը՝ ստանդարտ շեղման հավանականությունն է:

Հետազոտությամբ պարզվեց, որ տրանսֆերտները հանգեցնում են տրամադրվող վարկերի և բանկերի դեպոզիտների ու լիկվիդային միջոցների աճման: Մասնավորապես՝ դրանք պետության հեռավոր վայրերի բնակիչներին հնարավորություն են տալիս օգտվելու ֆինանսական ծառայություններից: Փոխանցվող դրամական միջոցների շնորհիվ մեծանում է բանկային հաշիվների թվաքանակը, ինչը նպաստում է բանկերի լիկվիդային միջոցների ու վարկերի աճմանը: Տրանս-

<sup>7</sup> Տես «Резко сократился экспорт из Армении в страны Евразийского союза». «ARMENIAN REPORT», 19.05.2015 (<http://armenianreport.com/pubs/107032>):

<sup>8</sup> Տես նույն տեղում:

<sup>9</sup> Տես նույն տեղում:

ֆերտները նաև ընդլայնում են սահմանային ծախսերը կրճատելու բանկերի հնարավորությունը:

Ստորև բերվող աղյուսակի տվյալները վկայում են, որ բանկերի և այլ կազմակերպությունների միջոցով երկիր փոխանցվող տրանսֆերտները, արտահանում/ՀՆԱ հարաբերությունը, լողացող փոխարժեքը և ուղղակի օտարերկրյա ներդրումները վիճակագրորեն նշանակալիորեն նպաստում են պետության ֆինանսական հատվածի զարգացմանը: Ընդամենը դրանք 10 %-ով աճելու դեպքում ֆինանսական հատվածի վրա ազդում են, համապատասխանաբար, 0,045, 0,086, 0,04 և 0,047 տոկոսային կետով: Պետք է նշել նաև գնաճի բացասական ազդեցությունը, որը մեծացնում է ֆինանսական համակարգի ռիսկերը, բարդացնում կարճաժամկետ կանխատեսումները և նվազեցնում տրանսֆերտների իրական դրամական արժեքը: Եվս մեկ դիտարկում. տվյալ ուսումնասիրության արդյունքները համահունչ են ցածր և միջին եկամուտ ունեցող պետությունների համար կատարված մնամատիպ հետազոտությունների արդյունքներին:

*Աղյուսակ*

ՊԱՀԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱՅՎԱԾ ՄԵԹՈԴՈՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ

Կախյալ գործոն	Անկախ գործոններ	Գործակից	Ստանդարտ շեղում	z	$P >  z $	Արելյան-Բոնդի փոխկապվածության թեստ
Ֆինանսական հատվածի արդյունավետություն	Բանկերի և այլ կազմակերպությունների միջոցով երկիր փոխանցվող տրանսֆերտներ	0,045 (5%-ով վիճակագրական նշանակություն)	0,28	1,63	0,05	0,74
	Արտահանում (ՀՆԱ-ի %-ով)	0,086 (5%-ով վիճակագրական նշանակություն)	0,59	0,85	0,03	0,83
	Ուղղակի օտարերկրյա ներդրումներ (ՀՆԱ-ի %-ով)	0,04 (5%-ով վիճակագրական նշանակություն)	1,63	0,38	0,025	0,13
	Գնաճ (ՀՆԱ-ի %-ով)	- 0,06 (1%-ով վիճակագրական նշանակություն)	2,84	0,22	0,04	0,47
	Լողացող փոխարժեքային ռեժիմ	0,047 (5%-ով վիճակագրական նշանակություն)	0,27	0,77	0,037	0,82


ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝  
«ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԾԱՌԻ» ՄԵԹՈԴՈՎ

Վերը նշված անբարենպաստ տնտեսական իրավիճակում առաջարկվում է միջին և խոշոր ձեռնարկություններին տրամադրել պետական աջակցություն՝ դրանց սոցիալական պարտավորությունների մեծացմամբ: Նման քաղաքականությունը հնարավորություն կտա տրանսֆերտներից մեր պետության կախվածության նվազեցմամբ բարելավելու արտահանող ընկերությունների ծախսային մասը և թեթևացնելու բնակչության սոցիալական խնդիրները: Ընկերությունները կկարողանան ընդլայնել արտադրության ծավալները, ինչն իր հերթին կմեծացնի աշխատուժի պահանջարկը և կնպաստի արտահանման հնարավորությունների մեծացմանը: Որպես արդյունք՝ կմեծանա ֆինանսական ծառայությունների պահանջարկը, ինչը կնպաստի բանկային համակարգի զարգացմանը: Ռիսկերի գնահատման գործում անհրաժեշտ է հաշվի առնել կանխատեսվող բավական մեծ գնաճը, արտաքին շուկայական տատանումները և Ղարաբաղյան հակամարտության հնարավոր սրումը:

Ֆինանսական աջակցության անհրաժեշտ միջոցների ներգրավումը կարող է ապահովվել ի հաշիվ պետական կառավարման մարմինների սպասարկման և ցածր արդյունավետություն ունեցող աշխատանքների, վարչական միջոցառումների, ճանապարհաշինարարության, ջրային և գյուղատնտեսության ոլորտներում, թանկ արտասահմանյան խորհրդատվությունների վրա կատարվող ծախսերի կրճատման, մասնավորապես՝ հետևյալ ուղղություններով կատարվող ֆինանսական ծախսերի օպտիմալացման.

- գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների, կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր ախտորոշում, բույսերի կարանտին, մշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննություն,
- խորհրդատվություններ գյուղատնտեսության ոլորտում,
- փոքր արդյունավետություն ունեցող «Կանոնակարգիչ գիյոտին» արագ բարեփոխումների գործիք-չափանիշի հանում գործածությունից,
- իրավական ակտերի ընդունման ազդեցության գնահատման խիստ ծախսատար համակարգի վերացում,
- ՀՀ դատական օրենսգրքի, «Մահմանադրական դատարանի մասին», «Դատախազության մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» և «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան ՀՀ դատարանների, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատախազության, Հատուկ քննչական ծառայության և ՀՀ վերահսկիչ պալատի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով պահուստային ֆոնդի լուծարում,
- պետբյուջեից հանրային առողջապահական ծառայությունների ֆինանսավորում,
- պետբյուջեից հիվանդանոցային բուժօգնության ֆինանսավորում,

- հրաժարում ոչ եկամտաբեր պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական խնդիրների լուծման քաղաքականությունից,
- Երևան քաղաքի փողոցների ճանապարհաշինարարական աշխատանքների և արտաքին լուսավորության ապահովում,
- պետական գույքի կառավարման առումով պետական սեփականություն հանդիսացող օբյեկտների անարդյունավետ օտարման հանգեցնող ոչ շահավետ գործարքների կնքման սահմանափակում:



Գծապատկեր. Որոշումների ծառ

Վերը բերված գծագրում «Որոշումների ծառը» մշակվել է կարճ ժամանակահատվածի համար՝ 2016 թ. միջինը 4 % գնաճի դեպքում: Ընտրվել է այնպիսի տնտեսական քաղաքականություն, որը կհանգեցնի և՛ խոշոր ձեռնարկությունների արտադրանքի արտահանման հնարավորությունների մեծացման, և՛ բնակչության սոցիալական խնդիրների թեթևացման: Այսպես. մոդելային ձևով ֆինանսական աջակցության չափը կարելի է որոշել հետևյալ բանաձևով՝

$$\text{Ֆինանսական աջակցություն} = F (\text{արտահանման աճ} + \text{սոցիալական պաշտպանվածության մեծացում} + \text{ֆինանսական հատվածի աճ} - \text{գնաճի մակարդակ} - \text{արտաքին բացասական ազդեցություն}) t + \text{ստանդարտ շեղման գործակից},$$

որտեղ t-ն հաշվարկման ժամանակահատվածն է:

Իհարկե, ֆինանսական միջոցները պետք է ուղղվեն այն խոշոր և միջին ձեռնարկություններին, որոնք արդեն ունեն արտադրանքի արտահանման ծա-

վալներ և արտաքին շուկայում որոշակի դիրք: Որոշում կայացնելու համար հաշվվում և համեմատվում են յուրաքանչյուր դիպվածության հանգույցից բխող հետևանքների հավանականության և արդյունքների արտադրյալների հանրագումարները: Այսպես, եթե թվային տեսքով՝ 10-ից մինչև 100 միավոր սանդղակով, ներկայացնենք տարբեր որոշումներից բխող հետևանքների դրական և բացասական արդյունքները, ապա կստանանք հետևյալ պատկերը.

$$0,8 \times 30 + 0,8 \times 100 + 0,7 \times (-20) + 0,9 \times (-60) = 36$$

$$0,5 \times (-80) + 0,7 \times (-90) + 0,3 \times 150 + 0,9 \times 50 = -13$$

Քանի որ  $36 > -13$ , ապա *խոշոր ընկերությունների և սոցիալական պարտավորությունների ավելացմամբ ֆինանսական աջակցության տրամադրումը* ճիշտ որոշում է:

#### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կայուն մակրոտնտեսական միջավայրի պահպանման միջոցով տնտեսական աճ և նոր աշխատատեղեր ապահովելու համար նպատակահարմար է որդեգրել տնտեսական տատանումները մեղմող քաղաքականություն: Աղքատության, սոցիալական անհավասարության և աշխատուժի անկայուն շուկայի պայմաններում պահանջվում է իրականացնել լրիվ և արտադրական զբաղվածության ապահովմանը նպատակաուղղված մակրոտնտեսական քաղաքականություն: Ավելին. ներկայումս տեղի ունեցող համաշխարհային շուկայական փոփոխությունների և ինֆլյացիոն ճնշումների պայմաններում ցածր և միջին եկամտով պետությունների կառավարությունները պետք է ստեղծեն տնտեսական կայունություն և զարգացում ապահովող ձեռնարկությունների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ պայմաններ: Հայաստանի պարագայում, տրանսֆերտների ու արտահանման կտրուկ կրճատման և մեր պետության ֆինանսական հատվածի վրա դրա բացասական ազդեցության հաշվառմամբ, նպատակահարմար է խթանել կառուցվածքային վերափոխումները, աջակցել խոշոր ձեռնարկություններին, մեղմել բիզնես միջավայրի և շուկայական շրջապտույտի տատանումները, լողացող փոխարժեքային քաղաքականության և կապիտալ հոսքերի արդյունավետ կառավարման կիրառմամբ համակենտրոնացնել պետական եկամուտները:

**ЭКОНОМИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ**

**ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ФИНАНСОВОГО РЫНКА РА  
В УСЛОВИЯХ СНИЖЕНИЯ УРОВНЯ ЭКСПОРТА И ТРАНСФЕРТОВ**

*А. Г. ДАВТЯН, кандидат экономических наук, ученый-аналитик Группы стратегических игр и моделирования Центра региональных стратегических анализов ИНСИ НИУО МО РА*

**РЕЗЮМЕ**

По результатам проведенного исследования состояния экономики РА и с учетом мирового опыта преодоления кризисных ситуаций в финансово-экономической сфере можно придти к выводу, что в условиях негативного влияния резкого падения уровня трансфертов и объемов экспорта на финансовый сектор Армении, углубления социального неравенства и нестабильности рынка труда насущной необходимостью является проведение структурных реформ, нацеленных на: поддержание крупных предприятий, обеспечение эффективного управления потоками капитала и колебаниями рыночного цикла экономики. В то же время важными факторами развития финансового сектора Армении являются улучшение бизнес-среды и повышение эффективности управления государственными доходами. Еще одним немаловажным шагом может стать оказание финансовой помощи крупным предприятиям с повышением их социальных обязательств.

**ECONOMIC SECURITY**

**THE PERSPECTIVES OF DEVELOPING THE RA FINANCIAL MARKET  
IN CONDITIONS OF EXPORTS AND TRANSFERS REDUCTION**

*A. G. DAVTYAN, PhD in Economy, Research Fellow at the Strategic Gaming and Modeling Group, Center for Regional Strategic Analyses, INSS, NDRU, MOD, RA*

**SUMMARY**

According to the results of the research on the RA's economy and taking into account the world experience in overcoming crisis situations in the financial-economic sphere, we can draw a conclusion that in conditions of the negative impact of a plunge in the transfers level and exports volume upon Armenia's financial sector, more profound social inequality and labour market instability, it is urgent to carry out structural reforms targeted at supporting large-scale enterprises; and ensuring efficient control over capital flows and fluctuations in the market cycle of the economy. At the same time, important factors affecting the development of Armenia's financial sector are the improvement of business environment and the increase in the efficiency controlling the state revenues. Assisting large-scale enterprises financially with the increase in their social commitments may become another important step.

ԹՈՒՐԹ-ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ 2002–2016 ԹԹ. ԹՈՒՐԹԻԱՅԻ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՏՈՒՄ

Գ. Մ. ԱՐՇԱԿՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ՀՀ սիլյուրքի նախարարության աշխատակազմի հայրենադարձության  
և հեղափոխությունների վարչության պետ



ԱԶԿ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԱԼԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ  
ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԹՈՒՐԹԻԱՅԻ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
(2002–2008 թթ.)

2002 թ. նոյեմբերին Թուրքիայում «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց հետո թուրք-ռուսաստանյան հարաբերություններն սկսեցին ինտենսիվորեն զարգանալ: Դրան էապես նպաստեց այն հանգամանքը, որ 21-րդ դարի սկզբին թուրք-ռուսաստանյան հարաբերությունների զարգացման համար կային անհրաժեշտ նախադրյալները. տարածաշրջանում ստեղծվել էր բարենպաստ քաղաքական իրավիճակ, ձևավորվել էին երկկողմ քաղաքական և տնտեսական հարաբերություններ, չկային տարածքային վեճեր, իրագործվում էին համատեղ տարածաշրջանային ծրագրեր և այլն: Բացի այդ, Թուրքիայի արտաքին քաղաքական գերակայություններում տեղի ունեցան էական փոփոխություններ, որոնք, մասնավորապես, պայմանավորված էին հարակից տարածաշրջաններում, այդ թվում՝ Հարավային Կովկասում, առաջավար դառնալու նրա ձգտմամբ<sup>1</sup>:

Հարավային Կովկասում Ռուսաստանի ներկայության պայմաններում Թուրքիան ստիպված եղավ ձգտումները սահմանափակել հարավկովկասյան նավթի ու գազի արտահանման ուղիների նկատմամբ իր վերահսկողության հաստատմամբ, ինչը հնարավորություն կտար ընդլայնելու և ամրապնդելու իր դերն ու ազդեցությունը ոչ միայն Հարավային Կովկասում, այլև աշխարհում ընդհանրապես: Մինչդեռ Ռուսաստանի ռազմավարական նպատակն էր «գերիշխող դիրք գրավել ինչպես եվրոպական էներգետիկ շուկայում, այնպես էլ Կասպից ծովից էներգակիրների արտահանման ասպարեզում»<sup>2</sup>:

Ռուսաստանում Վ. Պուտինի իշխանության գալով երկու պետությունների միջև քաղաքական, առևտրատնտեսական ու ռազմական ոլորտներում ծավալվող համագործակցությունը հասավ նոր որակական մակարդակի:

<sup>1</sup> Stü A. Davutoğlu. Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu. İstanbul, 2001, s. 120:

<sup>2</sup> Stü A. Tekin, I. Walterova. Turkey's Geopolitical Role: The Energy Angle. «Middle East Policy», Spring 2007, Vol. 14, N 1:

Քաղաքական հարաբերությունների զարգացմանն էր նպատակաուղղված 2002 թ. դեկտեմբերին Ռ. Թ. Էրդողանի՝ որպես «Արդարություն և զարգացում» կուսակցության նախագահի այցը Մոսկվա, որի ընթացքում նա հանդիպեց ՌԳՆ Նախագահ Վ. Պուտինի և վարչապետ Մ. Կապյանովի հետ<sup>3</sup>: Այս այցից հետո՝ 2003 թ. մարտի 1-ին, Թուրքիայի խորհրդարանը 62 հազարանոց ամերիկյան զորամիավորմանն արգելեց հյուսիսից Իրաք ներխուժելու համար օգտագործել Թուրքիայի տարածքը<sup>4</sup>: Տվյալ քայլը Ռուսաստանի Նախագահ Վ. Պուտինը մեկնաբանեց որպես «մի կարևոր իրադարձություն՝ Իրաք ներխուժելու նախօրեին»<sup>5</sup>:

Մեր կարծիքով՝ հենց այս քայլը նպաստեց, որ Ռուսաստանն սկսեց միջազգային ասպարեզում Թուրքիային դիտել որպես ավելի ինքնուրույն խաղացողի՝ ի տարբերություն «Սառը պատերազմի» շրջանից, երբ Թուրքիան դիտվում էր որպես ԱՄՆ-ի հավատարիմ դաշնակիցը: Բացի այդ, ԱՄՆ-ի ռազմական ներխուժումներն Իրաք և Աֆղանստան Ռուսաստանին ու Թուրքիային հնարավորություն տվեցին ավելի ազատ տարաշարժներ կատարելու Կովկասում և Մերձավոր Արևելքում<sup>6</sup>:

Այսպիսով՝ Թուրքիայում Ռ. Թ. Էրդողանի և Ռուսաստանում Վ. Պուտինի իշխանության զարդ մեծապես նպաստեց երկկողմ հարաբերությունների զարգացմանը, հատկապես՝ առևտրատնտեսական ոլորտում: Օրինակ՝ ապրանքաշրջանառությունը 2001 թ. 4,3 մլրդ դոլարից 2008 թ. հասավ 38 մլրդ դոլարի, ընդամենի Թուրքիայի արտահանումը կազմեց 6,5, իսկ Ռուսաստանինը՝ 31,5 մլրդ դոլար: Այս արդյունքներով Ռուսաստանը 2008 թ. դարձավ Թուրքիայի համար մեկ առևտրային գործընկերը՝ շրջանցելով Գերմանիային<sup>7</sup>:

<sup>3</sup> Stu *O. R. Freedman*. Russian Policy Toward the Middle East Under Putin: The Impact of 9/11 and The War in Iraq. «Alternatives», Turkish Journal of International Relations, Summer 2003, Vol. 2, N 2 (<http://alternativesjournal.net/article/viewFile/5000159503/5000143936>):

<sup>4</sup> Stu *C. Migdalovitz*. Iraq: Turkey, the Deployment of U.S. Forces, and Related Issues. Congressional Research Service, Report for Congress, 2 May 2003, P. 2; *B. Eligür*. Turkish-American Relations Since the 2003 Iraqi War: A Troubled Partnership. «Middle East Brief». Crown Center for Middle East Studies, May 2006, N 6; *U. Հարությունյան*, Թուրքիա. Հայտ կայսերական քաղաքականության համար: «21-րդ դար», 2008, հմ. 2 (20):

<sup>5</sup> Stu *U. Ջարգարյան*, Ռուս-թուրքական հարաբերությունները և Հարավային Կովկասի երկրները (1997–2008 թթ.), էջ 3 (<http://www.slideshare.net/wwwartak/artak-zargaryan-turkishrussian-relations-and-the-south-caucasus>), նաև՝ *B. Aras*. Turkey and the Russian Federation: An Emerging Multidimensional Partnership. «SETA Policy Brief», 2009, N 35:

<sup>6</sup> Stu *B. Aras*. Türkiye ve Rusya Federasyonu: Çok Boyutlu Ortaklık. «SETA Analiz». 2009, N 10:

<sup>7</sup> Stu *H. Özdal, H. Özertem, K. Has, T. Demirtepe*. Turkey-Russia Relations in the Post-Cold War Era: Current Dynamics, Future Prospects. USAK Report No: 13-06. USAK Center for Eurasian Studies, July 2013, P. 36; նաև՝ *H. Kanbolat*. Turkish-Russian Relations After Gul's Moscow Visit. «The Journal of Turkish Weekly», 15.02.2009 (<http://www.turkishweekly.net/2009/02/15/news/turkish-russian-relations-after-guls-moscow-visit/>); *R. Weitz*. Russia-Turkey Energy Ties: Cooperation with Conflict. «Diplomatia», September 2012, N 109 (<http://www.diplomaatia.ee/en/article/russia-turkey-energy-ties-cooperation-with-conflict/>):

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԹՈՒՐԹ-ՌՈՒՄԱՍՏԱՆՅԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ 2008 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ ՌՈՒՄ-ՎՐԱՅԱԿԱՆ ՀՆԳՕՐՅԱ ՊԼԱՏԵՐԱԶՄԸ

Թեև բուրք-ռուսաստանյան առևտրատնտեսական հարաբերությունները բուռն կերպով զարգանում էին, այնուամենայնիվ, տարածաշրջանում կային մի շարք հիմնախնդիրներ, որոնց նկատմամբ Թուրքիան և Ռուսաստանը ունեին տրամագծորեն հակառակ, մրցակցային դիրքորոշումներ, ինչը երկկողմ հարաբերություններում ստեղծում էր որոշակի լարվածություն: Մասնավորապես՝ հարավկովկասյան և կասպիական նավթի արտահանման ուղիների, սառեցված տարածաշրջանային հակամարտությունների, Վրաստանի և Ադրբեջանի հետ Թուրքիայի հարաբերությունների սերտացման, տարածաշրջանում ռուսաստանյան ռազմական ներկայության և այլ հարցերում:

Այսպես. ԱՄՆ-ի գործուն աջակցությամբ և Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի սերտ համագործակցությամբ ձևավորվեց «Արևելք–Արևմուտք էներգետիկ միջանցքը», որով ապահովվում էր Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի նավթի ու գազի անվտանգ տեղափոխումը միջազգային շուկա՝ Ռուսաստանի շրջանցմամբ<sup>8</sup>: 2005 թ. շահագործման հանձնվեց Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղը (ռուսաստանյան Բաքու–Նովոռոսիյսկ նավթամուղի այլընտրանքը), որով ադրբեջանական նավթը հասցվեց համաշխարհային էներգետիկ շուկա<sup>9</sup>: Ընդամին այդ նախագիծն ուներ նաև կարևոր աշխարհաքաղաքական նշանակություն, քանի որ ԱՄՆ-ը ցանկանում էր դրանով էապես մեծացնել կասպիական և կովկասյան տարածաշրջաններում իր քաղաքական ու տնտեսական ազդեցությունը՝ մինևույն ժամանակ թուլացնելով Ռուսաստանի դիրքերը<sup>10</sup>:

Էներգետիկների արտահանման ուղիների վերահսկման հարցում ՌԴ-ի և ԹՀ-ի միջև ընթացող մրցապայքարում Թուրքիայի համար կարևոր նշանակություն ուներ նաև Բաքու–Թբիլիսի–Էրզրում գազամուղը, որի բացման արարողությունը տեղի ունեցավ 2007 թ. մարտի 25-ին<sup>11</sup>, իսկ 2007 թ. նոյեմբերին Բաքու–Թբիլիսի–Էրզրում գազամուղով մատակարարվող ադրբեջանական գազը Թուրքիայով հասավ Հունաստան՝ դառնալով Ռուսաստանը շրջանցող և Եվրոպային մատակարարող առաջին գազամուղը<sup>12</sup>:

<sup>8</sup> Stü E. Souleimanov, J. Kraus. Turkey: An Important East-West Energy Hub. «Middle East Policy», Summer 2012, Vol. 19, Issue 2:

<sup>9</sup> Stü P. İpek. The Aftermath of Baku-Tbilisi-Ceyhan Pipeline: Challenges Ahead For Turkey. «PERCEPTIONS», Spring 2006, P. 3 (<http://sam.gov.tr/wp-content/uploads/2012/02/PinarIpek.pdf>); H. Erdemir. The Policies around the BTC Pipeline. «Alternatives», Turkish Journal of International Relations, Winter 2009, Vol. 8, N 4:

<sup>10</sup> Stü Ö. Oktav. American Policies Towards the Caspian Sea and The Baku-Tbilisi-Ceyhan Pipeline. «PERCEPTIONS», Spring 2005 (<http://sam.gov.tr/wp-content/uploads/2012/02/OzdenZeynepOktav.pdf>):

<sup>11</sup> Stü G. Ozkan. Post-Cold War Turkish Foreign Policy in the Caspian Region within the Context of Pipeline Geopolitics and Geoeconomics. «International Journal of Social Science and Humanity», July 2015, Vol. 5, N 7:

<sup>12</sup> Stü S. J. Flanagan, S. J. Brannen. Turkey's Evolving Dynamics: Strategic Choices for U.S.-Turkey Relations. CSIS Reports. Center for Strategic and International Studies, 2009, P. 16:

Ռուսաստանին էապես մտահոգում էր էներգետիկ ռեսուրսների կարևոր տարանցիկ հանգույց դառնալու Թուրքիայի ձգտումը, քանի որ դա ոչ միայն կմեծացներ Անկարայի տարածաշրջանային դերը, այլև նրան հնարավորություն կտար բարձրացնելու «Գազպրոմի» հետ պայմանագրերի վերանայման հարցը: Իրավիճակի նման զարգացման դեպքում Թուրքիան նույնիսկ կարող էր վերացնել ռուսաստանյան գազից իր կախումը<sup>13</sup>: Բացի այդ, 2007 թ. Ռուսաստանն զգալի ջանքեր էր գործադրում նոր ծրագրվող «Նաբուկո» նախագիծը ձախողելու համար՝ որպես այլընտրանք առաջ մղելով «Հարավային հոսք» նախագիծը<sup>14</sup>:

Թեև էներգակիրների Արևելք–Արևմուտք տեղափոխման ասպարեզում Թուրքիան ակտիվ կերպով մրցակցում էր Ռուսաստանի հետ, սակայն նա, միևնույն ժամանակ, իր ներքին էներգետիկ կարիքների բավարարման տեսանկյունից մեծապես կախված էր Մոսկվայից: Դա է պատճառը, որ Անկարան փորձում էր չվանել իր հզոր հարևանին՝ նրա հետ համագործակցելով մյուս էներգետիկ նախագծերի շրջանակներում, ինչպիսին էր, օրինակ, Թուրքիայի համար մեծ նշանակություն ունեցող «Երկնագույն հոսք» գազամուղը, որի շահագործման շնորհիվ 2003 թվականին ռուսաստանյան գազը Սև ծովի հատակով հասավ Թուրքիա<sup>15</sup>:

Այս հակասական իրավիճակը Թուրքիային ստիպեց մշակել հետևյալ էներգետիկ ռազմավարությունը. մի կողմից՝ ավելի սերտորեն համագործակցել առաջատար համաշխարհային ու տարածաշրջանային դերակատարների հետ, մյուս կողմից՝ հավասարակշռված քաղաքականություն վարել Ռուսաստանի հետ:

Թուրք-ռուսաստանյան մրցակցության առանցքային խնդիրներից էին նաև Հարավային Կովկասի ստեղծված հակամարտությունները և, հատկապես, ԼՂ հիմնահարցը: Ընդամին Թուրքիան ձգտում էր տարբեր հակամարտությունների կարգավորման գործում ստանձնելով միջնորդի դեր՝ մեծացնելու իր ազդեցությունն ու նշանակությունը և հանդես գալու որպես տարածաշրջանային տերություն<sup>16</sup>:

Էապես մտահոգված լինելով Արխազիայում և Հարավային Օսեթիայում Ռուսաստանի վարած քաղաքականությամբ՝ Թուրքիան, այդուհանդերձ, բացահայտ կերպով չէր պայքարում Արխազիային Ռուսաստանի ցուցաբերած մեծ աջակցության դեմ<sup>17</sup>: Թուրքիայի այս հանդուրժողականությունն իր առավել վառ

<sup>13</sup> Տես *B. Milov, A. Lunskiy*. Повелители труб: почему строятся заведомо убыточные экспортные газопроводы. «Новая Газета», 02.02.2006 (<http://2006.novayagazeta.ru/number/2006/07n/n07n-s12.shtml>):

<sup>14</sup> Տես *Z. Öniş, Ş. Yılmaz*. Turkey and Russia in a shifting global order: cooperation, conflict and asymmetric interdependence in a turbulent region. «Third World Quarterly», 2016, Vol. 37, Issue 1:

<sup>15</sup> Տես *A. A. Гурьев*. «Голубой поток» и некоторые вопросы газовой стратегии РФ (<http://www.imes.ru/rus/stat/2005/22-11-05.htm>):

<sup>16</sup> Տես *A. Gürzel*. Turkey's Role as a Regional and Global Player and its Power Capacity: Turkey's Engagement with other Emerging States. «Revista de Sociologia e Política», June 2014, Vol. 22, N 50 (<http://www.scielo.br/pdf/rsocp/v22n50/07.pdf>):

<sup>17</sup> Տես *E. Kogan*. Turkish-American Strategic Partnership versus Turkish-Russian Partnership without Strategy. Sozialwissenschaftliche Schriftenreihe Reihe Studien. Wien, 2009, P. 11:

դրսևորումն ստացավ ռուս-վրացական 5-օրյա պատերազմի ժամանակ, երբ Անկարան հրաժարվեց շեշտված հակառուսաստանյան դիրքորոշում ընդունելուց:

Ըստ հայտնի թուրք գիտնական Բ. Էզզինի՝ թուրք-ռուսաստանյան տարածայնությունների շարքում կարելի է առանձնացնել նաև ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի աջակցությունը դաշինքին Վրաստանի և Ռկրախինայի անդամակցությանը, ինչին կտրականապես դեմ է Ռուսաստանը<sup>18</sup>:

Եապես տարբեր էին Թուրքիայի և Ռուսաստանի դիրքորոշումները նաև Քրդական հարցում: Չնայած Թուրքիայի ակտիվ ջանքերին՝ Ռուսաստանը ահաբեկչական խմբավորումների ցանկում չի ներառում Թուրքիայում պարտիզանական պայքար մղող Քրդական բանվորական կուսակցությանը (ԶԲԿ): Մոսկվայի նման վերաբերմունքի հիմնական պատճառներից մեկը Կովկասում գործող ահաբեկիչներին չպաշտպանելու վերաբերյալ Անկարայի հավաստիացումների նկատմամբ Կրեմլի անվստահությունն է<sup>19</sup>:

Այսպիսով՝ թեև 2001–2008 թթ. կարելի է բնութագրել որպես թուրք-ռուսաստանյան տնտեսական հարաբերությունների ծաղկման շրջան, այնուամենայնիվ, երկու պետությունն էլ շարունակում էին ջանքեր գործադրել Սևծովյան ավազանում, Մերձավոր Արևելքում, Հարավային Կովկասում, Կենտրոնական Ասիայում և Բալկաններում միմյանց ազդեցությունը թուլացնելու ուղղությամբ, ընդամին, մեր կարծիքով, ՌԳ-ին դա ավելի մեծ չափով էր հաջողվում:

ԹՈՒՐԹ-ՌՈՒՄԱՍՏԱՆՅԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՀԱՐԵՎԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԶԱՎԱԶԱԿԱՆ ԻՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (2008 Թ.–ՄԵՐ ՕՐԵՐԸ)

2008 թ. օգոստոսի ռուս-վրացական 5-օրյա պատերազմից հետո թուրք-ռուսաստանյան առևտրատնտեսական և ռազմաքաղաքական հարաբերությունները շարունակեցին ակտիվորեն զարգանալ:

Ռուսաստանն ակտիվորեն փորձում էր տնտեսապես շահագրգռել Թուրքիային՝ ներգրավել իր էներգետիկ նախագծերում: Այսպես. 2012 թ. հոկտեմբերին շահագործման հանձնելով 55 մլրդ խորանարդ մետր հզորությամբ «Հյուսիսային հոսք» գազամուղը՝ Ռուսաստանը ձեռնամուխ եղավ դեպի արևելյան Եվրոպա նոր գազամուղի՝ «Հարավային հոսք» նախագծի քննարկմանը<sup>20</sup>: 2011 թ. վերջին Թուրքիան «Գազպրոմ» ընկերությանը թույլատրեց Սև ծովի իր բացառիկ տնտե-

<sup>18</sup> Տես *И. И. Иванова*. Российско-турецкие политические отношения в начале XXI века. «Российско-турецкие отношения: 2002–2012 гг. (материалы Круглого стола, г. Москва, 4 апреля 2013 года)». Под ред. В. А. Аваткова, С. Б. Дружиловского, А. В. Федорченко. М., 2013, с 51:

<sup>19</sup> Տես *Г. А. Уйсал*. Турецко-российский политический диалог в начале XXI века. «Турция: новые реалии во внутренней политике и участие в региональных геополитических процессах (материалы международной конференции, г. Москва, 2 апреля 2014 г.)». Под ред. В. А. Аваткова, С. Б. Дружиловского, А. В. Федорченко. М., 2014, с. 208:

<sup>20</sup> Տես *E. Watkins*. Russia to Build South Stream Natural Gas Pipeline via Turkey. «OIL&GAS JOURNAL», 9 January 2012 (<http://www.ogj.com/articles/print/vol-110/issue-1a/general-interest/russia-to-build-south.html>); Հ. Օզդալ, Հ. Օզդիրփի, Կ. Հաս, Տ. Դեմիրփիփե, Նշ. աշխ., էջ 50:

սական գոտում իրականացնել աշխատանքներ «Հարավային հոսք» նախագծի շրջանակներում, որը երթուղիների բազմազանեցման և Կենտրոնական ու Հարավային Եվրոպայի երկրներ մատակարարվող գազի ծավալների մեծացման տեսանկյունից էական նշանակություն ուներ Ռուսաստանի համար<sup>21</sup>:

Մի քանի նախագծերի («Նաբուկո», «Տրանսադրիատիկ» և «Թուրքիա-Հունաստան-Իտալիա») տասնամյա քննարկումներից հետո Ադրբեջանի «Շահ-Դենիզ 2» հանքավայրը շահագործող կոնսորցիումը որոշում ընդունեց ադրբեջանական գազը Եվրոպա տեղափոխել TANAP\* և TAP գազամուղերի միջոցով<sup>22</sup>: Մասնավորապես՝ 2012 թ. հունիսի 26-ին Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը և Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանը ստորագրեցին Տրանսանատլիական գազամուղի կառուցման վերաբերյալ միջկառավարական համաձայնագիրը<sup>23</sup>:

Էներգակիրների մատակարարման ուղիների հարցում Ռուսաստանի և Արևուտքի միջև ընթացող պայքարի առավել ցայտուն արտացոլումն էր «Նաբուկո» և «Հարավային հոսք» նախագծերի մրցակցությունը, ինչից փորձում էր հնարավորինս օգտվել Թուրքիան: Այսպես, ԵՄ-ը «Նաբուկո» նախագծին տվեց TEN (*Trans-European Network*) կարգավիճակ, ինչը էապես հեշտացնում էր ֆինանսական ռեսուրսների հայթայթման վերաբերյալ բանակցությունները: Բացի այդ, ԵՄ-ի երկրները ճնշում էին գործադրում Թուրքիայի վրա, որպեսզի նա շարունակի աջակցություն ցուցաբերել ԵՄ-ի առաջ քաշած «Նաբուկո» գազամուղի նախագծին: Սակայն ֆինանսական և մի շարք այլ խնդիրների պատճառով այս նախագիծը դեռևս չի իրականացել:

<sup>21</sup> Տես *O. Okumus*, Russia Winner in Energy Transit Deal With Turkey. «ALMONITOR», 10.07.2013 (<http://www.al-monitor.com/pulse/fr/originals/2013/07/russia-turkey-energy-cooperation-south-stream.html>); Է. *ՈՒՆՈՒՄ*, Նշ. աշխ.:

\* Մոտ 2000 կմ երկարությամբ և ավելի քան 7 մլրդ դոլար արժողությամբ «Տրանսանատլիական» գազամուղն սկիզբ է առնելու Ադրբեջանի Շահ Դենիզ-2 հանքավայրից, սակայն Վրաստանի տարածքով հասնելու է Թուրքիա: Նախատեսվում էր, որ գազամուղի շինարարական աշխատանքներն սկսվելու են 2014 թ. և ավարտվելու են 2018 թ.: Ըստ նախագծի՝ գազամուղով տարեկան փոխադրվելու էր 16 մլրդ խորանարդ մետր գազ, որից 6 միլիարդը նախատեսված էր Թուրքիայի ներքին սպառման համար, իսկ 10 միլիարդը մատակարարվելու էր Եվրոպա (ավելի հանգամանորեն տես *M. T. Kilavuz, Ş. Yilmaz*, Restoring Brotherly Bonds: Turkish–Azerbaijani Energy Relations. *The Program on New Approaches to Research and Security in Eurasia*. Eurasia Policy Memo N 240. Washington, September 2012; *B. Тапнавский*. Новый газопровод TANAP: что будет с Nabucco и «потоками»? «Finforum», 19.01.2012 ([http://finforum.org/page/index.html/\\_/economics/novyy-gazoprovod-tanap-chtobudet-s-nabucco-i-quotpotokamiquot-r35372](http://finforum.org/page/index.html/_/economics/novyy-gazoprovod-tanap-chtobudet-s-nabucco-i-quotpotokamiquot-r35372)):

<sup>22</sup> Տես «Shah Deniz investment decision paves way for Southern Corridor gas link». 17 December 2013 (<http://www.bp.com/en/global/corporate/press/press-releases/shah-deniz-final-investment-decision-paves-way.html>):

<sup>23</sup> Տես «Turkey, Azerbaijan sign gas pipeline deal». «BusinessWeek», 26.06.2012 (<http://www.businessweek.com/ap/2012-06-26/turkey-azerbaijan-sign-gas-pipeline-deal>); *V. Socor*. Aliyev, Erdogan Sign Inter-Governmental Agreement on Trans-Anatolia Gas Pipeline to Europe. «Eurasia Daily Monitor», 27 June 2012, Vol. 9, Issue 122; «Turkey, Azerbaijan sign accord on \$7 bln gas pipeline». «REUTERS», 26.06.2012 (<http://www.reuters.com/article/2012/06/26/turkey-azerbaijan-gas-idUSL6E8HQ97220120626>):

Էներգետիկայի ոլորտում թուրք-ռուսական մրցակցությանը զուգահեռաբար շարունակվում էր երկու պետությունների միջև աշխարհաքաղաքական մրցակցությունը: Նրանց հարաբերություններում եղած լարվածությունը հիմնականում պայմանավորված էր Ռուսաստանի կողմից Ղրիմի միակցման և ՌԻկրախնայի հարավ-արևելքում տեղի ունեցող քաղաքական ու ռազմական իրադարձությունների նկատմամբ Թուրքիայի ունեցած դիրքորոշմամբ: Թուրքիան հատկապես ցավագին ընդունեց Ղրիմի միացումը: Թուրքական իշխանությունները, Ղրիմի թաթարներին համարելով ցեղակիցներ և հանդես գալով որպես նրանց իրավունքների պաշտպան, բարձր մակարդակով հայտարարեցին, թե Ղրիմը տեսնում են միայն ՌԻկրախնայի կազմում, իսկ թերակղզու անցումը Ռուսաստանին գնահատում են որպես ոչ օրինական ձեռնարկում, քանի որ համարում են, որ ՌԻկրախնայի կազմում Ղրիմի թաթարների իրավունքները կլինեն ավելի պաշտպանված<sup>24</sup>: Այսպես. պատահական չէ, որ Ղրիմում անցկացված հանրաքվեի հաջորդ օրը Էրդողանը հայտարարեց. «Եթե ՆԱՏՕ-ի շրջանակներում Ղրիմում տեղի ունեցած հանրաքվեի հարցով որևէ որոշում ընդունվի, Թուրքիան, անկասկած, կմիանա դրան»<sup>25</sup>:

Թեև Թուրքիան հանդես էր գալիս ՌԻկրախնայի տարածքային ամբողջականության և «Ղրիմի թաթարների իրավունքների ու անվտանգության պաշտպանության օգտին, սակայն Ղրիմի ճգնաժամի և ՌԻկրախնայի քաղաքական ցնցումների վերաբերյալ Ռուսաստանի հասցեին Թուրքիայի հնչեցրած քննադատությունը այնքան էլ սուր չէր<sup>26</sup>: Բացի այդ, Թուրքիան չմիացավ Ղրիմի և ՌԻկրախնայում ընթացող մարտերի կապակցությամբ Ռուսաստանի դեմ ԱՄՆ-ի և ԵՄ-ի կիրառած տնտեսական պատժամիջոցներին, քանի որ թուրք-ռուսաստանյան տնտեսական հարաբերությունները մեծ նշանակություն ունեն իր համար<sup>27</sup>:

Թուրք-ռուսաստանյան հարաբերություններում կարևոր խոչընդոտներից է սիրիական հակամարտության նկատմամբ Թուրքիայի և Ռուսաստանի դիրքորոշումների ներհակությունը: Այդ հակամարտության սկզբից ևեթ Ռուսաստանը հայտնեց իր անվերապահ աջակցությունը գործող Նախագահ Ասադին՝ նրան դիտելով որպես Սիրիայի լեգիտիմ ղեկավարի: Մինչդեռ Թուրքիան Սիրիայի հակամարտության ծագման օրվանից վարում է հստակ հակասաստիական քաղաքականություն՝ մեծապես աջակցելով Ասադի դեմ պայքարող ուժերին, այդ թվում՝ «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորմանը, ինչպես նաև պաշտոն-

<sup>24</sup> Տես *Գ. Պերրոյան*, Ռուս-թուրքական տնտեսական շահերը ստվերում են առկա տարածայնությունները: «Թուրքագիտական պորտալ», 09.12.2014 (<http://allturkey.am/10961/%D5%BA%D5%B8%D6%82%D5%BF%D5%AB%D5%B6%D5%AB>):

<sup>25</sup> Տես «No: 86, 17 Mart 2014, Kırım'da Düzenlenen Referandum Hk.» ([http://www.mfa.gov.tr/no\\_-86\\_-17-mart-2014\\_-kirim\\_da-duzenlenen-referandum-hk.tr.mfa](http://www.mfa.gov.tr/no_-86_-17-mart-2014_-kirim_da-duzenlenen-referandum-hk.tr.mfa)):

<sup>26</sup> Տես *Н. Белякова*. Крым и российско-турецкие отношения. «Обозреватель», 2015, № 1 (300):

<sup>27</sup> Տես *S. Demirtaş*. Türkiye, Kırım'da Rusya ile ilişkilerini riske atmayacak. «BBC TÜRKÇE», 15.03.2014 ([www.bbc.co.uk/turkce/haberler/2014/03/140315\\_kirim\\_turkiye.shtml](http://www.bbc.co.uk/turkce/haberler/2014/03/140315_kirim_turkiye.shtml)):

նական Գամասկոսի դեմ մղելով դիվանագիտական ու քարոզչական պայքար<sup>28</sup>:

Ի պատասխան Սիրիայի Նախագահ Ասադի պաշտոնական խնդրանքի՝ ՌԳ Գաշնային խորհուրդը 2015 թ. սեպտեմբերի 30-ին Նախագահ Պուտինին տվեց համաձայնություն՝ Ռուսաստանի Գաշնության Զինված ուժերը Սիրիայում կիրառելու հարցում<sup>29</sup>: Սիրիական հակամարտությունում Ռուսաստանի ակտիվ ներգրավումը և Ասադին ցույց տրվող ռազմական աջակցությունը էլ ավելի սրեցին թուրք-ռուսաստանյան հարաբերությունները: Ահաբեկիչների դեմ պայքարին Ռուսաստանի միջամտությունը, մեղմ ասած, անհանգստացնում էր Անկարային: Երկկողմ հարաբերություններում խորացող ճգնաժամն իր գագաթնակետին հասավ 2015 թ. նոյեմբերի 24-ին, երբ Սիրիայում՝ Թուրքիայի հետ սահմանին, թուրքական ռազմաօդային ուժերը խցեցին ռուսաստանյան Սու-24 ռմբակոծիչը, ինչն էլ հանգեցրեց հարաբերությունների կտրուկ վատթարացմանը<sup>30</sup>:

Իր ռմբակոծիչ ոչնչացումը Ռուսաստանն ընկալեց որպես լուրջ մարտահրավեր, ուստի պատասխան քայլերը չուշացան: Նախագահ Վ. Պուտինն ստորագրեց Թուրքիայի դեմ տնտեսական պատժամիջոցներ սահմանող հրամանագիր<sup>31</sup>, իսկ ՌԳ պաշտպանության նախարարությունը հանդես եկավ պաշտպանության գծով Թուրքիայի հետ շփումների դադարեցման մասին հայտարարությամբ և Սիրիայում տեղակայեց Ս-300 և Ս-400 հակաօդային զենիթահրթիռային համալիրներ<sup>32</sup>: Բացի այդ, ՌԳ զբոսաշրջության դաշնային գործակալությունը զբոսաշրջային գործակալություններին «խորհուրդ տվեց» դադարեցնել զբոսաշրջային արտադրանքի կամ առանձին տուրիստական ծառայությունների վաճառքը Թուրքիայում, իսկ 2016 թ. հունվարի 1-ին Ռուսաստանը դադարեցրեց Թուրքիայի հետ առանց վիզայի ռեժիմի մասին համաձայնագրի գործողությունը<sup>33</sup>: ՌԳ Պետական դումայում Ս. Սիրոնովի և Ն. Լևիչևի նախաձեռնությամբ

<sup>28</sup> Stu P. S. Brooker. Russia vs. Turkey: Competition For Influence, 12.12.2015 (<http://www.valuewalk.com/2015/12/russia-vs-turkey-competition-for-influence/>):

<sup>29</sup> Stu «Совет Федерации разрешил использование российских войск в Сирии». «LENTA.RU», 30.09.2015 (<https://lenta.ru/news/2015/09/30/za/>):

<sup>30</sup> Stu П. Скоробогатый. В Сирии сбит российский бомбардировщик. «ЭКСПЕРТ ONLINE», 24.11.2015 (<http://expert.ru/2015/11/24/turetskie-pvo-sbili-voennyij-samolet/>); K. Shaheen, Sh. Walker, J. Berger, D. Smith. Putin condemns Turkey after Russian warplane downed near Syria border. «theguardian», 24.11.2015 (<https://www.theguardian.com/world/2015/nov/24/turkey-shoots-down-jet-near-border-with-syria>):

<sup>31</sup> Stu «Владимир Путин подписал указ о введении санкций против Турции». «Известия», 28.12.2015 (<http://izvestia.ru/news/597508>); «Путин подписал новый указ о санкциях против Турции». «LENTA.RU», 28.12.2015 (<https://lenta.ru/news/2015/12/28/measures/>):

<sup>32</sup> Stu А. Асальюглу. Новая страница в отношениях с Москвой. «РОССИЯ В ГЛОБАЛЬНОЙ ПОЛИТИКЕ», 04.12.2015 (<http://www.globalaffairs.ru/global-processes/Novaya-stranica-v-otnosheniyakh-s-Moskvoi-17860>); «Russian S-400 Missile Defense System Deployed in Syria». «Sputnik International», 26.11.2015 (<http://sputniknews.com/middleeast/20151126/1030782946/s-400-syria-russia.html>):

<sup>33</sup> Stu «Не нужен нам берег турецкий: туркомпании РФ прекращают продажу путевок». «РИА НОВОСТИ», 24.11.2015 (<http://ria.ru/society/20151124/1327769565.html>); «Россия приостановила безвизовый режим с Турцией». ИА «ГОРОД НОВОСТЕЙ», 01.01.2016 (<http://www.city-n.ru/view/371252.html>):

շրջանառության մեջ դրվեց Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը<sup>34</sup>:

Թուրք-ռուսաստանյան հարաբերությունների վատթարացման հետևանքով Ռուսաստանի և Թուրքիայի միջև ապրանքաշրջանառությունը, որը 2014 թ. կազմել էր մոտ 30 մլրդ դոլար, 2015 թ.՝ 23 մլրդ դոլար, 2016 թ. առաջին չորս ամիսներին էապես նվազեց՝ կազմելով ընդամենը 4,8 մլրդ դոլար<sup>35</sup>: Հատկանշական է, որ 2015 թ. դեկտեմբերին Թուրքիայի փոխվարչապետ Մ. Շիմշեքը հայտարարել էր, որ ռուսական պատժամիջոցներից թուրքական տնտեսությանը հասցված վնասները կարժենան մոտ 9 մլրդ դոլար (Թուրքիայի ՀՆԱ-ի 0,4 տոկոսը)<sup>36</sup>, իսկ Թուրքիայում Ռ-Դ դեսպան Ա. Կառլովի կարծիքով՝ 2016 թ. Թուրքիայի վնասները կարող են գերազանցել 11 մլրդ դոլարը<sup>37</sup>:

Թուրք-ռուսաստանյան հարաբերություններում ծագած խոր ճգնաժամն իր աշխարհաքաղաքական ազդեցությունն ունեցավ մաս Հարավային Կովկասի վրա: Այս առումով հիշատակության է արժանի այն հանգամանքը, որ Հայաստանը որպես Ադրբեջանի սանձազերծած Չորսօրյա պատերազմի գլխավոր սադրիչ ուժ իրավացիորեն մատնանշեց Թուրքիային, որի ներգրավվածությունն Ադրբեջանի գործողություններում դրսևորվեց ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ձևով<sup>38</sup>: Այսպես. ՀՀ Նախագահ, ՉՈՒ-ի Գերագույն գլխավոր հրամանատար Մ. Սարգսյանը ապրիլի 4-ին ԵԱՀԿ անդամ պետությունների դեսպանների հետ հանդիպման ժամանակ հստակ կերպով բացահայտեց այդ պատերազմում Թուրքիայի խաղացած խիստ բացասական դերը<sup>39</sup>: Մի շարք առաջատար հայ թուրքագետներ-

<sup>34</sup> Տես «В Госдуме предложили лишать свободы за отрицание геноцида армян Турцией». «РБК», 25.11.2015 (<http://www.rbc.ru/politics/25/11/2015/5655c71d9a7947c9b6093241>):

<sup>35</sup> Տես «Товарооборот России с Турцией в 2015 году сократился почти на четверть». «Интерфакс», 09.02.2016 (<http://www.interfax.ru/business/493872>); Я. Милюкова, П. Химшишвили, А. Левинская, Т. Дзядко. Семь месяцев в споре: сколько Россия и Турция потеряли на конфликте. «РБК», 27.06.2016 (<http://www.rbc.ru/economics/28/06/2016/577157b89a7947239346aba3>):

<sup>36</sup> Տես «Turkish economy risks losing \$9 billion over Russia crisis: Deputy PM». «Hurriyet Daily News», 07.12.2015 (<http://www.hurriyetaidailynews.com/turkish-economy-risks-losing-9-billion-over-russia-crisis-deputy-pm.aspx?pageID=238&nID=92187&NewsCatID=344>):

<sup>37</sup> Տես А. Васильев. Посол РФ: Потери Турции могут достичь 11 миллиардов долларов. «Российская Газета», 09.02.2016 (<https://rg.ru/2016/02/09/posol-rf-poteri-turcii-mogut-dostich-11-milliardov-dollarov.html>):

<sup>38</sup> Այդ մասին ավելի հանգամանորեն տես Ա. Հովսեփյան, Վարաբաղյան քառօրյա պատերազմն ու թուրքական հաշվարկները: «armedia», 11.04.2016 (<http://armedia.am/arm/news/32516/xarabaxyan-qarorya-paterazmn-u-turqakan-hashvarknery.html>); «Армения обвинила Турцию в «поддержке агрессии» Азербайджана в Карабахе». «РБК», 03.04.2016 (<http://www.rbc.ru/politics/03/04/2016/57010b359a79471b28044379>):

<sup>39</sup> Տես «Նախագահը հանդիպում է ունեցել ԵԱՀԿ անդամ երկրների դեսպանների հետ», 04.04.2016 (<http://www.president.am/hy/press-release/item/2016/04/04/President-Serzh-Sargsyan-meeting-with-Ambassadors-of-OSCE-states/>):

րի կարծիքով՝ Էրդողանի կողմից Չորսորյա պատերազմի հրահրումը կարելի է բացատրել Թուրքիայում ստեղծված ներքաղաքական իրադրությամբ, որի պայմաններում Էրդողանին անհրաժեշտ էր թուրք ազգայնականների աջակցությունը, որին նա փորձում էր հասնել պատերազմող Ադրբեջանին սատարելու միջոցով:

Մյուս հնարավոր բացատրությունը առաջ է քաշում պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը, ըստ որի՝ Ի. Ալիևի և ադրբեջանական քաղաքական ու զինվորական վերնախավի նպատակն է Արցախի գրավումը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերացումը, այդ պատմական հայկական տարածքի վրա ադրբեջանական զաղութային տիրապետության վերականգնումը և մի «նոր Սումգաիթի» իրագործումը: Դա լինելու է, մի կողմից, պանթուրքականության երազանքների իրագործման ճանապարհին մեծ օգնություն Թուրքիային ու նրա կայսերական նկրտումներին, և, մյուս կողմից, կոչված է թուլացնելու Հայաստանն ու Հարավային Կովկասում ու մերձավորարևելյան տարածաշրջանում հայության դիրքերը: Դա արմատապես կփոխի իրադրությունը Ռուսաստանի Գաշնության մաս կազմող Հյուսիսային Կովկասում՝ ի վնաս Ռուսաստանի<sup>40</sup>: Իսկ ռուս ականավոր հրապարակախոս ու վերլուծաբան Ե. Տինյանսկին, անդրադառնալով ադրբեջանական ազդեցության, հետևյալ պարզաբանումն էր կատարել. «Վերջին իրադարձությունները ցույց տվեցին, թե ով՝ ով է միջազգային ասպարեզում: Ադրբեջանը և Թուրքիան շարունակում են հավատարիմ մնալ իրենց համար անցանկալիների ոչնչացման քաղաքականությանը, իսկ Հայաստանը և Արցախը կանգնած են տարածաշրջանում թուրքական արշավանքների դեմ»<sup>41</sup>:

Ըստ Եվրոպական խորհրդի միջազգային հարաբերությունների գծով փորձագետ Ա. Այդնթաշբաշի՝ Էրդողանը հայտնվել է դիվանագիտական առումով մեկուսի վիճակում, քանի որ նրա «զրո խնդիր հարևանների հետ» հանրահայտ քաղաքականությունը ձախողվել է<sup>42</sup>:

Ելնելով ստեղծված իրավիճակից և Թուրքիայի առջև ծառայած լուրջ մարտահրավերներից՝ Թուրքիայի Նախագահ Ռ. Էրդողանը 2016 թ. հունիսի 27-ին նամակ է հղել Ռուսաստանի Նախագահ Վ. Պուտինին, որում ներողություն է խնդրում «Սու-24» ռմբակոծչի կործանման համար<sup>43</sup>:

Այսպիսով՝ Թուրքիան հարկադրված էր հնարավորինս արագ կարգավորել թուրք-ռուսաստանյան հարաբերությունները: Մեր կարծիքով՝ տվյալ ժամանակահատվածում Էրդողանի կողմից ներողություն խնդրելու հիմնական դրոպապատճառներն են ռուսաստանյան պատժամիջոցների հետևանքները, երկրում առկա

<sup>40</sup> Տես Ն. Հովհաննիսյան, Ղարաբաղյան քառօրյա պատերազմը: «Ազգ» օրաթերթ, 22.04.2016 (<http://www.azg.am/AM/2016041503>):

<sup>41</sup> Տես նույն տեղում:

<sup>42</sup> Տես S. Tavernise. Seeking to Improve Ties With Russia, Turkey Apologizes for Downing Warplane. «The New York Times», 27.06.2016 ([http://www.nytimes.com/2016/06/28/world/europe/russia-turkey-erdogan-putin.html?\\_r=0](http://www.nytimes.com/2016/06/28/world/europe/russia-turkey-erdogan-putin.html?_r=0)):

<sup>43</sup> Տես S. Kravchenko. Kremlin Says Erdogan Apologized for Turkey Shooting Down Jet. «Bloomberg», 27.06.2016 (<http://www.bloomberg.com/news/articles/2016-06-27/kremlin-says-erdogan-apologized-for-turkey-shooting-down-bomber>):

քաղաքական ու տնտեսական բարդ իրավիճակը, ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ Թուրքիայի հարաբերությունների վատթարացումը, ինչպես նաև Իսրայելի հետ վեց տարվա դիվանագիտական մրցակցությունից հետո հաշտեցման գործընթացները, «նոր-օսմանականության էլֆորիայի» ավարտը, ՌԻկրահիայի շնորհիվ Սև ծովում Ռուսաստանին այլընտրանք ստեղծելու փորձի լիակատար ձախողումը:

Այսպիսով՝ 2016 թ. հունիսի 27-ին Ռուսաստանի Նախագահ Վ. Պուտինին Թուրքիայի Նախագահ Ռ. Թ. Էրդողանի հղած ուղերձի միջոցով մեկնարկեց Անկարայի և Մոսկվայի միջև հաշտեցման գործընթացը: Այն ամրագրվեց երկու պետությունների առաջնորդների հեռախոսազրույցով, որը ռուսական կողմի նախաձեռնությամբ կայացավ 2016 թ. հունիսի 29-ին: Այդ գրույցից հետո Վ. Պուտինը ՌԴ վարչապետին հանձնարարեց անմիջապես ձեռնամուխ լինել երկկողմ տնտեսական հարաբերությունների վերականգնմանը<sup>44</sup>: Թուրք-ռուսաստանյան հարաբերություններում ընդամենը 7 ամիս տևած քաղաքական ու տնտեսական ճգնաժամից հետո մեկնարկեց հարաբերությունների կարգավորման գործընթացը, ինչը կանխատեսելի էր հատկապես երկու պետությունների համար ներկայիս բավական բարդ աշխարհաքաղաքական ու տնտեսական իրավիճակի հաշվառմամբ:

Դրան գումարվեց Թուրքիայում 2016 թ. հուլիսի 15-ի լույս 16-ի գիշերը իրագործված հեղաշրջման ձախողված փորձը, որն զգալի արձագանք ունեցավ ոչ միայն պետության մեջ, այլև միջազգային ասպարեզում:

Նախագահ Ռ. Էրդողանի կոշտ պատասխանը (անգամ՝ մահապատիժը վերականգնելու պահանջով) առաջ բերեց Արևմուտքի բացասական վերաբերմունքը<sup>45</sup>: Դրան գումարվեցին ևս մի քանի հանգամանք: Այսպես, ԱՄՆ-ի հետ Քրդական հարցում եղած որոշակի տարածայնությունները խորացան այն պատճառով, որ Էրդողանը հեղաշրջման ոգեշնչող է համարում ԱՄՆ-ում բնակվող մահմեդական քարոզիչ Ֆաթուլլահ Գյուլենին (որը, ի դեպ, ժխտում է իր մասնակցությունը) և պահանջում է նրան հանձնել Թուրքիային: ԵՄ-ի հետ հարաբերությունների լարմանը մեծապես նպաստում է նաև Մերձավոր Արևելքից գաղթականների հոսքը դեպի Եվրոպա: Անգամ հարց էր ծագել, թե արդյոք ձախողված հեղաշրջման հետևանքով տեղի չի ունենա Մոսկվայի և Անկարայի միջև մերձեցում: Ընդամենը որպես հեղաշրջման փորձի պատճառներից մեկը նշվում էր գյուլենականների ու որոշ զինվորականների դժգոհությունը այն բանից, որ Ռ. Էրդողանը ինքնաթիռը կործանելու համար ներողություն է խնդրել Վ. Պուտինից<sup>46</sup>:

<sup>44</sup> Տես *E. Фохт*. Путин поручил начать переговоры с Турцией о возобновлении сотрудничества. «РБК», 29.06.2016 ([http://www.rbc.ru/politics/29/06/2016/5773af6e9a79474d2050e35f#xtor=AL-\[internal\\_traffic\]-\[rss.rbc.ru\]-\[top\\_stories\]](http://www.rbc.ru/politics/29/06/2016/5773af6e9a79474d2050e35f#xtor=AL-[internal_traffic]-[rss.rbc.ru]-[top_stories])); *K. Hille, L. Pitel*. Russia and Turkey seek to repair ties after Putin and Erdogan phone call. «FINANCIAL TIMES», 29.06.2016 (<https://next.ft.com/content/210057f2-3df6-11e6-8716-a4a71e8140b0>):

<sup>45</sup> Տես «Turkey coup attempt: World leaders warn President Erdogan not to use uprising as excuse for crackdown as more than 6,000 arrested». «The Telegraph» (<http://www.telegraph.co.uk/news/2016/07/17/turkey-coup-plot-president-erdogan-rounds-up-thousands-of-soldie/>):

<sup>46</sup> Տես *Израэль Шамир*. Итоги переворота в Турции: теперь Москва и Анкара станут ближе? «Комсомольская правда», 18 июля 2016 г. (<http://www.kp.ru/daily/26555/3572192/>):

Նոր աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում առանձնահատուկ ուշադրության են արժանի 2016 թ. օգոստոսի 8–10-ը տեղի ունեցած իրադարձությունները. 2016 թ. օգոստոսի 8-ին կայացան ՌԳ- Նախագահ Վ. Պուտինի այցը Բաքու և Ռուսաստանի, Իրանի ու Ադրբեջանի միջև եռակողմ բանակցությունները<sup>47</sup>: Հաջորդ օրը՝ օգոստոսի 9-ին, Վ. Պուտինը Սանկտ Պետերբուրգում հանդիպեց Թուրքիայի Նախագահ Ռ. Թ. Էրդողանի հետ<sup>48</sup>, իսկ օգոստոսի 10-ին Մոսկվայում ընդունեց Հայաստանի Նախագահ Ս. Սարգսյանին<sup>49</sup>:

Մեր կարծիքով՝ այս իրադարձություններն ուղղակի կամ անուղղակի կերպով առնչվում են Ղարաբաղյան հակամարտությանը:

Ռուսաստանի, Իրանի և Ադրբեջանի նախագահների միջև Բաքվում կայացած եռակողմ բանակցություններում Ղարաբաղյան հակամարտությունը, անշուշտ, չի եղել հանդիպման օրակարգի առաջնային հարցերից մեկը: Սակայն ակնհայտ է, որ Ադրբեջանը պետք է ջանքեր գործադրեր այս բարձր մակարդակի հանդիպումից Ղարաբաղյան հարցում օգուտներ քաղելու համար: Սակայն ՌԳ- Նախագահի արած հայտարարությունից և հանդիպման ամփոփիչ արձանագրությունից կարելի է ենթադրել, որ Ալիևին չի հաջողվել բավարարել իր ակնկալիքները: Վ. Պուտինը շեշտեց երկու կողմերի համար ընդունելի և առանց հաղթողների ու պարտվողների կարգավորման կարևորությունը, իսկ ամփոփիչ փաստաթուղթը որևէ կերպ չկարևորեց Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը<sup>50</sup>:

Ռուսաստանի և Թուրքիայի նախագահների օգոստոսի 9-ի հանդիպման արդյունքներով Վ. Պուտինն ու Ռ. Թ. Էրդողանը հայտարարեցին բոլոր ուղղություններով համագործակցությունը վերականգնելու և Սիրիայի հարցում փոխզիջումների որոնումներով զբաղվելու պատրաստակամության մասին: Այս հանդիպումը անհանգստություն էր առաջացրել Արևմուտքում, քանի, որ Ռ. Թ. Էրդողանը ռազմական հեղաշրջման փորձից հետո բանակցություններ էր վարում ոչ թե ՆԱՏՕ-ի իր դաշնակիցների, այլ Ռուսաստանի Գաշնության Նախագահի հետ<sup>51</sup>:

<sup>47</sup> Տես «Трёхсторонняя встреча глав Азербайджана, Ирана и России», 08.08.2016, (<http://kremlin.ru/events/president/news/52666>); S. Winer. Leaders of Russia, Iran, Azerbaijan discuss closer ties. «THE TIMES OF ISRAEL», 09.08.2016 (<http://www.timesofisrael.com/leaders-of-russia-iran-azerbaijan-discuss-closer-ties/>):

<sup>48</sup> Տես *И. Крючков, М. Баранова, А. Топалов*. Снова вместе, снова рядом. Путин и Эрдоган встретились после кризиса российско-турецких отношений. «газета.ru», 09.08.2016 ([http://www.gazeta.ru/politics/2016/08/09\\_a\\_10113209.shtml](http://www.gazeta.ru/politics/2016/08/09_a_10113209.shtml)):

<sup>49</sup> Տես «Մոսկվայում կայացել են հայ-ռուսական բարձր մակարդակի բանակցությունները», 10.08.2016 (<http://www.president.am/hy/press-release/item/2016/08/10/President-Serzh-Sargsyan-meeting-with-Vladimir-Putin-10-08/>); *Н. Киракосян, А. Братерский, А. Атасунцев*. Серж Саргсян приехал за статусом. Серж Саргсян провел переговоры с Владимиром Путиным. «газета.ru», 10.08.2016 ([https://www.gazeta.ru/politics/2016/08/10\\_a\\_10115801.shtml](https://www.gazeta.ru/politics/2016/08/10_a_10115801.shtml)):

<sup>50</sup> Տես «Встреча с Президентом Азербайджана Ильхамом Алиевым», 08.08.2016 (<http://www.kremlin.ru/events/president/transcripts/deliberations/52663>):

<sup>51</sup> Տես *N. MacFarquhar*. Russia and Turkey Vow to Repair Ties as West Watches Nervously. «The New York Times», 09.08.2016 (<http://www.nytimes.com/2016/08/10/world/europe/putin-erdogan-russia-turkey.html>):

Թեև Սանկտ Պետերբուրգում կայացած բանակցություններում առաջին պլանում տնտեսական համագործակցությունն էր, սակայն դժվար չէ գուշակել, որ Ղարաբաղյան հակամարտությունն ամենևին էլ օրակարգի վերջին հարցերից չի եղել: ՌԻստի պատահական չէր, որ ռուս-թուրքական մերձեցման պայմաններում Թուրքիայի ԱԳ նախարարը հայտարարեց, թե Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում Թուրքիան կանի իրենից սպասվելիքը<sup>52</sup>:

Մոսկվայում ՀՀ և ՌԳ նախագահների հանդիպման արդյունքներն ամփոփող մամուլի ասուլիսում ամրագրվեցին մի քանի կարևոր հանգամանքներ. Ռուսաստանը չի փորձելու պաշտպանել հակամարտության կողմերից որևէ մեկին, այլ ջանքեր է գործադրելու, որպեսզի կողմերը հասնեն միմյանց համար ընդունելի լուծման: Բացառվելու են լուծումները, որոնց դեպքում կողմերից մեկն իրեն պարտաված կզգա, իսկ մյուսը՝ հաղթած: Սա նշանակում է, որ միակողմանի և չհիմնավորված զիջումներ լինել չեն կարող: Իր խոսքում դա նշեց նաև ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը<sup>53</sup>: ՌԻստի Հայաստանի դիրքորոշումը որևէ փոփոխություն չի կրել:

Այսպիսով՝ Թուրքիան և Ռուսաստանը կարևոր գործընկերներ են էներգետիկ ոլորտում, սակայն՝ լուրջ մրցակիցներ Հարավային Կովկասում, Կենտրոնական Ասիայում, Մերձավոր Արևելքում և Բալկաններում: Ընդ որում, տարածաշրջանային և համաշխարհային քաղաքական պրոբլեմներում այդ պետությունների դիրքորոշումների մերձեցմանը խոչընդոտող հիմնական գործոնը ԱՄՆ-ի հետ Թուրքիայի դաշնակցային հարաբերություններն են ու ՆԱՏՕ-ի անդամ լինելը<sup>54</sup>:

<sup>52</sup> Տես *А. Каранетян*. Региональное развитие и карабахский конфликт. «ИНОСМИ.РУ», 15.08.2016 (<http://inosmi.ru/politic/20160815/237545750.html>):

<sup>53</sup> Տես նույն տեղում:

<sup>54</sup> Տես *А. В. Федорченко*. Россия – Турция: преодолевая экономические и политические противоречия. «Российско-турецкие отношения: 2002–2012 гг. ...», сс. 144–147:

## МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ

### ТУРЕЦКО-РОССИЙСКИЕ ОТНОШЕНИЯ В 2002–2016 ГГ. В КОНТЕКСТЕ ПОЛИТИКИ, ПРОВОДИМОЙ ТУРЦИЕЙ НА ЮЖНОМ КАВКАЗЕ

*Г. М. АРШАКЯН, кандидат исторических наук, доцент, начальник Управления репатриации и исследований аппарата Министерства Диаспоры РА*

#### РЕЗЮМЕ

В турецко-российских отношениях значительный перелом в направлении сближения и развития сотрудничества наметился в 2002 г. – с приходом к власти в Турции партии «Справедливость и развитие». Динамика этих отношений за период 2002–2016 гг. свидетельствует о том, что они, в основном, характеризуются стремлением к углублению сотрудничества в

области экономики, в первую очередь – энергетических ресурсов, при сохранении геополитической конкуренции, в особенности – на Ближнем Востоке, в частности – на Южном Кавказе, и в Центральной Азии, где Турция пытается выступать в роли регионального гегемона. Одной из наиболее весомых причин сохранения политического соперничества являются активное членство Турции в НАТО и ее союзнические отношения с США.

## INTERNATIONAL RELATIONS

### THE TURKISH – RUSSIAN RELATIONS IN 2002–2016 IN THE CONTEXT OF THE POLICY ADOPTED BY TURKEY IN THE SOUTH CAUCASUS

*G. M. ARSHAKYAN, PhD in History, Associate Professor, Head, Department  
of Repatriation and Investigations, Staff of the Ministry of Diaspora  
of the Republic of Armenia*

#### SUMMARY

In 2002 there was a significant change in the Turkish–Russian relations towards closer relations and development of cooperation noticed – with the rise of the Justice and Development Party (AKP) to power in Turkey. The dynamics of these relations for 2002–2016 shows that they are mainly characterized by the desire to deepen the cooperation in the sphere of economy, first of all concerning energy resources, with the maintenance of the geopolitical competition, especially in the Middle East, particularly in the South Caucasus, and Central Asia, where Turkey is trying to act as a regional hegemon. One of the most significant reasons for maintaining political rivalry are Turkey’s active membership in NATO and its alliance with the United States.

**ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ  
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄՈԳԵԼԱՎՈՐՈՒՄԸ  
ՄԵԾ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

*Ա. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Տեղեկատվական-  
հաղորդակցային տեխնոլոգիաների և ազգային անվտանգության  
քաղաքականության կենտրոնի պետ*



Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների բուռն զարգացումը հանգեցնում է տեղեկութակենտրոն հասարակության ձևավորմանը, ինչն ուղեկցվում է ինչպես մի շարք միանգամայն նոր հնարավորությունների ստեղծմամբ, այնպես էլ տարաբնույթ կիբեռսպառնալիքների առաջացմամբ: Կիբեռսպառնալիքների առաջացման պատճառները կարող են լինել օբյեկտիվ (աշխատանքային՝ կրելով պատահական բնույթ) և սուբյեկտիվ (կանխամտածված)՝ առաջ բերելով կիբեռանվտանգության խախտումներ և վնասելով տեղեկատվական համակարգերը:

Կազմակերպության, այդ թվում՝ պետության պաշտպանական-անվտանգային ոլորտում գործող կառույցի, տեղեկատվական համակարգերի դեմ ուղղված կիբեռսպառնալիքները տարբերվում են ոչ միայն իրենց ձևով, այլև վնասակարության աստիճանով և կարող են զգալի չափով խաթարել պետության անվտանգության ապահովման համակարգի պաշտպանական, քաղաքական, ֆինանսատնտեսական, տեղեկատվական և այլ բաղադրիչների արդյունավետ գործունեությունը: Ռիստի կիբեռսպառնալիքների բարդ և պատահական (ստոխաստիկ) բնույթի, ինչպես նաև կազմակերպության տեղեկատվական համակարգերի վրա դրանց հնարավոր բացասական ազդեցության հաշվառմամբ հատկապես կարևոր է դառնում տվյալ ոլորտում ճիշտ ներդրումների կատարումը<sup>1</sup>:

Կիբեռանվտանգության ոլորտում կազմակերպության ներդրումային որոշումներն ունեն երեք հատկանիշներ: Առաջին. հնարավոր սպառնալիքներից բխող միջավայրը անորոշ է: Երկրորդ. կիբեռանվտանգության ոլորտում կատարված ներդրումներն ամբողջությամբ անվերադարձելի են: Երրորդ. կարևոր նշանակություն ունի ներդրում կատարելու որոշման կայացման պատեհաժամությունը<sup>2</sup>:

<sup>1</sup> Stu L. A. Gordon, M. P. Loeb. Managing Cybersecurity Resources: A Cost-Benefit Analysis. The McGraw-Hill Homeland Security Series, 2006, P. 224 p; նուև՝ L. A. Gordon, M. P. Loeb. The Economics of Information Security Investment, «ACM Transactions on Information and System Security («TISSEC»)», November 2002, Vol. 5, N 4:

<sup>2</sup> Stu L. Demetz, D. Bachlechner. To Invest or Not to Invest? Assessing the Economic viability of a Policy and Security Configuration Management Tool. «The Economics of

Ըստ այդմ ուսումնասիրենք այն դեպքը, երբ կազմակերպությունը պետք է որոշում կայացնի կիրեռանվտանգության ոլորտում ներդրում կատարելու վերաբերյալ: Ենթադրենք, թե առաջին փուլում անորոշություն չկա<sup>3</sup>, և կիրեռանվտանգության ոլորտում ներդրումից ստացված եկամուտը  $B_0$  է, իսկ երկրորդ փուլում անորոշություն կա, ընդամենը  $B_1$ -ով նշանակենք երկրորդ փուլում ստացվող եկամուտը, որը աճման դեպքում կլինի  $B_u$ , իսկ նվազման դեպքում՝  $B_d$ <sup>4</sup>: Դիտարկենք ներդրումների մոդելավորման երկփուլ մոդելը:

Ներդրման արժեքը (ծախսը) նշանակենք  $z$ -ով: Դիցուք՝  $B_d < z < B_u$ , և կազմակերպությունն ունի հնարավորություն ներդրում կատարելու կամ առաջին, կամ երկրորդ փուլում:  $q_u$ -ով նշանակենք երկրորդ փուլում եկամտի աճման հավանականությունը, իսկ  $r$ -ով՝ տոկոսադրույքը: Ընդամենը առաջին փուլում ներդրում կատարելու դեպքում կազմակերպության սպասվելիք դիսկոնտավորված եկամտի հոսքը կլինի՝

$$(B_0 - z) + \frac{1}{1+r}(q_u B_u + (1 - q_u) B_d), \quad (1)$$

մինչդեռ ներդրումը մինչև երկրորդ փուլ հետաձգելու դեպքում սպասվելիք դիսկոնտավորված եկամտի հոսքը կլինի՝

$$\frac{q_u}{1+r}(B_u - z): \quad (2)$$

Քանի որ երկրորդ փուլում ստացվող եկամուտը աճման դեպքում հավասար է  $(B_u - z)$ -ի, իսկ նվազման դեպքում՝ 0-ի, ապա կազմակերպությունը ամենայն հավանականությամբ եկամտի նվազման դեպքում չի ցանկանա ներդրում կատարել, քանի որ տեղի ունի  $B_d < z$  պայմանը: Այս դեպքում կազմակերպությունը ներդրում կատարելու օպտիմալ ժամանակը որոշելու համար կհամեմատի 1-ին և 2-րդ արտահայտությունները:

$$\begin{aligned} (B_0 - z) + \frac{1}{1+r}(q_u B_u + (1 - q_u) B_d) - \frac{q_u}{1+r}(B_u - z) = \\ = B_0 - (1 - \frac{q_u}{1+r})z + \frac{1}{1+r}(1 - q_u) B_d < 0: \end{aligned} \quad (3)$$

Եթե այս բանաձևը ճիշտ է, ապա լավագույն ռազմավարությունը կիրեռանվտանգության ոլորտում ներդրում կատարելու հետաձգումն է: Հակառակ դեպքում պետք էր ներդրում կատարել առաջին փուլում: Այսինքն՝ եթե 3-րդ բանաձևը ճիշտ է, ապա առաջին փուլում կատարվող ներդրման արժեքը կստանանք 2-րդ բանաձևով, հակառակ դեպքում՝ 1-ին բանաձևով:

Այնուամենայնիվ, իրականում քիչ հավանական է, որ կազմակերպությունը

Information Security and Privacy». Ed. by Rainer Böhme. «Springer», 2013, PP 25-47; *ուսկ՝* L. A. Gordon, M. P. Loeb. The Economics of Information Security Investment. «TISSEC», November 2002, Vol. 5, N 4; *ուսկ՝* L. A. Gordon, M. P. Loeb, W. Lucyshyn. Information Security Expenditures and Real Options: A Wait-and-See Approach. «Computer Security Journal», Spring 2003, Vol. 19, N 2:

<sup>3</sup> Տես A. H. Grigoryan. Dynamic Modeling of Cybersecurity Investment. Economics and Management. «Proceedings of Engineering Academy of Armenia», 2015, Vol. 12, N 3:

<sup>4</sup> Տես A. K. Dixit, R. S. Pindyck. Investment under Uncertainty. Princeton University Press, 1994, P. 476:

ներդրում կատարելու որոշում կայացնելիս միանգամայն վստահ լինի, որ եկամուտը կաճի: Կազմակերպությունը կարող է մտածել, որ եկամուտը կարող է աճել տարբեր հավանականություններով ( $q_u$ , ( $q'_u$ ) և  $a_{j|i}$ ), սակայն չի կարող վստահ լինել, որ կաճի որևէ կոնկրետ հավանականությամբ: Այսպիսով՝ կազմակերպությունը եկամտի աճման որևէ կոնկրետ հավանականության փոխարեն կարող է ունենալ հավանականությունների բազմություն: Ընդ որում, կազմակերպությունը չի կարող վստահ լինել նաև աճման հավանականությունների հարաբերական ճշգրտության մեջ: Հավանականությունների բաշխման այսպիսի բազմազանությունը կոչվում է մեծ, կամ Նայթյան, անորոշություն<sup>5</sup>:

$P$ -ով նշանակենք եկամտի աճման այն հավանականությունների հոծ բազմությունը, որը կազմակերպությունը համարում է հնարավոր: Հայտնի է այն տեսակետը, որ բազմակի հավանականությունների առկայության դեպքում կազմակերպության վարքագիծը կարելի է բնորոշել որպես անորոշությունից խուսափող<sup>6</sup>: Ուստի կազմակերպությունը ներդրում կատարելու որոշում կայացնելիս հիմնականում կիրառում է վատագույն տարբերակի հավանականությունը, ըստ որի՝ 1-ին բանաձևն անհրաժեշտ է փոխարինել հետևյալ արտահայտությամբ.

$$(B_0 - z) + \frac{1}{1+r} \min q_{u \in P} (q_u B_u + (1 - q_u) B_d) = (B_0 - z) + \frac{1}{1+r} [B_d + (\min q_{u \in P} q_u)(B_u - B_d)]: \quad (4)$$

Քանի որ  $B_d < B_u$ , ապա 2-րդ բանաձևը ներկայացնենք հետևյալ տեսքով.

$$\frac{1}{1+r} \min q_{u \in P} q_u (B_u - z) = \frac{1}{1+r} [(\min q_{u \in P} q_u)(B_u - z)]: \quad (5)$$

Քանի որ  $B_u > z$ , ապա առաջին փուլում ներդրում կատարելու հետաձգման չափանիշը կունենա հետևյալ տեսքը.

$$(B_0 - z) + \frac{1}{1+r} [B_d + (\min q_{u \in P} q_u)(B_u - B_d)] - \frac{1}{1+r} [(\min q_{u \in P} q_u)(B_u - z)] = (B_0 - z) + \frac{B_d}{1+r} + \frac{1}{1+r} (\min q_{u \in P} q_u)(z - B_d) < 0: \quad (6)$$

Այժմ քննարկենք ռիսկի և անորոշության աճման առանձին դեպքեր:

Դիցուք՝  $q_u = \frac{1}{2}$  և  $P = \left[ \left( \frac{1}{2} - \varepsilon \right), \left( \frac{1}{2} + \varepsilon \right) \right]$ , որտեղ՝  $\varepsilon \in \left( 0, \frac{1}{2} \right)$  իրական թիվ է և ցույց է տալիս անորոշության աստիճանը: Այսինքն՝  $\varepsilon$ -ի աճումը կարող է համարվել մեծ անորոշության աճում:

Մյուս կողմից՝ ռիսկի աճումը բնորոշվում է երկրորդ փուլի եկամտի  $B_1$  միջինացված արժեքի պահպանմամբ: Այս դեպքում ենթադրենք, որ անորոշություն չկա, իսկ ռիսկն աճում է այնպես, որ  $(B_d, B_u)$ -ն այժմ տարածվում է  $(B_d - \gamma, B_u + \gamma)$ -ի նմանությամբ: 2-րդ բանաձևից պարզ է դառնում, որ կիրեռանվտանգության ոլորտում ներդրում կատարելու հետաձգման դեպքում եկամտի միջինացված արժեքի պահպանումը միշտ մեծացնում է կիրեռանվտանգության ար-

<sup>5</sup> Տես *K. G. Nishimura, H. Ozaki. Irreversible Investment and Knightian Uncertainty. «Journal of Economic Theory», 2007, Vol. 136:*


<sup>6</sup> Տես նույն տեղում:

Ժեքը: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ռիսկի աճումը ենթադրում է, որ կազմակերպությունը կարող է սպասել և ներդրում կատարել իր համար ավելի ձեռնտու պահի: Նշենք նաև, որ այս դեպքում կիրառանվտանգության համար կատարվող ներդրման արժեքը առաջին փուլում կմնա նույնը (տես *բանաձև (1)*): Հետևաբար՝ կիրառանվտանգության վրա կատարվող ներդրման արժեքը կաճի ռիսկի աճմանը զուգահեռաբար:

Այժմ ենթադրենք, թե կա մեծ անորոշություն: Այս դեպքում կիրառանվտանգության ոլորտում կատարվելիք ներդրման արժեքը կորոշվի՝ առաջին փուլում ըստ 4-րդ բանաձևի, իսկ երկրորդ փուլում՝ 5-րդ: Ենթադրենք նաև, որ մեծ անորոշությունը աճում է  $\varepsilon$ -ի աճմանը զուգահեռաբար: Նույն տրամաբանությամբ 4-րդ և 5-րդ բանաձևերից պարզ է դառնում, որ  $\varepsilon$ -ի աճումը միշտ նվազեցնում է առաջին և երկրորդ փուլերում կիրառանվտանգության վրա կատարվող ներդրման արժեքը, ինչը վկայում է, որ մեծ անորոշության աճման դեպքում կիրառանվտանգության համար կատարվող ներդրման արժեքը նվազում է:

Դիտարկված երկփուլ մոդելի գործնական կիրառությունը ներկայացնենք հետևյալ թվային օրինակով: Դիցուք՝  $z=500\,000$ ,  $B_0=100\,000$ ,  $B_u=1\,200\,000$ ,  $B_d=240\,000$ ,  $r=0,1$ ,  $q_u=0,5$ :

Ստորև ներկայացվում է կիրառանվտանգության ապահովման համար ներդրումային որոշումների կայացման գնահատումը երկփուլ մոդելի կիրառմամբ՝ բերված արժեքների դեպքում (նկ. 1):



Նկ. 1. Ներդրման արժեքի գնահատումը մեծ անորոշությունից կախված

Վերը նշվածի համաձայն՝ (բանաձևեր 4-րդ և 5-րդ) ստացվում է, որ առաջին փուլում արժեքի նվազումը ավելի մեծ է, քան երկրորդ փուլում նվազումը, ինչը նշանակում է, որ կազմակերպությունը մեծ հավանականությամբ նորից կհետաձգի կիրառանվտանգության ոլորտում կատարվելիք ներդրումը: Դա պարզորոշ կերպով երևում է նաև 6-րդ բանաձևից, որի ձախ կողմն արտահայտում է  $\varepsilon$ -ի աճմամբ պայմանավորված նվազումը և հեշտությամբ բավարարում է ներդրումը

հետաձգելու չափանիշին: Մյուս կողմից՝ մեծ անորոշության աճումը նվազեցնում է առաջին և երկրորդ փուլերում կիրեռանվտանգության ոլորտում կատարվող ներդրման արժեքը: Սակայն առաջին փուլում ներդրման արժեքը նվազում է ավելի մեծ չափով, քան երկրորդում կատարվելու դեպքում, քանի որ ներդրման արժեքը երկրորդ փուլում կախված է ոչ միայն ներդրումից ստացվող, այլև ներդրում չկատարելու հետևանքով ստացվող եկամտից: Հարկ է նշել, որ ներդրում չկատարելու հետևանքով ստացվող եկամուտը կախված չէ երկրորդ փուլի ներդրման արժեքից: Հետևաբար՝ քանի որ ներդրման արժեքը առաջին փուլում ավելի շատ է նվազում, քան երկրորդ փուլում, ապա կազմակերպության սպասելը գնահատվում է որպես ավելի շահավետ:

Վերը շարադրվածից պարզ է դառնում, որ երկրորդ փուլում մեծ անորոշության և ռիսկի աճումը հակառակ կերպով են ազդում ներդրման արժեքի վրա, թեև դրանք միևնույն ազդեցությունն են գործում ներդրման ժամկետային ընտրության վրա:

Այսպիսով՝ կիրեռանվտանգության ոլորտում առկա անորոշության պայմաններում ներդրումային որոշումների կայացումը բարդ ու պատահական գծային գործընթաց է, ուստի և ենթադրում է ներդրումային նախագծերի կառավարման ու համապատասխան որոշումների կայացման համար ավելի ճկուն և կայուն (ռոբաստ) մոդելների մշակում:

## КИБЕРБЕЗОПАСНОСТЬ

### МОДЕЛИРОВАНИЕ ИНВЕСТИЦИЙ В СФЕРЕ КИБЕРБЕЗОПАСНОСТИ В УСЛОВИЯХ БОЛЬШОЙ НЕОПРЕДЕЛЕННОСТИ

*А. Г. ГРИГОРЯН, начальник Центра информационно-коммуникационных технологий  
и политики национальной безопасности ИНСИ НИУО МО РА*

#### РЕЗЮМЕ

Инвестиции в сферу кибербезопасности, в отличие от иных видов вложений, не приносят денежных доходов, однако прибыль от них выражается в форме снижения себестоимости в результате предотвращения или уменьшения отрицательного воздействия угроз. Следовательно, организациям необходимо найти разумный баланс между вероятностями и воздействиями угроз кибербезопасности и возможностями снижения угроз посредством эффективных и действенных вложений в кибербезопасность. В связи с ограниченностью возможностей затрат на кибербезопасность и большим числом активов, требующих защиты, организациям следует вырабатывать инвестиционные стратегии, в которых учитывается динамичный характер вложений в сферу кибербезопасности.

В данной статье представлена двухпериодная модель вложений, которая может успешно применяться для инвестиций в кибербезопасность с учетом как ограниченности ресурсов, так и стохастического характера вложений. Теоретические выкладки подкреплены примером практического применения данной двухпериодной модели.

## CYBERSECURITY

### MODELING INVESTMENTS IN CYBERSECURITY IN CONDITIONS OF DEEP UNCERTAINTY

*A. H. GRIGORYAN, Head, Center for Information-Communication Technologies  
and National Security Policy, INSS, NDRU, MOD, RA*

#### SUMMARY

Unlike other investments, the investments in cybersecurity do not generate monetary incomes. However, revenues from them are expressed in the form of cost savings due to the prevention or reduction of the negative impact of threats. Therefore, organizations need to find a reasonable balance between the probabilities and impacts of cybersecurity threats and the possibilities of mitigating the threats through effective and efficient investments in cybersecurity. Due to the limited opportunities to expend on cybersecurity and a huge number of assets to be protected, organizations should develop investment strategies which consider the dynamic nature of the investments in cybersecurity.

This article presents two-period investment model that can be successfully applied to the investments in cybersecurity taking into account both the restricted resources and the stochastic nature of investments. Theoretical calculations are reinforced by the example of practical use of the given two-period model.

**ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԱԳՐԲԵՋԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ  
ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇ ՊՐՈԲԼԵՄՆԵՐ**

*Հ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, արդարադատության գնդապետ, իրավաբանական  
գիտությունների թեկնածու, ՌԳ ՊՆ Ռազմական համալսարանի  
քրեագիտության ամբիոնի դոկտորանսր*



Պատերազմական հանցագործությունների որակումը կապված է հետևյալ դժվարությունների հետ՝ հակամարտության օբյեկտիվ որակում և հակամարտության մասնակիցների կողմից միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) նորմերի համապատասխան կիրառում: Սակայն ՄՄԻ-ի նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՄՄԻ-ի նորմերի մեծ մասը նախատեսված է պետությունների միջև զինված բախումների պայմաններում հարաբերությունների կարգավորման համար, և միայն շատ քչերն են վերաբերում ոչ միջազգային բնույթի զինված հակամարտություններին:

Միջազգային և ոչ միջազգային բնույթի զինված հակամարտություններով պայմանավորված պատերազմական հանցագործությունների միջև տարբերությունը արտացոլում է նաև Միջազգային քրեական դատարանի (այսուհետև՝ ԱԶԳ) Հռոմի Ստատուտը<sup>1</sup> որպես միջազգային զինված հակամարտությունում կատարվող պատերազմական հանցագործություն որակելով Ժնևյան կոնվենցիաների 8 և պատերազմի օրենքների ու սովորույթների 26, իսկ ոչ միջազգային բնույթի զինված հակամարտությունների դեպքում՝ համապատասխանաբար, 4 և 15 լուրջ խախտումները: Սակայն Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ)<sup>2</sup> հետազոտությունը և ԱԶԳ Ստատուտի 8-րդ հոդվածի ուսումնասիրությունը<sup>3</sup> ցույց են տալիս, որ միջազգային և ոչ միջազգային բնույթի զինված հակամարտությունների միջև հիմնական տարբերությունը պայմանավորված է ոչ թե ՄՄԻ-ի նորմերի էությամբ, այլ հակամարտության մասնակիցների կարգավիճակով և նախատեսում է այդ նորմերի կիրարկելիությունը ինչպես միջազգային, այնպես էլ ոչ

<sup>1</sup> Տե՛ս «Римский статут Международного уголовного суда». Рим, 17 июля 1998 г., ст. 8 (2) (b) ([http://www.un.org/ru/law/icc/rome\\_statute\(r\).pdf](http://www.un.org/ru/law/icc/rome_statute(r).pdf)):

<sup>2</sup> Տե՛ս *Ж.-М. Хенкертс, Л. Досвальд-Бек*. Обычное международное гуманитарное право. Международный Комитет Красного Креста, 2006:

<sup>3</sup> Տե՛ս «The Handbook of International Humanitarian Law». Ed. by D. Fleck. Ed. 2. Oxford, 2008, Part 1204:

միջազգային զինված հակամարտությունների դեպքում, թեև չի որոշարկում դրանց կիրարկման պայմանները<sup>4</sup>:

Ձինված հակամարտությունների դեպքում ՄՄԻ-ի նորմերի կիրառման ծավալների մասին չկա միակարծություն նաև տեսաբանների ու պրակտիկների շրջանում<sup>5</sup>:

Կարծում ենք, որ հիմնական պատճառն այն է, որ ժամանակակից միջազգային իրավունքի համակարգը գերազանցապես հենվում է պետական ինքնիշխանության գաղափարներին առնչվող միջպետական հարաբերությունների վրա: Ըստ այդմ էլ որպես միջազգային իրավունքի աքսիոմ գործում է մեր կարծիքով բավական վիճելի այն դրույթը, թե գաղութային կամ կախյալ ժողովուրդների ազգային-ազատագրական պատերազմներում, որոնք նրանք մղում են հանուն իրենց ազատագրման և անկախ ազգային պետության կազմավորման, նրանց՝ որպես ապստամբ կամ պատերազմող կողմի կարգավիճակը պետք է ճանաչեն այլ պետություններ:

Այդ պատճառով պետությունները հաշվի չեն առնում ազգային-ազատագրական պայքարի յուրահատկությունը՝ արհեստականորեն միմյանց հակադրելով միջազգային իրավունքի երկու հիմնարար սկզբունքները՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը և պետության տարածքային ամբողջականության դրույթը:

Հայաստանի Հանրապետությունը բազմիցս հայտարարել է, որ այդ սկզբունքների միջև ոչ մի հակասություն չկա: Տարածքային ամբողջականության սկզբունքը կիրառվում է այն դեպքերում, երբ մի պետություն հարձակվում է մեկ այլ պետության վրա, բռնազավթում է նրա տարածքի մի մասը և այն հայտարարում իր տարածքի մաս: Մինչդեռ այն դեպքում, երբ որևէ տարածքի ժողովուրդը հայտարարում է իր ինքնորոշման մասին, տարածքային ամբողջականության սկզբունքի ոչ մի խախտում տեղի չի ունենում, քանի որ չկա արտաքին ագրեսիա, այլ գործում է ազգերի ինքնորոշման իրավունքը: Այն, որ որոշ պետություններ ցանկանում են միջազգային իրավունքի այս երկու հիմնարար սկզբունքների մտացածին «հակասականությունը» մեկնաբանել իրենց շահերին համապատասխան, ավելի շատ զիջում է պետություններին, որպեսզի ոչ պետական խմբերը չկարողանան ՄՄԻ-ի նորմերով արդարացնել զինված հակամարտությանն իրենց մասնակցությունը: Այդ պատճառով պետություններն իրենց տարածքներում ծագած ապստամբական շարժումների անդամներին համարում են հանցագործներ, որոնք չունեն միջազգային զինված հակամարտությունների իրավունքով նախատեսվող կարգավիճակ, ուստի և համապատասխան պաշտպանության իրավունք<sup>6</sup>, իսկ ոչ միջազգային բնույթի զինված հակամարտո-

<sup>4</sup> Առավել հանգամանորեն տես Հ. Մ. Գրիգորյան, Ձինված հակամարտության բնույթը և դրա նշանակությունը միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կիրառման ծավալի որոշման համար: «Հայկական բանակ», 2015, հմ. 4:

<sup>5</sup> Տես Գ. Մ. Գրիգորյան. История возникновения и развития Нагорно-Карабахского конфликта. «Научные идеи С. Н. Трегубова и их влияние на развитие современной криминалистической науки в России». Сборник научных статей. М., 2007:

<sup>6</sup> Տես Յ. Դժ. Կարսուլ. Классификация конфликта: дилемма, стоящая перед военно-служащим. «Международный журнал Красного Креста» («МЖКК»), 2009, N 873:

յունները դիտում են քրեական արդարադատության լույսով, ինչի հետևանքով տվյալ դեպքում կիրառելի չէ «հովանավորվող անձ» իրավաբանական հասկացությունը: Պետությունը չի ցանկանում ընդունել, որ կորցրել է իր դեմ պայքարողների նկատմամբ ուժ կիրառելու իրավունքը, որ պետության շահերին դիմակայող խումբն ունի իրեն՝ որպես պատերազմող կողմի ճանաչման հետ կապված կարգավիճակ ստանալու իրավունք<sup>7</sup>: Այսպես. Ադրբեջանի զինդատախազությունը հարուցել է քրեական գործեր 296 հայերի դեմ, որոնք Վարաբաղյան զինված հակամարտության ժամանակ (1992–1994 թթ.) զենքը ձեռքներին պայքարի էին դուրս եկել ի պաշտպանություն ինքնորոշման և անկախության իրենց իրավունքի<sup>8</sup>: Նրանցից 248 հոգու գործողությունները որակվել են որպես խաղաղության ու մարդկության դեմ և պատերազմական հանցագործություններ, իսկ 48 հոգու գործողությունները՝ որպես բանդիտիզմ, կանխամտածված սպանություն, ապօրինի հրազենի պահում և հանցագործության մասին չհաղորդում: Դատարանի որոշմամբ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը: Նրանց նկատմամբ հետախուզում է հայտարարվել<sup>9</sup>:

Նման մոտեցմանը մենք դեմ չէինք լինի, եթե պետությունը պայքարեր պետություն չհանդիսացող որևէ կազմավորման դեմ, որը չի բավարարում 2-րդ Լրացուցիչ արձանագրության 1-ին հոդվածի չափանիշներին և կազմված է որևէ հրամանատարական աստիճանակարգություն չունեցող զինված հրոսակախմբերից, լիովին անտեսում է ինչպես ազգային իրավունքը, այնպես էլ ՄՄԻ-ն: Այդ դեպքում մի կողմը կվարեր ավանդական պատերազմ՝ իր ենթակայության տակ ունենալով կանոնավոր բանակ, և կսահմաներ իրավական նորմեր, իսկ մյուս կողմը՝ ազգային օրենսդրությանը համապատասխան, կաշկանդված կլիներ պետության կողմից սահմանված նորմերով, սակայն չէր ընդունի ո՛չ այդ նորմերը, ո՛չ էլ ՄՄԻ-ն: Եթե այդ խմբերի անդամները ըստ ազգային իրավունքի լինեին հանցագործներ, ապա նույնիսկ այս դեպքում հիմնական հարցը կլիներ այն, թե արդյոք նրանց նկատմամբ կիրառելի են ՄՄԻ-ի նվազագույն ստանդարտները: Սակայն Լեռնային Վարաբաղի հակամարտության հետ կապված իրավիճակը բոլորովին այլ է<sup>10</sup>, և ակնհայտ է, որ նման մոտեցումը կիրառելի չէ, ինչի հետևանքով մենք բոլորովին այլ կարծիքի ենք:

Պաշտոնական տեսակետն այն է, որ Լեռնային Վարաբաղի զինված հակամարտությունը պետք է որակվի որպես միջազգային: Ընդ որում, տվյալ հակամարտության նման որակումը համապատասխանում է թե՛ հայկական, թե՛

<sup>7</sup> Տես Հ. Մ. *Գրիգորյան*, Չինված հակամարտության բնույթը և դրա նշանակությունը ...:

<sup>8</sup> Տես *Գ. Մ. Григорян*. Расследование преступлений, совершаемых военнослужащими Вооруженных Сил Республики Армения в районах вооруженного конфликта. Диссертация кандидата юридических наук. М., 2009, сс. 19–30:

<sup>9</sup> Տես «296 армянских военнослужащих объявлены в розыск за совершенные ими в Карабахе тяжкие преступления». «Зеркало», 31.03.2014 (<http://www.zerkalo.az/2014/296-armyanskih-voennosluzhashhih-obyavlenyi-v-rozyisk/>):

<sup>10</sup> Տես *Գ. Մ. Григорян*. Расследование преступлений, совершаемых военнослужащими Вооруженных Сил Республики Армения ..., сс. 19–31:

ադրբեջանական դիրքորոշումներին, որոնք տարբերվում են միայն այդ եզրակացությանը հանգեցնող փաստարկումներով:

Այսպես. համաձայն Ադրբեջանի պաշտոնական դիրքորոշման՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դեֆակտո Հայաստանի Հանրապետության մարմին է, ուստի և ԼՂՀ գործողությունները պետք է նախկին Հարավսլավիայի համար Միջազգային քրեական տրիբունալի սահմանած «ընդհանուր վերահսկողության» թեստի հիման վրա վերագրվեն Հայաստանին: Հետևաբար, հակամարտությունն իրականում Հայաստանի և Ադրբեջանի միջև է, ուստի՝ միջազգային է<sup>11</sup>:

Հայաստանն այս փաստարկումը մերժում է: Կարծում ենք, որ գործողությունների վերագրման (ատրիբուցիայի) հարցերը պետք է գնահատվեն ըստ ՄԱԿ-ի Միջազգային դատարանի սահմանած «արդյունավետ վերահսկողության» թեստի ստանդարտների<sup>12</sup>: Սակայն ՀՀ տեսակետի համաձայն՝ հակամարտությունը ևս միջազգային է, քանի որ ԼՂՀ-ն բավարարում է պետականության բոլոր պայմաններին կամ, հակառակ դեպքում, ինքնորոշման սուբյեկտ է: Այստեղ կարևոր դեր են խաղում նաև «Միջազգային իրավունքի նորմերին Կոսովոյի անկախության միակողմանի հռչակման համապատասխանությունը» դատական քննության վերաբերյալ ՄԱԿ-ի Միջազգային դատարանի խորհրդակցական եզրակացությունը և Լեռնային Ղարաբաղի իրավիճակի մասին Անվտանգության խորհրդի բանաձևերը:

Այսպես. համաձայն խորհրդակցական եզրակացության՝ անկախության հռչակագրերը՝ որպես այդպիսիք, չեն հակասում տարածքային ամբողջականության սկզբունքին<sup>13</sup>: Միջազգային դատարանը կատարել է նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից անիրավաչափ համարված և անիրավաչափ չհամարված անկախության հռչակագրերի համեմատական վերլուծություն: Հարկ է նշել, որ այս տեսակետից Լեռնային Ղարաբաղին վերաբերող և ոչ մի բանաձևում<sup>14</sup>, ի

<sup>11</sup> Ադրբեջանի պաշտոնական դիրքորոշման վերաբերյալ տես «Письмо Постоянного представителя Азербайджана при Организации Объединённых Наций от 22 декабря 2008 года на имя Генерального секретаря» (ООН А/63/662-S/2008/812), 24 декабря 2008 (<https://www.google.ru/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=2&ved=0ahUKEwiYt9ayp-HNAhWEDiwKHcixAB0QFgggMAE&url=http%3A%2F%2Fdocbox.un.org%2FDocBox%2Fdocbox.nsf%2FGetFile%3FOpenAgent%26DS%3DA%2F63%2F662%26Lang%3DR%26Type%3DDOC&usq=AFQjCNGLDww3IBdDluJDIMUF27HeLIBZsA&bvm=bv.126130881,d.bGs>):

<sup>12</sup> Տես «Case Concerning Military and Paramilitary Activities in and Against Nicaragua (Nicaragua v. United States of America)». International Court of Justice, 1986, PP. 64–65, para. 115 (<http://www.icj-cij.org/docket/files/70/6503.pdf>):

<sup>13</sup> Տես «Accordance with International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo (Advisory opinion of 22 July 2010)». International Court of Justice, 2010, P. 437, para. 80 ([www.icj-cij.org/locket/files/141/15987.pdf](http://www.icj-cij.org/locket/files/141/15987.pdf)):

<sup>14</sup> Տես «Резолюция 822 (1993)» (S/RES/822 (1993)). Совет Безопасности ООН, 30 апреля 1993 (<https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N93/247/73/IMG/N9324773.pdf?OpenElement>); «Резолюция 853 (1993)» (S/RES/853 (1993)). Совет Безопасности

տարբերություն Մերքիայի Հանրապետության<sup>15</sup>, Հյուսիսային Կիպրոսի<sup>16</sup> և այլ հռչակագրերից, չի խոսվում ԼՂՀ վարչակարգի և ԼՂՀ անկախության հռչակագրի անիրավաչափության մասին: Հետևաբար ՄԱԿ-ը ԼՂՀ պետականության հնարավոր կայացման հարցը թողել է բաց:

Կարծում ենք, որ իրավական առումով խնդրո առարկայի համար կարևոր չէ, թե ում տեսակետն է ճիշտ՝ Հայաստանի, թե Ադրբեջանի: Երկու դեպքում էլ հակամարտությունը որակվում է որպես միջազգային, իսկ միջազգային զինված հակամարտությունների ժամանակ գործող ՄՄԻ-ի նորմերը պետք է գործարկվեն ամբողջ ծավալով:

Մենք համակարծիք ենք Ա. Նեյերի հետ, որը պնդում է, թե միջազգային և ներքին զինված հակամարտությունների ժամանակ կատարված պատերազմական հանցագործությունները որոշարկվում են ըստ Ժնևյան կոնվենցիաների. «Թեև դրանց միջև կան որոշ տարբերություններ, սակայն ներքին զինված հակամարտության ժամանակ կատարված պատերազմական հանցագործությունները այդուհանդերձ պատերազմական հանցագործություններ են»<sup>17</sup>: Դեռ ավելին. ներկայումս արդեն կա անկախ զինված հակամարտության բնույթից ՄՄԻ-ի նորմերը ամբողջ ծավալով կիրառելու գաղափարի զարգացման դրական միտում: Բայց քանի որ ԼՂՀ-ն դեռ ընդհանուր ճանաչում ստացած պետություն չէ, կիրառելի են սովորության ՄՄԻ-ի նորմերը: Որպես կանոն՝ մայրցամաքային իրավական համակարգի պետություններն ընդունում են ազգային օրենքի նկատմամբ սովորության ՄՄԻ-ի գերակայությունը: Դրա հետ մեկտեղ, ՄՄԻ-ի նորմերի փոխակերպման եղանակի ընտրության վերջնական իրավունքը վերապահվում է օրենսդիրին, որը հաշվի է առնում իրավունքի գոյություն ունեցող համակարգը, ձևավորված ազգային սովորություններն ու ավանդույթները և այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններ:

Ներկայումս պատերազմական հանցագործությունները պետությունների ճնշող մեծամասնության օրենսդրության մեջ քրեականացվել են, սակայն ոչ բոլոր դեպքերում է օգտագործվում «պատերազմական հանցագործություններ» տերմինը: Պատերազմական հանցագործությունները հստակորեն կառուցվողված

ООН, 29 июля 1993 (<https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N93/428/36/IMG/N9342836.pdf?OpenElement>); «Резолюция 874 (1993)» (S/RES/874 (1993)). Совет Безопасности ООН, 14 октября 1993 (<https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N93/557/43/IMG/N9355743.pdf?OpenElement>); «Резолюция 884 (1993)» (S/RES/884 (1993)). Совет Безопасности ООН, 12 ноября 1993 (<https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N93/631/22/PDF/N9363122.pdf?OpenElement>):

<sup>15</sup> Տես «Резолюция 787 (1992)» (S/RES/787 (1992)). Совет Безопасности ООН, 16 ноября 1992 (<https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N92/723/05/IMG/N9272305.pdf?OpenElement>):

<sup>16</sup> Տես «Резолюция 541 (1983)». Совет Безопасности ООН, 18 ноября 1983 (<https://documents-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/454/33/IMG/NR045433.pdf?OpenElement>):

<sup>17</sup> Տես *A. Neier. War Crimes: Brutality, Genocide, Terror and the Struggle for Justice*. New York, 1998, pp. 233–234:

են առաջին հերթին ՄԶԳ Ստատուտի դրույթները փոխակերպած պետությունների (Ավստրալիա, Բելգիա, Բուրունդի, Գերմանիա, Իսպանիա, Կանադա, Կոնգո, Կոսովո, ՀԱՀ, Մալթա, Մալի, Մեծ Բրիտանիա, Նիդերլանդներ, Նոր Զելանդիա, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովակիա, Վրաստան և այլն) քրեական օրենսդրության մեջ<sup>18</sup>:

Որպես իրավական կատեգորիա՝ պատերազմական հանցագործությունները հիշատակվում են Ադրբեյջանի, Ալբանիայի, ԱՄՆ-ի, Բելառուսի, Էստոնիայի, Լատվիայի, Հունգարիայի, Մոլդովայի, Պարագվայի, Սլովենիայի, Ֆինլանդիայի և այլ պետությունների ազգային օրենսդրության մեջ: Ընդամին միջազգային-իրավական նորմերի փոխակերպման լիակատարության տեսանկյունից այդ պետությունների ազգային քրեական օրենսդրության մեջ կան էական տարբերություններ: Այսպես. Ադրբեյջանի և Բելառուսի քրեական օրենսդրություններում պատերազմական հանցագործություններին հատկացված է մի ամբողջ գլուխ, իսկ Ալբանիայի քրեական օրենսդրության մեջ կա միայն մեկ հոդված<sup>19</sup>:

Մի շարք պետություններում (Բուլղարիա, Լեհաստան, Լիտվա, Ղազախստան, Մոնղոլիա, Վրաստան և այլն) «պատերազմական հանցագործություններ» հասկացությունը ընդհանրապես չի օգտագործվում, իսկ հանցագործություններին վերաբերող համապատասխան բաժինները կամ կոնկրետ հանցակազմերը կրում են այլ անվանում (օրինակ՝ Բուլղարիայում համապատասխան բաժինը կոչվում է «Հանցագործություններ՝ ուղղված պատերազմի վարման օրենքների և սովորույթների դեմ»):

Հայաստանի Քրեական օրենսգրքում (2003 թ.), առաջին անգամ հայրենական քրեական օրենսդրության մեջ, առանձնացվել է խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների համար քրեական պատասխանատվության վերաբերյալ բաժինը, որը պարունակում է 15 հանցակազմ, որոնցից չորսը դասվում են պատերազմական հանցագործությունների թվին: Ընդհանուր առմամբ, ԶՕ-ի տվյալ բաժինը հանցագործությունների համար քրեական պատասխանատվություն սահմանող նաև քաղաքացիական բնակչության նկատմամբ կատարված ազգային քրեական օրենսդրության մակարդակում պատերազմական հանցագործությունների մի յուրահատուկ կողմնակացում է: Պատերազմական հանցագործությունների շարքը դասվում են ՀՀ ԶՕ-ի 387-րդ՝ «Պատերազմ վարելու արգելված միջոցներ և մեթոդներ կիրառելը» հոդվածով, 390-րդ՝ «Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումները զինված ընդհարումների ժամանակ», 391-րդ՝ «Անգործությունը կամ հանցավոր հրաման արձակելը զինված ընդհարման ժամանակ», 395-րդ՝ «Վարձկանականությունը» և 397-րդ՝ «Միջազգային պայմանագրերով պահպանվող տարբերանշաններն ապօրինի օգտագործելը», իսկ առանձին դեպքերում

<sup>18</sup> Տես *В. Н. Додонов, О. С. Капинус, С. П. Щерба. Сравнительное уголовное право. Особенная часть. М., 2010, сс. 523–524:*

<sup>19</sup> Տես նույն տեղում, էջ 525:

ման 396-րդ՝ «Միջազգային պաշտպանությունից օգտվող անձանց կամ հաստատության վրա հարձակվելը» հողվածներով մախատեսվող գործողությունները<sup>20</sup>:

Հայաստանի քրեական օրենսդրության նորմերի վերլուծությունից հետևում է, որ հանցակազմերի վերը նշված ո՛չ անվանման, ո՛չ էլ բովանդակության մեջ չի կիրառվում այնպիսի իրավաբանական տերմին, ինչպիսին «պատերազմական հանցագործությունն» է:

Բացի այդ, օրենսդիրը, հղում կատարելով միջազգային պայմանագրային իրավունքին, չի հիշատակում սովորության իրավունքը:

Ընդամին պատերազմական հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկված անձի արարքների որակումը բաղկացած է երեք հիմնական հաջորդական փուլերից: Առաջին փուլում պարզվում է նյութական տարրերի առկայությունը (պատերազմական հանցագործության սահմանման մեջ նշված արարքներ, հետևանքներ և այլ հանգամանքներ): Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների առնչությամբ որպես էական հանգամանք են դիտվում զինված հակամարտությունը կամ քաղաքացիական բնակչության վրա հարձակումը: Երկրորդ փուլում պարզվում է մտավոր տարրի առկայությունը, այսինքն՝ որոշվում է, թե արդյոք նյութական տարրերը կատարվել են «դիտավորությամբ և գիտակցաբար»: Երրորդ փուլում հաստատվում է քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների առկայությունը\*: Տվյալ դեպքում դա վերաբերում է ՄԶԳ- Հռոմի Ստատուտով սահմանված՝ անչափահասների քրեական հետապնդման արգելմանը (հոդ. 26), անձեռնմխելիությանը (հոդ. 27 (2)) և վաղեմության ժամկետին (հոդ. 29): Դեռ ավելին. պատերազմական հանցագործությունների ճիշտ որակման համար անհրաժեշտ է պարզել, թե ՄՄԻ-ի որ նորմերի խախտումն է տեղի ունեցել, և որ դեպքում դա կհանգեցնի ֆիզիկական անձի անհատական քրեական պատասխանատվությանը, ինչը արդիական է նաև մեր հայրենական օրենսդրության համար, քանի որ ՀՀ ԶՕ-ի 387-րդ, 390-րդ հոդվածները, որոնք ունեն բլանկետային բնույթ, հղում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին:

Բլանկետայնության մակարդակի գերբարձրացումը հղի է իրավակիրառական գործունեության ընթացքում որոշակի դժվարությունների առաջացմամբ, քանի որ այդ ժամանակ պրակտիկ աշխատողներից պահանջվում է ոչ միայն անմիջականորեն կիրառել միջազգային նորմերը, այլև հաշվի առնել միջազգային և

<sup>20</sup> Տես «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք»: Ընդունված է 2003 թվականի ապրիլի 18-ին (<http://www.arlis.am/documentview.aspx?docid=69646>):

\* Այսպես. ՄԶԳ Ստատուտը սահմանում է անձի քրեական պատասխանատվությունը բացառող հետևյալ պայմանները (այդ թվում՝ պատերազմական հանցագործությունների կատարման համար). հոգեկան հիվանդության կամ խանգարման, թունավորման, իրեն կամ այլ անձի պաշտպանելու, ծայրահեղ անհրաժեշտության վիճակում գտնվելու կամ իրեն հարկադրելու դեպքերում (տես «Римский статут Международного уголовного суда», ст. 31 (1) ([http://www.un.org/ru/law/icc/rome\\_statute\(r\).pdf](http://www.un.org/ru/law/icc/rome_statute(r).pdf)))՝ կապված սխալի կամ հրամանատարի հրամանի հետ (տես նույն տեղում, հոդ. 32–33):

ազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների միջև հակասությունները, միջազգային և ազգային իրավասությունների առկայության պայմաններում տարբեր իրավական համակարգերի փոխգործության պրոբլեմները, գիտենալ պատերազմական հանցագործության հանցակազմի որոշման նկատմամբ հայեցակարգային մոտեցումները և իրավախախտի անձնական քրեական պատասխանատվությունը նախատեսող միջազգային իրավական նորմերը:

Հենց այս դիրքերից էլ մենք կվերլուծենք ԼՂՀ-ում մարտական գործողությունների վերսկսման ուղղությամբ Ադրբեյջանի ձեռնարկած գործողությունները և իրավական գնահատական կտանք Ադրբեյջանի Հանրապետության բանակի գործողություններին:

2016 թ. ապրիլի 2-ին ԱդրՀ ՁՈՒ-ն, զանցառելով 1994 թ. մայիսի 5-ի Բիշկեկյան արձանագրության պայմանները, ավիացիայի, հրթիռահրետանային միջոցների և զրահատեխնիկայի կիրառմամբ ԼՂՀ-ի դեմ ձեռնարկեց ագրեսիա՝ խախտելով համաձայնագրի կողմ հանդիսացող ԼՂՀ սահմանների անձեռնմխելիությունը: Ագրեսիվ պատերազմ վարելու ընթացքում ԱդրՀ ՁՈՒ-ն ռազմական զերազանցության հասնելու նպատակով կոպտորեն խախտեց միջազգային իրավունքի նորմերը՝ օգտագործելով պատերազմի վարման արգելված միջոցներ ու մեթոդներ, ոչ ընտրողական գրոհների թիրախ դարձնելով խոր թիկունքում գտնվող 9 բնակավայր, խաղաղ բնակչությանը և զանազան քաղաքացիական օբյեկտներ՝ դպրոցներ, շենքեր, ճանապարհներ, այլ ենթակառուցվածք, առանձին քաղաքացիական անձանց, ինչը հանգեցրեց միջազգային իրավունքի պաշտպանության տակ գտնվող մեծ թվով մարդկանց, այդ թվում՝ երեխաների, մահվան ու վիրավորման, ինչպես նաև գույքի լայնամասշտաբ կանխամտածված ոչընչացման: Նշված հանցագործությունների փաստերով ԼՂՀ Գլխավոր դատախազը քրեական գործ է հարուցել ԼՂՀ ՔՕ-ի 410-րդ հոդվածով («Ագրեսիվ պատերազմ») և ԼՂՀ ՔՕ-ի 416-րդ հոդվածով («Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումները զինված ընդհարումների ժամանակ»)՝<sup>21</sup>: Մարտական գործողությունների ընթացքում սպանվել է ԼՂՀ ՊԲ 78 զինծառայող, վիրավորվել են ԼՂՀ ՊԲ մեծ թվով զինծառայողներ: Ընդամեն զինծառայողների 15,4 %-ը զոհվել է գնդակային, 53,8 %-ը՝ բեկորային, 18 %-ը՝ խառը վիրավորումներից, իսկ 12,8 %-ը՝ այրվածքներից: Գրանցվել են զինծառայողների և քաղաքացիական անձանց դիակներն անարգանքի ենթարկելու փաստեր, ինչը սովորության ՄՄԻ-ի 113-րդ նորմի խախտում է, մի նորմի, որը սահմանված է ինչպես մի շարք պետությունների և միջազգային կազմակերպությունների պրակտիկայով, այնպես էլ միջազգային նախադեպային իրավունքով<sup>22</sup>: Յուրաքանչյուր զինծառայողի սպանության կամ վիրավորման փաստով հարուցված է քրեական գործ՝ համաձայն ԼՂՀ ՔՕ-ի 103-րդ հոդվածի 14-րդ կետի («ազգային, ռասա-

<sup>21</sup> Տես «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգիրք»: Ընդունված է 2013 թ. ապրիլի 25-ին («ԼՂՀ պաշտոնական տեղեկագիր», 2013, հմ.12 (231)):

<sup>22</sup> Տես Ժ.-Մ. Հենկերս, Լ. Դուվալը-Բեկ, Նշ. աշխ., նորմ 113:

յական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթներով կատարված սպանություն») կամ որպես մահափորձ, իսկ զինծառայողների և քաղաքացիական անձանց դիակների պղծման փաստերի առթիվ՝ ԼՂՀ ՔՕ-ի 416-րդ հոդվածով:

Կարծում ենք, որ ԱդրՀ ՁՈՒ-ի գործողությունները, որոնք ուղղված էին Հայաստանի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, պետք է որակվեն ամբողջությամբ ըստ ՀՀ ՔՕ-ի 384-րդ հոդվածի 2-րդ մասի (Ազդեհիվ պատերազմ\* սանձագերծելը կամ վարելը) և ՀՀ ՔՕ-ի 387-րդ հոդվածի 1-ին մասի («Ռազմական գործողություններում կամ զինված ընդհարումներում միջազգային պայմանագրով արգելված միջոցներ և մեթոդներ կիրառելը»), քանի որ խախտվում է ռազմական գործողությունների վարմանը վերաբերող ամբողջ ՄՄԻ-ի սկզբունքը՝ տարբերակման կիրառման սկզբունքը, որի համաձայն ոչ ընտրողական բնույթի ռազմական ձեռնարկումներն արգելված են: Հակամարտության բոլոր կողմերը պետք է տարբերություն դնեն, մի կողմից, օրինական ռազմական նշանակետերի և, մյուս կողմից, քաղաքացիական բնակչության ու քաղաքացիական նշանակետերի միջև: Քաղաքացիական բնակչությանը կանխամտածված հարված

\* ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1974 թ. դեկտեմբերի 14-ի հմ. 3314 բանաձևի 1-ին հոդվածով ազդեհիան սահմանվում է որպես «պետության կողմից զինված ուժի կիրառում մեկ այլ պետության ինքնիշխանության, տարածքային անձեռնմխելիության և քաղաքական անկախության դեմ, կամ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության հետ անհամատեղելի որևէ այլ կերպ» (տես «Определение агрессии» (Резолюция 3314 (XXIX)). Генеральная Ассамблея ООН, 14.12.1974, ст. 1 ([http://www.un.org/ru/documents/decl\\_conv/conventions/aggression.shtml](http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/aggression.shtml))). Բանաձևի 3-րդ հոդվածում սահմանվում են այն կոնկրետ գործողությունները, որոնց կատարումը ազդեհիայի ակտ է: Նման գործողությունների թվին են դասվում՝ «ա) մի պետության զինված ուժերի ներխուժում մեկ այլ պետության տարածք կամ հարձակում այդ տարածքի վրա, կամ այդ ներխուժման կամ հարձակման հետևանքով ցանկացած ռազմական բռնազավթում՝ որքան էլ որ այն կրի ժամանակավոր բնույթ, կամ ուժի կիրառմամբ այլ պետության տարածքի կամ դրա մի մասի ցանկացած բռնակցում, բ) մի պետության զինված ուժերի կողմից մեկ այլ պետության տարածքի ռմբակոծում կամ մի պետության կողմից մեկ այլ պետության տարածքի նկատմամբ ցանկացած զենքի կիրառում, գ) մի պետության զինված ուժերով մեկ այլ պետության նավահանգիստների կամ ափերի շրջափակում, դ) մի պետության զինված ուժերի հարձակում այլ պետության ցամաքային, ծովային կամ օդային ուժերի վրա կամ նրա ծովային և օդային նավատորմների վրա, ե) ընդունող պետության հետ համաձայնագրով նրա տարածքում գտնվող՝ այլ պետության զինված ուժերի կիրառում՝ համաձայնագրով նախատեսվող պայմանների խախտմամբ, կամ նման տարածքում դրանց մնալու ցանկացած շարունակում՝ համաձայնագրի գործողության ժամկետի ավարտից հետո, զ) այն պետության գործողությունները, որը թույլ է տալիս, որ այլ պետության տնօրինությանը տրամադրված իր տարածքն այդ պետությունն օգտագործի երրորդ պետության դեմ ազդեհիայի գործողություն ձեռնարկելու համար, է) մի պետության կողմից կամ նրա անունից այլ պետության դեմ զինված ուժի կիրառում ձեռնարկող զինված հրոսակախմբեր, խմբեր և ոչ կանոնավոր ուժեր կամ վարձկաններ ուղարկելը, եթե այդ ձեռնարկումները կրում են այնքան լուրջ բնույթ, որ հավասարագոր են վերը թվարկված ձեռնարկումներին, կամ այդ պետության զգալի մասնակցությունը մնան ձեռնարկումներին» (տես նույն տեղում, հոդ. 3):

հասցնելը ռազմական հանցագործություն է: ԱդրՀ ՁՈՒ-ի գործողությունները, որոնք ուղղված էին ՀՀ զինծառայողների դեմ, պետք է որակվեն համաձայն ՀՀ ԲՕ-ի 384-րդ հոդվածի 2-րդ մասի («Ազդեցիվ պատերազմ սանձազերծելը կամ վարելը»): ԱդրՀ ՁՈՒ-ի հանցավոր գործողությունները, որոնք ուղղված են ՀՀ զերեվարված քաղաքացիների ու զինծառայողների դեմ, պետք է որակվեն ՀՀ ԲՕ-ի 390-րդ հոդվածի համաձայն («Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումները զինված ընդհարումների ժամանակ»): Հենց նման դիրքորոշման վրա է հիմնվում հատուկ միջազգային տրիբունալների պրակտիկան, ըստ որի՝ նույնիսկ եզակի հանցավոր գործողությունը՝ ուղղված մեկ գոհի դեմ (օրինակ՝ զերի հանձնված անձի սպանություն), կարող է որակվել որպես պատերազմական հանցագործություն. ժամանակակից իրավական գիտությունը ևս կողմնակից է այդ դրույթին<sup>23</sup>:

Մենք այն կարծիքին ենք, որ ԱդրՀ ՁՈՒ-ի՝ ԼՂՀ Պաշտպանության բանակի զերեվարված զինծառայողների դեմ ուղղված հանցավոր գործողությունները պետք է որակվեն որպես զինված հակամարտությունների ժամանակ ՄՄԻ-ի նորմերի լուրջ խախտումներ:

Ինչ վերաբերում է ԱդրՀ ՁՈՒ-ի կողմից դարաբաղա-ադրբեջանական շփման գծի պաշտպանական մարտական դիրքերում ԼՂՀ ՊԲ զինծառայողների սպանություններին և վիրավորումներին, ապա նշենք, որ մարտական գործողությունների ժամանակ ԼՂՀ ՊԲ զինծառայողները փաստորեն ստանձնում են կոմբատանտների համակարգային գործառույթները, և դա ամեննին էլ չի նշանակում, թե նրանք հայտնվում են իրավական պաշտպանության շրջանակներից դուրս: Նույնիսկ օրինական ռազմական նշանակետերի վրա հարձակումները ենթարկվում են իրավական սահմանափակումների, որոնք հիմնվում են կամ ՄՄԻ-ի ու դրա նորմերի, կամ միջազգային իրավունքի այլ ճյուղերի վրա, ինչպիսին է, օրինակ, մարդու իրավունքների ոլորտը: Յանկացած ռազմական օպերացիա պետք է համապատասխանի ՄՄԻ-ի այն նորմերին, որոնք արգելում կամ սահմանափակում են ռազմական գործողությունների վարման որոշակի միջոցների և մեթոդների կիրառումը: Դեռ ավելին. ռազմական անհրաժեշտության և մարդասիրության սկզբունքները պահանջում են, որպեսզի պատճառվող անդառնալի կամ սանիտարական կորուստները կամ վնասը չզերազանցեն ստեղծված հանգամանքներում ռազմական անհրաժեշտությամբ թելադրվող մասշտաբները<sup>24</sup>: Այնհայտ է, որ հրադադարի պայմաններում պաշտպանական դիրքերի կրակակոծությամբ կատարվող նպատակային սպանությունները չեն կարող արդարացվել ռազմական անհրաժեշտությամբ և պետք է դիտվեն առնվազն որպես ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության

<sup>23</sup> Տես *K. Dörmann*. Elements of War Crimes under the Rome Statute of the International Criminal Court. Cambridge, 2004, P. 118; *W. A. Schabas*. An Introduction to the International Criminal Court. Ed. 2. Cambridge, 2004, P. 55:

<sup>24</sup> Տես «Непосредственное участие в боевых действиях: вопросы и ответы». «МЖКК», 02.06.2009 (<http://www.icrc.org/rus/resources/documents/faq/direct-participation-ihl-faq-020609.htm>):

շարժառիթով կատարված սպանություն, իսկ առանձին դեպքերում՝ անգամ որպես պատերազմական հանցագործություն:

Կարծում ենք, որ չկան պատճառներ ոչ միջազգային զինված հակամարտությունների զոհերին վերաբերվելու այլ կերպ, քան միջազգային զինված հակամարտությունների զոհերին: Թվում է, որ եթե նույնիսկ չկան պայմանագրային պարտավորություններ՝ քրեական կարգով կասեցնելու այն արարքները, որոնք կատարվել են ներքին զինված հակամարտության ժամանակ, և որոնք միջազգային զինված հակամարտության ժամանակ կատարվելու դեպքում կորակվեին որպես լուրջ խախտումներ, այնուամենայնիվ պետությունները պարտավոր են հետապնդել նման հանցագործություններ կատարողներին: Մի շարք պետություններ, ինչպիսիք են Բելգիան, Դանիան, Իսպանիան, Կանադան, Նիդերլանդները, Նորվեգիան, Շվեդիան և Ֆինլանդիան, իրենց ներքին օրենսդրությամբ նախատեսում են այն գործողությունների կասեցումը, որոնք որակվում են որպես չորս Ժնևյան կոնվենցիաների և 1-ին Լրացուցիչ արձանագրության լուրջ խախտումներ՝ անկախ այն բանից, թե դրանք կատարվել են միջազգային, թե ներքին զինված հակամարտության ժամանակ<sup>25</sup>:

Այսպիսով՝ լրիվ ծավալով ՄՄԻ-ի նորմերի հետևողական և սկզբունքային կիրառման իրավական շեմը պետք է կախված չլինի զինված հակամարտության տեսակից: Մեր կարծիքով՝ այդ շեմը պետք է պայմանավորված լինի օբյեկտիվ չափանիշով, ոչ թե որևէ աշխարհագրական տարրով կամ պատերազմողների կարգավիճակով, այլ հակամարտության առկայության փաստով, և ապահովի հակամարտության բոլոր կողմերի նկատմամբ ՄՄԻ-ի երաշխավորված, հավասարաչափ կիրառումը: Վիճելի է նաև միևնույն արարքների տարբեր գնահատումը, երբ, մի դեպքում, այն որակվում է որպես պատերազմական հանցագործություն, իսկ այլ դեպքում՝ ոչ: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է ձեռնարկել իրավաստեղծ աշխատանք՝ ուղղված պատերազմական հանցագործությունների նոր հանցակազմերի մշակմանն ու գործող օրենսդրության մեջ դրանց ներառմանը, քանի որ կա կոնվենցիոն իրավունքի պահանջներին ազգային օրենսդրական նորմերը համապատասխանեցնելու անհրաժեշտություն: Ընդամին դա պետք է արվի անկախ այն բանից, թե ազգային մակարդակով վավերացվել է ԱԶԳ Հռոմի Ստատուտը (1998), թե ոչ:

Դեռ ավելին. ՄՄԻ-ի նորմերի ծավալի կիրառելիությունը որոշելու համար անհրաժեշտ է ունենալ օբյեկտիվ չափանիշ, որը ինչպես հակամարտության մասնակիցներին, այնպես էլ ամբողջ միջազգային հանրությանը կտա տվյալ հակամարտության նկատմամբ կոնկրետ նորմերի կիրառելիության գնահատման հստակ հիմքեր:

Ընդամին անհրաժեշտ է ստեղծել նոր անկախ, պարտադրող բնույթի և անհակաճառելի միջազգային մարմին, որը հնարավորինս կարճ ժամկետներում կապահովի զինված հակամարտության օբյեկտիվ որակումը, և որը միաժամանակ

<sup>25</sup> Տես *T. Գրադիսկայի*. Личная уголовная ответственность за нарушения международного гуманитарного права, применяемого в ситуации немеждународного вооруженного конфликта. «МЖКК», март 1998, № 20:

նակ կկատարի ՄՄԻ-ի նորմերի պահպանման մշտազննում, իսկ դրանց խախտման հանգամանքներում՝ նաև այդ դեպքերի հետաքննություն: Մշտազննման և հետաքննության մեխանիզմների արդյունավետության ապահովման համար տվյալ մարմինը պետք է անկախ լինելու հետ մեկտեղ գործի անաչառ կերպով: Նրա աշխատանքը չի կարող կախված լինել հակամարտության կողմերի համաձայնությունից\*, իսկ նրա ընդունած որոշումները պետք է ունենան պարտավորեցնող բնույթ: Պետք է պահպանվի նաև այդ մարմնի անձնակազմի ազգային հաշվեկշիռը, այսինքն՝ ապահովված լինի հակամարտության կողմերի շահերը ներկայացնող անդամների թվային հավասարությունը:

\* Արդեն գործող մնալ մեխանիզմ է փաստերի հաստատման միջազգային հանձնաժողովը: Սակայն տվյալ հանձնաժողովի աշխատանքի համար անհրաժեշտ է հակամարտության կողմերի համաձայնությունը:

## МЕЖДУНАРОДНОЕ ГУМАНИТАРНОЕ ПРАВО

### НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ КВАЛИФИКАЦИИ ВОЕННЫХ ПРЕСТУПЛЕНИЙ, СОВЕРШАЕМЫХ ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ АЗЕРБАЙДЖАНА В НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКЕ

*Г. М. ГРИГОРЯН, полковник юстиции, кандидат юридических наук, докторант кафедры криминалистики Военного Университета МО РФ*

#### РЕЗЮМЕ

2 апреля 2016 г. АЗР нарушила условия Бишкекского протокола и предприняла агрессию против НКР с последующими грубыми нарушениями международного гуманитарного права (МГП) в связи с применением запрещенных средств и методов ведения войны. По фактам военных преступлений, совершенных ВС АЗР, возбуждены уголовные дела по статьям 410 («Агрессивная война») и 416 («Серьезные нарушения норм МГП во время вооруженных конфликтов»), пункту 14 статьи 103 («Убийство по мотиву национальной, расовой или религиозной ненависти либо религиозного фанатизма»), а также по статье 416 УК НКР – по фактам надругательства над телами военнослужащих и гражданских лиц.

Для объективной и неоспоримой квалификации преступлений, совершаемых во время вооруженных конфликтов как международного, так и немеждународного характера, решающее значение может иметь создание независимого, обязательного и непререкаемого международного органа, который осуществлял бы оценку применимости объема норм МГП в каждом конкретном случае, мониторинг соблюдения этих норм и объективное расследование случаев их нарушения.

**INTERNATIONAL HUMANITARIAN LAW**

**SOME PROBLEMS OF SUBSUMING THE WAR CRIMES  
COMMITTED BY THE ARMED FORCES OF AZERBAIJAN  
IN THE NAGORNO-KARABAKH REPUBLIC**

*H. M. GRIGORYAN, Colonel of Justice, PhD in Law, Doctoral Student in Criminalistics,  
Military University, Ministry of Defense, the Russian Federation*

**SUMMARY**

On 2 April 2016, the Republic of Azerbaijan breached the terms of the Bishkek Protocol and launched an aggression against NKR with further gross violations of the International Humanitarian Law (IHL) in connection with the use of prohibited means and methods of warfare. On the facts of war crimes committed by the Armed Forces of the Republic of Azerbaijan, criminal cases have been initiated on Articles 410 (“A War of Aggression”) and 416 (“Serious breaches of the norms of the IHL during the armed conflicts”), on the Paragraph 14 of the Article 103 (“Murder motivated by national, racial or religious hatred or religious fanaticism”), as well as on the Article 416 of the Criminal Code of the Nagorno-Karabakh Republic – on the facts of the outrage upon the soldiers’ and civilians’ bodies.

To objectively and indisputably subsume the crimes committed during armed conflicts of both international and non-international nature, the establishment of an independent, binding and indisputable international authority may be of critical importance. It would assess the applicability of the IHL norms in each particular case, monitor the observance of these norms, and investigate impartially the cases of their violation.

**ԿԱՄՈՒՐՁՆԵՐԻ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ  
ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ**

*Ա. Բ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, ԶՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական,  
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և գործերի բնակավորման  
վարչության պետ, Ճարտարապետության և շինարարության  
Հայաստանի ազգային համալսարանի Շինարարական արտադրության  
տեխնոլոգիայի և կազմակերպման ամբիոնի հայցորդ*



Արտակարգ իրավիճակներում կարևոր խնդիրներից է աղետի գոտին անվտանգ շրջանների հետ կապող ճանապարհների անցանելիության ապահովումը՝ տուժած վայրեր տեխնիկայի, սննդամթերքի, անհրաժեշտ գույքի տեղափոխումը և բնակչության ու նյութական միջոցների տարահանումը կազմակերպելու համար: Խնդիրն ավելի հրատապ է դառնում պատերազմական ժամանակ, քանի որ հակառակորդն ձգտում է շարքից հանելու հաղորդակցային ենթակառուցվածքները՝ գործերի անկաշկանդ տեղաշարժն ու մատակարարումը խափանելու համար:

Նման իրավիճակներում առանձնակի ուշադրություն պետք է դարձնել կամուրջների վրա, որոնք հաղորդակցային ենթակառուցվածքների առավել խոցելի տարրն են: ՌԻստի շինարարների առաջնահերթ խնդիրներից է կամրջի կրող կոնստրուկցիաների ուժեղացումը կամ վերականգնումը: Սույն խնդիրն ավելի է կարեվորվում ու բարդանում լեռնային կտրտված տեղանքում, ինչպիսին է ՀՀ ու ԼՂՀ տարածքների մեծ մասը: Այդ տեղանքին բնորոշ են ճանապարհային ցանցի թերզարգացածությունը (գուգահեռ ճանապարհներ չլինելը, շրջանցուղիների հսկայական հավելվածվածությունը), մեծ ու փոքր կամուրջների մեծ հաճախակիությունը:

ՌԻստի փորձենք համառոտակի ներկայացնել կամուրջների ամրացման ու վերականգնման առաջավոր համաշխարհային փորձը, որի իմացությունը, մեր կարծիքով, անհրաժեշտ է ոչ միայն ռազմական ճարտարագետներին ու շինարարներին, այլև տարբեր գորատեսակների հրամանատարներին:

Կամուրջների կոնստրուկցիաների ուժեղացման հիմնական պատճառներն են.


- կառույցի անբավարար տեխնիկական վիճակը (կրակակոծության, երկրաշարժի, երկարատև սողանքների և այլ հանգամանքների հետևանքով),
- բեռնվածքի (առկա կամ սպասվող) աճումը, ինչպես նաև բեռնվածքի նախագծային արժեքի գերազանցումը (նախագծված են ավելի քիչ շահագործային բեռնվածքի համար, կառուցված են 1960-1970 թթ.՝ ցածր որակի բետոնով, և այլն):

Միջազգային մասնագիտական գրականության մեջ բերվող տեսական ու գիտագործնական մշակումների ու պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տվյալ խնդիրը լուծվում է մի քանի ուրույն եղանակներով:

**ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ**

**Ծովող փարերի ձգիչներ**

Ուժեղացումը կատարվում է ոչ միայն ծռող սմունսների, այլև լայնական ուժերի ազդեցության դեպքում: Ռիդագիժ ձգիչի փոխարեն (նկ. 1) կիրառում են բազմանկյան հատույթով ձգիչներ<sup>1</sup> (կարող են կիրառվել նաև ճոպաններ):




Նկ. 1. Ուժեղացումը բազմանկյուն ձգիչներով.

ա՝ հատուկ հենարաններով ամրացում, բ, գ՝ ամրացում հենված դիաֆրագմների վրա  
1-հեծան, 2-նախալարված ամրաններ, 3-հենարան, 4-խարիսխ

**Ուժեղացում անուրների և բարձակների կիրառմամբ**

Կամրջային հեծանների վտանգավոր գոտիներից մեկը մերձհենարանային գոտին է, որտեղ առաջանում են առավելագույն շոշափող լարումներ: Թեև ուժեղացման նյութերի մերձհենարանային գոտիների թեք հատույթները քիչ ուսումնասիրված են, այդուհանդերձ, տվյալ խնդրի լուծման համար առաջարկվել է կիրառել պարզ սարքավորանք՝ ձողային զուգահեռագծերով կառուցվածք<sup>2</sup> (նկ. 2):



Նկ. 2. Հեծանի ուժեղացում թեք անուրներով.

ա՝ ընդհանուր տեսքը, բ, գ՝ սարքավորանքները և կոնստրուկցիան համապատասխանաբար մինչև նախապես լարումը և դրանից հետո, 1-ներդիր դետալներ, 2-հորիզոնական ձգաձողեր, 3-հողակապային զուգահեռագծեր, 4-հենարանային մետաղաթեթեր, 5-շինարարական կոնստրուկցիաներ, 6-ձգիչ տարրեր, 7-կցորդիչ 8 և 9-հորիզոնական և թեք տարրերի զուգահեռագիժ, 10-հողակապ


Թեք ճաքերի զարգացման գոտում տեղադրվում է հողակապային սարքավորանք՝ ձողային հողակապային զուգահեռագիժ, որի ստորին հորիզոնական

<sup>1</sup> Տես *В. П. Еремеев, В. А. Красных. Усиление балка железобетонного пролетного строения моста. Казань, 1993, Бюл. № 9* (<http://patents.su/3-1799944-usilennaya-balka-zhelezobetonного-proletnogo-stroeniya-mosta.html>):

<sup>2</sup> Տես *В. Л. Чернявский. Современные материалы и технологии ремонта и усиления конструкции мостов. Материалы научно-практической конференции. Краснодар, 2001:*

տարրերը միացվում են հորիզոնական հարթությունում տեղադրված այն ամրանին, որում առաջանում է նախալարումը: Կրող կոնստրուկցիաների հորիզոնական նիստերի և հողակապային զուգահեռանիստի հորիզոնական ճյուղերի միջև կարող են տեղադրվել հենարանային մետաղաթերթեր:

Տվյալ եղանակով ուժեղացման դեպքում աճում են հեծանի բեռնունակությունը ուղղահայաց և թեք հատույթներում, ինչպես նաև նրա կոշտությունը: Փոփոխակված հեծանների ուժեղացման կառուցվածքը բերված է 3-րդ նկարում:




Նկ. 3. Հեծանների ուժեղացումը անուրներով և բարձակներով.

ա՝ ընդհանուր տեսքը, բ՝ ատամնավոր մակերևույթով անկյուն, գ՝ ուժեղացվող հեծանի հաշվարկային ուրվագիծ (սխեման) և ծող մոմենտի էպյուրան, 1-միջադիր տարրեր, 2-ծողեր, 3-անկյունակներ, 4-շինարարական կոնստրուկցիա, 5-հիմնական անուր, 7-ձգածող և 8-հողակապային զուգահեռագիծ, 9-կցորդիչ

### **Ուժեղացում պահանգային համակարգերի կիրառմամբ**

Տավրային հատույթի հեծանները կարելի է ուժեղացնել մի քանի պահանգային համակարգերի կիրառմամբ<sup>3</sup> (նկ. 4):



Նկ. 4. Հեծանի ուժեղացում պահանգային համակարգի միջոցով.

ա՝ ընդհանուր տեսքը, բ՝ հեծանի հաշվարկային սխեմա, լայնական կտրվածքը, գ՝ պահանգային համակարգի կրող տարրերի միացման հնարավոր սխեմա, 1- հեծան, 2- հենարան, 3- կախոց, 4- հենարանային զսպանակներ, 5- միացման հանգույց, 6- պահանգային համակարգ, 7- կոշտ տարր, 8- կախոց-անուրներ, 9- հորիզոնական տարր

<sup>3</sup> Տես *Ж. Б. Бойнатов, А. Д. Кузютин. Усиление несущих элементов мостов. М., 1995:*

Այս դեպքում հեծանի երկու կողմում տեղադրվում են պահանգային համակարգի երկու տարրեր՝ կախոցներով: Համակարգի երկու հանգույցներում գտնվում են սեղմված զսպանակներ: Ազատ արձակվելով՝ զսպանակները սեղմում են կոնստրուկցիան և հեծանի համար ստեղծում առաձգական հենարաններ: Կախոցները ծայրամասերում ունեն մանեկներով պարուրակներ: Մանեկների ձգման դեպքում բեռնվածքի մի մասը փոխանցվում է պահանգային համակարգին:

Պահանգային համակարգի տարրերը կարող են պատրաստված լինել գլոցվածքային պրոֆիլներից, կախոցները՝ կլոր պողպատից:

Նման կոնստրուկցիայի օգնությամբ կարելի է մի քանի անգամ ավելացնել հեծանի բեռնունակությունը:

**ՈՒԺԵՂԱՑՈՒՄ ԲԱՂԱԳՐՅԱԼ ՆՅՈՒԹԵՐՈՎ**

Աշխարհի մի շարք առաջատար կազմակերպություններ, ինչպիսիք են «ՄԻԿԱ» և «Կոմպոզիտ» արտադրական միավորումները, առաջարկում են նորագույն բաղադրյալ նյութեր, որոնք կամուրջների կոնստրուկցիաների ուժեղացման ավանդական միջոցների համեմատությամբ ունեն մի շարք առավելություններ<sup>4</sup>: Ընդամենի բաղադրյալ նյութերով կամրջի բետոնե կոնստրուկցիաների ուժեղացման արդյունավետությունը բավական մեծ է: Դրանց շնորհիվ տարրի (հիմնականում՝ հեծանների) բեռնունակությունը կարող է մեծացվել 2-3 անգամ:

Արտաքին բաղադրյալ ժապավենների ու սալերի («Sika Carbodur», «Sika Wrap» և «FibARM») ստանձման մեթոդները լայն կիրառություն են ստացել մի շարք երկրներում՝ Լեհաստանում, Գերմանիայում, Ճապոնիայում, Ռուսաստանի Գաշնությունում, և համարվում են տվյալ ոլորտում նոր խոսք:

Ուժեղացման նպատակով կիրառվում են զանազան նյութեր, որոնք ունեն տարբեր գործառնություններ:

*ա) Ածխածնային գործվածքներ (ժապավեններ)*

Կիրառվում են, որպեսզի ուժեղացնեն.

– կողավոր ծածկի սալերը, կողի փոքր լայնությամբ կամուրջների թռիչքների տավրային հեծանները, շրջանակային կառուցվածքների հեծանային տարրերը, ֆերմաները և փոքրածավալ կառուցվածքները, սյուները և հենասյուները՝ գրկմամբ, գերճզրիտ կարաններով կառուցվածքները, մեծ ճաքերով ծածկերի բետոնը:

Գործվածքի տեսակ (FibARM)	Պարամետրեր							
	Գործվածքի տիպ	Լայնք մմ	Մակերևութային խտություն, $q/m^2$	Ֆիլամենտների թվաքանակ	Թեքի խզման երկարացում	Մենաշերտ ժապավենի հաշվարկային հաստություն, մմ	Թեքի առաձգակալունության մոդուլ, ՀՊա	Թեքի ձգման ամրություն, ՀՊա
1	2	3	4	5	6	7	8	9

<sup>4</sup> Stu C. A. Бокарев, К. В. Кобелев, В. А. Слепец. Усиление железобетонных элементов мостов полимерными композиционными материалами без остановки движения. М., 2014, сс. 11–14, 22; С. А. Бокарев, К. В. Кобелев, В. А. Слепец. Усиление железобетонных конструкций композиционными материалами. М., 2007:

Ա. Բ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9
Tape-530/150	պաստառ	150	530	12K	1,8 %	0,294	245	4,3
Tape-530/600	պաստառ	600	530	12K	1,8 %	0,294	245	4,3

բ) Ածխապլաստիկային հպաթիթեղներ. *FibARM Lamel*

Ածխածնային թելքի պարունակություն, %	60–70
Միաշերտերի թվաքանակ	3–12
Ձգման ամրություն, ՄՊա	1300-2800
Առաձգականության մոդուլ, ՀՊա	165-300
Լայնություն, մմ	50-150
Հաստություն, մմ	1,2-1,4
Մակերևութ	մի կողմից հղկված

գ) Ածխածնային ցանց. *FibARM Grid*

Բջջի չափեր, մմ	50 x 50	30 x 30	10 x 18
Չոր ցանցի մակերևութային խտություն, գ/մ <sup>2</sup>	150	230	530
Տոգորված ցանցի մակերևութային խտություն, գ/մ <sup>2</sup>	170	270	610
Ցանցի հաստություն, մմ	170	270	610
Լայնություն, մ	0,3–1,2		
Երկարություն, մ	100		

դ) Հարակցանյութեր (ջերմառեակտիվ խեժեր)

Հատկություններ	Միավոր	Պոլիէթերային	Էպօքսիդներ
Խտություն	կգ/մ <sup>3</sup>	1000 - 1450	1100-1400
Ամրությունը՝ ձգելու դեպքում սեղմելու դեպքում	ՄՊա	30-55 55-96	30-90 50-110
Առաձգականության մոդուլ	ԳՊա	2,1-4,1	0,5 - 20
Սահմանային հարաբերական ձևախախտումը խզման դեպքում	%	1-300	0,5 - 50
Գծային և ջերմային ընդարձակման գործակից	*10 <sup>-6</sup> /°C	40-80	10-100
Ապակեգոյացման ջերմաստիճան	°C	50-60	40 - 260
Մակակլանված ջրերը՝ 24 ժամվա ընթացքում 7 օրվա ընթացքում	%	0,08 - 0,09 –	– 0,1-3

Արտաքին ամրանավորման ժամանակ որպես կապակցանյութեր հաճախ օգտագործվում են պոլիէթերային և էպօքսիդային հիմքի վրա ջերմառեակտիվ խեժեր: Ստորև ներկայացվող աղյուսակում բերված են կոմստրուկցիաների ուժեղացման համար կիրառվող ջերմառեակտիվ խեժերի (կաչող, օդում պնդացող լուծույթներ) ֆիզիկամեխանիկական հատկությունները:

Բաղադրյալ նյութերի կիրառմամբ երկաթբետոնե կոնստրուկցիաների ուժեղացման համակարգը ներառում է՝

- բետոնե մակերևույթները պատող նախապատրաստական շերտ,
- մածիկանյութեր,
- հարակցանյութեր,
- մեկ կամ երկու ուղղություններով գործվածքներ կամ լամինատներ:

Առանձին դեպքերում կարող են օգտագործվել նաև պաշտպանիչ և հակահրդեհային պատվածքներ:

Նախապատրաստական շերտերով պատում են բետոնե հիմնատակի ամբողջ ստանձվող մակերևույթը՝ հարակցանյութի ու գործվածքի պահանջվող կցորդումն ապահովելու համար:

Մածիկանյութերը կիրառվում են խոռոչները լցնելու և մակերևույթները հավասարեցնելու համար:

Հարակցանյութերը կիրառվում են կոնստրուկցիաների մակերևույթներին գործվածքների ստանձման համար:

ԱՎԱՆԳԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՎ ԵՎ ԲԱՂԱԳՐՅԱԼ ՆՅՈՒԹԵՐՈՎ ՈՒՇԵՂԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բաղադրյալ նյութերով ուժեղացումը ավանդական եղանակների համեմատությամբ ունի հետևյալ առավելությունները.

- աշխատանքային ծախսերի զգալի կրճատում,
- աշխատանքների կատարման ժամկետների էական կրճատում,
- աշխատանքների կատարում՝ առանց տրանսպորտային հոսքի դադարեցման,
- նորոգումների միջև պարբերականության մեծացում,
- կայունություն բոլոր ազդեցիվ միջավայրների նկատմամբ,
- ուժեղացվող կոնստրուկցիային մեծ հարակցում,
- ուժեղացուցիչ շերտի նվազագույն հաստություն,
- ուժեղացուցիչ տարրերի աննշան կշիռ:

## ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ

### СПОСОБЫ УСИЛЕНИЯ КОНСТРУКЦИЙ МОСТОВ

*А. Б. ГРИГОРЯН, государственный советник 2-го класса СГС, начальник Управления капитального строительства и расквартирования войск МО РА, соискатель кафедры технологии и организации строительного производства Национального университета архитектуры и строительства Армении*

#### РЕЗЮМЕ

Одной из наиболее важных задач в чрезвычайных ситуациях является обеспечение высокой проходимости дорог, связывающих зону бедствия с безопасными районами, в целях эффективной организации подвоза в пострадавшие районы техники, продовольствия и необходимого оборудова-

ния и эвакуации оттуда населения и материальных средств. Данная задача приобретает особую важность в военное время, поскольку противник стремится уничтожить коммуникационные инфраструктуры в целях воспрепятствования свободному передвижению войск и их снабжению. Наиболее уязвимыми элементами коммуникационных инфраструктур являются мосты, роль которых возрастает в сильно пересеченной горной местности, для которой характерны относительная малоразвитость дорожной сети (практическое отсутствие параллельных дорог, чрезмерная длина объездных путей), большая частотность мостов.

В этом аспекте возникает острая необходимость в скорейшем восстановлении и усилении конструкций мостов, что делает насущной проблему знания военными инженерами и строителями, а также командирами различных родов войск современных методов усиления конструкций мостов, которые приводятся в статье.

## MILITARY ENGINEERING

### THE REINFORCEMENT METHODS OF BRIDGE STRUCTURES

*A. B. GRIGORYAN, 2<sup>nd</sup> Degree State Advisor, SCS, Chief, Department of Capital Constructing and Housing, MOD, RA, Applicant, Chair of Construction Industry Technology and Management, National University of Architecture and Construction of Armenia*

#### SUMMARY

One of the most important tasks in emergency is to ensure high passability of roads linking a disaster zone with safe areas for the efficient supply of equipment, food and necessary facilities to the affected areas, and the evacuation of the population and material resources from there. This issue takes on special significance in wartime, as the enemy seeks to destroy communication infrastructures for obstructing the troops' movement and their supply. The most vulnerable elements of communication infrastructures are the bridges, the role of which increases in the rugged mountainous country characterized by the relatively underdeveloped road network (the practical lack of parallel roads, the overlength of bypasses), and the high frequency of bridges.

In this respect, there is an exigency to speedily reconstruct and reinforce the bridge structures, which makes it urgent for military engineers and builders, as well as commanders of different branches to learn modern methods of the reinforcement of bridge structures, which are given in this article.

**ՀՀ ՉՈՒ-Ի ԲՈՒԺԱՊԱՀՈՎՍԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ  
«ԳԵՐ 2» ԴԱՇՏԱՅԻՆ ՇԱՐԺԱԿԱՆ ՀՈՍՊԻՏԱԼԻ ԿԻՐԱՌՍԱՆ  
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Ա. Ա. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ, ք/ծ մայր, ԵՊԲՀ ռազմաբժշկական  
ֆակուլտետի ԲԾԿՄ ամբիոնի դասախոս, Ա. Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, ք/ծ մայր,  
ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի ԲԾԿՄ ամբիոնի ավագ դասախոս,  
Գ. Ռ. ՎԱՐԳԱՆՅԱՆ, ք/ծ փոխգնդապետ, ԵՊԲՀ ռազմաբժշկական  
ֆակուլտետի ԲԾԿՄ ամբիոնի պետ, Գ. Մ. ՓԱՇԻԿՅԱՆ, ք/ծ փոխգնդապետ,  
ՀՀ ՉՈՒ-ի ռազմաբժշկական վարչության վերլուծության և պլանավորման  
բաժնի ավագ սպա, Տ. Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, ք/ծ գնդապետ, ՀՀ ՉՈՒ-ի  
ռազմաբժշկական վարչության վերլուծության և պլանավորման բաժնի պետ-  
վարչության պետի տեղակալ*

Ժամանակակից զինված հակամարտությունների ու տեղային պատերազմների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վիրավորների կյանքի պահպանման, հետագա բարդությունների կանխման և, ի վերջո, մարտունակության ու աշխատունակության վերականգնման գործում խիստ կարևորվում է որակավոր վիրաբուժական օգնության\* ճիշտ ժամանակին ու որակյալ ցուցաբերումը<sup>1</sup>։

Ընդ որում, ժամանակակից բուժապահովման համակարգում որակավոր վիրաբուժական օգնության ցուցաբերումը նպատակաուղղված է հետևյալ երեք հիմնական խնդիրների լուծմանը<sup>2</sup>։

1. *կենսականորեն կարևոր ֆունկցիաների վերականգնում*, այսինքն՝ վիրավորի կյանքի փրկում, ինչի համար կյանքի ցուցումներով կատարվում են անհետաձգելի վիրաբուժական և լրիվ ծավալով վերակենդանացման միջամտություններ,

2. *մարդկական ախրահարումների դեպքում կյանքին սպառնացող ծանր բարդությունների կանխում*, ինչի համար կատարվում են վիրաբուժական և լրիվ

---

\* Որակավոր վիրաբուժական օգնությունը վիրաբուժության ու վերակենդանացման այն միջոցառումների համախիռն է, որոնք ուղղված են կյանքին անմիջականորեն վտանգ սպառնացող վիրավորումների և ախտահարումների հետևանքների վերացմանը, հետագա բարդությունների կանխմանը և ըստ նախանշանակման հաջորդ հանգրվաններ վիրավորների տարահանմանը։

<sup>1</sup> Տես *И. М. Самавалов, В. А. Мануковский, В. И. Бадалов, В. В. Северин, К. П. Головки, В. В. Денисенко*. Применение тактики многоэтапного лечения («damage control») в военно-полевой хирургии. «Военно-медицинский журнал», 2011, т. 332, № 9; նաև՝ «Военномедицинская подготовка». Под ред. Ф. И. Комарова. М., 1984, сс. 80–106; *Ս. Գ. Գալստյան, Հ. Ա. Գորգինյան, Մ. Գ. Մարգարյան*, Զինված ուժերի ռազմաբժշկական ապահովման պրոբլեմները տեղային բնույթ կրող պատերազմների ժամանակ։ Ե., 1998, էջ 14–55։

<sup>2</sup> Տես նույն տեղում։

ծավալով վերակենդանացման շտապ միջամտություններ: Շտապ վիրահատությունները կատարվում են երկրորդ հերթին՝ անհետաձգելի վիրահատություններից հետո, իսկ վերակենդանացման միջամտությունները նախորդում են նշված վիրահատություններին և կրում են նախավիրահատական բնույթ,

3. *վիրավորների նախապարասրում տարահանման*: Որակավոր բժշկական օգնության ցուցաբերման փուլերում նախատեսվում է թեթև վիրավորների կարճաժամկետ բուժում, իսկ մնացած բոլոր վիրավորները ենթակա են տարահանման հաջորդ հանգրվաններ՝ մասնագիտացված վիրաբուժական օգնության ցուցաբերման, բուժման և վերականգնման համար:

Որակավոր վիրաբուժական օգնություն սովորաբար ցուցաբերում են դաշտային բժշկական հաստատությունների ընդհանուր վիրաբույժներն ու անզգայացնող-վերակենդանացնող բժիշկները<sup>3</sup> (առանձին բժշկական ջոկատ՝ ԱԲՁ, առանձին բժշկական գումարտակ՝ ԱԲԳ, բժշկական հատուկ ուժեղացված ջոկատ՝ ԲՀՈՒՁ, օդադեսանտային դիվիզայի օդաշարժունակ հոսպիտալ, «Դեր 2» դաշտային շարժական հոսպիտալ և այլն):

Մարտական և բժշկական իրադրության հաճախակի ու կտրուկ փոփոխությունները բուժառայություններից պահանջում են բուժապահովման համակարգերը արագ և ճկուն կերպով հարմարեցնել ստեղծված իրավիճակներին: Նման պայմաններում խիստ մեծանում է որակավոր և մասնագիտացված բուժօգնության տարրերի ցուցաբերման հնարավորություններ ունեցող շարժական բժշկական հաստատությունների դերը:

ՀՀ Ձինված ուժերի բուժհամակարգում որակավոր բժշկական օգնությունը հիմնականում ցուցաբերում են ԱԲՁ-ները, մինչդեռ ՆԱՏՕ-ի անդամ պետությունների զինված ուժերում այդ նպատակով կիրառվում են «Դեր 2» դաշտային շարժական հոսպիտալները:

Մեր նպատակն է եղել ուսումնասիրել ՀՀ Ձինված ուժերի բուժապահովման համակարգում «Դեր 2» դաշտային շարժական հոսպիտալի կիրառման հնարավորությունը և նպատակահարմարությունը:

Ըստ այդմ մենք կատարել ենք հետազոտություն, որի ընթացքում վերլուծել ենք 2014 թ. ՀՀ Ձինված ուժերի և Արտակարգ իրավիճակների նախարարության համատեղ ռազմաբժշկական, ՀԱՊԿ-ի «Անասան եղբայրություն-2015 թ.», Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գործող ամերիկյան վարժական կենտրոնում անցկացված «Միաձուլված սուր-2016 թ.» բազմազգ գորավարժություններում «Դեր 2» դաշտային շարժական հոսպիտալի կիրառման տվյալները:

«Դեր 2» դաշտային շարժական հոսպիտալը, որը համարվում է որակավոր բժշկական օգնության ցուցաբերման համար նախատեսված շարժական դաշտային բուժհաստատություն, համապատասխանում է հետևյալ պահանջներին<sup>4</sup>.

<sup>3</sup> Տես Ի. Մ. Սանսիվալով, Վ. Ա. Մանուկովսկի, Վ. Ի. Բադալով, Վ. Վ. Սևերին, Կ. Պ. Գոլովկո, Վ. Վ. Դենիսենկո, Նշ. աշխ., «Военно-медицинская подготовка», сс. 80–106; «Emergency war surgery» (STANAG 2068 MED), 11 December 1997, US:

<sup>4</sup> Տես «Minimum essential medical and survival equipment for ship life rafts including for survival at sea» (STANAG 1185 MED), 16 May 1995, DA; «Minimum requirements of

- վիրավորներին և ախտահարվածներին անհետաձգելի բուժօգնության ցուցաբերում ինչպես մարտական գործողությունների ժամանակ, այնպես էլ տարերային աղետների, տեխնածին վթարների ու արտակարգ իրավիճակների դեպքում,
- օժտվածություն մեծ շարժունակությամբ, ցանկացած տեսակի տրանսպորտային միջոցով տեղափոխելու հնարավորություն (ցամաքային, օդային և այլն),
- ինքնավար բանելակարգով գործելու հնարավորություն, տեղի պահպանված ռեսուրսներից օգտվելու կարողություն, ընդամին անհրաժեշտության դեպքում առանձին ֆունկցիոնալ ստորաբաժանումները կարող են աշխատել ինքնուրույնաբար, ցանկացած բժշկաաշխարհագրական պայմաններում:

Հոսպիտալը տեղավորվում է հարմարավետ բեռնամփոփներում և 6 ժամվա ընթացքում կարող է բեռնված լինել տեղափոխող տրանսպորտային միջոցների վրա: Նշանակված վայր հասցվելուց հետո այն, կախված բժշկամարտավարական իրավիճակից, կարող է ծավալված լինել մասնակիորեն (օրինակ՝ վիրաբուժական և վերակենդանացման բաժանմունքը) կամ ամբողջապես: Վիրաբուժական և վերակենդանացման բաժանմունքն իր անձնակազմի ուժերով ծավալվում է 4 ժամվա ընթացքում և պատրաստ լինում վիրավորներին և հիվանդներին բժշկական օգնության ցուցաբերմանը<sup>5</sup>: Վիրաբուժական և վերակենդանացման բաժանմունքում բժշկական օգնության ցուցաբերմանը զուգահեռաբար՝ մնացած ուժերով հոսպիտալի մյուս բաժանմունքները ծավալվում են 12 ժամվա ընթացքում<sup>6</sup>: Հոսպիտալի բաժանմունքները հնարավոր է ծավալել ինչպես հարմարեցված շինություններում, այնպես էլ գույքացուցակային վրաններում, որոնք հանդերձված են անհրաժեշտ սարքավորանքով (էլեկտրակայան, օդրակիչներ, լուսավորման համակարգեր և այլն):

«Դեր 2» դաշտային շարժական հոսպիտալի կազմում ծավալվում են հետևյալ ստորաբաժանումները<sup>7</sup>. ղեկավարման կետ, ընդունման-տեսակավորման և անհետաձգելի բուժօգնության բաժանմունք, վիրաբուժական և վերակենդան-

---

emergency medical supplies on board ships» (STANAG 1208 MED), 05 March 1990, NL; «Minimum requirements for a litter to transfer patients ship-to-ship or ship-to-air» (STANAG 1412 MED), 20 November 1997, US; «Basic military hospital (clinical) records» (STANAG 2348 MED), 10 March 1998, NL; «Principles of medical policy in the management of a mass casualty situation» (STANAG 2879 MED), 07 September 1998, GE:

<sup>5</sup> Տես «Statistical classification of diseases, injuries and causes of death» (STANAG 2050 MED), 21 October 1991, GE; «Emergency war surgery»; «Basic military hospital (clinical) records»; «Training of medical operations personnel for NBC» (STANAG 2954 NBC/MED), 03 July 1997, UK:

<sup>6</sup> Տես «Emergency war surgery»; «First-aid kits and emergency medical care kits» (STANAG 2126 MED), 30 April 1990, GR; «Minimum essential medical equipment and supplies for motor ambulances at all levels» (STANAG 2342 MED), 08 December 1989, CA; «Basic military hospital (clinical) records»; «Principles of medical policy ...»:

<sup>7</sup> Տես «Minimum essential medical and survival equipment ...»; «Minimum requirements of emergency medical supplies on board ships»; «Minimum requirements for a litter to transfer ...»; «Basic military hospital (clinical) records»; «Principles of medical policy ...»:

նացման բաժանմունք, ատամնաբուժական բաժանմունք, ստացիոնար բուժման և տարահանման բաժանմունք, ճառագայթային ախտորոշման բաժանմունք, դեղատուն, լաբորատորիա, ապահովման ստորաբաժանումներ (նկ. 1.):



Նկ. 1. «Գեր 2» դաշտային շարժական հոսպիտալ


Հաստիքացուցակով հոսպիտալի կազմում ընդգրկվում են ընդհանուր վիրաբույժներ, վնասվածքաբաններ, անզգայացնող-վերակենդանացնող բժիշկներ, թերապևտներ, ատամնաբույժ-դիմաձևոտային վիրաբույժներ, ճառագայթային և լաբորատոր ախտորոշման բժիշկներ, համաճարակաբան, հիգիենիստ, հանրային առողջության բժիշկ, բուժբույրեր, բուժակներ, ինչպես նաև ֆիզիոթերապիային և սպասարկող անձնակազմ: Նման համալրվածությունը հնարավորություն է տալիս «Գեր 2» դաշտային հոսպիտալում ցուցաբերելու ոչ միայն որակավոր բուժօգնություն, այլև կիրառելու մասնագիտացված բժշկական օգնության տարրեր:

ՀԱՊԿ-ի «Անաստան եղբայրություն-2015 թ.» գորավարժության ժամանակ հիմնականում իրականացվել են հոսպիտալի տեղափոխման և ծավալման հետ կապված միջոցառումներ, մասնավորապես՝ ստուգվել են հոսպիտալի տեղափոխման և ծավալման ցուցանիշները իրական պայմաններում: Հոսպիտալի բեռնման ու նախանշանակման վայր տեղափոխման, առաջին հերթի ընդունման-տեսակավորման և անհետաձգելի բուժօգնության, վիրաբուժական և վերակենդանացման բաժանմունքների ծավալման ժամանակային բնութագրիչները համապատասխանում էին միջազգային չափանիշներին:

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գտնվող ամերիկյան վարժական կենտրոնում անցկացված բազմազգ միջազգային «Սիաձուլված սուր-2016 թ.» գորավարժության ժամանակ հոսպիտալը աշխատել է ամբողջ ծավալով, բարդ բնակլիմայական և մարտական գործողություններին խիստ մոտեցված պայմաններում:

Հոսպիտալի վիրաբուժական և վերակենդանացման բաժանմունքը անձնակազմի ուժերով ծավալվել է 4 ժամում և, սկսելով ընդունել վիրավորներին, նրանց ցուցաբերել է անհետաձգելի վիրաբուժական օգնություն, վիրահատության կարիք ունեցող վիրավորները նախապատրաստվել են վիրահատության, և մինչև հոսպիտալի մյուս բաժանմունքների ծավալումը այստեղ կատարվել են կյանքի ցուցումներով վիրահատական միջամտություններ: Հոսպիտալը ամբողջությամբ ծավալվել է 10 ժամում:

Ջորավարժության 2 օրվա ընթացքում հոսպիտալ է ընդունվել 83 վիրավոր, որոնցից 12 %-ը՝ թեթև, 26 %-ը՝ միջին ծանրության, 62 %-ը՝ ծանր և ծայրահեղ ծանր վիճակում: Հոսպիտալ ընդունված բոլոր վիրավորները տեսակավորվել են, ծանր վիրավորների 37 %-ը ենթարկվել է ընդհանուր և վնասվածքաբանական վիրահատությունների, մնացած վիրավորներն ստացել են վիրավորմանը համապատասխանող բժշկական օգնություն, տարահանվել են բուժտարահանման հաջորդ հանգրվաններ: Հոսպիտալում բոլոր աշխատանքները (փաստաթղթաշրջանառություն, բժշկական տեսակավորում, բժշկական օգնության ցուցաբերում, տարահանում) կատարվել են ՆԱՏՕ-ի ստանդարտներով նախապես մշակված դեկավար փաստաթղթերի հիման վրա (SOP ստանդարտ օպերատիվ կանոնակարգ և այլն): Հոսպիտալում վիրավորների և հիվանդների շարժը կատարվել է համաձայն 1-ին սխեմայի:



Սխեմա 1. «Գեր 2» դաշտային շարժական հոսպիտալի կազմակերպվածքը

Հոսպիտալի անձնակազմի օպերատիվ աշխատանքի շնորհիվ կրճատվել է որակավոր վիրաբուժական և անհետաձգելի բժշկական օգնության ցուցաբերման ժամանակը, ինչը համապատասխանում է բուժտարահանման համակարգի մասին ժամանակակից պատկերացումներին: Հարկ է նշել, որ գորավարժության ընթացքում հոսպիտալը վերը նշված ցուցանիշներին հասել է հաստիքացուցակով նախատեսված անձնակազմի 44 % համալրվածության պայմաններում (73 հոգու փոխարեն 32), քանի որ գորավարժության պլանավորման ժամանակ սցենարով նախատեսվել էր խնդիրները լուծել հնարավորինս փոքր ուժերով:

Հիմնվելով գորավարժություններում «Դեր 2» դաշտային շարժական հոսպիտալի կիրառման տվյալների և մասնագիտական գրականությունում հաղորդվող տեղեկությունների վրա՝ կարող ենք անել հետևյալ եզրահանգումները.

– «Դեր 2» դաշտային հոսպիտալը շարժուն, դյուրատեղափոխելի, ինքնավար կառույց է, որը հնարավորություն է տալիս կազմակերպելու ոչ միայն լրիվ ծավալով *որակավոր*, այլև *մասնագիտացված բուժօգնություն*: Այն կարելի է հնարավորինս մոտեցնել մարտական գործողությունների շրջանին՝ մարտի դաշտից կարճ ժամկետներում բուժհաստատություն վիրավորների տեղափոխման, ծայրահեղ ծանր վիրավորներին բուժօգնության ցուցաբերման ցուցանիշի բարելավման, հետվիրահատական բարդությունների և մահացության ցուցանիշների նվազեցման ապահովմամբ,

– «Դեր 2» դաշտային շարժական հոսպիտալը հնարավորություն է տալիս արագ արձագանքելու ժամանակակից մարտում մարտական ու բժշկական իրադրությունների սրընթաց փոփոխություններին՝ այլ համապատասխան միջոցների համեմատությամբ ծավալման համար անհրաժեշտ շատ ավելի կարճ ժամկետների ապահովմամբ: Եվ քանի որ գորավարժության ժամանակ հոսպիտալը գործել է հաստիքացուցակով նախատեսված անձնակազմի 44 % համալրվածությամբ, ապա անձնակազմով լիարժեք համալրման դեպքում նա կգործի էլ ավելի արդյունավետ կերպով, մասնավորապես՝ կկրճատվեն ծավալման ու վիրավորներին բուժօգնության ցուցաբերման ժամկետները:

Անհրաժեշտ ենք համարում հատուկ ուշադրություն հրավիրել հետևյալ հարցերի վրա.

– դարաբաղա-ադրբեջանական շփման գծում ապրիլ ամսին տեղի ունեցած ռազմական գործողությունների ժամանակ կիրառվել են ժամանակակից սպառազինության հրազենային միջոցներ, ինչի հետևանքով սանիտարական կորուստներում գերակայել են վիրաբուժական ախտահարումները, և վիրավորների հիմնական մասը կարիք է ունեցել որակավոր վիրաբուժական օգնության: Տվյալ խնդրի լուծման համար հիմնականում կիրառվել են ՀՀ ՋՌԻ-ի ռազմաբժշկական ծառայության ԱԲՋ-ները, մինչդեռ, մեր կարծիքով, նման մարտական գործողությունների ժամանակ՝ մարտական ու բժշկական իրավիճակների հաճախակի ու կտրուկ փոփոխությունների դեպքում, «Դեր 2» դաշտային շարժական հոսպիտալի՝ որպես արագ արձագանքման միջոցի կիրառումը հնարավորություն կտա ավելի արդյունավետ կերպով լուծելու ծագող խնդիրները,

– 2014 թ. ՀՀ Ջինված ուժերի և արտակարգ իրավիճակների նախարարության համատեղ ռազմարժշկական գորավարժությունը, որում ներգրավված էր նաև «Գ-եր 2» դաշտային շարժական հոսպիտալը, ցույց տվեց, որ այն հնարավոր է հաջողությամբ կիրառել զինված ուժերի, արտակարգ իրավիճակների ու հակահարձակական ստորաբաժանումների համատեղ միջոցառումների բուժապահովում կազմակերպելիս,

– քանի որ «Գ-եր 2» դաշտային շարժական հոսպիտալը համապատասխանում է ՆԱՏՕ-ի չափանիշներին, ապա այն հնարավոր է կիրառել ՀՀ Ջինված ուժերի խաղաղապահական առաքելությունների կատարման ժամանակ, ընդամին որակավոր բժշկական օգնություն կարող է տրամադրվել ոչ միայն տվյալ առաքելությունում ներգրավված անձնակազմին, այլև տեղի քաղաքացիական բնակչությանը:

Այսպես. ս. թ. սեպտեմբերին աշխարհում առաջին անգամ ՆԱՏՕ-ն նախատեսում է «Գ-եր 2» դաշտային շարժական հոսպիտալի առաջին մակարդակի օպերատիվ կարողությունների հայեցակարգի (*Role 2 1<sup>st</sup> level OCC*) գնահատում, ինչը հնարավորություն կտա այդ դաշտային շարժական հոսպիտալին օգտագործելու ՆԱՏՕ-ի «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում իրագործվող միջազգային առաքելությունների ժամանակ:

## ВОЕННАЯ МЕДИЦИНА

### ВОЗМОЖНОСТИ ПРИМЕНЕНИЯ В СИСТЕМЕ МЕДИЦИНСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ ВС РА ПЕРЕДВИЖНОГО ПОЛЕВОГО ГОСПИТАЛЯ «РОЛЬ-2»

*А. Р. АМБАРЦУМЯН, майор м/с, преподаватель кафедры ОТМС ВМФ ЕГМУ,  
Р. Г. КИРАКОСЯН, майор м/с, старший преподаватель кафедры ОТМС ВМФ ЕГМУ,  
Г. Р. ВАРДАНЯН, подполковник м/с, начальник кафедры ОТМС ВМФ ЕГМУ,  
Г. М. ПАШИКЯН, подполковник м/с, старший офицер отдела анализа и планирования  
ВМУ ВС РА, Т. Г. АВЕТИСЯН, полковник м/с, начальник отдела анализа и планирования  
– заместитель начальника ВМУ ВС РА*

#### РЕЗЮМЕ

Изучение опыта современных вооруженных конфликтов и локальных войн показывает, что для сохранения жизни раненых, предотвращения дальнейших осложнений и, в конечном счете, восстановления боеспособности и работоспособности особо важно своевременное и качественное оказание квалифицированной хирургической медицинской помощи. Квалифицированную хирургическую медицинскую помощь обычно оказывают общие хирурги и анестезиологи-реаниматоры полевых медицинских учреждений (отдельные медицинские отряды, отдельные медицинские батальоны, специальные усиленные медицинские отряды, аэромобильные

госпиталя воздушно-десантных дивизий, передвижной полевой госпиталь «Роль-2» и т.д.).

По результатам совместных учений медицинской службы ВС РА в рамках ОДКБ и НАТО следует отметить высокие характеристики ППГ «Роль-2» в аспекте сроков развертывания и наличествующих средств и приборов, необходимых для своевременного оказания квалифицированной хирургической медпомощи в полном объеме.

## MILITARY MEDICINE

### THE POSSIBILITIES OF USING THE “ROLE-2” MOBILE FIELD HOSPITAL IN THE MEDICAL SUPPORT SYSTEM OF THE ARMED FORCES OF THE RA

*A. R. HAMBARDZUMYAN, Major of Medical Service, Lecturer at the Chair of the Organization and Tactics of Medical Service, Military Medical Department, YSMU,*  
*R. G. KIRAKOSYAN, Major of Medical Service, Senior Lecturer at the Chair of the Organization and Tactics of Medical Service, Military Medical Department, YSMU,*  
*G. R. VARDANYAN, Lieutenant Colonel of Medical Service, Head, Chair of the Organization and Tactics of Medical Service, Military Medical Department, YSMU,*  
*G. M. PASHIKYAN, Lieutenant Colonel of Medical Service, Senior Officer, Department of Analysis and Planning, Military Medical Department, the Armed Forces of the RA,*  
*T. H. AVETISYAN, Colonel of Medical Service, Head, Department of Analysis and Planning – Deputy Chief, Military Medical Department, the Armed Forces of the RA*

#### SUMMARY

The study of the experience of contemporary armed conflicts and local wars shows that for saving the lives of the wounded persons, preventing further complications and, ultimately, restoring combat capability and efficiency, it is especially important to provide timely and high-quality qualified surgical medical assistance. The qualified surgical medical assistance is usually provided by general surgeons and anesthesiologist-resuscitators of field medical facilities (separate medical detachments, independent medical battalions, special reinforced medical detachments, mobile hospitals of airborne divisions, the “Role-2” mobile field hospital (MFH), etc.).

Given the results of the joint exercises of the Medical Service of the Armed Forces of the RA within the frameworks of the CSTO and NATO, high characteristics of the “Role-2” MFH should be mentioned in terms of deployment period and facilities and devices necessary for providing timely qualified surgical medical assistance in corpore.

### **Ի գիտություն հեղինակների և ընթերցողների**

ՀՀ ՊՆ Գ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Գոկտոբրական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածիմ կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հասկանումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

### **К сведению авторов и читателей**

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

### **For the information of the authors and readers**

Defense-academic journal «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Պատասխանատու քարտուղար՝ *Տ. Մ. Անդրոնյան*  
Ռ-ազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Ջ. Գ. Ասատրյան*  
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ *Ա. Մ. Մովսիսյան*  
Տեխնիկական բաժնի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Չևավորող նկարիչ՝ *Դ. Ա. Փարվանյան*

Լուսանկարիչ՝ *Ա. Գ. Ներսիսյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Վ. Ռ. Խալաֆյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Մ. Ս. Ավետիսյանի, Ն. Ս. Մկրտչյանի,  
Դ. Ս. Չիլինգարյանի, Լ. Հ. Պապիկյանի, Զ. Վ. Փիրոյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Ս. Ռ. Հակոբջանյանի, Թ. Գ. Չիլինգարյանի,  
Ա. Հ. Սարուխանյանի, Մ. Ա. Դավթյանի*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Անգլերեն և ռուսերեն տեքստերի խմբագրումը՝ *Մ. Ս. Ավետիսյանի,  
Թ. Գ. Չիլինգարյանի, Լ. Հ. Պապիկյանի*

Լուսանկարչական ապահովումը՝

ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՌԻՆԵՑՄՈ ՎՈՒՐՈՑ, 56/6, հեռ. 28-54-25, 28-12-94

Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ <http://www.mil.am/arm/index.php?page=105>

Պաշտոնական բլոգ-կայք՝ <http://razmavaraget.wordpress.com>

Էլ. փոստ՝ [haykakanbanak@mil.am](mailto:haykakanbanak@mil.am)

© ՀՀ ՊՆ Գ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հեռազոտությունների  
ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2016 թ.

Թուղքը՝ օֆսեթային: Չևաչավիր՝ 70x100 1/16:

Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,25 մամուլ:  
Տպաբանակը՝ 500: Տառատեսակները՝ «Arial», «Times», «Times New Roman»  
և «Russian Baltica»: Տպագրությունը՝ օֆսեթ: Վկայական՝ 523:

Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «ԷՅՋԻ ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում



Մի դրվագ ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի սանձազերծած  
Չորսօրյա պատերազմից հետո ՀՀ սահմանագոտիներ  
ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ստուգայցերից  
2016 թ. օգոստոսի 9



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ